Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

91(075)
Ч-21

91(075)
7-26

-5 ОСТ 2011


ԴԱՍԱԳԻՐՔ

ԲԱԴԴԱՏԱԿԱՆ
ԱՂԵՒԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՍԻՑԻ, ԱՓՐԻԿԷԻ, ԱՄԵՐԻԿԱՑԻ ԵՒ ԱՒՍՏՐԱԼԻԱՑԻ

ԲՆԱԿԱՆ, ՏՈՀՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀՆՑ ՈՒՍՄՆՈՂՆԵՐԻ ԸՂԵՑՏՍՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ
Գ.



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

ՌՅԻՒ—1873

91(075)
Ղ--21

ԴԱՍԱԳԻՐՔ

ԲԱԴԴԱՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՍԻԱՅԻ, ԱՓՐԻԿԷԻ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԱՒՍՏՐԱԼԻԱՅԻ


ԲՆԱԿԱՆ, ՏՈՀՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

1004
1806

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀՇԱ ՈՒՍՄՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դ.

Հ.Ս.Խ.Հ. Հայկ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI—1922



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՄՄԻԱԾՆԻ.

ՌՃԻԲ—1873

2 8 MAR 2013

20575

ՀՐԱՏԱՆԱՒ

Տ· Տ· ԳԷՈՐԳԵԱՅ Դ·

ՎԻՀՈՓԱՒ ԵՒ ՍՐԲԱԶՆՈՏԱՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՆԱՑՑՆ ՀԱՅՈՑ

ԱՍԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԴԻՐՔ

Ասիայի անունը ծագած է փիւնիկեցիների "ասի,, բառից՝ որ նշանակում է արեւելք: Փիւնիկեցիները այսպէս անուանում էին այն երկիրներին՝ որոնք իրանց հայրենիքից դէպ արեւելք էին գտնվում:

Դիրքը: Ասիայի ամենահիւսիսային կէտը Տաիմիր գըլուխն է, որ 78^0 հիւսիսային լայնութեան տակն է գտնվում. ամենահարաւային կէտը — Ռոմբոյ — 16, ամենաարեւմտեանը — Բաբա — $44^1/_2{}^0$ արեւելեան երկայնութեան տակ Գերբոյից սկըսեալ, ամենաարեւելեանը — գլուխ Ըլեենեան — 208^0 արեւելեան երկայնութեան տակ: Ապա ուրեմն Ասիան երեք գօտիների տակ է գտնվում: Որ՞նք են: Ո՞ր գօտիների տակ է գտնվում Եւրոպան:

Սահմանները: Ասիայի ձովային սահմանները, հիւսիսում — հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսն է, արեւելքում — Երեւելեան կամ Մեծ Ովկիանոսը, հարաւում — Հնդկաց Ովկիանոսը, արեւմտքում Աղանաեան Ովկիանոսի մի մասը, Միջերկրական, Երշիսկզագոս, Մարմարեայ և Սեւ ծովերը, ցամաքային սահմանները կազմում են Եւրոպան և մասամբ Աֆրիկեն:

Ծովային սահմանների յատկութիւնները։

Ասիան շրջապատող ջրերը եթէ համեմատելու լինինք Եւրոպան շրջապատող ջրերի հետ, կտեսնենք որ առաջինները աւելի սակաւ են ցամաքի եզերքները ճեղքճեղքում. այս պատճառով Ասիայի ցամաքի միջին երկիրները Եւրոպայի միջին երկիրների նման չեն կարող հեշտութեամբ հաղորդակցութիւն ունենալ ծովերի հետ։ Ասիայի ցամաքի և նորա կղզիների ափերը յետագայ յատկութիւնները ունին, ցամաքի հիւսիսային ափերի մեծ մասը և արևելեան ափերի բաւականին նշանաւոր կտորը Ռևհրինկեան նեղուցից սկսած մինչև Կորէա թերակղզին, նմանապէս Բարբիա և Ընատոլի (Փոլքը — Ասիական) թերակղզիները ափերը ժայռոտ և ապառաժուտ լինելով շատ դժուարամատչելի են, նա մանաւանդ Ընատոլի հիւսիսային և հարաւային ափերը։

Ընդկաստանի և Ընդկա — Չինաստանի արևելեան ափերը նոյնպէս դժուարամատչելի են, որովհետև ցած դիրք ունին։ Ըյն ինչ ընդհակառակն Ընդկաց արշիպելագոսի կղզիները և Ընդկաստանի արևմտեան [Մալաբարեան] ափերը շատ դիւրամերձենալի են։ Ասիայի ափերը Եւրոպայի ափերի հետ համեմատելով առհասարակ շատ քիչ յարմար նաւահանգիստներ ունին։ Ասիայի ափերը ողողող ծովերը յետագայ յատկութիւնները ունին. մի քանիսը կարմիր և Ճապոնի ծովերը լի են կորալեան խութերով, ուրիշները — Դեղին ծովը, Ռևնգալիայի ծոցը, Կորամանդէլի ափի մօտ ծանծաղ տեղեր ունի։ Ըյդ ժայռերը և ծանծաղուտ տեղերը առաւել վտանգաւոր են այն պատճառով, որ երբ այդ ծովերի վերայ սաստիկ քամիներ են փչում, Ռևնգալայի ծոցի վերայ մինչև անգամ փոթորիկներ են լինում. փոթորիկները փչում են նոյնպէս արևելեան և հարաւային Չինական ծովերի վերայ։ Բայց նաւագնացութեան համար աւելի վտանգաւոր են ծովերի այն անյարմարութիւնները, որոնք յառաջանում են մառախուղներից և ջրերի սառելուց։ Ասաչում են թէ յիշեալ ծովերը և թէ հիւսիսային Ովկիանոսը։ Օխոտսկի ծովը Ասիայում այնքան ժամանակ սառած է լինում, որքան Եւրոպայում Բալտիկ ծովը. Ռևհրինկի ծովը տարուայ մեծ մասը սառուցով է ծածկուած. հիւսիսային ովկիանոսը դրեթէ ամբողջ տարին սառած է, միայն երբեմն Յունիս և Օգոստոս ամիսներում մի փոքր ժամանակ սառուցի կտորները հեռանում են ափերից, այդ կտորները այնպէս մեծ են լինում, որ մարդ կարծում է թէ ահագին լեռներ են։

Նայելով թէ որ կողմ են գնում նաւագնացները, Ո՜ոոն քամիները կամ դժուարացնում կամ հեշտացնում են նոցա ընթացքը։ Ընդկաց Ովկիանոսի ծովերի վերայ մուսոնները ըստ տեղոյն երեք տեսակ են, մի քանիսները միայն կարմիր ծովի վերայ են փչում, միւսները լինում են նոյնպէս և Բարբիայի կամ Պարսից ծովի և Ռևնգալայի ծոցի վերայ, և վերջապէս երրորդ տեսակ մուսոնները փչում են Ընդկա — Չինաստանի և Ցոր — Ընդոնդիայի միջ գտնվող բոլոր ծովերի վերայ։ Ամենակատնաւոր մուսոնները նոքա են, որոնք փչում են Ափրիկէից դէպ Ասիա՝ և ընդհակառակը։ Ապրիլից սկսած մինչև Սեպտեմբեր այդ քամիները փչում են Ափրիկէից դէպ Ասիա, իսկ Հոկտեմբերից մինչև Մարտ՝ Ասիայից դէպ Ափրիկէ։ Բարբիայի ծոցի Ասիայի և Աւստրալիայի միջ եղած մուսոնների ուղղութիւնը խառնվում են Ասիայի և Ափրիկէի միջ եղած մուսոնների ուղղութեան հետ, այնպէս որ մուսոնները հեռևեալ ուղղութիւնները են ունենում. երբ մուսոնը Ափրիկէից դէպ Ասիա է փչում, ի և նոյն ժամանակ Բարբիայի ծոցում հիւսիսային մուսոն է լինում. իսկ Աւստրալիայի և Ասիայի միջ այդ ժամանակ մուսոնը առաջինից դէպ երկրորդը է փչում։ Ափրիկէի և Ասիայի միջ եղած մուսոնի ուղղութիւնը փոխուելով, փոխվում է նոյնպէս և միացած երկու տեղերի մուսոնների ուղղութիւնը դէպ ընդդիմակաց կողմը։ Շրջենաւերը յօրինած օրից ծովերի այդ յատկութիւնները փոքր ի շատէ կորցրին իւրեանց նշանակութիւնը։

Ասիայի դրքի և սահմանների յատկութիւնների հետևանքները: 1) Որովհետև Ասիան երիք գօտիների տակ է գտնվում և ոչ միևի տակ Եւրոպայի նման, ուստի և նորա կլիման Եւրոպայի հետ համեմատելով, աւելի շատ ամենևին միմեանց տարբեր յատկութիւններ ունի, ապա ուրեմն կենդանիները և բոյսերը նոյնպես այդ յատկութիւնները ունին: Ահա այս յատկութիւնների պատճառով է, որ այս երկրում գտնագան երկիրների բնակիչները շատ սակաւ հաղորդակցութիւն են ունեցել միմեանց հետ, այնպես որ նորա թէ հիւսիսային և թէ հարաւային բնակիչները իւրեանց համար առանձին կեանք են վարել: Ահա այս է գլխաւոր պատճառներից միևը, որ Ասիան Եւրոպայից սակաւ է լուսաւորուած, գնալով որ տեղ տեղ ինչպես Չինաստանում, Հնդկաստանում, Փիւնիկիայում, Ասորեստանում լուսաւորութիւնը դեռևս այն ժամանակ էր ծագկած՝ երբ Եւրոպայի ամենահին լուսաւորեալ ազգերի — Հռովմայեցիների և Յոյների անունը անգամ դեռ ևս չկար: 2) Թէպէտ Ասիայի մեծ մասը Եւրոպայի նման բարեխառը գօտու տակն է գտնվում. սակայն Ասիայի այդ երկիրները լուսաւորութիւն տարածելու համար այնքան յարմար չեն, որչափ Եւրոպայի երկիրները: Սորա պատճառը մենք կիմանանք յետոյ, երբ որ կխօսենք Ասիայի մակերևոյթի կազմութեան, ջրերի և կլիմայի վերայ: 3) Իւր ծովային սահմանների յատկութեամբ Ասիան աւելի դժուարամերձենալի է քան թէ Եւրոպան, որովհետև նորա եզրները աւելի սակաւ են ճեղքճեղքած ծովերից և չունին այնքան յարմարաւոր նաւահանգիստներ, որքան Եւրոպան ունի:

ԾԱԿԵՐԵԻՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:

Բարձրութիւնները: Ասիայի բարձրութիւնները ըստ մեծի մասին բաղկացած են լեռնադաշտերից, որոնք միմեանց հետ միանում են կամ լեռների շղթաներով կամ հանդոյցներով: Այդ լեռնադաշտերը են արևելեան Ասիայինը, Իրանինը, Փոքր — Ասիայինը, Սիբիայինը, Սինեականը և Արաբիայինը: Իրանի բարձրաւանդակութիւնը կցորդած է արևելեան Ասիայի և Փոքր — Ասիայի բարձրաւանդակութիւնների հետ լեռների հանդոյցներով, առաջինի հետ Հնդկական, իսկ վերջինի հետ Այսիական հանդոյցներով: Սիբիայի բարձրաւանդակութիւնը մի կողմից միաւորվում է Փոքր — Ասիայի բարձրաւանդակութեան հետ, իսկ միւս կողմից Սինեական և Արաբիայի լեռնային ոստերի հետ: Բաց ի բարձրաւանդակութիւններից, լեռնային շղթաներից և հանդոյցներից, որոնցմով կցորդած են լեռնադաշտերը միմեանց հետ, Ասիայի մէջ կան և շատ լեռնային շղթաներ, որոնք կամ բարձրաւանդակութիւնների վերայ զանազան ուղղութիւններ ունին, կամ նոցա եզրների երկայնութեամբ են տարածուած կամ բարձրաւանդակութիւններից բոլորովին դուրս են և պատուարների պէս շրջապատում են նոցա, և կամ նոցանից սկիզբն առնելով ճիւղերի նման զանազան ուղղութեամբ տարածվում են այս և այն կողմը:

Էլեելեան բարձրաւանդակը իւր մէջ պարունակում է ամբողջ Ասիայի կէսը, ուրեմն $1^1/_2$ անգամ մեծ է Եւրոպայից: Այս բարձրաւանդակութեան բարձրութիւնը ամեն տեղ միատեսակ չէ. հարաւումը ամենաբարձր կետը երեք վերստ է, հիւսիսում այդ բարձրութիւնը աստիճան առ աստիճան նուազելով ստորակայրի է փոխվում: Այդ բարձրաւանդակութեան վերայ գտնուող լեռների շղթաներից ամենանշանաւորները են Տիան — Շան կամ Մուս — Տաղ և Կունէն — Լուն: Այդ բարձրաւանդակութիւնը շրջապատող լեռներից նշանաւորները են Հիմալայեան և Կուլը — Տաղ: Այդ բարձրաւանդակութեան եզերքներին զուգահեռաբար տարածուած լեռնային շղթաներից նշանաւորները են Վաու — ջեան [Նաբլոնով] Ալտայեան և Ձունկարեան շղթաները. բարձրաւանդակութիւնից սկիզբն առած շղթաներից նշանաւորները են — Սթանովոյ և նոցա շարունակութիւնը — Պամիրական հանգոյցը և Հնդկա — Չինաս-

պանէ 5 կատեգորիական ղեկավարները։ Հիմալայեան [ձիւնի բնակարան] լեռները երեւելի են ոչ միայն Ասիոյ, այլ և բոլոր աշխարհիս մէջ։ Նոքա նշանաւոր են իւրեանց լայնութեամբ և անօրինակ բարձրութեամբ. նոցա ամենանեղ տեղը 500 վերստ լայնութիւն ունի, իսկ միջին բարձրութիւնը հինգ վերստ է. բայց կան և մի քանի գագաթներ, որոնք ևօթը մինչև ութը վերստ բարձրութիւն ունին, օրինակի համար Էվերէստը՝ որ աշխարհիս մէջ ամենաբարձր լեռը է։ Հիմալայեան լեռները մի քանի զուգահեռական շղթաներից են բաղկացած, որոնց բարձրութիւնը դէպի հարաւ գնալով՝ ցածանում է դէպի հարաւ. նոքա զահավէժներով են ցածանում, իսկ դէպի հակադիր կողմը սահմանն առ սահման իւրեանց բարձրութեան և հաստութեան պատճառով աշխարհիս անանց լեռների կարգից են։ Ընդքերի բարձրութիւնը Մոնբլանից բարձր է, մինչև վեց վերստի է հասնում։ Ահա այս է պատճառը, որ ոչ միայն հին ժամանակները, այլ և այժմ ևս նոքա տեղական և քաղաքական սահմանների նշանակութիւն ունին։ Նոցանից դէպի հիւսիս Մոնղոլեան ցեղն է գտնվում, դէպի հարաւ Կովկասեանը, հիւսիսում Զինական կայսերութիւնը է, հարաւում Հնդկա—Բրիտանականը. հիւսիսում մինչև այժմ ազիատութիւն է թագաւորում, իսկ հարաւում ընդհակառակը արդէն հին ժամանակներում լուսաւորութիւնը ծագած էր։ Հիմալայեան լեռները Ասիայում այն նշանակութիւնը ունին, ինչ որ Ալպեան լեռները Եւրոպայում, միայն այն զանազանութեամբ, որ այս վերջիններս առաջիններից դիւրանցուկ լինելով ժամանակ առ ժամանակ կորցնում են իւրեանց տեղագրական և քաղաքական սահմանի նշանակութիւնը։ Բայց Հիմալայեան լեռները գլխաւորապէս այնով են նշանաւոր, որ Ալպերի նման արևմտքից դէպ արևելք տարածվելով՝ Ասիան կլիմայի կողմից երկու մասն են բաժանում — հիւսիսային և հարաւային. Հիմալայեան լեռների գլխաւոր յատկութիւններից մին այն է՝ որ նոցա հարաւային կողմի ձիւնային սահմանը աւելի ցած է, քան թէ հիւսիսային կողմինը, որի պատճառը այն է՝ որ հիւսիսում Հիմալայեան լեռները բարձր լեռնադաշտի հետ են միացած, այն ինչ հարաւում նոքա զահավէժով խորին ստորավայրի են փոխվում։ Խարձրաւանդակ տափարակից ցցացած արեգակի ճառագայթները բնականապէս առաւելացնում է օդի ջերմութիւնը և հետևաբար լեռնային ձիւնը հալեցնում է։

Խոլըղ—Տաղ այս ինքն մառախլային լեռներ։ Նախընթացի անունի նման այս անունը ցոյց է տալիս շղթայի բարձրութիւնը։ Խոլըղ—Տաղը նոյնպէս ահագին լեռնային շղթայ է, թէպէտ Հիմալայեան լեռներից ցած և նեղ է, սակայն նոցա նման զժուարանցանելի է։ Կովկասեան և Մոնղոլեան ցեղերի սահմանական սահմանը է կազմում։ Մուս—Տաղ [սառուցային լեռներ] կամ Դհանդան [երկնային լեռներ] և Կուէն—Լուն Խոլըղ—Տաղի հետ միանալով ուղիղ անկիւններ են կազմում, և առաջինը բարձրաւանդակութեան լեռնադաշտի հիւսիսային մասում, իսկ երկրորդը հարաւային մասում ձգուելով արևելքից դէպ արևմուտք նոքա բոլոր երկայնութեամբ՝ երեք մասը կամ սեպտաններ [զարահատփեր] են բաժանում նորան։ Մինչև զարահատփի արևելեան մասը աշխարհիս առաջնակարգ առևտրատեղերից մին է, որին Զինացիները Հ[illegible]մէյ [այս ինքն աւազի ծով], իսկ Մոնղոլները Գոբի են կոչում։ Գոբին Ենիսեյի ակի Սահարայից զանազանվում է միայն այնով, որ այնտեղ աւելի ցուրտ է քան թէ Սահարայի մէջ, որովհետև և նա ծովի մակերևոյթից աւելի բարձր է։ Ինչպէս Սահարայի մէջ, նոյնպէս Գոբու մէջ ովազեններ կան, որոնք կարաւաններին համար կայարաններ են կազմում, և այս աւազոտ ծովի մէջ երկոտնան ուղտը նաւի տեղ է բռնում։ Մուս—Տաղ և Կուէն—Լուն ամենաբարձր լեռների կարգից են, ուստի կլիմայական ճշգրիտ սահմաններ են կազմում։ Խարձրաւանդակութեան եզերքին զուգընթաց շղթաները նոյնպէս բարձր լեռների կարգից են։ Ջունգարեան լեռների և բարձրաւանդակութեան մէջ եղած տարածութիւնը, Ջունգարեան

դուռ է կոչվում: Այդ — ժողովրդի սովորական ճանապարհը է բարձրաւանդակութիւնից դէպի դրացի ստորավայրերը գնալու համար: Բարձրաւանդակութիւնից ոտների պէս տարածուած շղթաներից ոչ մին նշանաւոր բարձրութիւն չունի: Նոցա միջին բարձրութիւնը $1\frac{1}{2}$ կամ 2 վերստից աւելի չէ:

Իրանի քաղքատանդակութիւնը Արևելեան—Ասիայի բարձրաւանդակութեան նման դէպի հիւսիս է հակուած. նոյնպէս շղթապատած է լեռնային շղթաներով. բայց այդ բարձրաւանդակութիւնը Արևելեան—Ասիայի բարձրաւանդակութիւնից գրեթէ 2 անգամ ցած է. նորա միջին բարձրութիւնը $1\frac{1}{2}$ վերստ է: Նորան շրջապատող շղթաներից նշանաւորները են. Օ՛ափըղ, որ Էլմալայան լեռների նման մի քանի զուգահեռական շղթաներից է բաղկացած. նորա շրջապատում են բարձրաւանդակութիւնը արևմուտքից և հարաւից, նոցա արտաքին կողմը զարտաւոփներով է իջնում, իսկ բարձրաւանդակութեան կողմը զահավէժներով է վերջանում:

Էնդկա — պարսկական լեռները բարձրաւանդակութիւնը շրջապատում են արևելեան կողմից և ընդհակառակը նոցա արտաքին կողմը ուղղորդաձև է վերջանում, իսկ ներքինը առ ի շուղ կէրպով. բարձրաւանդակութիւնը հիւսիսային կողմից շրջապատող շղթայի արևելեան մասը Պարապադիզ կամ Էնդոռնա է կոչվում, իսկ արևելեան մասը Էլբուրզ. առաջինը իւր զառիվայրներով Օ՛ափըղի նման է, իսկ երկրորդը—Էնդկա—պարսկականին:

Իրանի բարձրաւանդակութեան շղթաների բարձրութիւնը որոշ յայտնի չէ, և միայն կարելի է ասել, որ նորա ամենաբարձր լեռների կարգից են: Նոցա անցքերից գլխաւորները երկու են, մին Էլբուրսի միջով տանում է դէպի Կասպից ծովը, ուստի Կասպեան դուռ է կոչվում. միւսը Էնդկա—պարսկական լեռների միջով տանում է դէպի Էնդկասան և կոչվում է Աքքոլեան անց: Այս վերջինը արդէն հազարաւոր տարիներից հետէ հարուստ Արևելեան—Էնդկասանը և Արևմտեան—Ասիան միմեանց հետ հաղորդակցող դուռը է եղած: Վերջին դուռը առաջինից աւելի յայտնի և կարևոր է: Բաց ի այդ անցքերից՝ Իրանի բարձրաւանդակութիւնը Զունգարիան դռների նման մի անցք ունի. այդ անցքը գտնվում է հիւսիսային շղթայի ամենացած տեղում, այս տեղից յետ ու առաջ անցել են նոյնպէս շատ ազգեր:

Իրանի բարձրաւանդակութեան ներքին մասը, Արևելեան—Ասիայի բարձրաւանդակութեան նման նշանաւոր շղթաներ չունի, նորան կարելի է երկու մասը անել, արևելեան՝ որ մասամբ ժայռոտ, մասամբ կաւոտ, աւազոտ և աղի գաշտավայր է, և արևմտեան՝ որ աւելի պտղատու և արգաւանդ է: Սաստիկ քամիների ժամանակ մանր կարմրագոյն աւազը երկրից բարձրանալով լցնում է մթնոլորտը, որին միատեսակ յատկութիւն է տալիս. ճանապարհորդի հագուստի և մինչև անգամ կաշու մէջ թափանցելով, նոցա սաստիկ տանջում է և նեղացնում: Այդ տեսակ սաստիկ քամիներից յետոյ, կազմվում են աւազի բլուրներ, որոնք երբեմն մի քանի դրկաչափ (սաժէն) բարձրութիւն ունին:

Իրանի բարձրաւանդակութիւնը շրջապատող շղթաները բարձրաւանդակութիւնների շղթաների հետ միանալով լեռնային հանդոյցներ են կազմում: Իրանի և Արևելեան—Ասիայի բարձրաւանդակութիւնները միմեանց հետ միացնող լեռնային հանդոյցը Էնդկական Պովկաս է կոչվում: Իրանի և փոքր Ասիայի բարձրաւանդակութիւնը միացնող լեռնային հանդոյցը Էրմական է կոչվում: Էլմալայան, Կուէն—Լու, Կոլոր—Տաղ, Էնդկա—Պարսկական և Էլինդուկու շղթաների միմեանց փոխադարձ միջակատար անելուց է առաջացել Էնդկական հանդոյցը: Էրմական գօտին կազմուած է Օ՛ափրըշի, Էլբուրսի և Փոքր—Ասիայի բարձրաւանդակութիւնը շրջապատող լեռների երկրորդական կարգերի միմեանց միջակատար անելուց: Էրմական լեռնային գօտու մէջ բարձր ի գլուխ կանգնած է Սաւալ դերի մէջ յիշված մեծահամբաւ և ազատ Էրթաբը, որ $4\frac{1}{2}$ վերստ բարձրութիւն ունի:

Փոքր Ասիայի բարձրաւանդակը շրջապատուած է միայն երեք կողմից լեռնային շղթաներից, — հիւսիսային, արեւելեան և հարաւային կողմերից Փոքր — Ասիայի բարձրաւանդակութիւնը գրեթէ երկու անգամ ցած է Իրանի բարձրաւանդակութիւնից: Փոքր — Ասիայի բարձրաւանդակութիւնը արեւելեան կողմից շրջապատում են Անդիտաւրոս լեռները, հարաւային կողմից — Տաւրոսը, իսկ հիւսիսային կողմից շրջապատողները դանազան անուններ են կրում:

Տաւրոսեան լեռները Փոքր Ասիոյ թերակղզու եղերքով անցնելով արեւելքից դէպ արեւմուտք, աստիճան առ աստիճան ցածանում են, արեւելեան մասում նոցա միջին բարձրութիւնը գրեթէ երեք վերստ է, արտաքին կողմից ուղղորդաձեւ են վերջանում, իսկ բարձրաւանդակութեան կողմում առ ի շեղ դրուած են: Հիւսիսային կողմում բարձրաւանդակութեան շրջապատող լեռները նոյնպէս թերակղզու եղերքով են անց կենում և վերոյիշեալն նման արտաքին կողմից ուղղահայեաց են իջնում, իսկ բարձրաւանդակութեան կողմը առ ի շեղ: նոցա միջին բարձրութիւնը գրեթէ երկու անգամ փոքր է Տաւրոսից: Փոքր Ասիայի միջին երկիրները Իրանի նման ազով են ծածկուած, արտաքին կողմից ուղղահայեաց են իջնում, իսկ բարձրաւանդակութեան կողմը առ ի շեղ և միայն տեղ տեղ լեռնային շղթաներ ունին, որոնց մէջ գտնվում է բարձրաւանդակութեան ամենաբարձր գագաթը, — Էրջէյ՝ որ $3\frac{1}{2}$ բարձրութիւն ունի:

Սիրիայի բարձրաւանդակութիւնը Փոքր — Ասիայի բարձրաւանդակութեան հետ միանում է այն լեռնային շղթայով, որ Տաւրոսից դէպի հարաւ (դէպ այն անկիւնը՝ որ կազմուած է Միջերկրական ծովով և Փոքր — Ասիայի բարձրաւանդակութիւնով) է տարածվում: Սիրիայի բարձրաւանդակութիւնը արեւելքից շրջապատուած է Ասորեստանի անապատից, իսկ արեւմտքից Միջերկրական ծովից:

Շրջարկիս ամենահոր հովիտը (տեղ տեղ մինչև անգամ $4\frac{1}{2}$ վերստ ցած է ծովի մակերեւոյթից) Սիրիայի բարձրաւանդակութիւնը երկու մասի է բաժանում — արեւելեան և արեւմտեան. Արեւմտեան մասի հիւսիսային կողմում գտնվում է Աման գօտին, որ Տաւրոսից փոքր ինչ ցած է և գրեթէ ծովի ափունքն է անցնում: Հարաւային կողմում գտնվում է Լիբանանի շղթան, որի արեւելեան մասը Անտիլիբանան (Լիբանանի հակառակ) է կոչվում, Տաւրոսից երկու անգամ փոքր է: Լիբանանը և Անտիլիբանանը հարաւում միանալով Հերմոնի լեռնային հանդոյցը են կազմում, որ գրեթէ երեք վերստ բարձրութիւն ունի: Հերմոնը, որ բարձրաւանդակութեան ամենաբարձր կէտը է, Սիրիայի խոռոչը երկու մասի է բաժանում, — հիւսիսային Կողոսիրիա և Հարաւային — Ցորդանանի հովիտ: Լիբանանի և Աման գօտու մէջ տեղ գտնուած տարածութիւնը, Պարսից ծոցից դէպի Միջերկրական ծովը գնալու համար ամենայարմար անցք է: Ժողովրդային վաճառականական և պատերազմական ճանապարհ է: Գետին ինքը մի քանի անդէպ ունի, որոնք առելի նշանաւոր են այն պատճառով, որ Փոքր — Ասիա թերակղզուց Եփրատ և Սիրիա գնալու համար, ամենայարմար ճանապարհների վերայ են գտնվում: Սիրիայի բարձրաւանդակութեան արեւմտեան մասի հետ կցորդվում է Սինայի բարձրաւանդակութիւնը, որ տարածուած է Կարմիր ծովու երկու ծոցերից կազմած թերակղզու վերայ: Այդ բարձրաւանդակութեան վերայ գտնվում են Սուրբ Գրքի մէջ անուանի Սինա և Հորէբ լեռները: Սինա լեռը Երաբատից երկու անգամ ցած է:

Սիրիայի բարձրաւանդակութեան արեւելեան մասը միանում է Նէժէմի կամ Արաբական բարձրաւանդակութեան հետ, որ տարածվում է գրեթէ ամբողջ թերակղզու մէջ և ուղղորդաձեւ դահավէժներ ունի. այս բարձրաւանդակութիւնը հարաւային մասում ուղղորդաձեւ ժայռերով միանում է ծովի մէջ, այս պատճառով թերակղզու այս մասը ծովի կողմից բոլորովին անմատչելի է: Արաբական բարձրաւանդակութեան միջին բարձրութիւնը Իրանի միջին բարձրութեան չափ է: Բարձրաւանդակութեան ներքին մասը աւազոտ և ժայռոտ անապատներից

է բաղկացած, որոնք տեղ տեղ լեռնային շղթաներ և ոլորտներ ունին:

Վերոյիշեալ բարձրաւանդակութիւնների կարգից դուրս առանձին դանվում է Դէկանի բարձրաւանդակութիւնը: Այդ բարձ. հռանկիւնաձև է և բոլոր Հնդկաստան թերակղզին բռնած է, և միջին բարձրութիւնը փոքր ինչ ցածր է Իրանի բարձրաւանդակութիւնից:

Դեկան կոչվում է բարձրաւանդակութեան միայն միջին ամենամեծ մասը, որ արևելքից և արևմուտքից շրջապատուած է Գոթէս շղթաներից [որոնցից արևմտեան շղթան արևելեանից բաւականին բարձր է, $1^1/_2$ վերստ է միջին բարձրութիւնը] հիւսիսային կողմից պատած է Վինդիա [այս ինքն ձեղքուած լեռներ, շատ անցքեր ունենալուն համար] լեռներից, հարաւային կողմից շրջապատած է թէպէտ կարճ, բայց թերակղզու ամենաբարձր լեռնային շղթայից — Նիլ — գերէ [կապտագոյն լեռներ], որ գրեթէ $2^1/_2$ վերստ միջին բարձրութիւն ունի: Արևմտեան Գատէսի և Նիլ — գիրի լեռների արտաքին կողմը ուղղահայեաց է վերջանում: Վերոհիշեալ լեռներից դէպի հիւսիս բարձրաւանդակութիւնը Մալվա է կոչվում, Ներբուդդից հարաւ Նըա — գիրի՝ որ վերջանում է Կոմորին գլխով: Օվանազան խոր հովիտները Մալվան և Նըա — գիրին միջին բարձրաւանդակութիւնից բաժանում են. հարաւային հովիտը հոփ է կոչվում: Եթէ Սէյլան կղզին ցամաքից բաժանող նեղուցը այդպիսի հոփի տեղ ընդունենք, այն ժամանակ Սէյլանի վերայ չիշնք պէտք է մի բարձրաւանդակութիւն՝ որի պլեատր գագաթը երկու վերստ բարձրութիւն ունի և Ադամ գըե-ի է կոչվում:

Դաշտաւայրերի ստորաւայրերի նկարագիրը: Սէբէրիայի դաշտաւայրը, Արևելեան — Ասիայի բարձրաւանդակութեան հիւսիսումը է, և չնայելով իր ընդարձակութեանը և մեծութեանը՝ աշխարհագրութեան մէջ շատ փոքր նշանակութիւն ունի, այն պատճառով՝ որ նորա հիւսիսային մասում անպատուղ ձահիճներ են, իսկ արևմտ. հարաւային մասը ձահճային և աղի անապատներ: Տաբոթի դաշտաւայրը, Արևելեան — Ասիայի բարձրաւանդակութիւնից դէպ արևմուտք է և Իրանի բարձրաւանդակութիւնից դէպ հիւսիս, Ուրալի բլուրները բաժանում են նորան հարաւային Սիբիրիայի դաշտաւայրերից: Այս դաշտաւայրի յատակը ծովի մակերևոյթից բաւականին ցած է: Կարծում են, որ այս դաշտաւայրը երբեմն այն ծովի յատակը էր կազմում, որ Առուցեալ Ովկիանոսի ընդարձակ ծոցի մի մասը էր: Այս ենթադրութիւնը շատ հաւանական է, որովհետև Տուրանի հողը աղախառը է և այս երկրում շատ աղի ճահիճներ և լճեր կան: Այս դաշտաւայրի հիւսիսային մասը սիզաւէտ խոտով ծածկուած դաշտ է, իսկ հարաւային մասը աւազուտ է և միայն տեղ տեղ ոլորտներ են դանվում:

Հնդկաստանի դաշտաւայրը Վինդալայի ծոցից սկսած տարածվում է մինչև Բրահմական ծովը. գանվում է Վինդիանի, Իրանի և Արևելեան — Ասիայի բարձրաւանդակութիւնների մէջ: Արևմտեան հիւսիսային մասը ըստ մեծի մասին բուրկացած է ջրով, կաւուտ և աւազուտ դաշտերից, որոնք միայն անձրևային ժամանակները ծածկվում են խոտով. արևելեան հարաւային մասը աշխարհիս ամենաբազաւանդ երկրներիցը է, ուստի բազմաթիւ բնակիչներ ունի:

Չինական դաշտաւայրը Արևելեան — Ասիայի բարձրաւանդակութիւնից դէպ արևելք է գանվում և ոռոգվում է խաղաղ Ովկիանոսի ջերմուկ, և վերոյիշեալ նման արդաւանդ լինելուն պատճառով շատ բազմամարդ է:

Մեսոպոտամիայի կամ Միջագետք դաշտաւայրը Արևմտեան Ասիայի բարձրաւանդակ երկիրների մէջը է, այն է Իրանի, Սիրիայի, Բաբելոնի բարձրաւանդակութիւնների և Հայաստանի բարձրաւանդակութիւնների մէջ մեծ մասը միակերպ աւազուտ անապատ է: Պարսից ծոցից դէպի Միջերկրական ծովը գնալու ճանապարհը է:

Բացի ի վերոյիշեալ դաշտաւայրներից նշանաւոր են նոյնպէս Ս) հինգ հատ Հնդկա — Միսապոտամի մէջ. սրանցից ջրերը հինգ եռ-

նային շղթաների մէջ են գտնւում, իսկ մին՝ լայնածաւալ տարածւում է Թերակղզու արևելեան ափով. Ե) Էրէոսը Հնդկաստանի վրայ. մին շատ լայն է և գտնւում է Դեկանի բարձրաւանդակութեան արևելեան կողմի և Ծովի միջև, Էրէբոդէը արևմտեան կողմում և նոյնպէս նորա և Ծովի միջև է, առաջինը կոչւում է Կորոմանդելի ափ, երկրորդը — Մալաբարի ափ. Զ) Ի հարաւ Ընթացական Ընդակղզում և Տէզգամա է կոչւում և մի նեղ Ծովախնայ տարածութիւն է Ծովի ափին:

Բաց ի Կորոմանդելի կղզիներից Ասիային պատկանում կղզիները առ հասարակ լեռնոտ են: Այդ կղզիներից մի քանիսը պարունակում են իւրեանց մէջ բարձրաւանդակութիւններ, որոնք մինչև մի վերտ միջին բարձրութիւն ունին, և որոնց վերայ այնպիսի շղթաներ կան, որ չորս վերտ բարձրութիւն զգալ թիներ ունին: Առաւել բարձր լեռները գտնւում են Ջաւայի արևելեզգոսի կղզիների վերայ, այդ կղզիներից իւրաքանչիւրը զբաղեցնում առանձին բարձրաւանդակութիւն է կազմում: Պոցանից բացառութիւն է կազմում միայն Յումատրա կղզին, որի կեսը դաշտավայր է:

Մասամբ Ասիայի ափերը, մասամբ իւրեանց Հնդկեան և արևելեան Ովկիանոսի մէջ եղած կղզիները գտնւում են այն հրաբղխային օղի մէջ, որից շրջապատած է մեծ Ովկիանոսը: Այսպէսով Ջաւայի, Մոլուկեան, Փիլիպպեան, Տիմորզա, Ն'ապոնի և Կուրիլեան կղզիների լեռների գագաթներից շատերը շրջած, շատերը էս ներգործող հրաբուղխներ են. այս հրաբուղխների կարգը տարածված է նոյնպէս Կամչատկայի արևելեա — հարաւային մասում (Կոտկա) և Ալեուտեան կղզիներից անցնելով հասնում են Ամերիկա: Ասիայի մէջ ներգործող հրաբուղխներից նշանաւորները են Դեմա-Ենդ Իրանի բարձրաւանդակութեան հիւսիսային ծայրում Էլբուրսի վերայ, Կերիւ հատ Տիան — Շան շղթայի վերայ էլն:

Հանքերը: Ասիան թէպէտ Եւրոպայի չափ հրկիզի և քարէ ածուխի հանքեր չունի, այնուամենայնիւ ածխի տեսակից Եւրոպայից հարուստ է, գլխաւորները են ոսկի, արծաթ, նոյնպէս պղինձ, անագ և թանկագին քարերը: Ոսկի գտնւում է մեծ մասամբ Ուրալեան, Ալբչինսկի լեռներում և Ուրևելեան — Հնդկաստանի թերակղզիների և կղզիների վերայ եղած լեռներում. արծաթը — Ալբչինսկի մէջ. պղինձը Ն'ապոնայի լեռներում. անագ Մալակա — թերակղզում և Բանկի կղզի լեռներում: Թանկագին քարերը գլխ օրինակ ադամանդ, կարկեհան (հազոտ), և այլն՝ Ուրևելեան — Հնդկաստանում:

Ասիայի մակերևոյթի կազմութեան հետևանքները: Ասիայի մակերևոյթի կազմուածքից երևում է, որ Ասիայի մակերևոյթը Եւրոպայի մակերևոյթին ամենևին հակառակ կազմուածք ունի: 1) Եւրոպայի մէջ դաշտավայրերի տարածութիւնը երկու անգամ աւելի է բարձրաւանդակութիւնների տարածութիւնից. իսկ Ասիայում ընդհակառակը: 2) Եւրոպայում դաշտավայրերը գրեթէ անընդհատ տարածութիւն են կազմում. իսկ Ասիայում ընդհակառակը բարձրաւանդակութիւնները այդ յատկութիւնը ունին: 3) Ուրիշ Եւրոպայում բարձրաւանդակութիւնները զանազան կառուցներից են կազմուած. իսկ Ասիայում այդ յատկութիւնը ընդհակառակը ունին դաշտավայրերը: 4) Եւրոպայի դաշտավայրերը տեղ տեղ բլուրներ ունին և մեծ մասամբ արգաւանդ հրկիզներ են. իսկ Ասիայի դաշտավայրերը մեծ մասամբ միակերպ դաշտավայրեր են, որոնք կամ (առնարներ) ձահճներ են կամ անջուրէա և կամ կաւոտ և աւազոտ անապատներ: 5) Եւրոպայի բարձրաւանդակութիւնները մեծ մասամբ լեռների այնպիսի շղթաներ են, որոնք միջակ բարձրութիւն ունին և այդ իսկ շղթաները շատ յարմար անցքեր ունին: Ասիայի բարձրութիւնները ընդհակառակ և ծովի մակերևոյթից բաւականի բարձր լեռնագաշտեր են, որոնք ամենաբարձր և աշխարհիս ամենաանանցանելի լեռների շղթաներից են շրջապատած: Այս շղթաներից մի քանիսի ամենացած անցքերը Եւրոպայի ամենաբարձր լեռից — Մոնբլանից բարձր են: Ասիան իւր մակերևոյթի կազմութեան կող-

1004
18062

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/XI—1922

մից միայն մի բանով նման է Եվրոպային, այս ինքն թէ Ասիայում և թէ Եվրոպայում ղեկաւոր շղթան ցամաքի մէջ տիզը է դանվում: Ասիայի և Եվրոպայի մակերևոյթների կազմութեան զանազանութիւնը յետագայ հետևանքները է ունեցել, 1) որ Եվրոպայի բնակիչները բնութեան կողմից ոչինչ դժուար արգելք չունենալով, հեշտութեամբ էին միմեանց հետ հաղորդակցում, ուսոի շուտով նոքա լուսաւորուեցան. այն ինչ Ասիայի բնակիչները բնական դժուար արգելքների պատճառով չէին կարող հեշտութեամբ միմեանց հետ հաղորդակցութիւն ունենալ, ուսոի չնայելով, որ լուսաւորութիւնը Ասիայի երկիրների մի քանիսի մէջ Եվրոպայից վաղ էր սկսուած, սակայն այժմ ևս Ասիայի բնակիչները Եվրոպացիներից շատ յետ են ձեացած: 2) Որովհետև Ասիայի բարձրաւանդակութիւնները և դաշտավայրերը ըստ մեծի մասին ձահիճներ և աւազուտ տարածութիւններ են, ուսոի բնակիչների մէջ թափառական կեանքը զարգացել է, այն ինչ Եվրոպայում ընդհակառակը լինելով բնակիչների մէջ քաղաքային կեանք է զարգացել: 3) Եվրոպայի նման Ասիայում ևս ղեկաւոր շղթան ցամաքի մէջ տիզը է, ուսոի գետերը Եվրոպայի գետերի նման թէպէտ զանազան կողմեր են հոսում, և թէպէտ անհամեմատ խորը, երկար և լայն են Եվրոպայի գետերից, սակայն երբէք առաջինների նման օգտաւէտ չեն, որովհետև այն լեռները որոնցից սկսվում են, այդ գետերը շատ լայնանիստ են և մեծ: Եվրոպացիները իւրեանց գետերի օգնութեամբ ոչ միայն միմեանց հետ հաղորդակցութիւն ունեն, այլ և ազատ և շատ յաջողակ կերպով հաղորդակցում են աշխարհիս միւս մասերի հետ. Ասիայի գետերով միայն ցամաքի ափերի հետ կարելի է հաղորդակցութիւն ունենալ: 4) Եվրոպական բարձրաւանդակութիւնների չափաւոր բարձրութիւն ունենալը կլիմայի բարեխառնութեանը օժանդակելով, ուսոի ոչ պակաս ազդեցութիւն ունի և նորա վերայ որ բոյսերը և կենդանիները աւելն աւել փոքր ի շատէ միանման լինելով՝ աւելի հեշտացնում են ժողովրդի միմեանց

1004

հետ հաղորդակցութիւնը: Ասիայի մէջ ընդհակառակը լեռների շղթաները ղեկաւորապես արևմուտքից դէպ արևելք են տարածվում, և այնպէս ահագին են, որ ոչ մի ցամաք մի փոքր տեղում այնքան զանազան և հակադիր կլիմայ, բոյսեր և կենդանիներ չունի, ինչպէս Ասիան: Յայտնի բան է, որ այս հակադրութիւնը նոյնպէս դժուարացնում էր ժողովրդի հաղորդակցութիւնը միմեանց հետ: 5) Որովհետև Ասիայի ամենաբարձր մասը բարեխառը գօտում է և հիւսիսից բոլորովին բաց է, իսկ հարաւից ծածկուած, ուսոի Ասիայի բարեխառը երկիրները լուսաւորութեան տարածուելուն այնպէս յարմար չեն ինչպէս Եվրոպայի երկիրները:

ՕՕՈՂՈՒՄՆ.

Ասիայի ուռղման և ջրաբաշխութեան համառօտ նկարագիրը: Ընդհանրապէս ասելով՝ Ասիան Եվրոպայից սակաւ է ուռղվում, որ ղեկաւորապէս երկու պատճառից է յառաջանում: 1) Ասիան համեմատաբար իւր տարածութիւնը Եվրոպայից սակաւ է կտրտուած ծովերով. 2) ամենաբարձր լեռներով է շրջապատուած գրեթէ ցամաքի $^2/_3$ մասը և ահագին բարձրաւանդակութիւններից է կազմուած. 3) այդ բարձրաւանդակութիւնները այնպիսի տեղերում են գտնվում՝ ուր տարաբ բոլորովին անձրև չի գալիս: Սակայն Ասիայի զանազան մասերը, զանազան տեսակ են ուռղվում. Արևելք – հարաւային Ասիան (Արևելեան Հընդկաստանի թերակղզինները և Շրշիպելագոսը, նոյնպէս Բրաբիայի, Իրանի և Արևելեան – Ասիայի բարձրաւանդակութիւնների հարաւային կողմերը) ջրի կողմից շատ հարուստ է, որովհետև այնպիսի գօտում է, ուր մուսսոնների ներգործութեամբ շրջապտական (տրօպիկական) անձրևներ են լինում: Միջին Ասիան ընդհակառակը շատ աղքատ է այդ կողմից, որովհետև ցամաքի մէջ տեղը է գտնվում և բաղկացած են բարձրաբերձ լեռներով շրջապատած հարթ բարձրաւանդակութիւններից.

աղքատութեան միւս պատճառը և այն է, որ ամառը այս տեղ անձրեւ չէ գալիս բոլորովին, այս տեղում ամառը միշտ չոր է, և դէպի հարաւ գնալով երաշտը աւելի սաստիկ և շարունակ է լինում: Հիւսիսային Ասիան Արեւմտա—հարաւային խոնաւ և Արեւելա—հիւսիսային չոր քամիների սպրդուքեան տակ գտնուելով՝ ջրի կողմից թէպէտ Եւրոպային նման առատ չէ, սակայն միջին Ասիայից չափազանց հարուստ է:

Ասիայի գետերը և լճերը երկու դլխաւոր մաս կարելի է բաժանել, հնդկեան և պրոտաքին. առաջինին պատկանում են զանազան բարձրաւանդակութիւնների աւազանները, իսկ երկրորդին — զանազան ովկիանոսների աւազանները:

Հնդկեան աւազանի գետերը և լճերը: Ա) Ընթ-ելեան Ասիայի բարձրաւանդակութեանը պատկանում է Տարիմ գետը, որ կազմում է Լոբ—Նոր լիճը, Խոտէ—Կոլ և Քոլ կոչ լիճերը, իւրեանց մէջ թափւող և իւրեանցից սկսւող գետերի հետ միասին Արեւելեան—Ասիայից դէպի Տուրանի դաշտավայրը գնալու համար ճանապարհներ են կազմում. Զունգարեան դռները: Բ) Իրանի բարձրաւանդակութեան աւազանի գետերից նշանաւոր է Հելմենդ գետը՝ որ կազմում է Համունդ լիճը — ձահիճը. այս գետի վերին մասերը մօտենում են Կարուլի անցքին. ուստի Տարիմի նման վաղուց արդէն արեւելեան և արեւմտեան Ասիայի միմեանց հետ հաղորդակցելու մէջ նա ճանապարհ է դարձած: Գ) Սիրիայի բարձրաւանդակութեան աւազանը բաղկացած է Յորդանան գետի ջրատաւտից. այս աւազանը աշխարհիս ամենախորին հովիտը լինելով նշանաւոր է: Յորդանան գետի աւազանի ջրատաւտի հարաւային մասը վերջանում է (Աւազրէ) Ասֆալտ լճով, կամ Մեռեալ ծովով: Մեռեալ ծովը առաջացաւ Սոդոմ, Գոմոր և այլ քաղաքների կործանելու ժամանակ երկնից երկրաշարժից, որովհետեւ երկիրը այդ տեղում փլաւ: Մեռեալ ծովի ջուրը սաստիկ գոլորշիանալուց աղի լոյծը սաստիկ թանձրանում է՝ այնպէս որ ծովի ափը հատ աղի կեղևով է ծածկուած, իսկ ջրի երե-

սին երբեմն ծփում են կուպր աղի կտորներ, այդ կտորների անունից լիճը սուացել է իւր անունը: Գ) Կասպից ծովի աւազանի ասիական մասը երկու առանձին աւազաններից է բաղկացած — Արալու լճի (ծովի) և Կասպից լճի (ծովի) աւազաններից: Արալու լճի (ծովի) աւազանին պատկանեալ գետերից նշանաւորները երկու հատ են՝ Սեր—Դարիա և Ամո—Դարիա կամ Գիհոն: Սիր—Դարիա և Ամուր—Դարիա գետերը իւրեանց վերին մասերով Տարիմ գետի աւազանին մօտենալով, արեւելեան և արեւմտեան Ասիայի ճանապարհ են դարձած: Կասպից լճի (ծովի) աւազանին նմանապէս երկու գետ են պատկանում, որոնք ինչպէս սահմանակից գետեր բաւականին երեւելի են հիւսիսում, Ո—լոլ, որ Եւրոպայի և Ասիայի սահմանը է կազմում, Արեւմտա—հարաւում կոլ իւր գլխաւոր երասխ գետակով, որ Պարսկաստանի և Ռուսաստանի սահմանը է կազմում:

Արտաքին աւազանների գետերը և լճերը: Ա) Ատլանտեան Ովկիանոսի աւազանին պատկանեալ գետերից նշանաւորը է Ոչոնդ գետը. Որոնդի բերանը բաւականին նաւագնաց է. Միջերկրական ծովի այն մասի մէջ է թափւում, որը Մեսոպատամիայի կամ Միջագետքի դաշտավայրին աւելի մօտ է, ուստի Ասիայի և Եւրոպայի միմեանց հետ հաղորդակցելու ամենալաւ ճանապարհը է:

Բ. **Հնդկաց Ովկիանոսի աւազանի գետերը:** Եփրատ և Տիգրիս. Եփրատի ընթացքը Մեսոպատամիայի մէջ ճանրախաղաց է, ուստի Եփրատի այդ մասը նաւագնացութեան համար յարմար չէ: Եփրատի և Տիգրիսի միացեալ դաշտը այս ինքն Շաթ—ալ—Էրաբը Պարսից ծոցը թափուելուց առաջ հօթ առաջք է բաժանւում, որոնցից միայն մին նաւագնաց է: Միջերկրական ծովի և Պարսից ծոցի, Հնդկաստանի և Եւրոպայի մէջ տեղը գտնվելով, Տիգրիս և Եփրատ գետերը վաղուց արդէն Ասիայի և Եւրոպայի միմեանց հետ հաղորդակցելու ամենալաւ վաճառականական ճանապարհները էին.

Ճանապանգ Եփրատը, որ միայն հարիւր չիստուն վերստ հեռաւորութիւն ունի Միջերկրական ծովից: Քանի որ Նովկաստանի ծովային ճանապարհը յայտնի չէր, այս գետերը լինելով վաճառականական ճանապարհներ ի հարկէ մեծ նշանակութիւն ունէին. այս պատճառով նոցա ափերի վերայ շատ երեւելի քաղաքներ, աւերակներ կան: Յին ժամանակը այս տեղ ծաղկած էին Բաբելոնը Եփրատի ափերի վերայ, իսկ Նինուէն Տիգրիսի վերայ. միջնի դարերում երեւելի էին Մօսուլ և Բաղդատ:

Ինդոս, սկսվում է Հիմալայեան լեռների հիւսիսային զառիվայրից: Ինդոսը ալ կողմից ընդունում է Կաբուլ գետը՝ որ Նովկեան լեռների միջից անցնելու միակ ճանապարհը է կազմում Իրանի բարձրաւանդակութիւնից Արեւելեան Նովկաստան գնալու համար. ուրեմն Կաբուլի ճանապարհը Հնդկաստի ճանապարհի շարունակութիւնը է: Ինդոսի արեւելեան գետակիցներից երեւելին կամ դլեաւորը է Սէտլէջ, սկսվում Մանասարովար Ըղվեական (բարձրադիր) լճից, որի մակերեւոյթը չորս վերստ բարձր է ծովի մակերեւոյթից. Մանասարովարը աշխարհիս մէջ ամենաբարձր Ըղվեական լճերի կարգիցը է: Սէտլէջը իւր մէջ պարունակում է արեւմտեան Հիմալայեան լեռների թէ հիւսիսային և թէ հարաւային զառիվայրերի գրեթէ բոլոր ջրերը. այդ ջրերը Սէտլէջի մէջ լցուելուց առաջ երեք մեծ գետեր են կազմում, ուստի Նովկաստանի դաշտավայրի այն մասը, որ ոռոգվում է Ինդոս, Սէտլէջ գետերով և այս վերջինիս երեք վտակները պէնջաբ կամ Նդապետեան է կոչվում: Գանդէս սկսվում է Հիմալայեան լեռների հարաւային զառիվայրերից: Նորա վտակներիցը նշանաւորը Ջ՚ումնան է կոչվում. Գանդէսի և Ջ՚ումնայի մէջ գտնուած դաշտավայրը Դոաբ: Նդկաց Ովկիանոսը թափուղ գետերից ամենաերեւելին Գանդէսը է, ուստի և աշխարհիս ամենադաւանդ, ամենաբազմամարդ և ամենալաւ դաշտավայրերից է, կամ լաւ էս ասել Ասիական Լ՚ամբարթիայինն է անցնում: Ինակիչները Գանդէսին Մուրը են կոչում: Ինակիչների համար աւելի նուիրական է գետի վերին կողմերը և այն տեղերը ուր թափվում են վտակները: Այդ տեղերը Նդիացիների համար այն նշանակութիւնը ունէին, ինչ որ Երուսաղէմը, Մահմետականների համար Մէքքան: Գանդէսի ափերը ցած դրութիւն ունին, այս պատճառով՝ ջրերի մեծանալու ժամանակ այս գետը Պոյի նման հեղհեղում է շրջակայ հովիտները. ինչպէս Լ՚ամբարթիայում նոյնպէս և այս տեղ ջրի նուազելուց յետոյ սիլտը է մնում, որ ձոխ և շատյալ բուսականութեան պատճառ է դառնում:

Երահմաքոպտրայ, Իրավոպտէ, Սալուէն, Մինամ և կամ Նոջա գետերը բոլորը նաւարկելի են և մեծանալով հեղհեղում են իւրեանց հովիտները: Սէ—Կեանգ կամ Մոպտոպտեայ գետը, իւր բերանի մօտ ընդարձակ ծոց է կազմում, ուր բազմաթիւ կղզիներ կան, այս գետը նոյնպէս նաւարկելի է:

Գ) Մեծ Ովկիանոսի աւազանի գետերը: Նան—Սոե—Կեանգ կամ Պոպոյո գետը 5000 վերստից աւելի երկայնութիւն ունի, երկայնութեան համեմատ խորութիւն և լայնութիւն էս ունի նեղքին մասերում. 10—15 վերստի է հասնում լայնութիւնը. Նան—Սոե—Կեանգ գետը նաւարկելի է: Ջոանգոյ կամ Գէղէյն գետ այսպէս է կոչվում [պղտոր ջրի պատճառով], նախընթացից կարճ է: Ջրերի մեծանալու ժամանակ միայն մեծամեծ լաստերը և բազմաթիւ ջրանցքները փրկում են նորա ստորին մասերի գետափնեայ բնակիչներին հեղեղներից: Իւր սրընթացութեան պատճառով նախընթացի նման շատ յարմար չէ նաւարկութեան համար: Գէղէյն և Պոպոյո գետերի ստորին մասերը Գանդէսի և Երահմապուտրայի նման անցնում են աշխարհիս ամենադաւանդ և բազմամարդ հովիտներից մէնի միջով:

Ենոթ բաղկացել է Շէլէպէի և Ըղվունի գետերի միաւորութեամբ: Ըմուրի միջակողմեան վտակներից նշանաւորները են Սոնգոլի և Սոոորի: Ըմուրը մինչև Ուսուրի վտակը ընդու-

նելը և Ոսուրին ինքը Չինաստանի և Ոուսիայի կայսերութեան սահմանը են կազմում. Հիլիան նաւադնաց է Ներչինսկից սկսած. Ամուրի վերայ Սրեձենսկից սկսած մինչև բերանը միշտ նաւադնացութիւն կայ: Բայց Ամուրի վերայ նաւադնացութիւնը կատարվում է միայն հարթայատակ նաւերով. նաւադնացութիւն լինում է Յունիսից սկսալ մինչև Սեպտեմբեր ամիսը: Արևելեան Ովկիանոսը գնալու համար Ոուսաստանի ամենալաւ ջրային ճանապարհը Հիլիան և Ամուրը են: Էյն օրից երբ Ոուսիայի համար բացուեցան Չինաստանի և Ճապոնիայի նաւահանգիստները՝ այս ջրային ճանապարհների նշանակութիւնը աւելի և մեծացաւ: Ամուրի ճանապարհի նշանակութիւնը աւելի կմեծանայ երբ արևելեան Ովկիանոսի ափին եղած Պասիեա նաւահանգստից երկաթուղի կշինուի մինչև նաւադնաց Ոսուրին, այն պատճառով որ այդ նաւահանգիստը մօտ է Ճապոնիային ու Չինաստանին և Ապրիլից սկսած մինչև Նոյեմբեր ամիսը սառուցից ազատ է:

Սառուցեալ Ովկիանոսի աւազանի գետերը: Լենա մի քանի տեղում լայնութիւնը 2—3 վերստ է մինչև անգամ 10 վերստ. նորա այն մասի մէջ որ ստորավայրովը է անցանում՝ շատ փոփոխական կղզիներ կան. այդ կղզիները իւրաքանչիւր տարի փոխում են իւրեանց տեղը: Լենայի վտակներից նշանաւոր է Ալդան: Սիբիրիայի միջին երկիրներից Օխոտսկի ծովը գնալու համար երկար ժամանակ Լենան իւր Ալդան վտակի միջնորդութեամբ միակ ճանապարհ էր կազմում: Ենիսէյ Ասիայի գետերից ամենաերկարը է: Ենիսէյի ձախակողմեան վտակներից նշանաւորը է Աբական, որը Ենիսէյի մէջ թափվելով նորան նաւադնաց է շինում. աջակողմեաններից նշանաւորները են Վ. Էրլիկ, Տունգուզկա Անգարայի հետ, որ սկսվում է Բայկալ լճից: Անգարան սկզբից մինչև վերջը նաւադնաց է: Բայկալ լիճը բոլոր Ալպիական լճերից երևելին է թէ իւր խորութեամբ և թէ առանձին յատկութիւններով: Մի քանի տեղերում նորա խորութիւնը մինչև 800 սաժէնից

աւելի է: Էյս պատճառով այդ լճի շրջակայ բնակիչները Սուրբ ծով են կոչում: Սուրբ են կոչում այն պատճառով, որ ամեն կողմից լեռներով շրջապատած լինելով, այդ լճի վերայ յաճախ փոթորիկներ են պատահում, լճի մէջ եղած ալէկոծութիւնը մարսափեցնում է շրջակայ անապաշտ ժողովրդներին, այս պատճառով երէ նաւադնացութիւնը յաջողութեամբ են վերջացնում, շնորհակալութեան զոհեր են անում լճին: Ահա ինչու համար Բայկալի վերայով հաղորդակցութիւնը մեծ մասամբ ձմեռ է լինում, երբ նա բոլորովին սառած է: Բայկալի ջուրը մաքուր և անուշ է. նորա մակերևոյթի վերայ մանաւանդ ափերի մօտ ջրի երեսին լողում է անդադար անուշահոտ ձիւթ, որ բղխում է գետնից: Բայկալի վտակներից նշանաւոր է Սելենգա, որի ստորին մասը նաւադնաց է: Ենիսէյ գետը իւր վտակներով երկու ճանապարհ է կազմում, որոնցից մինը տանում է արևելեան Ովկիանոսի ափերը Օխոտսկի ծով, իսկ միւսը — Չինաստանի սահմաններըը:

Օբ գետի աւազանը ոչ միայն ամբողջ Ասիայի՝ այլ և բոլոր Հին աշխարհի մէջ ամենարնդարձակ է. Օբի աւազանը երկու անգամ մեծ է Վոլգայի աւազանից, բայց նա նշանաւոր է ոչ այնքան իւր աւազանի ընդարձակութեամբ՝ որքան նաւադնացութեան յարմար լինելովը: Օբի աջակողմեան վտակներից նշանաւորը է Սէօ, ձախակողմիններից — Իրտիշ, որ անցնում է Զայսանգ լճից: Զայսանգ լճից սկսած Իրտիշը նաւադնաց է. վերին Իրտիշի մասը և Զայսանգ լճի հովիտը այն նշանաւոր դրան մի մասը է, որ կոչվում է Ջունկարեան: Իրտիշի ձախակողմեան վտակներից նշանաւորը է Տօբօլ: Տօբօլի մէջ ձախ կողմից թափվում է Տոբա. իսկ Տուրայի մէջ — Տագիլ: Օբի աւազանի բոլոր գետերից, Վոլգայի աւազանի Ջուսովոյ գետին ամենամեծը Տագիլը է, (միայն 60 վերստ հեռաւորութիւն ունի):

Ասիայի գետերի և լճերի իբրև հաղորդակցութեան ճանապարհների նշանակութիւնը: Ը-

սիայի գետերի և լճերի մասին կարելի է ասել հետևեալը. 1) Ներքին ասիացիներին պատկանեալ գետերը և լճերը նշանաւոր չեն ոչ իւրեանց խմելի ստացուածքով, ոչ բուն իւրեանց մեծութեամբ և ոչ նաւագնացութեան ընդունակութեամբ, որովհետև նոքա գլխաւորապես այնպիսի գետեր են, ուր միայն մի նշանակեալ ժամանակում են լինում անձրևները, այն էլ շատ աննշան չափով. և երբ երբեմն այդ գետերի ջրերը մեծանում են, այդ էլ շատ կարճատև է լինում. ամառը նոցա մեծ մասը ամենևին ցամաքում է: Նոցա նշանակութիւնը այն է, որ նոքա ինչպէս ոռոգել են, նոյնպէս և այժմ ժողովրդների թափառելու և կարաւանների անցնելու ճանապարհներ են: Այդ գետերից շատերը կամ աղի և կամ եղէգներով լիք ճահիճների մէջ են վերջանում: Լճերը առհասարակ սակաւաջուր են, թէպէտ մի քանիսը, ինչպէս Պասպից և Բրալու լճերը, այնպէս լայնատարած են, որ հին ժամանակներից հետէ աշխարհագրութեան մէջ ծով են կոչվում. Պասպից ծովի հարաւային մասը բաւականին խոր է: 2) Եփրատին առապնակ գետերը և Ճերը, բայց ի մի քանիսից առհասարակ խորը և մեծ են, ապա ուրեմն և նաւագնաց, այնպէս որ նոցանից շատերը այս կողմից Եւրոպայի գետերից գերազանց են, բացառութիւն կազմում են միայն Ասլանտեան Ովկիանոսի աւազանի գետերը և մասամբ Եփրատը և Տիգրիսը: Հնդկաց Ովկիանոսի աւազանին պատկանեալ գետերի ջրերը շատանում են արևադարձական անձրևների ժամանակ, իսկ միւսները լեռների ձիւների և սառուցների հալվելու ժամանակ: 3) Ասիայի գետերը իւրեանց ցամաքի համար բոլորովին չունին այն նշանակութիւնը, ինչ նշանակութիւն որ ունին Եւրոպայի գետերը Եւրոպայի համար. որովհետև առաջիններն վերին մասերը միմեանցից ոչ միայն շատ հեռացած են, այլ և ոչինչ հնարքով կարելի չէ նոցա միացնել ոչ ջրանցքներով և ոչ ցամաքային ճանապարհներով: Միայն մի և նոյն զառիվայրից սկսող զուգահեռական գետերը այն յարմարութիւնները ունին, ինչ որ

ունին Եւրոպայի Ուրալտա—Հիւսիսային զառիվայրի գետերը: Ասիայի արևելեան զառիվայրի գետերը Հոանգդզ, Եան—տսէ—Կեանգ և ևն. միմեանց հետ միանում են աշխարհիս մէջ ամենամերկար ջրանցքով՝ որ կայսերական է կոչվում: Հիւսիսային զառիվայրի գետերը Օբ, Ենիսեյ և Լենա արևելքից իւրեանց վտակներով դէպի արևմուտք տարածվելով յաջողակ ջրային ճանապարհներ են կազմում Ուրալեան լեռներից մինչև արևելեան Ովկիանոսը. այդ ճանապարհը միայն տեղ տեղ ընդհատվում է. բայց ցաւալին այն է, որ նոքա սակաւամարդ երկիրներ են ոռոգում և տարուայ մեծ մասը սառած են լինում: 4) Ասիայի գետերը այնպիսի յատկութիւն ունին, որից զուրկ են միւս ցամաքների գետերը, այդ յատկութիւնը այն է, որ նոքա զուգ զուգ իւրեանց վերին մասերում մերձենում են միմեանց, մէջ տեղում հեռանում, իսկ ստորին մասերում կրկին մերձենում. նոցանից մի քանիսը մինչև անգամ ընդհանուր բերան ունին: Այդ յատկութիւնը շատ օգնել է զարգացնելու այն յատկանիշ առանձնակերպութիւնները, որ Ասիայի երկրների յատկութիւնը է կազմում: Այդ յատկութիւն ունեցող գետերը են, Հոանգդզ և Եան—Ցսէ—Կեանգ, մասամբ Օբ և Ենիսեյ, Գանգէս և Բրահմապուդրա, Տիգրիս և Եփրատ, Օբ և Իրտիշ, Սիր—Դարիա և Ամու—Դարիա:

ԿԼԻՄԱՑ, ԲՈՑՍԵՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ.

Ընդհանրապէս ասելով Ասիայի կլիման ցամաքային է, որի պատճառը լեռնագոյ պայմաններն են. 1) Ասիան շատ մեծ ցամաք է, այն ինչ շատ քիչ ծովեր ունի. 2) Ասիայի $^1/_5$ մասը բարձրաւանդակութիւնից է բաղկացած. 3) այդ բարձրաւանդակութիւնները ամեն կողմից շրջապատած են բարձր լեռնային շղթաներից. 4) Ասիայի մեծ մասը այնպիսի գօտու տակ է, ուր ամառը անձրև բոլորովին չէ գալիս: Ասիան կլիմայի կողմից յեռագոյ մասերի կարելի է բաժանել. արևելեան Ասիա, արևելեան—հարաւային Ասիա և հիւսիսային Ասիա:

Արևելյան — Եվրոպայի բուշյոա-անդակո-ԼՊ-ը [Միջին Ասիա-յի] ծեծ տասամբ ցամաքային կլիմա ունի, որովհետև Ասիայի կենտրոնամասը է գտնվում, միւս մասերի հետ համեմատելով ծովի մակերևոյթից ամենից բարձր է, շրջապատած է ամենաբարձր լեռներից և վերջապես այն գետուզուրկ է, ուր ամառը անձրև չէ գալիս։ Ըստ հանգամանքը, ինչ ինչ՞ համար երկիրս երեսին շատ տեղերում ամառը բոլորովին անձրև չէ գալիս, Եվրոպայի վերաբերությամբ չեզոքացած կերպով են բացատրում։ Երբ արեգակը արևադարձ Ուլծեղջերը մէջ է գտնվում, այն ժամանակ հասարակածի տակին երկիրներից փչում են արևմտա—հարաւային խոնաւ քամիները, որոնք հասարակածին ամենից մօտիկ եղած երկիրներում հանում են երկրիս մակերևոյթին, արևը սկսում է մօտենալ հիւսիսային կիսագնդին և արևմտա—հարաւային քամիների ցած լինելու տեղերը, ևս դէպի հիւսիսային փոխվում, թողնելով իւրանց նախկին տեղերը արևելա—հիւսիսային քամիների ներգործութեանը, որոնք ընդհանրապէս չոր են լինում և պարզ եղանակ են յառաջացնում. քանի որ արևը հիւսիսային կիսագնդին կմերձենայ, այնքան արևմտա—հարաւային քամիները դէպի հիւսիս կգնան, ապա ուրեմն և անձրև գետին աւելի և աւելի կմեծանայ, այնպէս, որ երբ արևը արևադարձ Խեցգետնի մէջ է գտնվում [մեր ամառը], այն ժամանակ արևմտա—հարաւային քամիները երկրիս ամեն հիւսիսային մասերում միայն ցած կիջնեն նորա մակերևոյթին, ուրեմն այն ժամանակ այդ ամբողջ գետին միմիայն արևելահիւսիսային չոր քամիների ներգործութեան տակ կլինի։ Որովհետև միջին Ասիայի մէջ արևմտահարաւային քամու ամենահարաւային և ամենահիւսիսային սահմանների մէջ ընդարձակ տարածութիւն կայ, այն է 20 լայնութեան աստիճան, ուստի յիտագայ երեւոյթները են առաջանում. 1) երբ միջին Ասիայի հարաւային մասում բաւականին տակ է լինում՝ սկսում է ձիւնը հալել, անձրև գալ, գետերի ջրերը շատանալ, երկիրս ծածկվում է բոյսերով, մի նոր կենդանութիւն են տանում մարդիկը և անասունները, այդ ժամանակը հիւսիսային մասում սաստիկ ցուրտ է, գետերը լինում են սառած, ձիւն է գալիս և բոլոր բնութիւնը թանձր քնի մէջ է լինում։ 2) Երբ արեգակի մօտենալով բարձրանդակութեան հիւսիսային մասում բնութիւնը փոքր առ փոքր սկսում է կենդանանալ, այն ժամանակ հարաւային մասը կամաց կամաց արևելահիւսիսային չոր քամիների ներգործութեան տակ ընկնելով, սակաւ առ սակաւ սկսում է մարդիկների և անասունների համար զարհուրելի ամայի անապատ դառնալ. որի պատճառը այն է, որ արևելահիւսիսային քամիները այս տեղ հասնելուց առաջ, անցնում են ընդարձակ ցամաքներից և բազմաթիւ լեռների վերայից, ապա ուրեմն բոլորովին չորանում և զրկվում են գոլորշիներից. այս պատճառով, այդ երկրներում ամառը ոչ միայն անձրև, այլ և ելեւմուտ անգամ չէ լինում։ Երկինքը միշտ պարզ է, օդը մինչև այն աստիճան չոր է, որ նուագարանների լարերը չեն թուլանում, երկաթը երբէք չէ ժանգոտում, միսը չորանում է, բայց չի փչանում. խոնաւութեան սովոր բոլոր կենդանիները հեռանում են այս տեղից՝ ուր չես գտնի ոչ գորա և ոչ խլունչ։ Այդ տխուր տեսարանից բացառութիւն կազմում են լեռների շղթաները և հովիտները. լեռները մինչև մի նշանակեալ բարձրութեան վերայ մշտնջենական անտառներ ունին. հովիտները ամառուայ երաշտ ժամանակները և կենդանիներ և բոյսեր ունին, առաջինները այն պատճառով, որ աւելի երկար ժամանակ գտնվում են արևմտահարաւային քամիների ներգործութեան տակ, քան թէ ցածր դրութիւն ունեցող տեղերը. երկրորդները այն պատճառով, որ շրջապատուած են բարձր լեռներից և ամառուայ չոր քամիներից պաշտպանվում են, այն ինչ ոռոգվում են այն առուներով, որոնք հոսում են շրջակայ լեռներից։ Ի հարկէ որ բնութեան այս պարբերական կենդանութիւնը մեծ ներգործութիւն ունի մարդիկների և կենդանիների կեանքի վերայ։

Միջին Ասիայի կլիմայի այս յատկութիւնները, կիսով չափ չոր անապատի բնաւորութիւն են տուել նորան և բնակիչների

մէջ զարգացրել են թափառական կեանք։ Բայց ի դրանից, որովհետև Միջին Ասիայի հարաւային մասը Հիմալայ Գօծաու արևադարձի մօտ է գտնվում և մի և նոյն ժամանակ շատ բարձրադիր է, ուստի նորա վերայ ամառը շատ տաք է լինում, իսկ ձմեռը շատ ցուրտ. գարունը և աշունքը տարուայ ամենալաւ եղանակներն են։ Գարունը լաւ է այն պատճառով, որ ձիւնի շատ հալուելով երկիրը շատ խոնաւանում է, ուստի բոյսերը և անասուններն կենդանութիւն են ստանում. աշունքը լաւ է այն պատճառով, որ երկրի մակերևոյթի վերայ իջնող արևմտահարաւային քամին, նրաշա ամառից յետոյ, կարճ ժամանակ մի և նոյն կենդանութիւնը է տալիս բնութեանը։

Բոյսերը։ Միջին Ասիայի բոյսերից ամենանշանաւորներն են նարինջ, դիղձ, սուրճ, ժին—զէնկ արմատը կամ ժէն—շէն *) և խաշնդեղ արմատը։ Կենդանիներից նշանաւորները են ջայլամն, ձի [արաբական], առիւծ, բորենի և այլն. աղուամազները, ոչխարները և այծերը, որոնք յայտնի են իւրեանց փափուկ և խիտ բրդով, նմանապէս եղջիւրաւոր անասուններն, (հակ կամ մղոլեան եզ) ու ուղտը։ Այս երկիրներում մղոնանի ուղտը անասպատի նաև է համարվում ինչպէս և Եփրեկեում։ Երևելահարաւային Ասիան մուսսոնների ներգործութեան տակը է։ Այս երկիրներում տարուայ միայն երկու եղանակներ կան—անձրևային և երաշտ, որոնք մուսսոններից միայն կախումն ունին։ Այն է, արևմտահարաւային մուսսոնը այս երկիրների արևմտահարաւային կողմերում անձրևային եղանակների պատճառը է լինում, իսկ արևելահիւսիսային մասում ընդհակառակը յառաջացնում է երաշտ։ Վերոյիշեալ երկիրների համար, արևելահիւսիսային մուսսոնը բոլորովին հակառակ ներգործութիւն ունի. որովհետև այդ երկիրները մեծ

(*) Հայերը սորան անուանում են Լոշտակ, որ Հայաստանում ևս է բուսանում. սա մարդի ձև ունի և հիւանդի որ տեղը որ ցաւում է և այն տեղից կտրում և ուտացնում. սորան պատմութիւնը երկար է։

մասամբ այրեցեալ գօտու տակ կամ նորա մօտ են, և որովհետև մասամբ չափաւոր բարձրաւանդակութիւններ են, և մասամբ ընդարձակ ստորավայրեր, և այս պատճառով՝ ամեն կողմից մուսսոնների ներգործութեան տակ են, ուստի Ընթերցողին Ասիայի կլիման կարելի է պատ և կոնտա- անուանել։

Բոյսերից նշանաւորներն են — բրինձ, բամբակ, թէյի թուփ, բամբուկ և այլն։ Հնդկաստանին պատկանում են — շաքարեայ եղէգը, շատ տեսակ արմաւիներ, հնդկական թզենի, պղպեղ, կինամոնի անուշահոտ հնդիկ ընկոյզ, միխակի, սանդալե կարմիր փայտի և այլն ծառեր։ Կենդանիներից Հնդկաստանին պատկանում են — փիղ, վագր, առիւծ յովազ, ռնգեղջիւր, կոկորդիլոս, թիւնաւոր օձեր և այլն։

Հիւսիսային Ասիա կամ Սիբիրը։ Միջին Ասիայի նման, արևմտահարաւային և արևելահիւսիսային քամիների ներգործութեան տակը է, միայն այն զանազանութեամբ, որ Միջին Ասիայում այդ քամիները փչում են մի նշանակեալ ժամանակում, և բոլորովին չեն խանգարում միմեանց, այն ինչ Սիբիրիայում ինչպէս և միջին և հիւսիսային Եւրոպայում, նոքա անդադար փոփոխվում են միանգամայն անսպասելի. Սիբիրիայի հիւսիսային մասում 60° դէպի հիւսիս ձմեռուայ ժամանակ, փչում է միմիայն հիւսիսային քամի. բայց հարկաւոր է յիշել, որ Սիբիրիայի մէջ այդ քամիները բոլորովին այլ յատկութիւններ ունին քան թէ Միջին Ասիայում. արևմտահիւսիսային քամին Միջին Ասիայի բարձր լեռներով և բարձրութիւններով շրջապատած տեղերից անցնելով, Սիբիրիայում չունի ոչ այն տաքութիւնը, ոչ խոնաւութիւնը, որ ունէր կեդրոնական Ասիայում, և քանի հիւսիս է գնում՝ այնքան սառը և չոր է լինում. տաքութիւնը և խոնաւութիւնը նա թողնում է այն բարձրաւանդակութիւնների վերայ, որոնցից նա անցնում է. եթէ այդ բարձրաւանդակութիւնները չլինէին, այն ժամանակ միայն մի փոքր ուռելի տաք և խոնաւ պէտք է լինէր, պատճառը հասկանալու համար հարկաւոր է յիշել միայն այն ահագին

տարածութիւնը, որից անցնում է նաև Ռևեռային քամին ինք ըստ ինքեան ցուրտ և չոր լինելով, աւելի ցրտութիւն և չորութիւն է պատճառում, որովհետև փչում է բուն Սառուցեալ Ովկիանոսից, ճանապարհին չհանդիպելով ոչ մի բարեխառնեցուցիչ և մեղմացուցիչ զօրութեան։ Ուրիշն ընդհանրապես ասելով Սիբիրիայի կլիման սառ և չոր է, մանաւանդ հիւսիսային մասերում մօտաւորապես 60° դէպի հիւսիս. Սիբիրիայի երկարատև ձմեռը այնպես սաստիկ է, որ շատ անգամ 40° Ռ. ցուրտ է լինում, ամառը թէպէտ կարճատև է, սակայն այնպես տաք է լինում, որ մի քանի տեղերում պտուղներ են հասնում։ Հացի բոյսերը 60° դէպի հիւսիս չեն բուսնում. ամառը այն տեղ այնպէս խոտաւէտ դաշտեր է լինում, ինչպէս Միջին Ասիայում. իսկ ամենահիւսիսում տունդրաներում բուսնում է մամուռ և մի քանի ուրիշ թուփեր։ Լեռները միջին Ասիայի լեռների նման ծածկուած են անանցանելի հնձանջինական անտառներով, որոնք գլխաւորապէս սաղնատերև ծառերից են բաղկացած։ Կենդանիներից Սիբիրիայում գտնվում են գրաւամազ անասուններ և վայրենի թռչուններ։

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ.

Բնակիչների թանակոնոլեռքը [755 միլիոնի չափ] Ասիան աշխարհիս մէջ առաջին տեղքը է. իսկ խտութիւնն [250 մարդ մի քառ. մղոնի վերայ] կողմից երկրորդը։ Այս երկու կողմից նորա հետ աւելի նման է Եւրոպան։ Բայց առանձին մասերը վեր առնելով Ասիան այնպիսի բազմազան երկիրներ ունի, որի նմանը չկայ Եւրոպայում։ Արևմտահարաւային Ասիան այս տեղքի ամեն մասերից բազմամարդ է. բուն Հինաստանում, որի տարածութիւնը Եւրոպայի կէսի չափ է, միջին թուով 6000 մարդ է բնակում մի քառ. մղոնի վերայ, նորա մի քանի նահանգներում 15—20 հազար մարդ է բնակվում մի քառորդ մղոնի վերայ։ Ընդհանրապէս Հնդկաստանը աշխարհի

առաջին բազմամարդ երկիրը է։ Բայց ի Հինաստանից՝ Ասիայում բաւական բազմամարդ է նոյնպէս Հնդկաստանը, նորա մէջ էլ մանաւանդ Գանգէսի աւազանի միջին մասերում 9000 մարդ է բնակում մի քառ. մղոնի վերայ։

Եւրոպայի նման Ասիայի բնակիչները գլխաւորապէս երկու ցեղի են պատկանում — Մոնղոլեան և Կովկասեան. բայց մինչ դեռ Եւրոպայում մեծ մասը Կովկասեան են ասում, ընդհակառակ բնակիչների $\frac{3}{5}$ մասը Մոնղոլեան ցեղին է պատկանում։ Մալակկայ թերակղզու և արևելեան Հնդկաստանի Ըրշիպելագոսի բնակիչները Մալայեան ցեղին են պատկանում։ Կովկասեան ցեղին պատկանող ազգերը Ասիայի արևմտա—հարաւային մասումը են բնակում, Մոնղոլեան ցեղին պատկանողները — արևելեան հիւսիսային մասում. այդ երկու ցեղի սահմանը կազմում են Գանգէսի և Բրահմապուտրայի ստորին մասերը, Հիմալայեան լեռները և ընդհանրապէս արևելեան Ասիայի բարձրաւանդակութեան արևմտեան մասի լեռները։ Մոնղոլեան ցեղին պատկանող ազգերից թէ լուսաւորութեան և թէ բազմութեան կողմից առաջին տեղը բռնում են Հինացիները, որոնք բնակվում են արևելեան Ասիայի բարձրաւանդակութեան արևելահարաւային զառիվայրերում և Հինական դաշտավայրում. երկրորդ տեղը բռնում են Ճապոնացիները՝ որոնք բնակվում են Ճապոնիայի Ըրշիպելագոսի կղզիների վերայ։ Կովկասեան ցեղին պատկանող ազգերից թէ բազմութեան և թէ լուսաւորութեան կողմից առաջին տեղը բռնում են Հնդկացիները, որոնք գլխաւորապէս Հնդկաստանի դաշտավայրերում են կենում։

Ասիան խանձարուր է եղել աշխարհիս մէջէ բոլոր հեւելի կրօնների՝ թէ բազմաստուածութեան [Բրահմանական, Բուդդայական և այլն] և թէ մի աստուածութեան [Հրէական, Քրիստոնէական և Մահմետական]։ Ասիայի մէջ կռապաշտների թիւը անհամեմատ շատ է մի աստուածութիւն դաւանողների թուից. առաջինները բոլոր բնակիչների $\frac{4}{5}$ մասը են կազմում։ Կռապաշտների մեծ մասը Բուդդայականներ են, իսկ մի աս-

տուածութեան դաւանողների մեծ մասը — մահմետականներ են։ Հուդդայականները կազապաշանների դէմ թէ $^4/_5$ մասը են կազմում, այս ինքն 300 միլիոն. Մահմետականները մի աստուածութիւն դաւանողների նոյնպէս $^4/_5$ մասը [80 միլիոն] են կազմում, քրիստոնեանները 13 միլիոնից աւելի չեն, Հրեաները $1^1/_2$ միլիոն։ Հուդդայականութիւնը տարածուած է գլխաւորապէս Հնդկա – Չինաստանում, Չինական դաշտավայրում, արեւելեան Ասիայի բարձրաւանդակութեանում, Սէյլան և Ինդոն կղզիներում։ Բրահմանականութիւնը տարածուած է գլխաւորապէս Հնդկաստանում. Մահմետականութիւնը — արեւելեան Ասիայում, Հունդի և փիլիպպեան արշիպելագոսներում։ Քրիստոնեանները գլխաւորապէս բնակվում են Եւրոպացիներին պատկանեալ երկիրներում, Հրեաները գլխաւորապէս Փոքր — Ասիայ թերակղզու արեւմտեան մասում, Սիրիայի բարձրաւանդակութեանում, Միջագետքի դաշտավայրում, Իրանի բարձրաւանդակութեան հարաւային մասում և Հնդկաստանի թերակղզում։

ԱՍԻԱՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ.

ՉԻՆԱԿԱՆ ԿԱՑՍԵՐՈՒԹԻՒՆԸ.

Ընդհանուր նկարագրութիւն։ Չինական կայսերութեան մասերը սոքա են. ա) Չինական դաշտավայրը և դրեթէ արեւելեան Ասիայի բոլոր բարձրաւանդակութիւնը. և բ) Փորմուզա և Հայնան կղզիները. որոնցից առաջինը դէպի ցիկ կինշանակէ, իսկ երկրորդը՝ հարաւային ծովի կղզի և Լիկեան կղզիները։

Չինական կայսերութիւնը աշխարհիս մէջ առաջնակարգ ընդարձակ տէրութիւններից մին է [254000 քառ. մղոն]։ Չինական կայսերութիւնը գրեթէ $1^1/_2$ անգամ Եւրոպայից մեծ է և միայն Ռուսի կայսերութիւնից փոքր է։ Չինական կայսերութիւնը իւր մեծութեան համեմատ և բնակիչներ ևս շատ ունի [400 միլիոն], որոնց թիւը $1^1/_2$ անգամ շատ է Եւրոպայի բնակիչների թուից. այս կողմից Չինական կայսերութիւնը աշխարհիս մէջ առաջին է։

Քաղաքական կողմից Չինական կայսերութիւնը երեք մասի է բաժանվում. բուն Չինաստան, Մանչուրիա և գաղթական երկիրները — Մոնղոլիայ, Իլի և Տիբէտ։

Բուն Չինաստան։ Բուն Չինաստանի սահմանները են մեծ և Հնդկաց ովկիանոսները, Ընամ, Խերման, Տիբէտ, Մոնղոլիայ և Մանչուրիայ երկիրները։ Ցամաքային սահմաններից շատերը անանցանելի լեռնային շղթաներ են։ Չինաստանը Մոնղոլիայից և Մանչուրիայից բաժանում է Չինական Մեծ պարիսպը, որ ինչպես կարծում են Պրիս. Ծննդ. Գ դարում շինեցին, հիւսիսային թափառական ազգերի յարձակմունքներից ազատուելու համար. պարսպի երկայնութիւնը երկու հազար վերստ է։ Բուն Չինաստանը, կայսերութեան մեծ մասերի հետ համեմատելով՝ քոլոմբոսին հակառակ յայտնի է ամեն, ոչ միայն մակերեսոյթի կազմուածքի և հողի պանդուխտի կողմից, այլ և ոռոգման, կլիմայի և բերքերի կողմից։ Մինչ դեռ Չինական կայսերութեան միւս երկիրները միայն բարձրաւանդակութիւններից են բաղկացած, բուն Չինաստանի մեծ մասը դաշտավայր է, առաջինները ջրի կողմից շատ աղքատ են, իսկ երկրորդը ընդհակառակը բազմաթիւ գետեր ունի, որոնցից երեքները երկար են, — Հոանգոյ, Եանտսէկիանգ և Սի — կեանգ։ Մինչ դեռ Չինաստանի միւս երկիրները կամ աւազուտ և ժայռոտ և կամ խոտաւէտ երիվարաններ են, Բուն Չինաստանը աշխարհիս մէջ ամենապտղաւոր դաշտավայրներից մին է։ Միւս մասերում կլիման չոր և ցուրտ է, բուն Չինաստանում ընդհակառակ մշտական գարունք է։ Չինական կայսերութեան միւս մասերում ամեն տեղ հանդիպում աղքատութիւն է, գլխաւորապէս բռնակալութեան վերաբերութեամբ։ Իսկ բուն Չինաստանը ընդհակառակ ամենայն կերպով աշխարհիս հա-

զուտպիւա բարեբեր և հարուստ երկիրներիցը է, նա ամբողջ տէրութեան այգին և շտեմարանը է *)։

Տէրութեան միւս մասերի բոլոր բնակիչների թիւը փոքր է քան բուն Չինաստանի բնակիչների թիւը. սորա մէջ գտնվում է կայսերութեան բնակիչների $^{9}/_{10}$ մասը (367 միլիոն)։ բայց ո-

(*) Բուն Չինաստանի բերքերից գլխաւորները են—թէյ, բրինձ, բամբակ, թթենի, վէռնճենի, ճարպենի, սպիտակ եղեամանի ծառը։ Թէյի թուփը բնականապէս երեք սաժէն բարձրութիւն է ստանում, բայց տերևները քաղելու ժամանակ դժուարութիւնը չքաշելու համար առհասարակ երկու սաժէնից բարձր չեն թողնում բարձրանալու։ Նորա բնի և տերևների մէջ տեղը գտնվում են սպիտակ ծաղիկներ առանց հոտի, ծաղիկներից առաջ է գալի պտուղը, որոնք տանձի ձևի պէս երկարաձև են, սկզբում թաւատ, բայց յետոյ կաշոտ, փայլուն տերևները մոյգ կանաչ գոյն ունին. Թէյի թուփը գտնվում է բոլոր արևելա—հարաւային Ասիայում. բայց միայն Չինաստանինը ունի այն աղնիւ յատկութիւնը, որ նորան այդպէս Թանկագին է առնում, ահա այս պատճառով այս երկրում՝ այս թփի մշակութիւնը շատ զարգացել է. Թէյի թուփը գլխաւորապէս բուսանում է Կեանք գետի աւազանին պատկանեալ Հովիտներում։ Ամենից յաջող են լինում այն տնկարկութիւնները, որոնք լեռների հարաւային զառիվայրերում են գտնվում, Այդ թուփը բուսանում է սերմից, սերմերը վերայ երբորդ տարին տալիս են այնպիսի թփեր, որոնց տերևները կարելի է քաղել։ Տարին երեք անգամ կարելի է ժողովել տերևներ, Մարտ, Մայիս և Օգոստոս ամիսներում։ Մարտին քաղում են ամենամատղաշ տերևները, որոնք գրեթէ սպիտակ խատուտիկ պատած կոկոններ են. Մայիսի տերևները բաւականին մեծ են լինում, իսկ Օգոստոսինը ամենամեծերը են. Առաջին անգամ ժողովածը ամենահոտաւէտ Թէյը է, իսկ յետագաները աւելի սակաւ հոտաւէտ են լինում։ Առաջին անգամ ժողովածը վաճառականութեան մէջ ծաղկաւոր Թէյ է կոչվում, իսկ միւսանգամինները զանազան անուններ ունին—դեղին, կանաչ, սև։ Հին տերևները որոնք իրանք իրանց Թաւիվում են, պէչ-ըսած հիւթով կպցրած կազմում են մի Թէյ, որ աղիւսի ձև է կտոր կտոր բաժանած, աղիւսի Թէյ է կոչվում (ղազմուխի Թէյ)։ Կայսերական կոչուած Թէյը պատրաստում են նոր բացուող կոկոններից։ Դեղին կանաչ և սև Թէյերը մի և նոյն տերևներից են պատրաստում, միայն պլ և պլ կերպով են պատրաստում պլ և պլ

րովհետև սորա տարածութիւնը ամբողջ կայսերութեան $^{2}/_{5}$ մասն [60000 քառակ. մղոն] է, ուստի բուն Չինաստանի հաւասար մեծութիւն ունեցող երկիրներից ոչ մին նորա նման խիտ բնակութիւն չունի [6000 մարդ մի քառ. մղոն]. Թէպէտ կան երկիրներ, որոնք աւելի խիտ բնակութիւն ունին, սակայն նորա շատ փոքր տարածութիւն ունին։ Առաւել խիտ բնակութիւն ունին Լոանդոյ և Նանտոկիանգ գետերի բերանները-

գաւառներում. որը միայն Չինացիներին է յայտնի։ Առհասարակ Թէյը պատրաստում են այսպէս. տերևները երկաթի տապակների վերայ են ածում և սկսում են տաքացնել. մի և նոյն ժամանակը տերևները շուռումուռ են տալիս. երբ որ տերևներից հիւթը քամվում է, այն ժամանակ փուռում են նոցա սփրիդի վերայ և ձեռի ափով սկսում են զանազան տեսակ յետ ու առաջ կլորել, նայելով Թէյ ինչ տեսակ Թէյ կամենում են պատրաստել, յետոյ կրկին տաքացնում և կլորում են, և այս շարունակվում է այնքան, որ տերևները բոլորովին չորանան։ Դեղին Թէյը գլխաւորապէս Չինացիները իրանք են գործ ածում, կանաչը—Ամերիկայում և Անգղիայում. սեւը—կամ առանձին կամ ծաղկաւորի հետ խառնած գործ է ածվում Ռուսաստանում. կայսերականը—միայն Չինացիների և Ճապոնացիների պալատներում և Մանդարինների տներում. աղիւսաձև Թէյը գործ է ածվում միջին Ասիայի Թաթարական ժողովրդների մէջ. նորա եփում են նորան կաթով կամ ալիւրով և ուխտարի իւղով. յիսուն միլիոն փութ Թէյից, որ պատրաստվում է Չինաստանում, միայն 20րդ մասը սահմանից դուրս է տարվում, իսկ մնացեալը գործ է ածվում Չինաստանում,

Բրինձ բոյսը—վարսակի նման է. բունը—երկու արշին, երեմն ինի վեր երկար և նեղ տերևներ են լինում. Բրնձի հայրենիքը արևելեան—Հնդկաստանը է. այս տեղից նա տարածվեցաւ նախ Հարաւային—Ասիայում, յետոյ Հիւսիսային—Աֆրիկէում և Հարաւային Եւրոպայում և վերջապէս Ամերիկայում. Այժմ աշխարհիս բնակիչների գրեթէ կէսի կերակուրը բրինձը է. Հարաւային—Ասիայում բնակիչների ամենակարևոր կերակուրը բրինձը է. ինչ տարի բրինձը առատ չէ լինում, այն տարի ընդհանուր սով է լինում. բրինձը սիրում է խոնաւութիւն, ուստի նա առատ բուսնում է ընդհանրապէս ճահճային երկիրներում, կամ այն տեղերում որոնք գետերի մեծանալու ժամանակ ծածկվում են ջրից. բրինձը առատաբեր բոյս է, երեմն մինին 100 մինչև անգամ 400 է տալիս։ Բայց ցաւալին այն է,

րի մօտ եղած երկիրները. այդ տեղ 100 քառակուսի մղոն տարածութեան երկիրը կարծես թէ մի ամբողջ քաղաք է կազմում, ուր մի կտոր հող դատարկ չէ թողած, շաւիղը ջրի և լաստերի վերայ են բնակվում, մինչև տասը քաղաք կան, որոնցից իւրաքանչիւրը մէկ միլլիոն բնակիչ ունի, 50 քաղաք կան, որոնցից իւրաքանչիւրը կէս միլլիոն բնակիչ ունի *)։

որ նորա մշակութիւնը առողջութեան համար շատ վտանգաւոր է, որովհետև ճահիճների գոլորշիները ապականում են օդը և ամենասաստիկ տենդեր են յառաջացնում։ Բրինձը մեր ցորենի չափ սննդարար չէ, բրնձից հաց չեն թխում, որովհետև ալիւրը մածուցիկ յատկութիւն չունի, նորան գործ են ածում խաշած։ Բրնձից պատրաստում են մի քանի տեսակ խմիչքներ, ինչպէս ռոմ, օղի (արաղ) և այլն։

Վերմիշել (ճեղքերից հանած)։

Ճաթիլնէ կեռասենի նման է, նրա պտուղը ճարպի նիւթով պատած հատիկներ ունի, որ մղում են հալում են և հանում են ճարպ։

Սեղմոճի ծառ։ Թրթուրի նման մի միջատ, որ բրնձի հատիկի մեծութեամբ, սկզբում սպիտակ է, իսկ յետոյ կարմրագոյն է դառնում, ձուեր է դնում այս ծառի վերայ, ձուերից թրթուրները դուրս գալով սողում են տերևների վերայ և սողած տեղերում թողնում են մի հեղուկութիւն, որից մեղրամոմի հիւթը են հանում։

(*) Չինացիների լեզուն շատ առանձնական յատկութիւններ ունի։ Նորա մէջ 450 միայն միավանկ բառեր կան. բայց որովհետև մի և նոյն բառը զանազան կերպ արտասանելով այլ և այլ նշանակութիւն է ստանում, ուստի 450 միավանկ բառերից կազմվում են մինչև 1200 բառ։ Այս բառերը արմատական են կոչվում, արմատական բառերի միաւորութեամբ յայտնում են զանազան մտքեր։ Արմատական բառերի այս բազմատեսակ արտասանութիւնը և նոյնպէս բազմատեսակ միաւորութիւնը նոր մտքեր արտայայտելու համար՝ պատճառ է դառնում մանաւանդ օտարականի համար, որ այդ լեզուն դժուար է հասկացվում, բայց առաւել դժուարանում է օտարականը, երբ ինքը պէտք է խօսի այդ լեզուով։ Այդ դժուարութեան մի պատճառը և այն է, որ չինականն չունի ոչ հոլովումն, ոչ խոնարհումն, ոչ շաղկապ և ամբողջ քերականական միտքը կախուած է նախադասութեան կազմուածքից։ Այս պատճառով ինքեանք Չինացիները և խօսելու ժամանակ շատ անգամ միևկատակութեամբ են միմեանց հաս-

Չինացիները վաղուց արդէն յայտնի են ինչպէս ճարտարութեան ժողովուրդ և շատ բանում նորա երկար ժամանակ Եւրոպացիներից առաջ էին, երկար ժամանակ մնաքառում էին նորա Եւրոպացիների հետ՝ իւրեանց մեռաքսեղէններով, բամ-

---

կացնում իւրանց միտքը։ Բայց Չինարէն կարդալը և գրելը աւելի դժուար է քան թէ խօսիլը, որովհետև չինական լեզուի մէջ չկայ այնպիսի պարբեր, ինչպէս զոր օրինակ մենք ունինք. նորա ամեն բառի համար մի առանձին նշան ունին, այնպէս որ քանի բառ որ կայ լեզուի մէջ, այնքան էս նշաններ կամ տառեր կան. բայց մեծ մասամբ գործ են ածում 40000 նշան, որոնցից գլխաւորները 214 հատ են. մի բարդ միտք յայտնելու համար, առաջ գնում են գլխաւոր նշաններից մին և ապա երկրորդականները։ Չինական մատենագիրները իւրեանց քմբին համաձայն, մի և նոյն բառի համար զանազան նշաններ են հնարում, ուստի և գրականութեան մէջ այդ նշանների թիւը անսահման բազմանում է, այս պատճառով բոլորովին զարմանալու չէ, որ ասում են թէ չինարէն լիովին կարդալ սովորելու համար, մարդի կեանքը բաւական չէ։ Ընդհակառակ այս բոլոր դժուարութիւններին, չինական լեզուն շատ քաղցր լեզու է։ Նա շատ բարբառներ ունի, իւրաքանչիւր քաղաք գրեթէ իւր սեպհական բարբառը ունի. արդէն հին ժամանակներից հետէ այդ բարբառներից կազմուել է ժողովրդի բարձր դասի լեզուն, այնպէս ինչպէս Գերմանիայում կազմուեցաւ Hochdeutsch (բարձր Գերմաներէն)։ Բաց ի դորանից՝ Չինացիները ունին առանձին գրականական լեզու։ Չինացիները գրում են բարձրից դէպի ցած և աջ կողմից դէպի ձախ. գրչի և թանաքի փոխարէն նորա գործ են ածում առանձին տեսակ վրձին և սեւանոկ։ Չինական գրականութիւնը արևելեան գրականութեան ամենահարուստների կարգիցը է։ Նորա մէջ կան գիտութեան ամեն ճիւղին պատկանեալ հետևեալ հետևեալ գրութիւններ, մանաւանդ պատմական, աշխարհագրական, վիճակագրական, բնական գիտութիւնների վերաբերեալ և փիլիսոփայական. գրականական աշխատութիւններից ամենաերևելին կինինը է. նորա մէջ առաւել նշանաւոր են յետագայ երկը բաժինները. Շու-կինգ, որ պարունակում է իւր մէջ տերութեան ամենահին պատմութիւնը, Շիկինգ կամ ժողովրդական երգերի ժողովածու և Լիկի, ուր գրած է կրօնական ծիսակատարութիւնները և քաղաքական կենցաղավարութեան կանոնները։

Չինաստանում երեք գլխաւոր կրօն կայ. 1) Կոնֆուչիոսի (ք. Ծ. 500 տարի առաջ) կրօնը։ Նորա ուսման գլխաւոր հիմքը են հոգու անմահու-

բակեղէններով (նանկայ) և յախճապակեղէններով։ Պարծում են որ Եւրոպացիներից վաղ ունէին նոքա վառօդ, կողմնացոյց և տպագրութիւն։ Այժմ Չինացիները ամեն բանով յետ են մնացած Եւրոպացիներից, չնայելով որ Ասիայի ժողովրդների մէջ լուսաւորութեան և ճարտարութեան կողմանէ առաջինը են։ Ճարտարութեան նիւթարեր ճիւղերից շատ ծաղկած է երկրագործութիւնը, երկրագործութեան ճիւղերից առաւել ծաղկացած է բրնձի մշակութիւնը. նիւթարեր ճարտարութեան առարկաները են մետաքսը, յախճապակի, ապակի, բամբակ, ջնարակած անօթներ, թուղթ և ճենացոց թանաք (սև նկրկ)։ Չինացիները այնպէս մեծամեծերի թուղթ են պատրաստում, որի

թիւնը, երկրպագութիւն վերին գոյութեան — Տիանին (երկնքին) բազմական երկրորդական աստուածներ — քաղաքների հովանաւորիչներ — լեռների, ձեռների և ն. նոյնպէս նախորդների հոգիներին երկրպագութիւն տալը։ Վերկինի շրջակայքում վերին գոյութեան երկնքի համար տաճար կայ շինած. ի պատիւ Կոնֆուկիոսին հազարաւոր տաճարներ կան շինած։ Կոնֆուկիոս սի ուսումը դժուարահասկանալի լինելով ժողովրդեան, միայն բարձր դասի մէջ ունի իւրեան հետևողներ։ 2) Լաօցզէ (Կոնֆուկիոսի ժամանակակից էր) կրօնը։ Նորա ուսման գլխաւոր հիմքերը են չափաւորել կրքերը, բայց մի և նոյն ժամանակ վայելել կեանքի զուարճութիւնները։ 3) Ֆո կամ Բուդդայի կրօնը. յայտնի է իւր սնոտիապաշտութիւններով. այս վերջին կրօնի հետևողները ժողովրդի ամենատարին դասը է։ Չինացիները իւրեանց արտաքին կերպարանքին նայելով անձնեայ են, ոտերի փոքրութիւնը՝ որի մասին շատ աշխատում են նոցա կանայքը, մինչև անգամ անճոռնութեան աստիճանի է հասնում։ Չինացիները իւրեանց գլխի մազերը սափրում են և միայն ծոծրակի վերայ մի փոքրիկ ծամ են թողնում, որը նոցա համար կեանքից թանգ արժէ։ Եւրոպացիները մինչև այժմ անգամ Չինացու բնութեան մէջ ունչի պակասութիւններ են տեսնում, քան թէ արժանաւորութիւններ, չափազանց շողոքորթութիւն ասպնների և անտահման պատուազութիւն կրտսերների առաջ. Չինացիները ագահ, անպարոյական և գաղտնարար են. վասը այն է որ այդ պակասութիւնները արտաքին քաղաքավարութեան պատրուակի տակն են ծածկուած, որին սովորում են նոքա փոքր հասակից։ Բայց Չինացու նման իւրանից մեծի յարգող, աշխատասէր և համբերող մարդ չկայ աշխարհիս երեսին։

նմանը չկայ ոչ մի տեղ աշխարհում. Ճենացոց թանաքը պատրաստում են հիղուկ նիւթից, որ ստանում են սպին կամ սիպ կոչուած ծովային կենդանուց։ Մինչև 1842 թիւը ապրատին վաճառականութեան միակ կենդրոնները էին Մայսպէն և Կանտոն. առաջինը ցամաքային վաճառականութեան կենդրոնը էր, որ տեղից վաճառականութիւն էին անում Ռուսաների հետ, իսկ երկրորդը՝ ծովային — կենդրոն, որ տեղից վաճառականութիւն էին անում ուրիշ ազգերի հետ։ 1842 թուականից սկսած օտարականները հինգ նաւահանդիստների մէջ վաճառականութիւն անելու իրաւունք ստացան, որոնցից ամենաերևելին Շանկհայը է. բայց Տիկին — ապենի դաշնից հետէ Չինաստանի բոլոր նաւահանդիստները բաց է օտարականների համար։ Չինաստանից դուրս են տանում հետևեալ ապրանքները, թէյ, մետաքս, նանկա, յախճապակի, իսկ ներս են բերում մահուտա, օպիում *), սապանդասի **) բոյն և արէպանդ ***)։

Ներքին վաճառականութիւնը չափազանց ծաղկացած է։ Նորա ծաղկելու պատճառը են գլխաւորապէս երկրի հարստու-

---

(*) Օպիումը խաշխաշի մի տեսակը է։ Օպիումը այդ բոյսի չորացրած հիւթը է, մատղաշ խաշխաշը ճեղքելով ստանում են հիւթը։ Օպիումի շատ գործածութիւնը մինչ է պատճառում, բայց ընդհակառակն դորան արևելքում մանաւանդ Չինաստանում Օպիումը շատ գործածական է։

(**) Սապանդ ծիծեռնակը իւր բոյնը շինում է Հնդկաց Ովկիանոսի կղզիների ափերում, մանաւանդ Ճաւա կղզու ափերի վերայ։ Այս ծիծեռնակի բոյները Չինացիների ամենահամեղ կերակուրը է, ուստի նոքա մեծ գումարներ են վճռում նորա վերայ։ Մի քանիսի կարծիքով այդ բոյնը բաղկացած է գոդշատեսակ լոտաբոյսից, որ առաջուց կակղանում է Թռչունի ստամոքսի հիւթի ներգործութեամբ։

(***) Տրէպանգը մի տեսակ որդ է, որ գտնվում է Հնդկաց ովկիանոսում և Չինացիների ամենահամեղ կերակուրներից մին է։ Տրէպանգը ոտքուկի նման է, միայն նորանից հաստ և երկար է, մինչև երկու ֆուտ երկարութիւն ունի, նորան պատրաստում են յետագայ կերպով. առաջ խաշում են ծովի ջրի մէջ, յետոյ հանում են փորոտիքը և կրկին խաշում են, ապա չորացնում են։ Չինացիները նորանից զանազան կերակուրներ են շինում,

թիւնը, բազմամարդութիւնը և հեշտ հաղորդակցութիւնը։ Կայսերական ջրանցքը միմեանց հետ միացնում է Չինաստանի գրեթէ բոլոր գլխաւոր գետերը. նորա երկայնութիւնը գրեթէ 300 մղոն է, ապա ուրեմն $1^1/_2$ անգամ Եւրոպական Ռուսաստանի բոլոր ջրանցքներից մեծ է. նա անցնում է լեռների և ձահճների միջով. իսկապէս ասելով նա ոչ թէ ջրանցք է, այլ մի վերխառի ջրմուղ, որովհետև ջրանցքի նման փորած չէ՝ այլ միմեանց հետ կցորդած լճակներից է բաղկանում. նորան սկզբին չինել 7ր դարում և գրեթէ 6 դար շարունակ շինում էին։ Ընդհանրապէս ասելով ջրաբաշխութեան կողմից, Միացեալ Նահանգներից յետոյ Չինաստանը երկրորդ տեղը է բռնում աշխարհիս երեսին։

Կառավարութիւնը։ Ռուն Չինաստանի բնակիչները երկու դաս են բաժանուած, ծառայողներ, կամ ինչպէս Եւրոպացիները ասում են՝ մանդարիններ [Պորտուգալացիների բառ է, որ Չինացիները արտաբերել չեն կարող] և չծառայողներ, որին պատկանում են ժողովրդի ճնշգեալ մասը, այս ինքն երկրագործները, արհեստաւորները և վաճառականները։ Մանդարինի աստիճանը իմացվում է գլխարկի վերայ եղած կոճակների թուից. աստիճանին համեմատ գլխարկը զանազան գոյնանի է լինում։ Բայց պէտք է ասել, որ ժողովրդի այս երկու դասի մէջ այնպիսի մեծ զանազանութիւն չկայ, ինչպէս Նղկատատում։ Ինչպէս ամենագլխաւոր մանդարինը իւր տեղից զրկուելով հասարակ քաղաքացի է դառնում, նոյնպէս և ամենահասարակ արհեստաւորը կարող է մանդարինի աստիճան ստանալ։ Օրէնքի առաջին բոլորը հաւասար են։ Ոչ մի յանցաւորի կրօնքները բամբուկի ներգործութիւնից ազատ չեն, ամենածանր պատիժը այն է, որ յանցաւորը մի քանի շաբաթ գլխին մի ծակ տախտակ անցկացրած պէտք է մնայ գոյ, այս օրէնքին հնթակայ չէ միայն կայսր, նա է օրէնքի հաստատողը և լուծողը, նորա ձեռին է իւր հպատակների կեանքը և մահը։ Չինացիների հասկացողութեամբ երկիրս նորան է պատկանում, բայց

նորա չափազանցութիւնը պատճառը այն է, որ բարբարոսները չեն հնազանդում նորա օրինաւոր սերութեանը։ Տէրութեան ներքին կառավարութիւնը վարում է կայսերական խորհուրդը՝ որ բաղկացած է 4 առաջնակարգ ներքին խորհրդականներից, որոնցանից երկուսը Չինացիներ են, իսկ երկուսը Մանջուրներ։ Տիրապետող խորհրդի իշխանութեան ներքոյ են վեց պաշտօնէութիւնները։ Ներքանչիւր նահանգ (18) տեղականներով է կառավարվում. քաղաքների կառավարութիւնը առանձին պրէֆեկտների է յանձնած։ Քաղաքները իրենց նշանակութեան համեմատ երեք դաս են բաժանվում։

Քաղաքները։ Պէկին, այս ինքն հիւսիսային մայրաքաղաք, Պէյհայ գետի մօտ, Պէ – դզէ (հիւսիսային) նահանգում կայսերութեան առաջին քաղաքը է. 13ր դարում Մոնղոլների տիրած օրից Պէկինը կայսերութեան մայրաքաղաք դարձաւ *)։ Ընդհին ժամանակ այս քաղաքը աշխարհիս մէջ ամենաբազմամարդներից միևն էր. կարծում էին որ բնակիչների թիւը Լոնդոնի բնակիչներից սակաւ չէ, բայց բանից երևեցաւ որ Լոնդոնից շատ սակաւ բնակիչ ունի։

Նանկին, այս ինքն հարաւային մայրաքաղաք, Կապոյտ գետի ափին է գտնվում։ Չինաստանից Մոնղոլներին դուրս արած օրից, այս քաղաքը ստացաւ այդ անունը և Չինական կայսերութեան գահը բնիկ Չինացի նստաւ։ Չինացիները կարծում են որ նախկինը աշխարհիս ամենալաւ քաղաքներից է։ Այս քա-

(*) Այս քաղաքը բաղկացած է 12 արուարձաններից և բուն քաղաքից, որի շրջապատը 28 վերստ է։ Պէկինի շրջակայքը անապատ է, ուստի այս յատկութեամբ Մատրիտի նման է. փողոցները նեղ առանց մայթերի, ցեխոտ կամ փոշոտ են, շինութիւնները բոլորը մի յարկանի, որոնց լուսամուտները բակի մէջ են, բացառութիւն կազմում են միայն խանութները։ Շինութիւններից երևելի է թագաւորի պալատը (5 վերստ շրջապատով). նա բաղկացած է առանձին շինութիւններից որոնք շրջապատած են այգիներով, բաց ի թագաւորական ցեղից պալատի մէջ բնակվում են բոլոր պալատականները և թիկնապահ զօրքը։

զաքը Չինական ճարտարութեան, վաճառականութեան և դիտութիւնների կենդրոնը է, անուանի են դրասունները, գրավաճառանոցները, տպարանները, նոյնպէս Չինական թանաքը և մետաքսեղէնները, արհեստական ծաղիկները ևն։ Այս տեղ գտնվում է յախճապակեայ երկու յարկանի մի աշտարակ, որ 15դ դարումը է շինած։ Հ՚ատ ժամանակ չէ որ ապստամբները կործանեցին այդ աշտարակը։

Կանտոն գտնվում է Սիւկեանդ գետի բերանին։ Հարաւային Չինաստանի ամենագլխաւոր քաղաքը է. Եսիայի մէջ առաջին վաճառականական և բազմամարդ քաղաքներից մինն է. ժողովրդի թիւը մէկ և կէս միլիոն է։ Կանտոնը շատ յարմար է ծովային վաճառականութեան համար *)։

Հ՚անկհա-Նանտսիկեանդ գետի բերանի հարաւային կողմի մօտ է. 1842 թուականից սկսեալ այն հինգ նաւահանգիստներից առաջինը դարձաւ, որոնց մէջ Եւրոպացիները վաճառականութիւն անելու իրաւունքը ստացան։ Դա իւր նշանակութիւնը չկորցրից, երբ որ Չինաստանի բոլոր նաւահանգիստները բացուեցան օտարականների համար։

Դաց ի վերոյիշեալ քաղաքներից նշանաւոր են՝ Մաքաոյ, Համանուն կղզու վերայ. Վ՚ուհուրիա, Գոնդոն կղզու վերայ։ Առաջինը 16դ դարու (1586) վերջերից սկսած Պորտուգալացիներին է պատկանում. իսկ երկրորդը (1842 թ) Անգղիացիներին **)։

(*) Կանտոնը նշանաւոր է իւր բնակիչների բազմազանութեամբ, այս տեղում կարելի է գտնել ամեն ազգեր և դաւանութեան պատկանող մարդիկ. իւր վաճառականութեամբ աշխարհիս առաջնակարգ քաղաքներիցը է։

(**) Մաքաոն երկար ժամանակ վաճառականութեան կենդրոն էր դարձած, այն պատճառով, որ 16դ դարու վերջերից սկսած մինչև 1842 թիւը միակ տեղ էր, ուր Պորտուգալացիները կարող էին վաճառականութիւնը անել Չինացիների հետ։

Վ՚ուհուրիան իւր հիմնուած օրից առաջնակարգ վաճառականական քաղաքներից մին եղաւ. այս տեղից Անգղիացիները ազդեցութիւն ունին Չինացիների վերայ վաճառականութեան մէջ. այսպիսի մեծ նշանակութիւն ունենալու պատճառը այն է, որ խոր և երկ—կողմանի մուտքով նաւահանգիստ ունի. այս պատճառով նաւերը միշտ ազատ մուտք են գործում նաւահանգիստը։ Անկասկած Վ՚իկտորիայի վաճառականութիւնը Մաքաոյի վաճառականութեան մեծ հարուած կհասցնէ։

(*) Մանչուրիան յայտնի է Ծէն—շէն անուն բոյսով. այդ բոյսը աշխարհիս մէջ ամենանշանաւոր բոյսերից է, գոնեա Չինական կայսերութեան մէջ նա մեծ նշանակութիւն ունի։ Ծէն—շէն լեռների ծերպերում խոտերից շրջապատած է բուսնում, ինքը խոտերից մի ոտնաչափ աւելի բարձր է. սիրում է փխրուն հող, որ կազմուել է ծառերի փտած տերեւներից. ծաղիկները փոքր և սպիտակ են. բայց ամենանշանաւոր մասը ոչ թէ բունը կամ տերեւները են, այլ արմատը։ Ծէն—շէնի արմատը ճկոյտի հաստութիւն ունի, երկայնութիւնը 2—3 բեթաչափ ստեպղինի նման։ Արմատը սպիտակագոյն է, չորացնելուց կամ եփելուց յետոյ կարմրում է. եթէ եփելու կամ չորացնելու ժամանակ գոյնը փոխվում չէ, այդ նշանակում է որ ամենալաւը է և կոչվում է մայրաքաղաքի կամ պալատական Ծէն—շէն։ Առաջ բաւական շատ էր բուսնում, իսկ այժմ այնպէս հազուագիւտ է, որ երբեմն 10—15 տարի որոնում են և ոչինչ չեն գտանում։ Չինացիները այսպիսի ջերմ եռանդով որոնում են այն պատճառով, որ նոցա կարծիքով նա ազատում է նոցա ամենատեսակ ցաւերից, վերանորոգում է մարդի ոյժը և զօրութիւնը, և մինչև անգամ երկարակեաց է առնում մարդիս։ Չինացիները կարծիքով մերձ ի մահ հիւանդը եթէ մի քանի մնալ ուտէ այդ բոյսից՝ կառողջանայ։ Ծէն—շէնը իւր առողջարար յատկութեան և հազուագիւտ լինելուն պատճառ շատ թանգագին է։ Մի քանի ձանապարհորդ-

Մանչուրիան գտնվում է արևելեան Եսիայի բարձրաւանդակութեան արևելահիւսիսային մասում և տարածվում է մինչև ամուր գետը և Նորա Ուսուրի վտակը, որոնք այս երկիրը բաժանում են Ռուսի սէրութիւնից։ Այս երկրի զլխաւոր գետը է Սունգարի։ Հ՚ատ անտառներ և ազուամազ անասուններ ունի։ Ամբողջ Մանչուրիները (երկու միլիոն), այլ մի մասը միայն հնազանդում են Չինական կայսեր իշխանութեանը. 300 տարի սորանից առաջ նոքա յարձակուեցան Չինաստանի վերայ և նուաճեցին այս երկիրը։ Չինաստանում թագաւորող տունը այժմ էս Մանչուրներից է *)։

(*) Մանչուրիան յայտնի է Ծէն—շէն անուն բոյսով. այդ բոյսը աշխարհիս մէջ ամենանշանաւոր բոյսերից է, գոնեա Չինական կայսերութեան մէջ նա մեծ նշանակութիւն ունի։ Ծէն—շէն լեռների ծերպերում խոտերից շրջապատած է բուսնում, ինքը խոտերից մի ոտնաչափ աւելի բարձր է. սիրում է փխրուն հող, որ կազմուել է ծառերի փտած տերեւներից. ծաղիկները փոքր և սպիտակ են. բայց ամենանշանաւոր մասը ոչ թէ բունը կամ տերեւները են, այլ արմատը։ Ծէն—շէնի արմատը ճկոյտի հաստութիւն ունի, երկայնութիւնը 2—3 բեթաչափ ստեպղինի նման։ Արմատը սպիտակագոյն է, չորացնելուց կամ եփելուց յետոյ կարմրում է. եթէ եփելու կամ չորացնելու ժամանակ գոյնը փոխվում չէ, այդ նշանակում է որ ամենալաւը է և կոչվում է մայրաքաղաքի կամ պալատական Ծէն—շէն։ Առաջ բաւականին շատ էր բուսնում, իսկ այժմ այնպէս հազուագիւտ է, որ երբեմն 10—15 տարի որոնում են և ոչինչ չեն գտանում։ Չինացիները այսպիսի ջերմ եռանդով որոնում են այն պատճառով, որ նոցա կարծիքով նա ազատում է նոցա ամենատեսակ ցաւերից, վերանորոգում է մարդի ոյժը և զօրութիւնը, և մինչև անգամ երկարակեաց է առնում մարդիս։ Չինացիները կարծիքով մերձ ի մահ հիւանդը եթէ մի քանի մնալ ուտէ այդ բոյսից՝ կառողջանայ։ Ծէն—շէնը իւր առողջարար յատկութեան և հազուագիւտ լինելուն պատճառ շատ թանգագին է։ Մի քանի ձանապարհորդ-

Մոնղոլիան գտնվում է Երևելիան — Ասիայի բարձրաւանդակութեան արևելահիւսիսային կողմի այն մասում, ուր գտնվում Մոնղոլների լեզուով Գոբի, իսկ Չինացիների լեզուով Հ՚ամայ կոչուած անապատը։ Մոնղոլիայի սահմանները են հիւսիսից Ռուսի սերութիւնը, հարաւից բուն Չինաստանը, արևելքից Մանչուրիան և արևմուտքից Իլի։ Մոնղոլիան Չինական կայսերութեան ամենաանշան երկրներիցը է։ Նորա չնչին լինելուն պատճառը այն է, որ Ասիայի կենդրոնում լինելով, շրջապատած է բարձր լեռներով, և գտնուում է այնպիսի գօտու տակ, ուր ամառը անձրև չէ գալիս. երկիրը կամ աւազոտ և կամ քարոտ է, ձմեռը սաստիկ և երկար է լինում, իսկ ամառը կարճ և եղյաշ։ Այս բոլորի հետևանքը այն է, որ շատ աղքատ բուսականութիւն և կենդանիներ ունի. կարճատև գարնան ժամանակ գետերի և ձորերի ափերը միայն ծածկվում են սիզաւէտ խոտերով. անտառներ միայն գտնվում են լեռների գագաթների վերայ։ Մոնղոլիայում ընտանի կենդանիներ շատ կան, կով, ոչխար, այծ, իսկ ամենից նշանաւորը և կարե-

---

Ներ պատմում են թէ երկու հազար ռուբլի արժէ փունդը, իսկ ուրիշները ասում են որ մինչև անգամ միայն մի արմատը 1—2 հազար ռուբլի արժէ։ Ահա այս պատճառով ծէն—չէնը միայն կայսերը է պահպանում։ ծէն—չէն որոնողներին առանձին տոմսակ են բաժանում, որոնց թիւը սահմանափակուած է։ Մի ճանապարհորդ յետագայ կերպով նկարագրում է ծէն—չէն որոնողներին։ «ծէն—չէն որոնողը ահագին բեռը շալակած գնում է ընդարձակ անտառների միջով, մերթ բարձրանում է սարերի վերայ, մերթ իջնում է հովիտների մէջ, միշտ առաջ է գնում միայնակ այն տեղերում գիշատիչ թափառող անասունների մէջ չգիտենալով թէ կարող է արդեօք աղատուիլ նոցա ահարկու ճանկերից. 5 ամիս այս ինքն Ապրիլի վերջերից մինչև Սեպտեմբերի վերջերը նորա կերակուրը միայն բրինձ և մի քանի վայրենի խոտեր են, որոնք գտնվում են նորա շրջած տեղերում. վայը կգայ նորա գլխին, եթէ նա երբեմնապէս չբարձրանայ բարձրահասակ ծառերի կատարի վերայ և չնայէ իւր շրջակայքը թէ մոլորուած չէ արդեօք. եթէ այս նախազգուշութիւնը չկատարէ, նա կմոլորուի ճանապարհից և այնուհետև յաւիտեան կանհետանայ։

ւորը ուղտն է։ Մոնղոլները (երկու միլիօն) կառավարվում են իւրեանց սեպհական առաջնորդներից և իշխաններից, մի քանիներ աշխարհական իշխաններից, իսկ միւսները — հոգևորականներ։ Մոնղոլների իշխանները Չինաստանի կայսերը հարկ են տալիս և նոցա առած հարկը է ձիերից, ուղտերից, ոչխարներից և այլն, որոնց փոխարէն կայսերից ընծաներ են առնում հնազանդ մնալու պայմանով. բնակվում են վրանների մէջ առանձին խմբերով՝ որ անուանվում է Իրթէ։ Այդ տեսակ խմբերից նշանաւոր են Ո—ըգա, որ Սելենգայի գետակներից մինի վերայ է գտնվում։ Մայրաքն գիւղը Ռուսների Կեախտայի հանդէպը է գտնվում. այս տեղ հին ժամանակներից հետէ Ռուսերի և նոցա մէջ փոխանակական վաճառականութիւն կայ, վաճառականութեան գլխաւոր առարկան թէյ է։

Իլին արևելեան — ասիայի բարձրաւանդակութեան արևմտահիւսիսային մասումը է, հիւսիսից և արևմուտքից շրջապատած է Ռուսի երկրներից, հարաւից Տիբէտից, իսկ արևելքից Մոնղոլիայից։ Այս երկրի միջով արևմտքից դէպ արևմուտք ձգվում է Տիան — շան շղթան, որ այս երկիրը երկու մասը է բաժանում. հարաւային մասում [վերին Թաթարստան] կլիման աւելի տաք է և բերքերը (մանաւանդ բոյսերը) աւելի շատ քան թէ հիւսիսային մասում։ Տիան — շան լեռների հարաւային կողմում մինչև անգամ խաղող է լինում։ Նորա լեռները թէ հիւսիսում և թէ հարաւում շատ հրաբուղխների հետքեր ունին, այդ տեղերում կայ ծծումբ, անուշատր, լաւա, չէչաքար և տաք ջրերով լճեր. յաճախ երկրաշարժութիւններ են լինում. այս մի հաղուագիւտ երևոյթ է, որովհետև հրաբուղխները առհասարակ ծովափնեայ երկրների սեպհականութիւններն են։ Այս երկիրը ևս Մոնղոլիայի նման է հնազանդվում Չինաստանին. որովհետև Իլին Ընդհատանին և Թաթարստանին մերձ է, ուստի Չինները այս տեղում այդ երկրների հետ լաւ վաճառականութիւն ունին, այս պատճառով Տիան — շան լեռների հարաւային մասում մի քանի վաճառաշահ

քաղաքներ կան, որոնցից նշանաւորները են Պաշդար և Նոր-
կանդ։

Նրա արևմտահիւսիսային մասը Զունկլինկա է կոչւում։ Զունկլինկան գտնւում է Ռուսի և Չինի երկրների միջև, և այդ երկու տերութիւնների հաղորդակցութեան ճանապարհը է։ Եւրոպական հաղորդակցութեան համար ամենադիւրաւոր ջրային ճանապարհը Իրտիշը է, որ սկսւում է Զունկլինկայի միջից։ Տիան-Շանի հիւսիսային սառոյցների դանուած Չինական քաղաքները Իրտիշի վերին մասերում դանուած Ռուսաստանի քաղաքների շարունակութիւնը են։

Տիբեթը եռանկեան ձև ունի և գտնւում է Արևելեան — Սիբիրի բարձրաւանդակութեան հարաւային մասում, սահմանները են հարաւից Արևելեան — Հնդկաստանը, հիւսիսից Նէյն, իսկ արևելքից Ռուն Չինաստանը։ Տիբեթը Սիբիրի սակաւայայտ երկրների կարգից է։ Մոնղոլիայի նման ծովից հեռու է և շրջապատած է բարձրաբերձ շղթաներից։ Մոնղոլիայից աւելի բարձր է, շատ քարոտ և աւազոտ տեղեր ունի։ Որովհետև Տիբեթը Մոնղոլիայից աւելի հարաւ է գտնւում, ուստի ձմեռը այս տեղ աւելի կարճ է. իսկ ամառը ընդհակառակը աւելի երկար է. այս տեղ ձմեռը նոյնպես խիստ է, իսկ ամառը երաշտոտ է՝ ինչպէս Մոնղոլիայում. այն պատճառով Տիբեթը թէպէտ Մոնղոլիայից աւելի հարաւ է գտնւում, սակայն նորանից բարձրը է, բնութիւնը կենդանութիւն է տանում նմանապէս կարճատև գարնան և աշնան ժամանակ. գարնան՝ այն պատճառով՝ որ հալւում է ձիւնը, իսկ աշնան՝ անձրևից յետոյ։ Բնակիչների գլխաւոր հարստութիւնը կենդանիները են, որովհետև թէպէտ հացը հասունանում է, սակայն շատ սակաւ։ Տիբեթի պատկանեալ կենդանիները, բացի կաթից, խուղից և մսից տաւիղ են նոյնպէս շատ օգտաւէտ նիւթեր. Տիբեթի այծերը տալիս են շատ բարակ և նուրբ բուրդ, եզները աղուամազ պոչեր և մեծ եղջիւրներ ունին. միևնոյն այծեամից տալիս է մուշկ։ Ձակ կամ Տիբեթի եղը շատ օգտաւէտ կենդանի է, որովհետև

նորան գործ են ածում բեռներ կրելու և նստելու համար. լեռներու միջ ճանապարհ գտնելու զարմանալի ընդունակութիւն ունի և քմահաճ չէ. իր կերակուրը հանում է ձիւնի տակից ինքը և սիրում է ցուրտ տեղեր։ Տիբեթի վաճառականութեան գլխաւոր առարկաները վերոյիշեալ արգասիքը են. այծի բուրդը պաշմիր են ուղարկում, որից այս տեղում գերազանց շալեր են գործում, օրը յայտնի են նկարներով, բազմազան գոյներով և դիմացկունութեամբ. կան այնպիսի շալեր որոնք $2\frac{1}{2}$ հազար ռուբլի արժեն։ Եղերի պոչից փունջեր, թոկեր և այլ բաներ են պատրաստում. մուշկը շատ թանկագին է և ծախվում է դեղավաճառանոցներում։ Թաց ի կենդանիներից բնութիւնը պարգևել է նորան Որաքս, որ գործ է ածվում նոյնպէս դեղավաճառանոցներում։ Որաքսը՝ աղէ նման մի քանի լճերի ջրի մէջ է գտնվում, գործ է ածվում բժշկականութեան մէջ, ապակիների յախճապակեղէնների վերայ նկարելու ժամանակ, և այլն։ Տիբեթի բնակիչները երկու կարգ են բաժանվում, — հոգևորական և աշխարհական։ Աշխարհականներին պարտականութիւնը է հոգալ և լցուցնել կեանքի բոլոր կարիքները. իսկ հոգևորականները պէտք է ժողովրդի բարոյական կեանքի հոգը քաշեն։ Աշխարհականները բնակվում են գիւղերում, իսկ հոգևորականները վանքերում։ Հոգևորականները իւրեանց եկեղեցական կարգաւորութիւնը ունին։ Հոգևորականներից ամենամեծը Դալայ — Լամա է կոչվում։ Ռուդդայի հետևողները Դալայ — Լամային Ռուդդային փոխանորդ են ընդունում երկրիս վերայ, որ մի և նոյն նշանակութիւնը ունի նոցա համար՝ ինչ որ պապը Կաթոլիկների համար։ Դալայ — Լամայի աթոռանիստը Լհասա [Լհա+] է կոչվում և Ռուդդայականների համար այն նշանակութիւնը ունի ինչ որ Հռովմը կաթոլիկների կամ Երուսաղէմը ընդհանուր քրիստոնեայների համար, Մեքկան — Մահմետականների համար, Ռենարէս — Բրահմանութեան երկրպագուների համար։ Դալայ — Լամայի վանքը 10000 սենեակից է բաղկացած. Ռուդդայականների ա՛ատիկա-

նի հանդիսատեսության դահլիճը, ուր Տիբեռացիները քա-
վում են իրենց մեղքերը, զբաղեցուած է պատմաբանական
պատկերներով։ Ո–կտա–ոյնները և վաճառականո–ՂԻ–նը։ Լեռ-
ոայից դէպի արեւմուտք Պրահմապուտրի ալ ափի վերայ ժայ-
ռերի մէջ գտնվում է մի ուրիշ նշանաւոր վանք, որ Տէլ–
Լ–է–ֆա–է կոչվում. բաղմաթիւ [300–400] առանձին առան-
ձին շինութիւններից է բաղկացած, որոնք քաւարաններ, վար-
նաձև քառանկիւնի տաճարներ և ուրիշ շինութիւններ են։
Քաւարանների մէջ իւր ճարտարապետութեամբ և գեղեցկու-
թեամբ առաջին տեղը բռնում է Խաղող–Լ–ամայինը։ Ս.յդ շի-
նութիւնը ներկայացնում է մի քառանկիւնի աշտարակ, որ շըր-
ջապատուած է սիւներով, իսկ մէջ տեղը գտնվում է մի Ռուբդ,
—այս վերջինի մէջ գտնվում է մի ոսկեայ դաղաղ. Ռուբդի
վերայ շինած է Լ–ամայի ոսկեայ արձանը նստած դրութեամբ.
իսկ նորա մօտինը—մի ուրիշը ոսկեջրած, այդ արձանների շուր-
ջը գտնվում է կանթեղներ։ Աշտարակի տանիքը ոսկեջրած է։
Տէշու–Լ–ամբուի մէջ մինչև 3000 միաձուլակացներ կան, որոնք
կատարում են միշտ կրօնական ծէսերը ըստ Լ–ամայի հսկողու-
թեամբ. երեք օրը մի անգամ հանդիսաւոր կերպով կատա-
րում են առաւօտեան աղօթքը բարձր երգելով և նրաժիշտ-
ների ներդաշնակութեամբ։ Տիբէտը Չինաստանին նշանակել
հարկ է տալիս։ Դորա համար Չինացիների կառավարութիւ-
նը Լ–հասսայում իւր զօրքը ունի. բայ ի հարկատուութիւնից՝
առանց չինական կառավարիչների համաձայնութեան Լ–աման
ոչինչ պաշտօնական կարող չէ նշանակել։

Ռուդդայական կրօնը ամենահին ժամանակներում է սկիզ-
բը առել և մի քանիսի կարծիքով բրահմական կրօնի մի մաս-
նաւոր ազանդը է։ Ռուդդային հետևողները բրահմականների
նման ընդունում են հոգու անմահութիւնը և նորա փոխադ-
րութիւնը մի բոյսից միւս բոյսի մէջ, մի կենդանուց միւս կեն-
դանու մէջ. նոցա հակազդողութեամբ այս փոխադրութիւնը
կատարվում է ոչ թէ այն նպատակով, որ նորա մաքրվում են

մեղքերից, այլ որ այնպէս կատարեալ դառնան, ինչպէս Ռուդ-
դան է։ Բայց որովհետև այդ նպատակին հասնելու համար
հարկաւոր է բարեգործութիւններ կատարել, ուստի Ռուդդա-
յի կրօնը արդելում է խռովութիւն, բարկութիւն, սպանութե-
թիւն, կեղծաւորութիւն, բամբասանքը և այլն. ընդհակառակ ու-
սուցանում է ներել յանցաւորներին, մարդասէր լինել, պա-
տուել ծնողներին, հոգալ թէ բարեկամների և թէ օտարների
—ազգականների մասին. անբաղտութեան ժամանակ՝ հանգերոց,
և չափաւոր՝ բաղդաւորութեան ժամանակ. մի խօսքով ուսու-
ցանում է գործել դրութեամբ այն ամեն բարեգործութիւնների՝
ինչ որ Քրիստոնէութիւնը պահանջում է քրիստոնեայից։
Ռուդդայական մի քանի կանոնները չափազանց նման են կաթո-
լիկական եկեղեցւոյ կանոններին. բուդդայականի հոգևորական-
ները նոյնպէս պէտք է անպսակ լինեն. նոքա ևս գործ են ածում
վարդապան, ծխում են խունկ, յաճախ հարկանում են զան-
գակները, յարգում են սրբերի նշխարները, ունեն նոյնպէս խոս-
տովանութիւն և մեղքերի թողութիւն։ Ս.յսպէսով զարմա-
նալի չէ որ քարոզիչները, որոնք ամենից առաջ Յանովհացան
բուդդայականութեան հետ, քրիստոնէութեան արարողու-
թիւններին շատ նման ծէսեր գտան։

Մարդիկների կատարեալ դառնալու ցանկութեանը օգնե-
լու համար, Ռուդդան երբեմն երկնքից իջնում է երկիրս վերայ
և մարմին է առնում։ Մարմնացած Ռուդդաներից չորրորդը,
որ Շակիամունի կամ Սակիամունի է կոչվում, Ռուդդայա-
կանների կարծիքով՝ Քրիստոսի ծնունդից առաջ վեցերորդ դա-
րում աշխարհիս երեսին էր։ Նա մարմին առաւ Միդդարատա
թագաւորական ժառանգի անունով, որ Սակի (այս պատճա-
ռով Սակիամունի է կոչվում) ազգից և Գաուտամա ցեղից էր։
Մարմնացեալ Ռուդդայի մահից յետոյ մինչև նոր Ռուդդայի
աշխարհ գալը երկրիս երեսին ուրիշ մարմին առած Ռուդդաներ
կան, որոնք Սակիամունի նման կատարեալ չեն. այս մի և նոյն
նպատակով Ռուդդայի հետևողները Ռուդդայի փոխարէն ա-

տուածացնում են իւրեանց քահանայապետ Դալայ—Լամային։ Բուդդայի կրօնը սկզբում ծագեցաւ Ընդկաստանում։ Թայց որովհետև Սակիամունին ոչինչ փառս չէր ընդունում, ուստի այդ ուսման դէմառաւ հակառակորդները եղան Բրահմանները—քուրմերը. նոքա Բուդդայականներին թշնամու տեղ էին ընդունում, այս պատճառով շատ արիւնահեղ պատերազմներ եղան և Բուդդայականները հարկադրուեցան հեռանալ Ընդկաստանից և տարածուել Ընդկա—Չինաստանում, Տիբէտում և Թաթարստանում։ Այս երկիրների հեթանոս բնակիչները ընդունեցին այս նոր կրօնը խառնելով նորա հետ իւրեանց հաւատը։ Այժմեան ժամանակներում Ասիայի կէսը Բուդդայական է։ Թաթարները այդ կրօնը մտցրին և Չինաստան, ուր նա Ֆոյ է կոչվում։ Բուդդայականութիւնը Չինաստանից տարածվեցաւ Ճապոնայի մէջ։ Ռուսաստանում ևս կան Բուդդայականներ։ Նոքա միայն Բուդդայի անունը գիտեն, ուստի հոգին բոլորովին կարելի է և միայն ձևը է մնացել։ Այսպէս Բուդդայականների խօսքը—պոպոպաղ հաւապոխ անի—ը ենթադրվեն այդ միտքն է ստացել։ Օրինակ, նոցա մէջ մի աւանդութիւն կայ, որ Բուդդայականութիւնը և լուսաւորութիւնը Տիբէտում տարածողը Բուդդայի աշակերտ Ավալոկիտես Վ՚ապան էր։ Որովհետև Ավալոկիտես Վ՚ապային միշտ Լ՚ատոսի [ծաղիկ ինչ] վերայ նստած են նկարում և ընդունում են որ նա Տիբէտի և Մոնղոլիայի հովանաւորը է, ուստի նորան յարգում են և ի պատիւ նորան մի աղօթք են յօրինել. ,,Օմ—մանի—պատ—մէ—խում,, այս ինքն ,,Թանդագին գանձ լոտոսի վերայ,,։ Այժմ Տիբէտացիները և Մոնղոլները և Վ՚ալավկիտես Վ՚ապային հաւատի անիւը դարձնում են այնպէս, որ անդադար կրկնում են Օմ—մանի—պատ—մէ—խում, և կարծում են որ այդ կերպով ազատվում են մեղքերից։ Թայց այս սակաւ է, հաւատի անիւը խօսքով պտոյտ տալուց, որովհետև կարելի է յօդնել, ուստի նոքա աղօթքը գրում են գլանի վերայ և որի մէջ լցնում են Օմ—մանի—պատ—մէ—խում գրած թղթերը և սկսում են կամ իւրանք պտոյտ տալ, կամ գլանին ձախարակի ձև տալով բռնում են քամու դէմ, որին զօրութեամբ պտոյտ է գալիս այդ չարիքը։ Ամեն տեղ իւրեանց վրանների մօտ մի մի հատ գլան կայ դրած քամու դէմ՝ որ պտոյտ գայ անդադար։

Թայց ի վերոյիշեալ երկիրներից Չինաստանի կայսրը փոքր Տիբէտի կամ Յատակայի, Կորէա, Ռուսան, Ընամ թերակղզիները և Լիկեան կղզիների իշխաններին իւրեան աւատառուն է համարում։

Տիբէտի արևմտեան մասը, որ փոքր Տիբէտ կամ Լ՚անթակ է կոչվում, գտնվում է Հնդոս գետի վերին մասերում և ոչ միայն Չինաստանի աւատառական իշխանութեան տակ է գտնվում, այլ և Լ՚ադուհան Սէկիերի, Բէդանստանի և Տիբէտի Դալայ—Լ՚ամայի (հոգևոր կախում ունի) իշխանութեան տակ և փոփոխակի ամենին հարկ է տալիս։ Թայց իւր լեռնոտ դրութեան ունենալուն պատճառով Լ՚ատակը անկախ աէրութիւն է։ Լ՚ատակը Չինաստանի համար նշանաւոր է այն պատճառով՝ որ Կաշմիրի ճանապարհի վերայ է գտնվում։ Նորա Լ՚էհ քաղաքում երկաթ երևելի ծանաւաճառութիւն է լինում։

Կոչէա կղզին փոքր ինչ Իտալիայի նման է. Իտալիայի նման արևելահարաւային ուղղութիւն ունի, նորա նման դժուարամատչելի մասը արևելեան կողմումը է գտնվում. իսկ զառիվայր մասը արևմտքում և տեղ տեղ արգաւանդ դաշտավայրեր ունի. այս պատճառով արևելեան կողմում միայն ջրվէժներ և բարձրութիւններից թափվող աղբիւրներ կան, իսկ արևմտքում ընդհակառակը գետեր։

Կոչէի նահանգը, որ 10,000 կղզիների թագաւոր է կոչվում, տարին երկու անգամ հանդիսաւոր կերպով դեսպան է ուղարկում Պեկին, առաջին անգամ օրացոյց ստանալու համար ի նշան աւատառութեան, երկրորդ անգամ թագաւորին ընծայ տանելու համար։ Կորէի թագաւորն աւատառական կախումը գինի կայսերից միայն այսքան է. իսկ երկրի կառավարու-

թեանը մէջ նա բոլորովին անկախ է։ Կորեի թագաւորը բաց ի Չինական կայսր իշխանութենէն, գանվում է և Ճապոնիայի թագաւորի իշխանութեան տակ։

ՃԱՊՈՆԻԱՑԻ ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆ։

Ճապոնիայի կայսերութիւնը բազկացած է բազմաթիւ կղզիներից, որոնք Մանջուրիայի և Կորեի ափերի հանդէպը են գանվում. նոցանից գլխաւորները են—Նիֆոն, Սիկոկֆ, Նաոյ և Կիւ—ւիւ։ Ճապոնացիները իւրեանց երկիրների թուում հաշվում են նոյնպէս Կորէա թերակղզին և Լիկիան կղզիները։ Ճապոնիան մինչև անցեալ դարի կէսերը Չինաստանի նման անծանօթ էր օտար երկրացիներին։ 1853 թուին նորա նաւահանգիստները առաջին անգամ բացուեցան հիւսիսային Ամերիկացիների համար, ապա փոքր առ փոքր և միւս ծովափնեայ ազգերի համար։ Առաջին անգամ միայն երկաթ նաւահանգիստներ բացուեցան. Նիֆոնի վերայ—Սիմոդայ՝ որ գանվում է Ինդոյգ ծոցի մուտքում. Չակոդատէ՝ Իէսոյի հարաւային ափի վերայ և Նախասակի՝ Սիս—սիմայի արևմտեան ափի վերայ, յետոյ ուրիշները (Նիրգատայ, Նիոգոյ, Կանագաւա). բաց ի դոցանից օտարականները Ինդոյո մայրաքաղաքում և Օսակում բնակվելու իրաւունք ունին. իսկ այժմ ինչպէս ասում են, Ճապոնացիները պատրաստ են բաց անելու օտարականների համար իւրեանց բոլոր նաւահանգիստները, մինչև անգամ թոյլ են տալիս մի քանի տեղերում նաւակատոյց արարանները, խանութներ և այլն. ունենալ *)։

(*) Շատ ժամանակ չէ որ Ճապոնիայի մէջ, վերին իշխանութիւնը մի մարդի ձեռի չէ գանվում, այլ մի քանիների. Ցետագայ կերպով պատահեց այդ։ Ճապոնիայի թագաւորը—Մէնոյ՝ երկիրը մի քանի նահանգներ բաժանեց և իւրաքանչիւր նահանգին առանձին կառավարիչ—Դայիմ կարգեց, Սկզբում Դայիմները հասարակ նահանգապետներ էին, Բայց յետոյ փոքր առ փոքր իւրեանց զանազան իրաւունքներն անպհականացնելով այն-

Ճապոնիայի ափերի ծովերը յաճախ փոթորիկների են ենթարկուած և մեռախլապատ են. շատ կորաձիւ խորքեր ունին մանաւանդ արևելեան ափերը, նոյնպէս շատ ծանծաղուտներ և ժայռոտ կղզիներ ունի։ Ճապոնիայում շատ լիճներ

պէս զօրեղացան՝ որ Միկատոն չկարողացաւ ընդհանրապէս նոցա և նահանգապետի պաշտօնը ժառանգական եղաւ։ Ժամանակ անցնելով՝ այն նահանգները որոնք Դայիմներէ էին կառավարւում, նոցա սեպհականութիւն դարձան, միայն թէ Միկատոյի ծայրագոյն իշխանութեան ներքոյ են գտնվում. Որը որ Դայիմները անկախ կառավարիչներ դարձան, սկսեցին Միկատոյի դէմ կռիւ բանալ. այս վերջինս չկարողանալով հնազանդեցնել նոցա, նոցա հնազանդեցնելու իշխանութիւնը իւր առաջին պաշտօնեային—Տայկունին յանձնեց և իւր զօրքի գլխաւոր հրամանատար կարգից նորան։ Տայկունը մի քանի Դայիմների հնազանդեցնելուց յետոյ կամեցաւ հանգամանքներից օգուտ քաղել և ստացած իշխանութիւնը իւր ձեռքում պահել։ Այսպէս անձարացած համաձայնեցաւ։ Այս կերպով կառավարական բոլոր մասը Տայկունի ձեռը անցաւ։ Բայց Միկատոն պահպանեց իւր արտաքին փառքը և շքեղութիւնը և լոկ խօսքով միայն վերին տէրութեան եղաւ։ Նորա պալատը Միակայում է, իսկ Տայկունը իւրեան մայրաքաղաք ընտրեց Եդօ։ Ուրեմն Միկատոն Ճապոնիայի միակ օրինաւոր տէրը է, իսկ Տայկունը օրէնքի զօրութեամբ նորա առաջին պաշտօնեային, տէրութեան կառավարիչը է. օրէնսդրական իշխանութիւն չունի նա, այս պատճառով չունի իրաւունք փոխելու որ և իցէ կարգ կամ կանոն, որ հաստատուած է Ճապոնիայի կայսերութեան օրէնքներով։ Այս կերպով օտարազգի կառավարիչները Ճապոնիայի մէջ գործ ունին թէ Միկադոյի հետ՝ որի ձեռին է օրէնքը, թէ Տայկունի, որի ձեռին է զօրութիւնը, և թէ Դայիմների հետ, որոնք նահանգների մէջ անկախ թագաւորներ են համարում իւրեանց։ Եթէ Միկատոն մի բանի համաձայն է, Տայկունը կամ Դայիմները կարող են չհամաձայնել. եթէ Տայկունը է համաձայն, կարող է Միկատոն չհամաձայնել։ Տայկունը և Դայիմները իւրեանց նահանգներում կարող են անել այն ինչ որ կամին, բայց նոցա անօրէնութիւնը օրէնքի զօրութիւն ստանալու համար կարօտ է անպատճառ Միկատոյի համաձայնութեանը։ Բայց վաճառականական յարաբերութիւնների օգուտների համար այժմ թէ Միկատոն թէ Տայկունը և թէ Դայիմները մտնում են օտարականներին։ Ճապոնացիները արդէն շատ ճարտար և երկաթուղի (նանկասակի) ունին։

կան որոնք մշանջենաւոր ձիւնով են ծածկուած. լեռները շատ հրաբուղխներ ունին, որովհետև Ն՛ապոլիայի կղզիները այն հրաբուղխային շղջանակի շարունակութիւնն են կազմում, որ շղջապատում է Սեծ Ովկիանոսը: Լեռները շատ լաւ պղինձ և երկաթ ունին: Ն՛ապոլիայում նաւատնոց գիտուր շատ կան: Կլիման խոնաւ է, այնպէս որ Ն՛ապոլիան միշտ կանաչով է պատած. որովհետև Հարաւային Եւրոպայի լայնութեան տակ է գանվում, ուստի Հարաւային պտուղները նոյնպէս հասնում են այս տեղ. կայ նոյնպէս և թէյ, բայց ամենից շատ բրինձ կայ: Երկիրը բնական բերքերով հարուստ լինելու պատճառով շատ բազմաթիւ բնակիչ ունի. երկիրը 7500 քառ. մղոն տարածութիւն ունի. բնակիչների թիւը ինչպէս կարծում են 30 միլիոն է. իւր բնակիչների խառնութեան կողմից միայն փոքր ինչ պակաս է Եւրոպայի առաջնակարգ խիտ երկիրներից: Շատ քաղաքներ շատ բազմամարդ բնակիչներ ունին. օրինակ, Նէպոլի մէջ. ինչպէս կարծում են՝ երկու միլիոն բնակիչ կայ: Բնակիչները Չինացիների հետ մի ծագում ունին. շատ հիւսքքիր, ընդունակ և աշխատասէր են: Ամեն մարդ կարդալ ու գրել գիտէ: Կրօնը Ռուդոլական է: Ն՛ապոլացիների հասար Ռուդոլի փոխանորդը Սիկատոնը է:

ԱՐԵԻԵԼԵՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ.

Բնութիւնը: Արևելեան Հնդկաստան կազմում են Ասիայի հարաւային մասի երկու թերակղզիները — Հնդկաստան և Հնդկաչինաստան [Մալակայի հետ] և բազմաթիւ կղզիներ, որոնք այս թերակղզիներից մասամբ հարաւ և արևելահարաւ են գտնվում և ցրուած են մինչև նոր Հոլանդիայի ցամաքը: Երբ 15 րդ դարի վերջերում գտան արևմտեան Հնդկաստանը, այն ժամանակ այս երկիրները Արևելեան Հնդկաստան կոչուեցան: Արևելեան Հնդկաստանի սահմանները կազմում են Հնդկաց մասամբ մեծ Ովկիանոսները, Իրանի և Չինական կայսերութեան երկիրները*): Արևմտեան — Հնդկաստանը գրեթէ բոլորովին Եւրեցեալ Գօտու տակ է և նորա մակերևոյթի կազմուածքը բազմատեսակ է, ուստի կլիման ևս չափազանց միակերպ չէ, բարձրաւանդակութիւնների վերայ փոքրը ի շատէ բարեխառը է, իսկ ստորավայրերում չափազանց տօթային և խոնաւ: Ստորավայրի այս տեսակ կլիման շատ օգնում է ահագին բոյսերի և կենդանիների աճելուն: Ուստի Արևելեան Հնդկաստանը բոյսերով, կենդանիներով աշխարհիս ամենահարուստ երկիրներից մին է: Բայց մի և նոյն ժամանակ այդպէս տօթային և խոնաւ կլիման լաւ ներգործութիւն չունի բնակիչների վերայ. բնութիւնը այնպէս թմրեցնում և նուաղեցնում է բնակիչներին այժը և զօրութիւնը, որ նոքա ոչ մի ջանադրութիւն պահանջող գործունէութեան ընդունակ չեն: Այդ տօթը տեղական հիւանդութիւններ է ծնանում. [Գանգեսի բերանի մօտ խօլերա, տէնդ Կորամանտէլի ափին]: Թէպէտ բնակիչները սովոր են այդ տեսակ կլիմային, սակայն բոլորովին ազատ չեն նորա վատ ներգործութիւնից: Այդպիսի ինքն ըստ ինքեան միատեսակ կլիման օտար երկրացիներին անսովոր լինելով առաւել ևս միատեսակ է: Ուստի նոցանից շատերը առողջանալու համար գնում են այնպիսի երկիրներ որոնք այսանի են իւրեանց առողջարար կլիմայով: Արևելեան — Հնդկաստանում

(*) Ծամանքային սահմանները շատ անյարմար են հաղորդակցութեան համար, միայն արևմտահիւսիսային մասում յաջողակ հաղորդակցութիւն կարելի է ունենալ Կապուլի կիրճով. ծովային սահմանները ընդհակառակը շատ յարմար են հաղորդակցութեան համար: Ասիայի մէջ ոչ մի ծովափնեայ երկիր այնպէս դիւրամերձենալի ափեր չունի, ինչպէս արևելեան Հնդկաստանը: Արևելեան Հնդկաստանի ամբողջ արևմտեան թերակղզին նա մանաւանդ սորա Արևմտեան մասը շատ գեղեցիկ զոգեր ունի: Ծովային սահմանների գլխաւոր անյարմարութիւնները սորա են. 1) երբեմն Հնդկաց Ովկիանոսի վերայ փոթորիկներ են բարձրանում. 2) մի քանի ափերը շրջապատուած են Մորաշիների կամ Ռուսթի խութերից. 3) ծանծաղուտ տեղեր, սորա արևմտեան թերակղզու արևելեան ափերում բազմաթիւ են:

այդ տեսակ երկիրներըը են ։ Իմաստասեան լեռների դարատափերը [մանաւանդ Պաշմերի հովիտը և Նիլգերի բարձրութիւնները]։ Պաշմերը իւր հրաշալի կլիմայի պատճառով մինչև այժմ արևելեան բանաստեղծների գովաստանութեան նիւթը է։

Արևելեան ։ նդկաստանին պատկանեալ բոյսերից նշանաւորները են, բրինձ, ընկուզաբեր [կոկոսի], ուղղալից [սագոյի] և արեկի արմաւենները, բանան, հնդկաթզենի կամ բանիան և հնդկեղեգը (բամբուկ)։

Ընկոյզաբեր [կոկոսեան] պտղաւենին արտաքին տեսքով մեծ գրչի նման է, բուն ճիւղեր չունի, միայն բնի ծայրին պսակի նման գտնվում են տերևներ, որոնցից իւրաքանչիւրի երկայնութիւնը երեք սաժէն է, իսկ լայնութիւնը կէս սաժէն։ Այրեցեալ գօտու տակ եղած ծառերից ոչ մին մարդուս համար այնքան օգտաւէտ չէ, ինչպէս ընկուզաբեր արմաւենին։ Յաղովվրդեան աւանդութեան նայելով 99 պիտոյք է լցուցանում։ Եւ մի առած կայ որ ասում է թէ՝ լաւ տանտիկինը մի ամբողջ ամիս իւրաքանչիւր օր նոր տեսակի կերակուր կարող է պատրաստել նորանից։ Ռունը գործ է ածվում շինութիւնների ևս կարասիների համար, մատաղ տերևներից կարկտի գեղեցիկ զամբիւղներ շինել (հիւսել), կամ թէ շատ անգամ եփում կամ խորովում են և համեղ բանջարի կերակուր են եփում. հին տերևներով ծածկում են տների տանիքը, տերևների կոթերից աւելներ, գեղեցիկ սանտրեր, թուղթ և առագաստներ են պատրաստում, այն կեղևից՝ որով պատած են դեռ ևս չբացուած ծաղիկները, կտրատելով քամում են քաղցր հիւթ, որից պատրաստում են տոդդի կամ արմաւի գինի, այդ հիւթը թարմ ժամանակ նորոգում է մարդի զօրութիւնը և ոյժը։ Այդ հիւթը գոլորշիացնելով շաքար են պատրաստում. իսկ տոդդին երկար ժամանակ թթուեցնելուց յետոյ լաւ քացախ է դառնում։ Պտուղը ընկոյզ է, որի մեծութիւնը մարդի գլխի չափ է, որ ոչ միայն ուտելիք և ըմպելիք է տալիս, որ կաթի նման է, այլ և նորանից իւղ են ստանում։ Այդ իւղը այրվում է առանց

ձանձրանալու և հոտի, թարմ իւղը գործ է ածվում և կերակուրի մէջ։ Այդ իւղից ջրակիր մանուշների օգնութեամբ հեղուկ (օլէին) և հաստատուն (բնաճարպ) նիւթեր են ստանում. առաջինից լապտերների համար այրելու իւղ են պատրաստում, իսկ երկրորդից մոմեր են թափում, որոնք ոչնչով պակաս չեն մեղրամոմից։ Կոկոսեան իւղը վաճառականութեան մէջ այժմ մեծ նշանակութիւն ունի։ Կոկոսեան քամուկը ընտանի թռչունների և խոզերի համար լաւ կերակուր է։ Միջուկի մօտ մի թելքել նիւթ կայ, որից պինդ պարաններ են պատրաստում, իսկ կեղևից զանազան անօթներ են շինում, այս պատճառով բոլորովին զարմանալու չէ որ, արևելեան ։ նդկաստանում ամեն խրճթի մօտ գտնվում է այս օգտաւէտ ծառից։ ։ նդիկ գերդաստանի համար վաթսուն հատ արմաւենի մի և նոյն նշանակութիւն ունի՝ ինչ որ մեր գիւղացի գերդաստանի համար մի օրավար ցորեն կամ կարտօֆիլ։ Մի անգամ մի Պորտուգալացի նաւավար Մալաբարի բնակիչներին առաջ գովում էր իւր հայրենիքը և խօրհուրդ էր տալիս այն տեղ գընալ։ ,,Չեր երկրում ընկուզաբեր արմաւենի բուսնում է թէ ոչ,, հարցրեցին նորա։ Նրը լսեցին որ՝ չկայ, ասեցին ,,Լաւ է որ մենք այս տեղ մնանք, որովհետև այս ծառից ոչինչ գեղեցիկ բան չենք գտնի Եւրոպայում,,։ Ընկուզաբեր արմաւենին սիրում է ծովափնեայ երկիր, և միայն այն տեղերում լաւ յաջողակ բուսնում է՝ ուր ծովի քամին հասուցանում է աղի ջրի գոլորշիները։ Վճռաւոր կերպով բուսնում է Սէյլանի հարաւային և արևմտեան ափերում, Մալաբարի և Կորոմանդէլի, Մալդիվի և Լաքիադիվի և Խաղաղ Ովկիանոսի կղզիների վերայ։ Խազմանում է դեռ չծլած ընկոյզով, որի բոզբոզ $1\frac{1}{2}$ ֆունտ երկայնութիւն է ունենում։ Վեց տարուց յետոյ ծառը արդէն պտուղ կտայ 12—25 ընկոյզ, այնպէս կը շարունակվի մինչև 30 տարեկան հասակը։ Սագվէյան կամ ուղղալից արմաւենին ։ ընդկաց արշիպելագոսի բնակիչների ամենագլխաւոր կերակուրը է. երկար ժամանակ իրրև թուփ է աճում, 20 ֆունտ երկայնու-

թեամբ արմատային տերևներով, յեւոյ բունը սկսում է մինչև 10 ֆուտ արագութեամբ բարձրանալ և այնպէս հաստանում է, որ մարդ հազիւ թէ կարող է գրկել: Մինչև պտուղների երեվիլը կարում են ծառը, ապա թէ ոչ նոքա կոչնչացնեն ծառի պորտը: Ընդհին բունը ձեղքելով պինդ կեղևի տակ եղած ալեւրը քերում են, այս վերջինս ջրով լուանալուց յետոյ, կոկոսի գործուածով մաղում են: Մի ծառից մինչև 15 փութ ուղղակից ընկոյզ կարելի է ստանալ: Մեծ մասը գործ է ածվում այդ երկրի մէջ հացի փոխարէն: Ասյց պէտք է ասել, որ շատ են տանում և Եւրոպա: Մոլուկեան կղզիների վերայ Սումատրա և Բորնիոյ կղզիներում Սագոյեան արմաւենիները ահագին անտառներ են, մեծ մասամբ ձահճոտ տեղերում է բուսանում: Պետրաբոյս տերևը գործ է ածվում հանդերձի համար, տերևների կոթերը գործ են ածում ցանկերի, աթոռների և այլն: Բանանը 15 կամ 20 ֆուտ բարձրութեամբ խոտաւէտ բուն ունի, որ բաղկացած է տերևների միմեանց ծածկող կոթերից: Տերևների մէջ գտնվում են հասկաձև ծաղիկներ, որոնք գլխիվայր են կախուած և որոնցից իւրաքանչիւրը 300 պտուղ է տալիս, որոնք ծածկում են միմեանց և շատ անգամ վարունգի ձև և մեծութիւն ունի: Այս գեղեցիկ ծառի արտաքին տեսքին նայելով մարդ կարծում է որ այդ տեսակ հասակ ստանալու համար գոնեա մի քանի տարի է հարկաւոր, այն ինչ բաւական է 8—10 ամիս՝ որ այդ շքեղութեան հասնի: Այս ծառը միայն մի անգամ այն էս մի հատ ծաղկեայ հասկ է տալիս, յետոյ բունը կարում են և ապա նոր բողբոջ բուսնում, այս մի տարում հասնում է կատարեալ հասակի: Պտուղների իւրաքանչիւրը փունջը 60—70 ֆունդ ծանրութիւն ունի:

Մի մարդի համար ցանած հաց բոնած տեղում այնքան Բանան կարող է բուսնել, որ մի մեծ գերդաստանի բաւական է: Բանանի պտուղը յետագայ կերպով են պատրաստում. իսկ պտուղների կեղևը կպչելուց յետոյ խորովում են և իւղի մէջ են թաթախում, այս տեսակ նոքա գործ են

ածում հացի փոխարէն նախաճաշիկի ժամանակ. իսկ առանց իւղի մսի հետ շատ համեղ կերակուր են դառնում: Հասած պտուղները կամ խաշած են ուտում կամ հում: Չոր և աղած պտուղները լաւ ալիւր են տալիս, որով պարապում են առհասարակ ծովագնացները: Իւթիյ ծինի են շինում, պորտը գործ են ածում տանիքների համար, կամ նոքանից թել են շինում, իսկ թելերից — պարաններ, հագուստ և այլն: Բամբուկը կամ հնդիկեղէգը դալարիների մի տեսակը է: Մի արմատից մինչև 100 բուն է բուսնում, երբեմն իւրաքանչիւրը մի մարդու հաստութիւն և 100 ֆուտ բարձրութիւն է ունենում: Նոքան գործ են ածում շատ բաների համար. Բամբուկից պարաններ, առագաստներ, ձեռնափայտեր, սեղաններ, աթոռներ և ամբողջ տներ են շինում: Տերևները գործ են ածում թուղթ շինելու համար, կամ թէ խրձիթներ են ծածկում նոքանով:

Բանան այնպիսի մի ծառ է, որ ամբողջ անտառ կարող է դառնալ. Սերրուտատի ափին, այնպիսի Բանան կայ, որի ստուերում 10,000 մարդ կարող է տեղաւորուիլ: Արեւմտեան, նոքա պտուղները թթու ընկոյզներ են և Հնդկաստանի ամենաընտիր կերակուրներից է: Արեւելեան Հնդկաստանին պատկանող կենդանիներից նշանաւորները են փիղ, գոմէշ, վհրու կամ վիլապ, ռնդեղջիւր, վագր, կապիկներ, կոկոր—դիլոռներ, բօա, ամենամեծ օձ, մուսկիտաներ և տէրմիտներ:

Փղոյ արեւելեան Հնդկաստանում մի և նոյն նշանակութիւնը ունի՝ ինչ որ մեր մէջ ձին. պատերազմական և բեռնակիր փղեր կան. ամենալաւ փղերը Սէյլան կղզու վերայ են գտնվում: Հնդկաստանում սպիտակ փղեր կան: Գոմէշը գործ է ածվում բեռներ կրելու և երկիրը մշակելու համար:

Օձե՝ արեւելեան Հնդկաստանի եղը է. այս կենդանիս երբեմն մի և երբեմն երկու սապատաղն ունի. բնիկ բնակիչները շատ յարգում են նորան: Ռնդեղջիւրը շատ հեզ կենդանի է, բայց եթէ բարկացնեն՝ շատ ահարկու է: Թէպէտ տեսանելիքը

վառ է, բայց հոտառելիքը սաստիկ սուր է: Ռուն բնակիչների կարծիքով ագջևբները և կաշին գիրքական զորութիւն ունին՝ առում են, որպես թէ թիւնաւորուած ըմպելիքները եթէ անգղջևբի ագջևբից շինած անօթի մէջ ածեն, կըպզտոբի. Ասիայի թագաւորների մօտ այս տեսակ անօթները անգին հասարակ կարասիներ են: Վաճառականութեան մէջ անգղջևբի ագջևբները փղոսկր են կոչվում և այս վերջիններից $1^1/_2$ անգամ թանգ են: Վափրը թագաւորական է կոչվում և աշխարհիս մէջ ամենամեծ տեսակը է: Կապիկներ շատ կան ամբողջ բանակներում, արձակվում են գաշտերի և այգիների վերայ: Ներ արտաքին տեսքով մարդիս ամենամօտիկ կապիկը Օրանգ—ուտանգը է: Ռսան օձերի թագաւորը է, երբեմն ութն սաժէն երկայնութիւն ունենում է: Ընդհանուր օձը շատ սիրում է երաժշտութիւն, բայց թիւնաւոր և վտանգաւոր է շատ: Գավեալ (հնդկական կոկորդիլոս) երբեմն երկու սաժէնից աւելի երկարութիւն է ունենում և արևելեան Հնդկաստանի գրեթէ բոլոր գետերում լի են: Մոռկներըը մեր մօծակների նման կենդանիներ են և շատ անասանելի են տեղացիների համար: Տէրմիտները Հնդկաստանի երկու թերակղզում ևս՝ Լինէի խօսքին նայելով՝ մարդկութեան համար պատիժ են: Այս միջատները տարածուած են այրեցեալ գօտու և բոլոր երկիրներում, և ցամաքի վերայ այն նշանակութիւնը ունին՝ ինչ որ ծովի մէջ teredo: Այրեցեալ երկիրներում նոքա անասառների և գաշտերի տէրը են, մինչև անգամ խրճիթների մէջ ևս ոչնչացնում են ամեն պաշար: Տարածուելով անտառների մէջ, գաշտերում և բանջարանոցներում ոչնչացնում են տերևները, պտուղները, կամ փորում են երկիրը և այսպիսով մեծ վնաս են հասցնում տնկարկուներին. գիւղերի և տների մէջ մտնելով ոչնչացնում են ընտանեկան կենդանիներին, տնտեսական պիտոյքները, բասիները և քանդում են ամբողջ շինութիւնները. միայն մեռածը և ապակին ազատ են մնում նոցա հարուածից: Փայտը նոցա սիրական կերակուրը է. մի ամբողջ տուն ոչնչացնելու

համար հարկաւոր է միայն մի քանի շաբաթ, արտաքին կողմից բոլորովին ամբողջ են թողնում, բայց սիւների և գերանների միջակը բոլորը ուտում են. մտնում են արկղների, գարանների, գղջոցի մէջ և շատ անգամ զիշերով ոչնչացնում են կոշիկները, հոդաթափներ և դրքեր: Նոցա սարսափելի յարձակմունքին առաջը չեն կարող առնել ոչ ջուրը, ոչ հուրը, և ոչ այլ բան: Մի քանիների խայթելը սաստիկ ցաւ է պատճառում: Բայց տէրմիտները միւս կողմից այն օգուտը ունին, որ ոչնչացնում են շատ վնասակար երկ—կենդանիներին: Ռնակիչները տէրմիտներից կերակուրներ են պատրաստում կրակի վերայ խորովելով: Տէրմիտների մի քանի տեսակը երկրիս երեսին գլանաձև աշտարակներ են շինում 12 ֆուտ բարձրութեամբ, այդ գլանը ծածկում են կոնաձև տանիքով, այնպես որ այդ շինութիւնը սունկի ձև է ստանում. կան այնպիսիներ՝ որ ծառերի մէջ են շինում իւրեանց բունները:

Երևելեան Հնդկաստանի հանդերձից նշանաւորները են ամենաշատ ջուր ունեցող ալջասը: Ասպղի մէջ շատ ոսկի կայ, աշխարհիս մէջ ոչ մի երկիր Հնդկաստանի չափ անագ չունի, այդ կողմից առատ է մանաւանդ Մալակա թերակղզին և Ռանկ կըղզին:

Ռնակիչները: Երևելեան Հնդկաստանի բնակիչների թիւը (266 միլեոն) գրեթէ Եւրոպայի բնակիչների թուին հաւասար է. իսկ բնակիչների խտութիւնը Եւրոպայից առաւել է: Երևելեան Հնդկաստանում մինչև 1855 մարդ է բնակվում մի քառ. մղոնի վերայ. իսկ Եւրոպայում միայն 1500: Ռնակիչների կողմից արևելեան Հնդկաստանի ամենախիտ մասը Հնդկաստանի թերակղզին է: Նորա մի քանի մասերը, օրինակ Գանգէսի հովիտը բնակիչների խտութեամբ աշխարհիս մէջ ամենաբազմամարդ երկիրներից մին է. Ռուաբիայում—Գանգէսի միջագետքում մի քառ. մղոնի վերայ լինն հազար մարդ է բնակվում: Երշիպիղագոսը նոյնպես բազմամարդ երկիրների կարգիցը է (2126):

Հնդկա — Զինաստանը ընդհակառակը այս կողմից թէ Հնդկաստանին և թէ Երշխպեղադոսին բոլորովին հակառակ է, այս տեղ մի քառ. մղոնի վերայ միայն 400 մարդ է բնակվում:

Երևելիան — Հնդկաստանի բնակիչները երիք դլխաւոր ցեղեն պատկանում. Հնդկաստանի բնակիչները Կովկասեան ցեղին, Հնդկա — Զինաստանինը՝ Մոնղոլեան ցեղին, իսկ Մալակկայ թերակղզունը և առհասարակ կղզիների բնակիչները՝ Մալայեան ցեղին: Կովկասեան ցեղից ծագող ազգերից Հնդիկները ամենաթազմաթիւ են (մինչև 115 մ). Հնդիկները հին ժամանակներից հետէ յայտնի են իւրեանց բարակ և նուրբ գործածներով (indieunes) Հնդկական կիսեա, կաշմիրի շալերը. և մի ժամանակ Եւրոպայի հետ մեծ վաճառականութիւն ունէին. հարուստ գրականութիւն ունէին. նոցա հեղինակութիւնները գրուած են Սանսկրիտեան լեզուով և Եւրոպացւոց լեզուով թարգմանութիւնները այժմ ևս մեծ հրճուանօք են կարդացվում: Ն՛աբատարատութեան մէջ առաջին տեղը բռնում են հոյակապ պաճարները (պագոտ): Ընդհմ իսկ այդ տաճարները զարմացք և ապշութիւն են բերում մարդի վերայ իւրեանց մեծութեամբ և յարդարունութեամբ: Նորա շինած են ահագին գրանիտի սալերից և որոնք յղկած են հայելու նման: Տաճարներից երևելի են Մավալի-պուրամի տաճարները արևելեան ափի վերայ Մադրասից դէպի հարաւ: Հնդկաստանում կան նոյնպէս շատ ժայռերի մէջ փորած սառերկրեայ տաճարներ և պալատներ. այս տեսակ շինութիւններ շատ կան Դեկանի բարձրաւանդակութեան հիւսիսային մասում այն է Գաուհատում. այս կողմից առաւել նշանաւոր է աստուածների լեառը Էլլորէ գիւղի մօտ Բոմբէի արևելեան հիւսիսում: Այս լեառը մի մղոն երկայնութիւն ունի և բազմայարկանի քարանձաւի մէջը: Քարանձաւներից շատերի մէջ Սիվա աստուծոյ համար տաճարներ են շինած: Այս կերպով աստուածների լեառը կարելի է Հնդիկների պանդխոն կոչել: Նշանաւոր են նոյնպէս Բոմբէի շրջակայքում եղած Սալսետտա և Էլիֆանտինա կղզիների սառերկրեայ տաճարները:

Հնդիկը բնութիւնից շատ բարի մինչև անգամ կենդանիներին ցաւակցող և հիւրասէր է. բայց երկար ժամանակայ ըստրկութիւնը նորա հոգու մէջ շատ ցածութիւններ է տպաւորել, — սարկական խոնարհութիւն և փաղաքշութիւն իւրեանցից մեծերի մօտ, հպարտութիւն և խստութիւն իւրեանցից փոքրերի մօտ: Այժմեան ժամանակ այս բնաւորութիւնը ունի ժողովուրդը. բայց պորտուգալացիները այսպէս չեն նկարագրում նոցա 16 դ դարում, երբ առաջին անգամ Ծանօթացան նոցա հետ: Հնդիկների անունը ցած են հարթ տանիքներով և փոքրիկ ծակերով, որոնք լուսամուտ տեղ են բռնում, այս պատճառով միջը շատ մութ է: Ոտները տներ, այգիներ ունին: Տները մեծ մասամբ բամբուկից և կաւից են շինած: Հնդիկների խալափները արտաքին կողմից գեղեցիկ չեն, փողոցները նեղ և ցեխոտ, բայց ի այն թաղերից, ուր բնակվում են Եւրոպացիները, այս պատճառով մի քանի քաղաքներ երկու թաղ են բաժանվում, — ան՝ ուր բնակվում են Հնդիկները, և սպիտակ՝ ուր բնակվում են Եւրոպացիները: Հնդիկների լեզուն ծագել է Սանսկրիտականից, որից ծագումն են առել և Եւրոպական շատ լեզուներ: Հնդիկների լեզուի մէջ այնպիսի բառեր կան, որոնք թէ հնչումով և թէ նշանակութեամբ Եւրոպական լեզուների բառերին նման են:

Հնդիկները Բրահմանական կրօնը են դաւանում: Այդ կրօնը ուսուցանում է՝ 1) հաւատալ բարձր էակին — Պարաբրահմին: Բրահմական Հնդիկների հասկացողութեամբ, Պարաբրահման՝ միանձնաւոր, ամենակարող, ամենուրէք և ամենէրջանիկ էակ է: Երևարհս կառավարելու համար Պարաբրահման 333 միլիոն անմահական էակներ [հոգիներ] է ստեղծել, որոնցից երիքը — Բրահմա, Վիշնու և Սիվա, առաջին տեղը են բռնում և կազմում են Տրիմուրտի այս ինքն սուրբ Երրորդութիւն: Բրահման առեղծող էակը և անցեալն ներկայացուցիչը է, նորա ղդա-

լի պատկերը երկիրը է։ Վ֊իշնու—պաշտպանող և ներկայի ներկայացուցիչը է. նորա զգալի պատկերը ջուրը է։ Սիվան—կործանող, և ապագայի ներկայացուցիչը է, նորա զգալի պատկերը կրակ է։ Պարարթահման նկատում են եռանկիան մէջ բոլորակի ձևով. Բրահման—չորս մարդի նման է, միայն չորս գլուխ ունի և նստած է կարապի վերայ, որ լողում է ջրի մէջ. Վ֊իշնուն՝ պանդան կերպով, Սիվան՝ երկար գլխով և ութ ձեռներով։ Բրահմականները մեզ նման ընդունում են հոգու անմահութիւնը, բայց որովհետև հոգին շատ մեղքեր ունի, ուստի այդ մեղքերից ազատուելու համար, ասում են որ, մի արարածից միւս արարածի մէջ պէտք է մանի, մինչև որ մեղքերը քաւէ։ Մեղքերի քաւութիւնը թեթևացնելու համար Վ֊իշնուն երբեմն իջնում է երկնքից մերթ մարդի կերպարանքով և մերթ կենդանու։ Հետևաբար այս պատճառով Բրահմականները աստուածացնում են մի քանի կենդանիներին մանաւանդ փղին։ Բացի գլխաւոր աստուածներից և մի քանի կենդանիներից, բրահմականները բուսերից սուրբ են համարում Լոտոսը և Բանիանը, գետերից՝ Գանգէսը։ Բրահմականները մեղքերից ազատվելու համար ամենալաւ միջոցը Գանգէսի մէջ լողանալը են համարում. Գանգէսի ջուրը ինչպէս սրբութեամբ ուղարկում են հազարաւոր վերստերով հեռու երկիրներ, գետերի մէջ ամենասուրբ համարվում են գետերի վերին մասերը և գետակատխառնուքները, ահա այս պատճառով Ալահաբատ քաղաքը նուիրական տեղ է, որովհետև գտնվում է այն տեղում՝ ուր Ջումնան թափվում է Գանգէսի մէջ, մի և նոյն պատճառով դժուար ճանապարհորդութիւն են անում Գանգէսի վերին մասերի մօտ եղած Գուրգվար և Բադրինադ քաղաքները գնալու համար. այս տեղերը գալիս են միլիոնաւոր ուխտաւորներ, ինչպէս քրիստոնեաները գնում են Երուսաղէմ, Մահմետականները Մեկկայ, Բուդդայականները Լասսա։ Մեղքերից ինչքան կարելի է շուտ ազատուելու և Բրահմային մերձենալու ցանկութիւնից Հնդիկները իւրեանց ամենախիստ տանջանքների են ենթարկում։ Նոցանից մի քանիսը կրօնամոլութիւնից կուրացած կրակի և ջրի [Գանգէսի մէջ] մէջ են ընկնում. Բուդրինատում Կառքուոն կոչուած հանդիսի ժամանակ կրօնական բանասիրոսութիւնը իւր ծայրայեղութեանը է հասնում։ Այդ ժամը կատարվում է ահա այսպէս. Սիվայի պատկերը դնում են մի ահագին կառքի վերայ և տասը օր մանում են ածում քաղաքի փողոցներում, այդ ժամանակ շատերը կամաւոր ընկնում են կառքի անիւների տակ, և մեռնում, մի քանիսը ատամների մէջ խարազանում են իւրեանց անձը, կամ այնպիսի սախտանների վերայ պառկում են, որոնց վերայ բեռներ են ցցած և էն։ Բրահմականները չորս կաստի են բաժանվում, Բրահմաններ—Քուրմեր, Չէտրիս—զինուորներ, Վ֊իշաս—երկրագործներ և վաճառականներ՝ որոնք Կանիան են կոչվում, և Սուդրաս—արհեստաւորներ։ Այդ կաստերին աւելի հաստատութիւն տալու համար, Բրահմանները—քուրմերը մի առակ են հնարել, որպէս թէ այդ կաստերի նախահայրերը պարարթահմայի որդիքը են եղել, Բրահման ծնունդ է գլխից, Չէտրիսը ձեռքից, Վ֊իշասը—իրանից և Սուդրասը—ոտքերից։ Չորս կաստերից Բրահմանների կաստը տիրապետողը է։ Վ֊եդաները (սուրբ գիրքը) ուսանելու, կարդալու, աղօթք անելու և հասարակաց պաշտօններ վարելու իրաւունքը միայն Բրահմաններին է պատկանում։ Բրահմանները պէտք է միս չուտեն, այլ միայն բանջարեղէն, բրինձ և կաթ։ Բաց ի վերոյիշեալ չորս մաքուր կաստերից, կան և շատ անմաքուր կաստեր, ինչպէս Պարիաններ։ Պարիաններին հաղիւ թէ մարդ են համարում. պարիաններին սպանելը ոչինչ յանցանք չէ. նոքա իրաւունք չունին ուրիշ կաստերի հետ բնակվելու. միւս կաստերի հետ խօսելիս բերանները ձեռքով ծածկած են խօսում, տաճարներու մէջ մտնելու իրաւունք չունին, ուստում են ամենայն բան առանց զանազանութեան, մինչև անգամ և գէշ և ամենացածր աշխատանքները նոքա են կատարում։ Կովկասեան միւս ցեղերից որոնք զանազան ժամանակ գաղթել են արևե-

լեան Հնդկաստան, նշանաւոր են Տաճիկները (Իրանից), Ըրաբները (Ըրաբիայից), Հայերը, Հրեաները, և առհասարակ Եւրոպացիները. Եւրոպացիներից առաջին բնակութիւն դտողները եղան Պորտուգալացիները, յետոյ Իսպանացիները, յետոյ Հոլանդացիները և վերջապես Անդղիացիները և Ֆրանսացիները: Եւրոպացիների դաղթականութեան պատճառը գլխաւորապես վաճառականութիւնը է եղած:

Մոնղոլեան ցեղից նշանաւորները են. Մոնղոլները՝ որոնք արևելեան — Հնդկաստան արշաւեցին 8—10 դարերում Ք. Ծ. յետոյ և այն տէզ հիմնեցին Մեծ Մոնղոլ գօրեղ կայսերութիւնը, որ տևեց մինչև այս վերջին ժամանակները: Ներմանացիները, Սլաւոնացիները և Ենամացիները, որոնք մինչև այժմ Հնդկա—Չինաստանում անկախ տէրութիւններ ունին: Ներմանացիները և Ենամացիները այդ ցեղերից ամենից կրթեալ և լուսաւորեալը են, որովհետև Եւրոպացիների հետ յաճախ հաղորդակցութիւններ ունին. նոքա մինչև անդամ գրատուններ ունին և զօրքը Եւրոպական ձևով է կրթուած: Ներմանացիները, Սլաւոնացիները և Ենամացիները Բուդդայական են:

Մալայեան ցեղն բնաւորութեան յատկանիշերը են հպարտութիւն, անամօթութիւն, նախանձ և վրէժխնդրութիւն: Վարտակ բանի համար Մալայացին մարդ կսպանէ և այդ նորա համար ոչինչ է, մինչև անդամ նա իւր համար այդ պարծանք է համարում:

Քաղաքական բաժանումն: Արևելեան Հնդկաստանի երկիրները քաղաքական կողմից երկու մաս կարելի է բաժանել. Եւրոպացիներին պատկանեալ երկիրներ և ազատ երկիրներ: Գաղթական երկիրները պատկանում են հինդ ազգի—Անդղիացիներին, Հոլանդացիներին, Պորտուգալացիներին, Իսպանացիներին և Ֆրանսիացիներին: Ազատ տէրութիւններից նշանաւորները են—Նիպալ, Բուտան, Ենամ, Սիամ և Ներման:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ:

Անդղիացիներին պատկանում են, 1) դրեթէ ամբողջ Հնդկաստան թերակղզին, Սէյլան և Լաքիոբէլեան կղզիները: 2) Հնդկա—Չինաստան թերակղզում Ռանդալեան ծոցի ափը մինչև 10^0 լայնութեան, Մալակայի մի մասը և Հնդկա—Չինաստանին պատկանեալ կղզիներից Վալեսի դքսի կղզին և Սինգապուրը: 3) Հնդկական Ըշխապղպոսի մէջ—Բորնէոյ կղզու մի մասը և Լաբուան կղզին: Արևելեան Հնդկաստանի մէջ Անդղիացիներին պատկանեալ բոլոր երկիրները միասին 65000 քառ. մղոն են կազմում, իսկ բնակիչները 188 միլիոն են:

Բայց Հնդկաստան թերակղզու երկիրները այլ և այլ կերպիւ են կախուած Անդղիացիներից: Նոյն երկիրներից մի մասին (38000 քառ. մղոնի չափ 135 միլիոն բնակիչներով) նոցանից միայն կախումը ունին և այն հետևեալ կերպով: Անդղիացիները այդ երկիրներում պատերազմական բանակներ են պահում, և մի նշանակեալ գումար են ստանում այդ զինուորներին կերակրելու համար. կան երկիրներ, որոնց կախումը այն է, որ մի նշանակեալ հարկ են տալիս Անդղիացիներին. մի քանի երկիրների պարտականութիւնը այն է, որ Անդղիացիներին օգնեն: Կան և այնպիսի երկիրներ՝ որոնք Անդղիացիներին ոչինչ չեն տալիս, այլ միայն նոցա հովանաւորութեան ներքոյ են գտնըվում: Բայց այդ երկիրներից ոչ մին, առանց իւրեանց հովանաւորի համաձայնութեան, իրաւունք չունին օտար տէրութիւնների հետ հաղորդակցութիւն ունենալ:

Մինչև 1858 թ. արևելեան Հնդկաստանում Բրիտանական երկիրները, բացի Սէյլան կղզուց, տէրութիւնից կախուած ունենալով անմիջապէս վաճառականական ընկերութեան ձեռքով էին կառավարվում. այդ ընկերութիւնը կախուած ունէր տէրութիւնից, որ ինքը և նշանակած ունէր իւր ընդհանուր նահանգապետը: Մինչև այդ ժամանակ Անդլիացիները խեղճ

Հնդիկների ունեցած չունեցածը քամում և ծծում էին, հարկ հաւաքելու ժամանակ դործ էին դնում Ինկվիզիցիայի նման տանջանքներ. օրինակ, միակի օրական վարձը հանքերի մէջ վեց կոպէկ էր, այն ինչ մշակը ինքը պէտք է իւր ծախսով կերակրուի։ Վերջապէս Հնդիկների համբերութիւնը կարուեց, ուստի երբ որ 1855 թուին Անգլիացիները նուաճեցին Ուղղի թագաւորին, այն ժամանակ ոտի կանգնեցին բոլոր Հնդիկները։ Պատամբութիւնը զսպելուց յետոյ 1855 թուին մեծ նահանդապետի կոչումը փոխեցին, արևելեան Հնդկաստանի կառավարութիւնը ընկերութեան ձեռքից անմիջապէս տէրութեան ձեռքը անցաւ և Վիկտորիա թագուհին Հնդկաստանի կայսերուհի հրատարակեցաւ։ Այժմ արևելեան Հնդկաստանը կառավարւում է տէրութեան կողմից նշանակված նահանդապետի ձեռքով, որի բնակութեան տեղը Կալկաթան է։ Պատամբութիւնից յետոյ այս վերջին տարիներում արևելեան Հնդկաստանում բնիկ բնակիչների և Անգլիացիների միջեանց հետ ունեցած յարաբերութեան մէջ մի առանձին յեղափոխութիւն եղաւ։ Անգլիացիները այժմ Հնդկաստանը նուաճում են քրիստոնէական քարոզութեամբ, դրքերով, երկաթուղիներով, շոգենաւերով, ջրանցքներով, հեռագրական թելերով, տնկարկութեամբ, քան թէ առաջվայ միջոցներով — կրակով, սրով և թոյնով։ Հնդիկների մէջ քրիստոնէութեան տարածիլը ջրյայջողից, որովհետև Հնդիկների ամենահին կրօնը, այն է Ուղդայականութիւնը մեծ յամառութիւնով ընդդիմացրեց այդ դործին*). Գանգէսի երկրանից մինչև Ինդոսի երկիրը ոչ գիւղ

(*) Լուսաւորութեան միւս միջոցները շատ հնշտութեամբ տարածուեցան և տարածվում են բնիկ բնակիչների մէջ, որոնք ինքեանք էս օգնում են Անգլիացիների այդ նպատակին։ Հնդկաստանում այժմ չորս երկաթուղիներ կան, որոնց տարածութիւնը միասին 6000 վերստ է. բացի դրանից շինվում են և ուրիշ նորերը։ Ընդհանուր ջրանցքների երկայնութիւնը միասին 3000 վերստ է։ Երկաթուղիներից նշանաւորները են Կալկաթա — Դելհի

քաղաք Հնդկաստանի ընկերկղզում մէջ Անգլիացիները պատրաստել երկաթմասը կարելի է բաժանել, հիւսիսային և հարաւային։

Հիւսիսային մասը գլխաւորապէս դաշտավայր է, իսկ հարաւայինը բարձրաւանդակ։ Հիւսիսային մասը նաւադնացութեան համար յարմար գետեր ունի. այդ գետերից նշանաւորները են, Ինդոս՝ որին նաւադնացութիւնը սկսում է այն տեղից, ուր թափվում է Ջունաբը և շարունակվում է մինչև առաջքները։ Ինդոսի գետակ Ջունաբը նաւադնաց է մինչև Մուլտանը։ Գանգէսը նաւադնաց է բերանից սկսած մինչև Աւնդպորա և

յեան, Պէշավուրի (Jraud Prunk Raod) և Ագրա — Բոմբէյեան (Agra and Bomboy Rood)։ Ջրանցքներից նշանաւորները են՝ արևմտեան Ջումնայինը և արևելեան Ջումնայինը և Գանգէսինը։ Անգլիացիները Ինդոսի և Գանգէսի վերայ շոգենաւեր են պահում։ Երկաթուղիները շինելու ժամանակ Անգլիացիները ի հարկէ միայն իւրեանց վաճառականական օգուտը ունէին աչքի առաջ։ Ահա այս պատճառով բոլոր երկաթուղիները դէպ արևելք այն է Կալկաթայ են ուղղած, ուստի հիւսիսային նահանգների ապրանքները մի քանի հարիւր վերստ աւելի ճանապարհ են անցնում Եւրոպա գնալու համար։ Երկաթուղիները, ջրանցքները և շոգենաւերը շատ լաւացրին Հնդկաստանի վիճակը նիւթական կողմից և շատ փոքրացրին այն պակասորդի չափը, որ ամեն տարի տէրութիւնը ստիպուած էր իւր գանձից լրացընել երկրի տուրքերից չկարնալով իւր բոլոր ծախքը ստանալ։ Անգլիական Հնդկաստանից պատրաստած ամենագլխաւոր առարկաները են — օպիում, բամբակ, լեզակ, հաց, շաքար և այլն։ Նէպալ Բերէլ— ամենագլխաւոր առարկաները են բամբակեղէնները (մինչև 35% բամբակեայ խճուճք (1010) անագնիւ մետաղներ (770) աղ (390) և այլն։ Վերջապէս անգլիական կառավարութիւնը ճանաչէց այն բոլոր օգուտը, որ կարելի է քաղել ուսումից, բնիկ բնակիչների հետ հաշտուելու և մերձենալու համար։ Նա սկսեց քարոզել արեւական ցեղի միութեան գաղափարը՝ Անգլիացիների և Հնդիկների — արիւնների ծագման միութիւնը։ Այս միտքը այժմ բոլոր ուսումնարաններում քարոզում են, իսկ ուսումնարաններ թէ բարձր և թէ ժողովրդական շատ կան։ Ուսումնական ընկերութիւններ կամ ճեմարաններ կան, ուր Հնդիկները Եւրոպացիների հետ հաւասար են. Հնդիկների լեզուով կան օրագիրներ, ուր գրվում են հեշտ հասկանալի ուսումնական

նորա գետակներից մի քանիսը Գանգեսի գետակներից — Գոդգլեի վերայ մինչև Կալկաթայ մեծ նաւերով կարելի է նաւել։ Հարաւային մասում գետերը յարմար դիրքեր չունին, որովհետև բարձրաւանդակութիւնը զեթաւորապէս արևմտքում է գտնվում. ուստի բոլոր գետերը դէպ արևելք են հոսում. այս մասը չունի և նաւագնաց գետեր, որովհետև բարձրաւանդակութիւնները մինչև այն ատիճան բարձր չեն, որ իւրեանց վերայ ձիւն և սառոյց պահեն։ Հիւսիսային մասի երկիրը աւելի արդաւանդ է քան թէ հարաւայինը։ Թէ հիւսիսում և թէ հարաւում կան առանձին տեղեր, որոնք ընդհանուրից բացառութիւն են կազմում. զոր օրինակ՝ հիւսիսում արևելեան մասում ահագին տարածութիւնների վերայ ցանած են բրինձ, օպիում, լեղակ ևլն. իսկ արևմտքում — կաւոտ, աւազոտ Տուրքի անապատ է, հարաւում բարձրաւանդակութեան ահագին տարածութիւնների վերայ ցանած են բամբակ. բարձրաւանդակութեան արևելեան մասում — պղպեղենու անտառներ են. իսկ

յօդուածներ։ Արիական ցեղը լուսաւորութեան շատ ընդունակ է։ Բայց ի դորանից Բրահմական կրօնը լուսաւորութիւն տարածվելուն բոլորովին հակառակ չէ։ Նա աւելի ընդունակ է քան թէ Մահմետականութիւնը։ Հընդկաստանի ուսումնարաններում աշակերտների թիվը շատ արագ բազմանում է։ Բնիկ բնակիչների բարձր դասերը ևս մանկից են լինում այդ գործին և գործով օգնում են, օրինակ, մի Հնդիկ 40000 ռուբլի ընծայից, որ իւր բնակած քաղաքում ուսումնարան շինեն. մի ուրիշ Հնդիկ 125000 ռուբլի տուեց, որ Բոմբէի համալսարանում գրատուն բանան. մի Գերը 30000 ռուբլի ընծայեց, որ հինգ երիտասարդ Հնդիկներ Անգլիա գնան իւրեանց ուսումը կատարելագործելու համար. մի մահմետական 155000 ռուբլի տուեց՝ որ Բոմբէյում մի նոր ուսումնարան շինեն։ Բնիկ բնակիչների բարձր դասերը, հնայելով իւրեանց կրօնների զանազանութեանը, բոլորը միաբնակ խոստովանում են լուսաւորութեան օգուտը։

Այժմեան նահանգապետը Հովանաւորում է ուսումնական ընկերութիւններին, բազմաթիւ ուսումնարաններ է հիմնում, երկրագործական առևտրատահանդէս է բաց արել, հիմնել է թանգարան, ուր Հնդկական հնութիւնների հետ ի միասին կան և Եւրոպացւոց մեքենաները։

արևմտեան նեղ ծովախնեայ երկրում շաքարեայ եղէգ և արմաւենի *)։

(*) Լեղեաքոյոք թուփ է, որ ներկական նիւթ է տալիս, որը իւր կարևորութեամբ իւրեան նմանների մէջ առաջինը է։ Անգղիայում ոչ միայն ամենալաւ լեղակարոյս է բուսանում, այլ և լեղակի ամենամեծ մասը այն տեղից է տարածվում ուրիշ երկիրներ, այժմեան ժամանակ արևելեան Հնդկաստանի վաճառականութեան գլխաւոր առարկան լեղակը է։ Լեղակաթոյսը բազմանում է սերմը ցանելով, բունը երկու ոտնաչափ բարձրութիւն ունի. բունը տալիս է բազմաթիւ ուղիղ ճիւղեր, որոնց տերևները պրչաձև են։ Այս թուփը լաւ զարգանալու համար հարկաւոր է պարարտ, փխրուն, ոչ շատ խոնաւ և ոչ շատ չոր հող։ Ցանած օրից երկու ամիս յետոյ արգէն կարելի է քաղել այս տունկը. Նորան քաղում են գերանդիով. երբոր սկսում ծաղկել, մի կամ մի և կէս ամսից յետոյ նոր բողբոջներ են երևան գալիս արմատի վերայ։ Պատահում որ այն մի և նոյն արմատը տարուայ մէջ չորս անգամ բողբոջ է տալիս։ Բայց այդ բոյսը ամեն տարի նոր պէտք է ցանել, որովհետև ներկուղ նիւթը սակաւ առ սակաւ պակասում։ Արեգակոտ և պարզ օրերը բազմացնում են, իսկ ընդհակառակը յաճախ անձրևները պակասեցնում։ Լաւ բուսած տարիներում լեղակի տնկարկութիւնը աւելի շատ օգուտ է տալիս քան թէ բոլոր միւս բաները։

Բենգալիայում գործատուների տէրերը ցանելու սերմ են բաժանում տեղացի բնակիչներին, որոնք պարտական են քաղած բոյսերը իրանց սերմ տուողին տալ նշանակեալ գնով։ Բաճքակենի այժմ բուսնում է ամեն տեղ Արեցեալ երկրում. բայց ինչպէս կարծում են, նորա սկզբնական օրրանը Հնդկաստանը է եղած։ Նա բուսնում խոտի, թփի, և ծառի նմանն։ Բազմանում է սերմերով, ցանելուց մի տարի յետոյ կարելի է պրտուղը քաղել։ Բամբակի պտուղը գնտակի ձև ունի և պատած է պատեճով։ Նորանից եօթն կամ ութը փուխանոց հակեր են կապում և ապա վաճառք է համարվում։ Երբոր պտուղը հասնում, այդ պատեճը տրաքում և երևում են սերմերը, որոնք փաթաթած են փափուկ աղուամազի մէջ, որին մենք բամբակ ենք կոչում։ Բամբակը արեգակի տակ չորացնում են, բաժանում են պատեճից և սերմերից. նորանից եօթն կամ ութը փուխանոց հակեր են կապում և ապա վաճառք է համարվում։ Գործուածների համար գործածած իրերից ամենայարմարը բամբակը է։ Այս պատճառով այժմեան ժամանակը բամբակից շատ և շատ բաներ են պատրաստում։

Ընդհատումն հնութեան մասի ընակիչները հին ժամանակներից հետէ գովաճ են եղբեանց ծաղկաբեր-ընեան, գիպո-ընի-ննելի և ա-

Բամբակից պատրաստում են չիթ, թաւիշ, կտաւ եւն։ Բամբակի հետ երբեմն խառնում են ասուի։ Բամբակից շինած ապրանքի արժանաւորութիւններից միևը այն է, որ բոլորը աճանագին են։

Պղպեղ։ Պղպեղ տուող բոյսը պատատուկ թուփ է, որի տերևները բադեղի տերևների նման են, պտուղը ողկոյզ է։ Իւրաքանչիւր պտղահատի մէջ հինգ սերմ կայ։ Մալաբարեան եղերքում ամբողջ անտառներ պղպեղի թուփերից են բաղկացած։ Սումատրայի, Բորնէոյի, Ճավայի և Սինգապուրի մէջ նոյնպէս շատ կայ այս թփից։ Մի առանձին տեսակ պղպեղ կայ, որ քնեբել է կոչվում, որի միայն տերևները են գործածվում։ Ընիկ բնակիչները այդ տերևների մէջ փաթաթում են արեկի արմատները պտուղները առաջուց խառնելով հետը փոքր ինչ կիր և համեմունքներ, և յետոյ ծամում են թէ այր մարդիկ, թէ կիներ, թէ երիտասարդ մարդիկ և թէ ծերերը։ Ոչ ոք չի համարձակիլ իւրեանից մեծի հետ խօսել՝ եթէ բերնում բիտել չունենայ, իսկ եթէ իւրեան հաւասարի հետ խօսելիս չունենայ բերնում բիտել, այդ անքաղաքավարութիւն կհամարուի։ Բիտելը ուտում են ճաշից յետոյ, նորան ծամում են և հրաւէրների մէջ, ողջունելու և հրաժարուելու ժամանակ բիտել են առաջարկում։ կան այնպիսի մարդիկ՝ որոնք քննելու պատկելիս՝ բիտել են առնում բերանները։ Բիտելը համեղ է, զրգռում է թքի մանները և կարմրացնում է թուքը։ Ընիկ բնակիչները ասում են որ բիտելը շատ առողջարար է։

Շաւարեայ եղէգը դալարիների կամ խոտերի տեսակիցը է։ Կասկած չկայ, որ շաքարը բուսական թագաւորութեան ամենաթանգագին բոյսերից միևն է, և իւր նշանակութեամբ ստոր է միայն հացատու խոտերից, կանեփից և բամբակից։ Ընի վերայ շատ կապեր ունի, որոնց միջից դուրս են ցցվում երկար ու սրածայր տերևներ։ Շաքարեայ եղէգը զարգանալու համար հարկաւոր է տաք կլիմայ, պարարտ և խոնաւ երկիր։ Շաքարեայ եղէգի բարձրութիւնը առհասարակ տասը ոտնաչափ է լինում, բայց կան եղէգներ, որոնք երկու ոտնաչափ բարձրութիւն ունին։ Շաքարեայ եղէգը տնկում են յետագայ կերպով. տնկարկութեան համար պատրաստած երկրից ուրիշ ծառերը արմատահան են անում, յետոյ վարում են, ջրելու համար ջրանցքներ են փորում և բոլոր պատրաստած երկիրը ածուների են բաժանում, յետոյ ածուներու մէջ երկայն ակոսներ են փորում, և այդ ակոսների մէջ տնկում են հին եղեգների ծայրերը և ծածկում են հողի տակ.

ցո-եապանէրի համար, որոնց ապացոյց են այժմեան ժամանակում այն տեղերում եղած բազմաթիւ տաճարներ, ջրաւազաններ, ջրմուղների եւն. աւերակները և բնակորները։ Քաղաքներից նը-

մի ամից յետոյ երբոր բողբոջները ծլում են, այն ժամանակ նոցա վերայ կրկին հող են ածում։ Տասը ամից յետոյ բոյսը արդէն հասնում։ Եղէգը տնկում են տարուայ անձրևային եղանակը մօտ կենալիս, որ այդ քնքոյշ բոյսերը առատ ջուր ունենան։ Եղէգը ծաղկելուց յետոյ, իսկոյն կտրում են, որովհետև այդ ժամանակվայ հիւմը շատ շաքար է պարունակում իւր մէջը Եղէգի հիւմը այնպէս ախորժելի, անդարար և կազդուրիչ է, որ ամեն խրճոր իւրեան զօրեղ և առողջ է զգում։ Նիհար և հիւանդոտ նեգրները զարմանալի արագութեամբ են առողջանում։ Շաքարեայ եղեգից շաքար պատրաստում են յետագայ կերպով։ Հիւմը քամելու համար՝ եղէգը դնում են երկաթեայ երեք գլանակների մէջ, որոնք շոգեմեքենայով շարժվում են. ճմլուած բները, որոնք ընկնում են սալակի մէջ, մի և նոյն մեքենայի օգնութեամբ հեռացնում են այդ տեղից, չորացնում են և մեքենայի համար վառելիք են շինում. իսկ քամած հիւմը լցնում են ամանների մէջ. այդ հիւմը բոյսի մնացած մասերից մաքրելու համար ամանների մէջ չորցրած կիր են լցնում, քանի որ այդ հեղուկ հիւմը թթուել չէ, լցնում են կաթսաների մէջ և եփում։ Պատի մօտ շարած են չորսից մինչև հինգ հատ մին մինից փոքր պղինձներ. Ամենից վերջինի մէջ այդ հիւմը այնպէս թանձրանում է՝ որ շարապ է դառնում. շարապը լցնում են սառեցնող ամանների մէջ, ուր և շաքարը բիւրեղանում է։ Այդ տեսակ շաքարի մէջ դեռ ևս հեղուկ մրուր կայ, որ ուստի դուրանից ազատուելու համար այդ շաքարը լցնում են երկաթեայ քառանկիւնի արկղների մէջ, որոնք օդի հետ ոչինչ հաղորդակցութիւն չունին. այդ արկղների տակ երկաթեայ թեղերից շինած ցանցատեսակ երկրորդ յատակ կայ, որի վերայ հիւմը ածում են, Ներքին դատարկ մասը երկու օդահան գործիների հետ է հաղորդած, որոնցով ներքին մասից օդը հանում են. երբ վերին մասը շաքարի նիւթով լցուած էր, այս գործողութիւնից ներքին մասում առաջացած անօդ տարածութիւնը արագութեամբ ծծում է իրանից վեր եղած շաքարի հեղուկի մասերը և ամենևին շաքարը մաքրում. այսպէս պատրաստած շաքարեայ աւազը լցնում են արկղների մէջ և ուղարկում են ծախելու. մրուրից շատ զօրեղ ռում են շինում. Շաքարեայ եղէգը ամենից շատ բուսնում արևելեան Հնդկաստանում, այն ինչ ամենալաւը Տայիտի կղզիների վերայ է լինում։

շանաւորները են. Կալկաթայ, որ Գանգէս գետի Գուղլի ա-
ռաջքի այն տեղումը է գտնվում մինչև ուր կարող են
գալ ծովային մեծ նաւերը։ Այս քաղաքը ծովափնեայ դը-
րութիւն ունենալով և գլխաւոր երկաթուղիների (Կալ-
կաթա — Պելավուրեան և Կալկաթա — Բոմբայեան) կեն-
դրոնում գտնվելով՝ բոլոր Հնդկաստանի գլխաւոր նաւա-
հանգիստը է դարձել։ Այս նաւահանգստից դուրս են տա-
նում ամենարգաւանդ և ամենաբազմամարդ դաշտավայրերի
բերքերը և այս քաղաքից ստանում այդ դաշտավայրի բնակիչ-
ները իրանց պիտոյքը լցուցանելու համար օտար երկիրներից բե-
րած բերքերը։ Այս պատճառով Կալկաթան հարստացաւ, զար-
դարեցաւ զանազան լիութիւններով. բնակիչների թիւը բազմա-
ցաւ (հարիւր հազարից աւելի) և կարճ ժամանակում Երևե-
լեան — Հնդկաստանում Եւրոպական լուսաւորութեան [հա-
մալսարան] կենդրոն դարձաւ, հնայելով որ նա մօտիկ ժամա-
նակներումը հիմնած և անառողջ կլիմայ ունի։ Երևելեան
Հնդկաստանի գլխաւոր կառավարչի ամրոցանիստ քաղաքը է։

Պոմպեա, Բենարէս, Մէրզապուր, Ազրահապատ, Պատնպոր,
Ագրա, Դելի և Լահոր քաղաքները շատ բազմամարդ են։ Ա-
ռաջին հինգը Գանգէսի ափերի վերայ են գտնվում. Ագրա և
Դելի գտնվում են Ջումնայի ափերի վերայ։ Իսկ վերջին քա-
ղաքը գտնվում է Ռավի գետի ափերի վերայ, բոլորը Կալկա-
թա — Պելավուրի երկաթուղւոյ ճանապարհի վերայ են գտն-
վում *)։

(*) Պոմպեա Օպիում անկած երկիրների կենդրոնում լինելով՝ օպիումի ա-
հագին համբարանոցներ ունի։ Բնակութիւն մինչև այժմ Հնդիկ գիտնականնե-
րի և Բրահմինների կենդրոնը է կազմում. նա Բրահմական երկրպագուների
համար այն նշանակութիւնը ունի՝ ինչ որ Մեկկան Մահմետականների հա-
մար։ Դելին իր հարստութեան պատճառով ,,աշխարհի նախանձ,, էր կոչ-
վում երբեմն, այս ինքն այն ժամանակ՝ երբ նա մեծ Մողոլի թագաւորու-
թեան մայրաքաղաքը էր, նա մինչև երկու միլիոն բնակիչ ունէր։ Լահոր՝
Պենջոբի գլխաւոր քաղաքը է և գտնվում է այն ճանապարհի վերայ՝ որ

Բաց ի վերոյիշեալ քաղաքներից նշանաւոր են նոյնպէս Լէհ-
նա՝ որ մի ժամանակ Ուղի թագաւորութեան մայրաքաղաքը
էր. Գոռախվար և Խարբինար գտնվում են Գանգէսի վերայ, և
Հնդիկների համար սրբազան տեղեր են։

Իւսիսային Հնդկաստանի երկիրների թուի կարգում կարե-
լի է համարել և Հիմալայեան լեռների հարաւային մասերի մի
մասը այն է Պաշիէի հովիտը։ Պաշիերի հովիտը Ջհելում [հների
Գիտաստ] գետի վերին մասերի մօտը է գտնվում և տարած-
վում մինչև այս գետի լեռների միջից դուրս գալու տեղը։ Ընդ-
հինները այս երկիրը իւրեանց Բրահմինների հայրենիքը են ըն-
դունում, իսկ Զինացիները ասում են, որ իւրեանց Ռուդդայի —
Ցոյի հայրենիքը է։ Մահմետականները նախամարդիկների բը-
նակութեան տեղը են համարում։ Ներկայիս կլիմայի պատ-
ճառով գալիս են այս տեղ ամեն կողմից բազմաթիւ ժողովուրդ-
ներ, այս պատճառով է որ՝ այս հովտի բնակիչները միշտ օտարների
իշխանութեան տակ են եղած, չնայելով որ բնութիւնը նորան
համարեա անմատչելի է ստեղծել։ Գլխաւոր քաղաքը է Սէրի-
նագար այս ինքն նաւթական քաղաք, Ջհելումիա գետի ափերի
վերայ։ Շատ անգամ նորա անունը ամբողջ հովտին են տալիս
և ընդհակառակը հովտի անուամբ կոչում են շատ անգամ և
քաղաքը։ Սիրինագարի մէջ պատրաստում են Պաշմերի նրբա-
շալերը՝ որի նրբութը ստանում են (բուրդ) հիւսիսային Հարևան
երկիրներից։ Հնդկաստանի հարստացնող ոսկի բնակիչներից ժողով-
յալոզակ հաղորդակցութիւն ունեցած լինելով զանազան եր-
կիրների հետ, հին ժամանակներից հետէ յայտնի են իւրեանց
վաճառականութեամբ։ Այդ բանին ձեռնտու են եղել գեղեցիկ
և յաջողակ նաւահանգիստները։ Երբեմն յայտնի են Երևմտեան

տանում է Կարուլտանից Ջումնա և Գանգէս գետերի ափերի վերայ գըտ-
նվող գլխաւոր քաղաքները։ Նորա նշանակութիւնը աւելի կմեծանայ
երբ նորան միացնեն Մօլթան քաղաքի հետ, որ այն տեղումը է որ տեղից
սկսվում է Ջումնայ գետի նաւագնացութիւնը։

մասի — Մալաբարի ափի նաւահանգիստները, այս պատճառով այս ափը համաշխարհական վաճառականութեան կենդրոն և ծովագնացների մտածողութեան գլխաւոր առարկան է եղած միշտ։ Սորա նաւահանգիստներից ամենանշանաւորը է Բոմբէյ Bom Bahir որ գտնվում կղզու վերայ. նա այնպիսի յաջողակ նաւահանգիստ է, որ Ընդհանրները իւրեանց Երևելա — Ընդկական նաւատորմիղը այդ տեղ են պահում։ Այժմեան ժամանակում այդ նաւահանգստի նշանակութիւնը աւելի մեծացաւ, այն պատճառով՝ որ նա երկաթուղով միացած է հինգ Գանգէսի հովտի կենդրոնի, այս ինքն Մերզապուր քաղաքի, Նայնպէս և Պալկաթայի հետ։ Այս քաղաքը 566000 բնակիչ ունի։ Պորտանդէլի ափի վերայ գտնվում է բազմամարդ և վաճառաշահ քաղաքներից մին — Մանգլոր, որ մալդարաի և Թանկափին ակերի վաճառականութեան գլխաւոր կենդրոնը է, 720000 բնակիչ ունի *)։

(*) Մատրասի մէջ վաճառվող Թանկափին ակերի մէջ առաջին տեղը բռնում են ալմաստները։ Հնդկաստանի ալմաստը իր արժանաւորութեամբ առաջինը է աշխարհիս երեսին. գլխաւոր հանքերը Հէյդերաբադի իշխանի երկրներումը են գտնվում Գոլկոնդա քաղաքի շրջակայքում։ Հնդկաստանի ալմաստի հանքերը աշխարհիս մէջ ամենահին են. մինչև այժմ երևելի ալմաստի քարերը Հնդկաստանի հանքերից են հանած։ Ֆրանսիայի կայսեր ալմաստը 136 $^{3}/_{4}$ կարատ է [մի լոտ 72 կարատ է] որ կէս միլիոն ռուբլի արժէ։ Ռուսի թագաւորի գլխոնի վերայ եղած ալմաստը 194 կարատ ծանրութիւն ունի. այդ ալմաստը երբեմն Նատիր Պարսկական թագաւորին էր պատկանում։ Այժմեան ժամանակ ամենամեծ բրլեանտը Բրնից կղզում Մանջանների առաջնորդի մատը է. այդ ալմաստը 363 կար. ծանրութիւն ունի։ Բայց աշխարհիս երեսին այնպես մեծ ալմաս չէ եղած, ինչպես այն ալմաստը, որ կոչվում է Լուսոյ լեառն [կոհ-ի նուր]. այդ ալմաստը պատկանում էր մեծ Մողոլի։ Դելհայում առաջ 793 կարատ ծանրութիւն ունէր, բայց յղկելուց յետոյ 186 կարատ. 1850 թուին արևելեան Հնդկաստանի ընկերութիւնը Լահորի առաջնորդից խլից և անգլիական թագուհուն ընծայից։

Անկասկած նորա նշանակութիւնը աւելի կ'մեծանայ երբ կվերջանայ այն երկաթուղին՝ որ այս քաղաքը միացնելու է Ռոմբայի հետ։

Ընդհացինների իշխանութեան տակ եղած Ընդկաստանի կղզիներից նշանաւորը է Սէյլանը։ Պալկ նեղուցը՝ որ բաժանում է այդ կղզին ցամաքից, լեքը է բազմաթիւ ժայռերով և ծանծաղուտներով, այս պատճառով քամիների ժամանակ այն տեղ նաւագնացութիւնը անկարելի է լինում։ Այս կղզին իւր ճոխ բուսականութեան, գեղեցիկ կլիմայի, արգաւանդ հերկրի, բազմաթիւ ու բազմազան կենդանիների, հարուստ հանքերի պատճառով կարելի է կոչել փոքրիկ Ընդկաստան, Ընդկաց ովկիանոսի ակն, Ընդկաստանի պսակ. բացի այս ամենից՝ այս կղզուշրջակայ ծովից հանում են մարգարտի դաղտակուբներ, որոնցից զանազան անօթներ, զարդիներ և այլ բաներ են պատրաստում։ Այս պատճառով զարմանալու չէ, որ մի քանի ազգերի մէջ Սէյլանի մասին կաշխերի նման զանազան կրօնական աւանդութիւններ կան։ Մի քանիսները կարծում են, որ դրախտը այս տեղ էր։ Ընդկա — Զինաստանի Ռուդդայականները հաւատում են որ Նոցա Գուտամա Ռուդդա աստուածը երկնքից երկիր գալու ժամանակ, ամենից առաջ Սէյլանի մէջ երևեցաւ. Սէյլանի գլխաւոր բարձրաւանդակութիւն այն է Ադամի գլուխ կոչուած բարձրութեան վերայ նորա ցոյց են տալիս մինչև անգամ այդ ատածոյ քայլի հետքերը. Ընդիկները ասում են, որ այդ հետքը իւրեանց Սիվա աստծունը է, այս պատճառով Սէյլան գալիս են հազարաւոր ուխտաւորներ։ Կղզու գլխաւոր քաղաքը է Կօլոմբօ՝ որ արևմտեան ափի վերայ է։ Տրինկոնամալէ+ արևելեան ափի վերայ է և գեղեցիկ նաւահանգիստներ ունի, որ իւր աշխարհագրական դրութեան պատճառով կարելի է Ընդկաստանի բանալի կոչել *)։

(*) Սէյլանի բոյսերի մէջ առաջին տեղը բռնում է Կինամոնէնին։ Կինամոնէնու բարձրութիւնը 20 — 30 ոտնաչափ է։ Ճիւղերը շատ խիտ

Հնդկա — Չինաստանի մէջ Անգղեացիներուն պատկանած երկիրները են Աասամ, որ գտնուած է Բրահմա Բուդդըայի հովտում Ըգական բնակչաչի ծոցի ափին Բրահմա Բուդդըայի բերանից սկսած մինչև Իրաւադդի գետի բերանը։

Պեգու — Մարդաբանի ծոցի ափում մինչև Սալուինի բերանը, Տենաս — Սեբիմ — Սալուինի բերանից սկսած մինչև տան աստիճան լայնութեան և Մալակկա համանուն թերակղզում։

Այս բոլոր երկիրները նշանաւոր են իւրեանց բուսականութեամբ, նաւագնաց գետերով և Չինաստանի Ըստրալիայի և Ամերիկայի հետ ունեցած վաճառականութեամբ։ Բուսա-

---

տերևներ ունին, մատղաշ տերևները բաց — դեղին կամ կրակի գոյն ունին, հին տերևները — մուխ կանաչ են։ Ճիւղերի վերայ գտնւում են փոքր սպիտակ և անուշահոտ ծաղիկներ, պտուղը խոզակաղնիի նման է սխեռի մեծութեամբ։ Պտուղները եփելով իւղ են ստանում, որ վերջը մեղրամոմի նման պնդանում է. այդ իւղից պատրաստում են հոտաւէտ մոմեր։ Վաճառականութեան մէջ տարիչէնն կոչուած բանը պատրաստելու համար վայրենի կինամոմներով չեն բաւականանում, այլ կինամոմների առանձին այգիներ են տնկում, այդ այգիները դեռ ևս միայն Սէյլան կղզում (Հայրենիք) են. այս կղզու Կօլոմբոյ գլխաւոր քաղաքի շրջակայքում կինամոմենների չորս կամ հինգ այգիներ կան, որոնք ամեն տարի 10·000 փութ տարիչէն են տալիս։ Ծաղկած ծառերի անուշ հոտը այնպէս սաստիկ է, որ քամին այդ հոտը կղզուց տանում շատ հեռու երկրներ։ Այգիների մէջ ծառերին բարձրանալու չեն թողում, և երբ ճիւղերը սկսում են բարձրանալ, խնդոյն կորում են նոցա։ Ճիւղերը կտրելուց յետոյ տանում են համբարանոցների մէջ և հանումն կեղևը։ Այդ կեղևը դնում են արեգակի մէջ չորանալու, ուստի կեղևը աւելի մուխ գոյն է ստանում և ոլորուելով խողովակի ձև է ստանում։ Տերևները բոլորովին համ չունին։ Կեղևադուրկ ծառը կորցնում է անուշ հոտը և միայն վառելու համար է գործածվում։ Վատ կեղևներից տարիչէնի իւղ են քամում։ Տարիչէնի վաճառականութեան իրաւունքը միշտ տէրութեան ձեռին է եղել։ Հոլլանդացիների իշխանութեան ժամանակ այնպէս սաստիկ էր այդ մենաւաճառութիւնը, որ ոչ ոք մի փոքրիկ կտոր անգամ ծախելու իրաւունք չունէր, օրինազանցը մահուան պատիժ էր ստանում։

կան թագաւորութեան բոլոր ծառերից ամենանշանաւորները են Տեկի ծառը, խէժ և կպրահիւթ տուող ծառները. այդ հիւթերը վաճառականութեան մէջ կաուզուկ [ձգական խէժը] և գուտտապերչ [հիւթական ռէտին] են կոչում *)։ Բաց ի սրանից նշանաւոր է նոյնպէս և բրինձը։ Անգղեացիների իշխանութեան տակ եղող Հնդկա-Չինաստանի կղզիներից նշանաւոր են Վալլեսի դէպի կղզին Ջոջիպուռ քաղաքով, Սինգապուր կղզին համանուն քաղաքով։ Այդ կղզիները արևելեան Հնդկաստանից Չինաստան գնալու ճանապարհին վերայ լինելով շատ նշանաւոր են վաճառականութեան մէջ։

ՀՈԼԼԱՆԴԱՑԻՆԵՐԻ ՊԱՏԿԱՆԵԱԼ ԵՐԿԻՐՆԵՐԸ։

Արևելեան Հնդկաստանում Հոլլանդացիներին պատկանում են գրէթէ բոլոր Ջոնդի արշիպելագոսը և Մալուկկեան կղզիները։ Այդ կղզիները կոչվում են Հոլլանդական —

(*) Տեկի ծառը Իրաւադդի, Սալվինի և ուրիշ գետերի ափերի վերայ ընդարձակ անտառներ է կազմում. այդ անտառների վերայ մեծ հոգացողութիւն ունի Անգղիական կառավարութիւնը, որովհետև տեկի փայտը շատ յարմար է շինութիւնների և նաւերի համար։ Այդ ծառը երկաթի նման կարծր է, և նորա հոտից փախչում են տերմիտները։ Պեգուի մէջ շատ կայ այդ ծառից։ Այդ ծառը 80 ոտնաչափ բարձրութիւն և մինչև չորս ոտնաչափ հաստութիւն ունի։

Ձիական խէժը կամ կաուզուկը (փայտի հիւթը) բնական գոյնը ըսպիտակ կամ կիսաթափանձիկ, բաց դեղին է, բայց որի մէջ մոխրագոյն կամ սև գոյն է ստանում։ Կաուզուկը սկզբում հեղուկ է լինում. նորան ստանում են ծառի բունը ճեղճեղքելով։ Բաց ի բնական յատկութիւններից որ առանձնական է և ջրի համար անթափանձելի է, արհեստական կերպով կարելի է լուծել նորան։ Կաուզուկից զանազան բաներ են պատրաստում՝ հագուստ, վերնակօշիկ, մեքենայի համար օծանելիք և այլն. գուտտապերչէն կամ հիւթական ռէտինի ծառը փափուկ է. գուտտապերչը ստանում են այնպէս, ինչպէս կաուզուկը, նա կաուզուկի նման առանձնական չէ. գուտտապերչից շինում են զանազան անօթներ, խողովակներ և այլն։

բևեռեան — Հնդկաստան։ Հոլանդացիներին պատկանեալ Օհոնդի Երշիպելագոսի կղզիներից նշանաւորները են Սումատրա, Բանկա, Ջաւա, Մադուրա, Բորնիոյ և Յելէբէս. Մոլուկկեան կղզիներից նշանաւորները են Ամբոին և Բանդա։ Բևեռեան Հնդկաստանում Հոլանդացիներին պատկանեալ երկրների տարածութիւնը 30,000 քառ. մղոն է. իսկ բնակիչների թիւը 17 միլիոն։ Հոլանդացիների գաղթական երկիրների մէջ առաջին տեղը բռնում են արեւելեան Հնդկաստանի գաղթականութիւնները, և առհասարակ Եւրոպական գաղթական երկրների մէջ լաւերի կարգումը կարելի է դասել նոցա։ Այժմեան ժամանակ Հոլանդացիների համար այդ կղզիներից ամենակարեւորը Ջաւան և Մադուրան են։ Ջաւային յիրաւացի են կոչում Հոլանդիայի գահի մարգարիտ։ Այդ երկու կղզիներից Հոլանդացիները ստանում են շատ սուրճ, շաքար, բրինձ, կապար, լիզակ, և ծխախոտ, մանաւանդ սուրճ։ Այս երկու կղզիներից դուրս տարած սրճի արժէքը գրեթէ հաւասար է միւս բոլոր կղզիներից դուրս տարած ապրանքների արժէքի կիսին։ Այս բոյսի առատութեան պատճառը այն է, որ Հոլանդացիները առաջին տեղացի բնակիչներից ամեն մէկին պարտաւորել են տարին 66 օր տէրութեան համար աշխատել։ Որովհետեւ Ջաւայի բնակիչների թիւը հինգ միլիոն է, իսկ երկիրը չափազանց արգաւանդ. ուստի այն օրինքը Հոլանդացիներին մեծ աքանակ սուրճ է տալի։ Առաջուայ ժամանակ Հոլանդացիների համար շատ կարեւոր էին Մալուկեան կղզիները, մանաւանդ Ամբոյեան և Բանդա կղզիները, առաջինը իւր միխակի՝ իսկ երկրորդը մշակահոտ ընկոյզենու պատճառով *)։

(*) Մէխակենի տերեւները դափնու տերեւների նման են, Ծաղիկները ճիւղերի ծայրին են լինում, մէջի կարմրագոյն բաժակ ունին, իսկ պսակի թերթերը բաց կարմիր են. երբ պսակի թերթերը սկսվում են թափուիլ և պտղիլը սկսվում է, այն ժամանակ բաժակները ձուանօթների հետ իմաստին քաղում են և չորացնում և ծախում են՝ որ վաճառականութեան

Բանտա կղզին շատ երեւելի է, որովհետեւ աշխարհիս մէջ ոչ մի երկիր այնքան անապատ չէ տալի օրքան այս կղզին։ Բորնիոյ կղզին արդէն վաղուց հռչակուած է իւր ալմաստով և ոսկւով։ Բացի բուսական և հանքային թագաւորութիւններից Հոլան-

մէջ միխակ է կոչվում։ Պտուղը երկար ժամանակ հարկաւոր չէ ծառի վերայ թողնել, որովհետեւ սերմերի մեծանալով հոտը և համը անհետանում է։ Բայց պէտք է ասել որ բոլոր ծառը անուշահոտ է. տերեւների կոթերը ծաղկի բաժակի նման կծու համ ունին։ Միխակենին աճում է միայն յարմար կլիմայում և լաւ հողում, և միայն Մոլուկկեան կղզիների վերայ նա վայրենի բուսանելով, լիովին պատրաստում է իւր բոլոր հիւթերը՝ Ամենից լաւ և ամենից շատ միխակ բուսնում է Ամբոյեն կղզու վերայ։ Մշկահոտ ընկոյզենին միխակենուց շատ բարձր է [50 ոտնաչափ], նորա լայն տերեւների վերի երեսը կանաչ գոյն ունի, իսկ ներքինը — մոխրագոյն է, ծաղիկները սպիտակագոյն են և զանգակի ձեւ ունին։ Պտղի տեսքը փոքրիկ դեղձի նման է։ Երբոր պտուղը հասնում է, այն ժամանակ արտաքին կանաչ կեղեւը ճեղքվում է և միջից դուրս է գալի քարի նման կարծր ընկոյզը։

Մշկահոտ ընկոյզի պատեանը հասարակ ընկուզի պատենից հաստ և ամուր է։ Ընկոյզը հաւաքելուց յետոյ հարկաւոր չէ իսկոյն կոտրել, ապա թէ ոչ միջի կուտը կը փչասուի։ Այս պատճառով ընկոյզը չորացնում են առաջ արեգակի տակ և յետոյ կրակի վերայ, մինչեւ որ կուտը պատեանի մէջ շարժի, այն ժամանակ կարելի է կոտրել ընկոյզը առանց կուտը փչասելու։ Ամենից լաւ և ամենից շատ մշկահոտ ընկոյզ բուսնում է Բանտա կղզուն վերայ։

Հնդկաստանի թանգագին բերքերը—միխակը և մշկաընկոյզը յայտնի էին Եւրոպայում այն ժամանակները անգամ, երբ դեռ ևս անյայտ էր դոցա հայրենիքը։ Արաբացիները այդ համեմունքը բերում էին Եգիպտոս, իսկ այս տեղից Վենետիկի վաճառականները գնելով շատ մեծ գնով ծախում էին Եւրոպայում։ Այս մենաշնորհութիւնը վերջացաւ այն ժամանակ, երբ Վասկո—դէ—Գաման գտաւ Հնդկաստանի ծովային ճանապարհը, և երբ մի քանի տարուց յետոյ [1151 թուին] Պորտուգալացիները գտան Մոլուկկեան կղզիները և իւրեանց ձեռի տակ առան համեմունքի վաճառականութիւնը։ 17դ դարում Պորտուգալացիների ձեռից այդ կղզիները Հոլանդացիների ձեռը անցան, որոնք այդ ժամանակ տիրել էին արդէն ամբողջ Հնդկաց ովկիանոսին։ Հոլանդացիները իրանց իշխանութիւ-

դիայի Երևելեան Հնդկաստանը յայտնի է նոյնպէս և իբր կենդանիներով։ Հոնդի կղզիների ափերի մօտ գտնվում է Ցալանգանա։ Քաղաքներից նշանաւորները են Մախաապալ Յելիբեսի վերայ, Բոպալ և Սոֆրաջիա — Ն'աւսայի վերայ։ Այս վերջի քաղաքը իր վաճառականութեամբ առաջին տեղը է բռնում։

ՓՐԱՆՍԻՍՑԻՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆԵԼ ԵՐԿԻՐՆԵՐԸ։

Հոլանդացիներին պատկանելալ երկրներից յետոյ երկրորդ տեղը բռնում են Ֆրանսիացիների երկիրները։ Այժմ Ֆրանսիացիներին պատկանում են 1) Հնդկաստանում Մաֆէ, որ գտնվում Մալաբարի ափի վերայ, Կոչինկալ, Պոնդիչերի, Նանաոն Կորոմանդելի ափերի վերայ և Ջանդերնագոր — Բենգալայում Կալկաթայի հիւսիսային կողմում։ 2) Հնդկա — Ջինաստանում պատկանում են Ընամի տերութեան հարաւային երկաթ նահանգները Սայգոն քաղաքով։ Առաջիններից ամենանշանաւորը Պանդիչերին է։ Բայց Հնդկա — Ջինաստանի երկիրները իւրեանց նշանակութեամբ Պանդիչերուց շատ բարձր են. այդ երկաթ նահանգները Ֆրանսիացիները սատացան 1862 թուականին Ընամի տերութեան հետ դրած դաշնից զօրութեամբ։

Այդ նահանգները շատ նաւահանգստ գետեր և ծովի ժայռեր ունին, որ նաւեր շինելու համար շատ յարմար է։ Երկրիս միւս բոլորից նշանաւորները են, շաքարեայ եղէգը, բամբակը

նը ի չարը գործ դրին. այդ համեմունքների մենավաճառութիւնը միայն իրանց ձեռը մնալու համար ամեն տեղ արմատախիլ արին այդ համեմունքը բացի Բանդա Ամբոյնն կղզիներից։ Ով որ համարձակուէր ծառուկ ծախել այդ համեմունքը, մահուան պատիժ կտանար։ Այժմեան ժամանակ և այս համեմունքի մենավաճառութիւնը նետերլանդական ընկերութեան [Moutrchappy] ձեռին է գտնվում, որին այդ համեմունքների տունկերը միշտ հոգ են տանում պարտաւոր են, ծախել տերութիւնից նշանակած ամենարժան գնով։

և թթենին։ Մետաքսի ձիճուն պահելու եղանակը շատ լաւ յայտնի է այդ երկրների բնակիչներին։ Բնակիչները երկրագործութեան ընտել լինելով հետաքրքրութեամբ են համաձայնացնում օտար երկրացիներին ընդհանուր վարձով աշխատել։ Գաղթականութեան տուած օգուտներից մին և այն է որ նա զբաղմունք է տրտում Եւրոպայի և Ջինաստանի մէջ եղած ծովային ճանապարհի վերայ։ Սուէզի ջրանցքի վերջանալով այդ օգուտները աւելի շատացան։

Իսպանացիների երկիրները են միայն Փիլիպպեան կղզիները։ Այդ կղզիները այս անունը ստացել են ի պատիւ Իսպանիայի Փիլիպպոս Ը. թագաւորի։ Այդ կղզիներից ամենահները են Մանիլա և Լէ-յոն. վերջինս վերայ է Մանիլա քաղաքը։

Պորտուգալացի երկիրները։ Այժմ Պորտուգալացիների ձեռին միայն մի քանի տեղեր կան, որոնցից նշանաւորները են Գոյա քաղաքը Մալաբարի ափի վերայ և Տիմոր կղզու մի մասը։ Նեպալի և Բոտանի թէրոնկիները գտնվում Հիմալայեան լեռների հարաւային մասերում. առաջինի գլխաւոր քաղաքը է Կատմանդու, իսկ երկրորդինը — Տաախոտոն։ Ջինաստանի Կայսրը այս երկիրների իշխողներին աւատառուները է համարում։ Բնակի թէրոնկիը կամ Կոչին Քինեան պարսնակում իր մէջ Հնդկա — Ջինաստանի արևելեան ափը և Կամբոջայ գետի հովտի մի մասը։ Գլխաւոր քաղաքը է Գոե։ Թագաւորներին նշանակում է Ջինաստանի Կայսրը։

Սիամի թէրոնկիը գտնվում է գլխաւորապես Կամբոջա և Մինամ գետերի հովիտներում։ Գլխաւոր քաղաքը է Բանկոկ, 350000 բնակիչ ունի։

Բէրմանի թէրոնկիը գտնվում է Իրաւադդի գետի հովտում. այս տերութիւնը իր գլխաւոր Ավա քաղաքի անունով Ավասի տերութիւն է կոչվում։

Վերջի երեք տերութիւնների երկիրը շատ առատաբեր է։ Լեռները ծածկուած են ընդարձակ անտառներով, որոնց մէջ կան շատ վայրենի կենդանիներ (սպիտակ փիղ)։ Լեռների

մէջ մեռաղներու (մանաւանդ ոսկի և անագ և թանկագին քարեր) անապառելի հանքեր կան։ Գետերի հովիտները չափազանց արգաւանդ բուսականութիւն ունին, այն ինչ գետերը յայտնի են իրենց ձկներով և նաւագնացութեամբ։

ԻՐԱՆ։

Բնութիւնը և բնակիչները։ Որովհետև այս բարձրաւանդակութիւնը ծովի մակերեւոյթից բաւականին բարձր է, և գտնւում է այն գօտու տակ, ուր ամառը բոլորովին անձրեւ չէ գալիս, ուստի այս երկիրը ջրերի և բոյսերի կողմից շատ աղքատ է։ Ըստ պատճառով այս երկիրը չունի նաւագնաց լճեր և գետեր։ Բուսականութիւնը զրկեթէ միայն լեռների ստորոտներում, հովիտներում և կամ առժամանակ յառաջացած աղբիւրակների ափին է լինում։ Ըստ մի և նոյն հանգամանքների պատճառներով Իրանի բարձրաւանդակութիւնը ապրում է առհասարակ ընէ կենդանիներէ և ընէ բնակիչներէ կողմից, այդ մի և նոյն պատճառով ժողովրդը նոմադական կեանք է վարում և այդ երկրում եղած փերոնիները չ ատանին նշանակութիւն։ Ըստ տերութիւնները երբեմն մեծ նշանակութիւն ունէին, որովհետև Եւրոպայից Հնդկաստան գնալու ճանապարհի վերայ էին, այդ ժամանակ Իրանի բարձրաւանդակութեան սահմանակից լեռների անցքերը (արևելքում Կապուլինը, արևմտահիւսիսում դեպի Կասպից ծովը) և այդ անցքերում եղող ամրոցները (Գիշվինդ գետը) շատ մեծ նշանակութիւն ունէին։ Արևելքից դէպ արևմուտք և ընդհակառակը գնալու համար թէ վաճառականութեան և թէ պատերազմական միակ ճանապարհը այդ էր։ Ըստ ճանապարհի վերայ շատ հարուստ քաղաքներ կային։ Բայց Հնդկաստանի ծովային ճանապարհը գրաւնելուց յետոյ, Իրանի տերութիւնները կորցրին իրենց նշանակութիւնը։ Բնակիչները Արիական ցեղից են, հիւսիսում Ազդան են կոչւում, հարաւում Բելուջ, Տաճիկ, արևմտեան

լեռներում — Քուրդ։ Բացի վերոյիշեալներից կան և Պարսիք։ Բնակիչների մեծ մասի լեզուն պարսկերէնը է, որ արևմտեան Ասիայում այն մի և նոյն նշանակութիւնը ունի, ինչ որ Ֆրանսերէնը Եւրոպայում։ Գլխաւոր կրօնը մահմետական է, մեծ մասամբ Շիիաներ են այս տեղ, Սուննիներին հալածում են։ Պարսերի մի մասը Զրադաշտական են, որոնց սուրբ գիրքը Զենդավեստան է։ Իրանի բարձրաւանդակութեան վերայ երեք տերութիւններ կայ — Պարսկաստան, Ազդանիստան և Բելուջիստան։

Պարսկաստան։ Պարսկաստանի սահմանները արևմուտքից Ասիական Տաճկաստանը է, հիւսիսից — Ռուսաստանը և Տուրանի դաշտավայրի տերութիւնները, Արևելքից — Ազդանիստանը և Բելուջիստանը, իսկ հարաւից — Մասկատի իմամի երկիրները։ Պարսկաստանը իր տարածութեամբ երկու անգամ մեծ է Գերմանիայից [23000 քառ. մղոն]. բայց բնակիչները չորս անգամ սակաւ է [10 միլիոն Գերմանիայի բնակիչներից։ Շահի կառավարութեան տակ գտնուող բնակիչները երկու մասն են բաժանվում, մի մասը Շահի իշխանութիւնը է ընդունում միայն լոկ անունով, իսկ միւս մասը անպայման հնազանդվում է նորա իշխանութեանը։ Առաջինները Իլատ են կոչվում և թափառական կեանք են վարում, իրենց խաները ունին, որքա շատ անգամ յարձակվում են իրենց սահմանակից Ռուսաստանի և Տաճկաստանի նահանգների վերայ և վնասներ են պատճառում։ Երկրորդները՝ որոնք Տաճիկ են կոչվում, նստական կեանք են վարում. նորա երկիրը նահանգների է բաժանած և իւրաքանչիւր նահանգը իր նահանգապետը ունի։ Նահանգապետի գլխաւոր պարտականութիւնը այն է որ հոգայ ժողովրդի բարեկեցութեան մասին և իր ժամանակին Շահի գանձարանին նշանակեալ գումարը հասցնի։ Բայց եթէ ինչ կերպով պէտք է կատարեն նահանգապետները իրենց պարտականութիւնը կամ հարկը կը ժողովին, այդ Շահի գործը չէ։ Որովհետև նահանգապետները ոչ

սրի հաշիւ չին տալի, ուսոի նոքա բոլորովին ազատ կերպով կարող են կազդուրել իւրեանց յանձնած նահանգը: Պարսկական գլխաւոր նահանգները են՝ Ֆարս, որ գտնվում է բարձրաւանդակութեան արևմտահարաւային մասում և Պարսից ծոցի ափերում: Այդ նահանգի գլխաւոր քաղաքը է Շիրազ, գտնվում է արգաւանդ երկրի վերայ որ «Ֆարսիստանի» ալարդիայ այգի է կոչվում: Այս երկիրը նշանաւոր է իւր վարդի եղով՝ գինով և մոմիա կոչուած նաւթի նման հեղուկ հիւթով: Ֆարսը գոված է թէ իւր կլիմայով և պտուղներով և թէ իւր բանաստեղծներով, այս նահանգումը է նոյնպէս և Աբու-Ղէր նաւահանգիստը, Պարսից ծոցի մօտ: Պարսիկները ծով չսիրելով, արևմտահարաւային ափերը Ընդ-քաջինեղէն նոճենէի խնամարկութեանը են թողել, և միայն դորա փոխարէն նշանակելով դումարին սահմանում է նոցանից:

Իրակ, վերոյիշեալից դէպի հիւսիս է գտնվում: Գլխաւոր քաղաքները են Խոպահան*), 200,000 բնակիչ ունի. հին ժամանակը Շահերի աթոռանիստը էր: Թեհրան (100,000) այժմեան աթոռանիստը է: Խորասան. բարձրաւանդակութեան արևելահիւսիսային մասումը է գտնվում. նշանաւոր են Հիերը. ժողովուրդը պատերազմական հոգի ունի:

Ատրբէջան: Տէրութեան հիւսիսային մասը է կազմում: Այդ վայրենի, բայց միևնոյն ժամանակ աքանչելի երկրում տարուայ մեծ մասը հովիտներում թագաւորում է միջնջհնաւոր

(*) Խոպահանը գտնվում է շատ արգաւանդ և ջրալից հովտում. Թեհրանի օդը շատ վատ և վնասակար է, մանաւանդ ամառը, այս պատճառով ամառը քաղաքը գրեթէ բոլորովին դատարկվում է. որովհետև թագաւորական պալատը և բնակիչների մեծ մասը ամառանոցներ են գնում. մեծ մասամբ ամառը նոքա Դիմանդվենդա հրաբուղխի շրջակայքում են լինում: Թեհրանի աթոռանիստ լինելու միակ պատճառը իւր տեղի դրութիւնը է, որովհետև գտնվում է այնպիսի տեղում, որ տեղից դէպ արևմուտք գտնվում է Տաճկաստանի ճանապարհը, դէպ հիւսիս Ռուսաստանինը և Կասպից ծովինը:

գարուն, իսկ լեռների վերայ՝ ձիւն: Գլխաւոր քաղաքը է Տիբրիս:

Գիլան և Մազանդարան: Կասպից ծովի ափին են գտնվում, շատ արգաւանդ երկիրներ են. Գիլանի գլխաւոր քաղաքը է Ռաշտ, իսկ Մազանդարանինը՝ Բաֆրուշ, երկուսը և լաւ վաճառականութիւն ունին:

Ռելուջիստան: Բարձրաւանդակութեան արևելահարաւային մասումը է գտնվում, մեծ մասամբ քարոտ և աւազոտ անապատներից է բաղկացած. այս պատճառով բնակիչները թափառական կեանք են վարում և յաճախ յարձակվում են դրացի երկիրների վերայ և մեծ վնասներ են հասցնում:

Աղրանիստան: Բարձրաւանդակութեան արևելահարաւային մասումն է գտնվում: Այս տէրութիւնը նշանաւոր է այն պատճառով, որ արևմտեան Ասիայից դէպ արևելք գնալու ճանապարհի վերայ է գտնվում, այդ ճանապարհը ոչ բոշվում է կարուել և Գիշմինդ գետերի ուղղութեամբ և բազմաթիւ օվազիսների շղթայով: Հին ժամանակները վաճառականութեան և պատերազմական միակ ճանապարհը էր, այս պատճառով այդ ճանապարհի վերայ եղող Կաբուլ, Կանդահար և Հերաթ քաղաքները միշտ վաճառականութեան գլխաւոր կենդրոններն էին:

ՏՈՒՐԱՆ

Բնութիւնը և բնակիչները: Տուրանի տէրութիւնները (38,000 քառ. մղոն) գտնվում են արևելեան Ասիայի բարձրաւանդակութեան արևմտեան մասում և Տուրանի դաշտավայրում: Վաղաքական կողմից նոցա սահմանը հիւսիսից և արևմուտքից Ռուսաստանը է, արևելքից՝ Չինաստանը, արևելահարաւից՝ Բրիտանական Հնդկաստանը, հարաւից՝ Աղրանստանը և Պարսկաստանը: Տուրանի տէրութիւնները Իրանի նման աղքատ են ջրաբաշխութեան կողմից,

այս պատճառով ձկների և գետերի թիւը շատ սահմանափակ է, եղածները ևս շատ փոքր օգուտ են տալիս նոցա և ընշանաւոր են իւրեանց մեծութեամբ՝ ինչպես են կասպից և Բալա- լճերը և Սիր և Ամո- գետերը, որոնք թափվում են Բալա- լիճը: Ջրաքաշութեան կողմից ազգատ լինելուն պատճառով՝ Տուրանի պէտ-ուի-ննէրի քոչական և կիսքոչական ընտանի-ննէրը ևս շատ սպասք են:

Իրանի բարձրաւանդակութեան նման կենդանիները և բոյսերը լինում են միայն լեռների սառրոտներում, գետերի բնական և արուեստական ձկների ափերին: Այսպէս Տուրանի քնաստեղծը բնութիւնից հարկադրուած էին երկար ժամանակ թափառական կեանք վարել, և միայն շատ ժամանակ չէ որ նոցանից մի քանի ժողովուրդներ սկսեցին հաստատ բնակութիւններ հիմնել: Ձկների աղքատութեան պատճառով, նորա ժողովուրդները շատ անգամ յարձակվում էին դրացի երկիրները վրայ. բայց պէտք է ասել, որ այս երկիրը իւր աշխարհագրական դրութեամբ մեծ նշանակութիւն ունի, որովհետև գտնվում է արևելեան Ասիայի և արևելեան Եւրոպայի մէջ տեղը, Չինական, Ընդհանական և Ռուսական երկիրների մէջ տեղը: Այս երկիրը արևելեան Եւրոպայի և արևելեան Ասիայի մէջ տեղը գտնվելով անցորդների ճանապարհ և այդ երկու աշխարհի միմեանց հետ ունեցած վաճառականութեան կենդրոնը է դարձել: Չինաստանի, Ընդհայի և Ռուսաստանի մէջ տեղը գտնվելով, նա այս երեք ազգերի վաճառականների միմեանց հետ գործ ունենալու ասպարեզ է: Տուրանի տէրութիւնների բնակիչները (8 միլիոն) պատկանում են միայն Մովկասեան ցեղին, կրօնը մահմետական է, կառավարութիւնը նահապետականի նման է: Ամենը ունին իւրեանց խաները, որոնց իշխանութիւնը անսահման է:

Տուրանի նշանաւոր տէրութիւնները են, Խոջանդ. գտնվում է Սիր գետի վերին մասերում. գլխաւոր քաղաքը է Խոջանդ [100,000 բ.]: Կոկանդ գտնվում Ամու գետի վերին մասերում: Խոխանդ, Խալիա և Սամարղանդ, Խիվա գտնվում Ամու գետի մասերում և տարածվում մինչև Կասպից և Արալ ծովերը. գլխաւոր քաղաքը է Խիվա: Ռուսաստանի հետ ունեցած յարաբերութիւններով այդ տէրութիւններից առաջին տեղը բռնում Խոխանդ և Խոջանդ:

Միջին Ասիայի տէրութիւններից ամենից մեծ նշանակութիւն ունէր Խոխանդ մինչև վերջին ժամանակները՝ քանի որ Ռուսերի հետ կռիւ չէր սկսել: Այսպիսի մեծ նշանակութեան պատճառը յետագայները են: 1) Խոխանդ Միջին Ասիայի Մահմետական կրօնի գիտութիւնների կենդրոն է. նորա խանը Միջին Ասիայի հաստատ բնակութիւն ունեցող Մահմետականների տէրը և առաջնորդը է. իսկ Սմրղանդ քաղաքը նոցա Մեկկան է: 2) Խոխանդի համանուն գլխաւոր քաղաքը դրացի երկիրների վաճառականութեան կենդրոն է: Խոխանդի բնակիչները, որոնք թուով $1\frac{1}{2}$ միլիոն են, Միջին Ասիայի տէրութիւնների բնակիչներից ամենից բազմաթիւ և լուսաւորեալ են: Բնակիչները մեծ մասամբ Օ. արիամշանի հովտում են գտնվում, նորա վերին մասերից սկսած մինչև Խոխանդ քաղաքը, և այնպէս խիտ է այդ տեղի բնակութիւնը, որ իւրաքանչիւր մարդին շատ փոքր հող է հասնում, չնայելով որ այդ տեղի բնակիչները միայն երկրագործութեամբ են պարապում: Միջին Ասիայի երկիրների մէջ Խոխանդ առաջին տեղը բռնում իւր երկրագործութեամբ, այգեգործութեամբ և բամբակով: Խոխանդի մէջ կան շատ գործատուններ և արհեստանոցներ: Խոխանդից դուրս են տանում բամբակ, մետաքսեղէն և բամբակեղէններ, շաքարեայ և պտղի զանազան համեմունքներ:

Խոջանդի բնակիչները [500—600,000] թափառական և նստական կեանք են վարում: Նստական կեանք վարող ժողովուրդները բնակվում են Միջին Ասիայի ամենաարգասաւոր և ամենագեղեցիկ Ֆիրդանի հովտում: Թափառականները նորա շրջակայ լեռների վերայ են թափառում: Երբեմն նշանաւորները են բամբակ և մետաքս: Այստեղից շատ եամբակ տա-

նում են Ռուսաստան, մետաքս տանում են Խուխարա, Կաբուլ և Ընդկաստան։ Խոկանդից անցնում են Ռուսաստան, Խուխարա, Խիվա, Պարսկաստան գնալու կարաւանի միակ ճանապարհը։

ԵՐԱՒԻՆ։

Բնութիւնը և բնակիչները։ Որովհետև Երաբիան Իրանի նման բաւականին բարձրաւանդակ երկիր է, ուստի նոյնպէս սակաւաջուր է։ Ըստ պատճառով ամէն տեղ տեղ պատահում են առուակները և գետակները, այն էլ ժամանակաւոր են։ Ջրաբաշխութեան կողմից Երաբիան կարելի է երկու մասը բաժանել, արևմտահարաւային՝ որ գտնվում է մուսոնների գօտու տակ, հիւսիսային՝ որ գտնվում է այն գօտու տակ՝ ուր ամառը անձրև չէ գալիս, և միջին՝ ուր օդը սոյնպէս չոր է, որ ոչ թէ միայն անձրև, այլ և ցող անգամ չէ լինում։ Ըստ պատճառով միջին Երաբիայի հիւսիսային մասում ձմեռն կարճաւոր ժամանակաւոր բուսականութիւն է լինում, գարնան և աշնան ժամանակ միջին հարաւային մասում բուսականութիւնը պարբերական կերպով է լինում և մուսոնների ուղղութիւնից է կախուած, իսկ Միջին Երաբիան տեղ տեղ միմիայն անապատներից է բաղկացած։ Կենդանիները ևս կենդրոնացած են միայն այս տեղերում, ուր փոքր ի շատէ բուսականութիւն կայ։ Ըստ այս պատճառով Երաբիայում կան տեղեր որոնք բոլորովին անմարդաբնակ են, կան նոյնպէս տեղեր՝ որ տեղ բնակիչները ստիպուած են թափառական կեանք վարել, կան և այնպիսի տեղեր՝ ուր բնութիւնը պարգևել է մարդին նստական կեանք վարելու ամեն միջոցները։ Երաբիայի բոյսերի մէջ ամենանշանաւորներն են հնդիկ—արմաւենին և սուրճի ծառը, կենդանիներից—ուղտը [միդնանի] և ձին, բնակիչները սակաւաթիւ են, կովկասեան ցեղից են։ Երաբիայի տարածութիւնը թէպէտ Եւրոպայի $1\frac{4}{5}$ մասին է հաւասար, սակայն բնակիչների թիւը

5 միլիոնից աւելի չէ։ Թափառական Բէդուինները*) կամ անասնապահութեամբ (ոչխար, ուղտ, ձի) են պարապում, կամ ճանապարհորդների կարաւանները են կողոպտում, և կամ մի և նոյն նպատակով ասպատակներ են անում դրացի ժողովուրդների վերայ։ Նստական կեանք վարողները պարապում են վաճառականութեամբ, երկրագործութեամբ, գիտութիւններով և

(*) Հազար տարի սորանից առաջ ինչ որ էր Բէդուինը՝ մի և նոյնը է և այժմ։ Նորա բնաւորութիւնը և վարքը բոլորովին փոխուել չէ։ Նա այժմ ևս առաջվայ նման շահասէր, կողոպտիչ, քաջ, առատ, սակաւապետ, վաճառականութեան մէջ խաբեբայ, բայց մի և նոյն ժամանակ աշխոյժ և հիւրասէր է։ կարճ ասել՝ այժմ ևս ունի այն ամեն յատկութիւնը, ինչ որ ունէր սկզբնական ժամանակներում։ Բէդուինը հաւատարիմ է և հաստատ կապահէ իր տուած խօսքը։ Նա ուրախ ընկեր և սրամիտ խօսակից է։ Նորա երևակայութիւնը վառ և կենդանի է, աշխոյժ բանաստեղծական հոգի ունի։ Բէդուինը շատ մեծ է ծախում իր անձնական պատիւը, ոչ ոք չի համարձակուիլ անպատուել նորա, ապա թէ ոչ յանդուգը սրի բաժին կդառնայ։ Բէդուինները լուսնակ գիշերները սիրում են աստղերից երկնքի տակ առակներ պատմել միմեանց կամ բանաստեղծական երգեր երգել։

Երիտասարդ տղաները և աղջիկները պար բռնկով սկսում են երգել և երգի հետ ծափահարել կամ զանազան շարժուածներ անել։ Բէդուինի տունը վրանը է, նորա կարասիքը ձիու թամքը, ջրի տիկը և կասկարան է, հագուստը է բրդէ շապիկ և վերարկու։ Ձմեռը այս ինքն անձրևային ժամանակ Բէդուինը շապկի վերայից հագնում է ոչխարի կաշուց կարած մուշտակ կան այնպիսիները՝ որոնք ամառը ևս հագնումեն ոչխարի կաշուց կարած մուշտակ, կան այնպիսիները՝ որոնք ամառը ևս հանգնում են ևս մուշտակ, որովհետև փորձով գիտեն, որ քանի շատ հանգինն՝ տաքութեան ներգործութիւնը այնքան փոքր կզգան։ Բայց ձմեռուայ ցուրտ եղանակը Բէդուինի համար ոչ ինչ է, ամեն ինչ ընդհակառակ է ցրտի ներգործութեան տակ։ Բայց Բէդուինը արհամարհելով այդ՝ բոկոտը գնում վրանի մէջ, ուր մինչև կէս գիշերը վառվռուն կրակը. ամառը նա փաթաթվում իր վերարկուի մէջ և այնպէս քնում տաք աւազի վերայ արեգական տօթակէզ ճառագիների տակ։ Նորա զէնքը են թուրը և նիզակը, սաղաւարդ և զրահ և հրեթեմն հրացան, նորա կերակուրը է ուղտի կաթ և մածուն, հաց, իւղ, արմաւենի և անապատի մորենի. Բէդուինի միակ հարստութիւնը են ուղտ և ձի՝

մի քանի արուեստներով : Ըրաբացիների մէջ, ամեն բանից շատ ծաղկած է վաճառականութիւնը՝ որ կամ ցամաքային է (ուղտերով) և կամ ծովային — (արաբական նաւերով կամ Եգիպտական շոգենաւերով Մէճիիէ ընկերութեան շոգենաւերով) : Ա-

---

ամեն արաբացի գերդաստան գոնեա մի քանի ուղտ կունենայ, աղքատ գերդաստանը անգամ գոնեա մի տասը հատ ուղտ ունի, միջին կարգի մարդը մինչև 30 կամ 40 հատ կունենայ, այն ինչ հարուստը մինչև 60 հատ, Մի քանի Շէյխեր 300 ուղտից աւելի ունին։

Բէդուինի կրօնը արգիլում է խոզի միս և գէշ ուտելը, մարդասպանութիւն անել, պատուիրում է օրական հինգ անգամ նամազ անել, ռամազան պահել և զոհաբերութեան տօն կատարել : Բէդուինը ոչինչ կրթութիւն չէ ստանում, նորան կարելի է ընութեան որդի կոչել. ծնօղները ոչինչ հոգ չեն անում նորա մասին և ամեն ինչ թողնում են նորա կամացը. շատ հազիւ պատժում են նորան. բայց օրօրոցից սկսած աշխատում են սովորեցնելու նորան այն բոլոր նեղութիւններին, (զրկանքներին) և վտանգներին, որոնք կը պատահին ապագայում նորա թափառական կեանքում : Երիտասարդները ամառուայ ժամանակ բոլորովին մերկ արեգակի կիզող ճառագայթների տակ, տաք աւազի վերայ այնքան խաղում և զուարճանում են՝ մինչև ձանձրանալները։ Խաղից ձանձրացած հազիւ թէ մնում են վրանի տակ փոքր ինչ հանգստանալու, դարձեալ նոցա վերայ սկսում են բարկանալ և գուրս անել վրանից, որ գնան խաղալու։

Հայրը փոխանակ բարի գործեր ներշնչելու նոցա սրտի մէջ, ընդհակառակը ինքը սովորեցնում է, որ կռուին միմեանց հետ, կամ քարեր ձգեն իւրեանց վրանին մօտականող օտարների վերայ, սովորեցնում են նոցա գողութիւն անել, քանի որ նոքա օտարների հետ լըրբաբար վարուին՝ այնքան նոցա համար մեծ պատիւ և քաջութիւն է. այդ ապագայում ձեռնամուխ և աներկիւղ լինելու նշան է։ Օտարականները, որոնք Բէդուիններին բնակ-ներում ազգական և ծանօթ չունեին, որ վրանի մէջ կամին՝ կարող են մըտնել համարձակ, տանը է տէրը կամ թէ ոչ՝ այդ մի և նոյն է, տանտիկինը կամ օրիորդը կիրճ զորզը գետնին և իսկոյն կսկսե նախաճաշիկ կամ ճաշ պատրաստել հիւրի համար։ Երբ հիւրը մի որ և իցէ պատճառով երկը կամ չորս օր կմնայ մի վրանի մէջ, այն ժամանակ տանտէրը հարցնում է հիւրին, թէ կամենո՞ւմ է աւելի մնալ թէ ոչ. եթէ հիւրը ասէ այո, այն ժամանակ տանտէրը սպասում է նորանից որ նա օգնէ նորան ընտանեկան գործերում, այս ինքն կամ ջուր բերէ, կամ ուղտ կթէ և կամ ձիերին կե-

բաւանները՝ տանում են կամ իւրեանց երկրի բերքերը կամ ծովի նաւահանգիստները, և կամ այդ նաւահանգիստներից բերում են օտար երկիրների բերքերը իւրեանց աշխարհի գլխաւոր քաղաքները. այս վերջիններից նշանաւոր է Մեկկան։ Մեկկայի վաճառականութեան մէջ գլխաւոր աւերը բռնում են այն ապրանքները, որ բերում են ուխտաւորները իւրեանց հետ։ Ըրաբական և Եգիպտական Մէճիիէ ընկերութեան նաւերի միջնորդութեամբ միմեանց

բակուր տայ։ Հիւրը կարող է տանտիրոջ աչքակապութիւնը չգտատրել, բայց այն ժամանակ նա ամրողջ սերունդին ատելի կլինի։ Այդ անբաւականութիւնից ազատուելու համար, նա կարող է մի ուրիշ վրան գնալ և այնպես ամեն երեք կամ չորս օրից յետոյ մի վրանից միւս վրանը կարող է անցնել մինչև վերջացնէ իր գործերը։ Փախստական մարդը եթէ Բէդուինի տանը ազատ կերաւ, նա ազատ է ամեն տեսակ հալածանքներից։ Բայց աւազակին կամ մարդասպանին այդ սովորութիւնից օգուտ քաղել չտալու համար՝ առհասարակ նորան պահումն գետնափոր գուբի մէջ։ Եթէ գերին կարողացաւ թքնել ազատի երեսին, այն ժամանակ ազատը պարտական է պաշտպանել և ազատել նորան։ Բէդուինը քաղաքում բոլորովին այլ բնաւորութիւն ունի քան թէ անապատում. նա ատում է քաղաքացիներին, որովհետև գիտէ՝ որ նոքա վատ կարծիք ունին իւրեան մասին։ Ա՛յս պատճառով նա աշխատում է ծիծաղաշարժ բայց մի և նոյն ժամանակ հանդարտ կերպարանք ունենալ։ Բայց անապատն վերադառնալով, նա սկսում է կրկին վարուիլ իր առաջուան պարզասրտութեամբ և անկեղծութեամբ։ Քաղաքացիները խօսում են ակնարկութիւններով, այն ինչ Բէդուինը որ սովոր է կարճ և ուղիղ խօսել, շատ ատում է քաղաքացիների խօսակցութեան ձևը։ Բէդուինը քաղաքացիներից աւելի սրամիտ և հեգնախօս է։ Բէդուինը ծոյլ և անհոգ է իւր վրանի մէջ, նորա միակ գործը ձիու կերակրելը, ուղտը կթելը և երբեմն բազէներ որսալը է։ Վարձկան մշակը արածում է նորա երամակները։ Այն ժամանակ երբ կինը և աղջիկը տնական գործերով են պարապած, տղամարդը վրանին դռանը նստած քաշում է իւր ծխափողը։ Բայց անապատում ձիու վերայ Բէդուինը բոլորովին նոր հոգի է ստանում, թռչում է ինչպէս թռչուն, ուրիշի վերայ յարձակուելիս կամ իւրեան պաշտպանելիս ճարտար, քաջ և անխոնջ է։

հետ հաղորդակցութիւն ունին կարմիր ծովի դլխաւոր նաւահանգիստները։ Նաւահանգիստներից նշանաւորները են Մոկկա, Ջիդդա և Լեմբայ։

Արաբիայի առանձին մասերը նկարագրելու համար, կարելի է չորս մասը բաժանել Նորան, արևմտեան, հարաւային, արևելեան ափերը և միջին Արաբիա։ Արաբիային պատկանում է և Սինա թերակղզին։

Ընդհանուր ափը իւր ֆիզիքական յատկութիւններով (դիւրաժանելի ափեր, ճոխ բնութիւն) և քաղաքական նշանակութեամբ (բոլոր Մահմետականների կրօնական կենդրօնը) Արաբիայի ամենալաւ մասը է։ Գրեթէ բոլոր արևմտեան ափը Տաճկաստանի կայսրութեանը է պատկանում։ Այդ ափը երկու փոխադրութիւններ կամ էյալէթ է բաժանվում, — Ենէնն կամ Էզջանիկ Արաբիա, որ գտնվում է արևմտահարաւում, և Հիճազ՝ արևմտա — հիւսիսում։ Հիճազը Եդիպտոսի փոխադրեալ է կախուած. Ենէնին փոքր նշանաւոր է Մոկկա Կարմիր ծովի ափին Լար — էլ — Մանդէբի նեղուցի մօտ՝ ու գեղեցիկ նաւահանգիստ ունի։ Այս նաւահանգստից դուրս տարած ապրանքների մէջ առաջին տեղը բռնում է սուրճը *)։

Հարաւային ափը կոչվում է Հադրամաութ։ Այս մասի մէջ միայն երկու նշանաւոր տեղ կայ — Ադէն փոքրիկ թերակղզին և Պերիմ կղզին։ Առաջինը մնում է Հնդկաց ովկիանոսի մէջ

(*) Մոկկայի սուրճը աշխարհիս մէջ ամենից համեղը և նրբահոտը է. սուրճի բուն տեղը ոչ թէ Արաբիան է, այլ Եգիպտոսի Ենոտիա և Վաֆա երկիրները են։ Երբ և իցէ ժամանակ այդ երկրներից սուրճը Արաբիա են բերել, իսկապես ոչինչ յայտնի չէ, այլ կան միայն մի քանի առասպելաձառն աւանդութիւններ այդ մասին։ Սուրճի ծառը 15-20 արշաւի բարձրութիւն ունի։ Տերևները իւրանց ձևով և մշանշինաւոր կանաչ գոյնով դափնու տերևների նման են։ Տերևները շրջապատում են սպիտակ գեղեցկահոտ ծաղիկներ։ Պտուղը մեծութեամբ, ձևով կեռասի նման է. պտղի մէջ երկու սերմ կայ, որին կոչում ենք սուրճ։ Սուրճի ծառը երկրորդ տարում արդէն պտուղ է տալիս։

Հնձաղի փոքր փոքրերը են Մեխկա և Մեխինէ *) — Արաբական Մահինատ-ալ-Նամբի բառից, որ նշանակում է մարգարէի քաղաք —, Ջիդդա և Լեմբայ։ Առաջի երկուքը ցամաքային են, իսկ վերջին երկուսը ծովափնեայ։ Ջիդդան Մեքկայի նաւահանգիստը է. իսկ Լեմբան-Մեհինէինը։ Արաբական ափի վերայ ամենանշանաւոր նաւահանգիստը Ջիտան է։

(*) Մեխկան Մահմետի ծննդեան տեղը է։ Նորա դրութիւնը և շրջակայքը ուշադրութեան արժանի ոչինչ չունին։ Մեքկան գտնվում է նեղ և աւազոտ հովտում, որ շրջապատած է մերկ ժայռերից, և աւազոտ անապատներից, և եթէ արուարձանները հետը ընդունելու չլինինք, այն ժամանակ քաղաքը շատ փոքր կլինի. շինութիւնների մէջ ուշադրութեան արժանի է միայն մի քառանկիւն մզկիթ. բնակիչների թիւը 30,000 է։ Բայց Մեքկան աշխարհիս նշանաւոր քաղաքներից մին է։ Մահմետականները նորան «Հոգեփոքրի հայր» են կոչում։ Մահմետականների համար Մեքկան առաւել մեծ նշանակութիւն ունի այն պատճառով, որ նորա շինութիւններից մինի մէջ, որ Քեաբէ է կոչվում, գտնվում է միս և քար, որ Մահմետականների համար նուիրական է. ըստ աւանդութեան այդ քարը արքայութիւնից է իջել։ Աւանդութիւնը ասում է որ Գաբրիէլ հրեշտակը այդ քարը Աբրահամի համար ընծայ բերեց երկնքից։ Մահմետականների հակացողութեամբ արքայութիւն գնալու համար՝ բաւական է միանգամ համբուրել այդ քարը։

Քեաբէի մէջը զարդարած է գունդգոյն զորգերով։ Դրսի կողմը ծածկած է մի զորգով, որի վերայ կարած է Մահմետականների կրօնի պիտաւոր պատուիրանները՝ «բացի Ճշմարիտ Աստուծուց ուրիշ աստուած չկայ, և բացի Մահմետ նորա մարգարէից չկայ ուրիշ մարգարէ»։ Տարին մի անգամ միայն բացվում է Քեաբէի դռները։ Այս նուիրական քաղաքը իւրաքանչիւր տարի աշխարհիս ամեն ծայրից գալիս են ուխտաւորներ Քեաբէին երկրպագութիւն տալու։ Քեաբէին երկրպագու ուխտաւորները ճանապարհի ծախսը հանելու համար կրօնական նպատակի հետ միացնում են և վաճառականութեան նպատակը, այս պատճառով Մեքկան աշխարհիս երևելի տնտեսական քաղաքներից մին է դարձել. այս մի և նոյն պատճառով Մեքկայի բնակիչները բոլորը գրեթէ հարուստ վաճառականներ են։

Մեխինէ շրջակայքը և ինքը քաղաքը աւելի գեղեցիկ են քան թէ Մեքկան, Մեխինէն ևս նոյնպէս նուիրական քաղաք է Մահմետականների

Հարաւային ափը կոչւում է Հարաբամուտ։ Այս մասի մէջ միայն երկու նշանաւոր տեղ կայ — Եդէն փոքրիկ թերակղզին և Պերիմ կղզին։ Առաջինը գտնւում է Հնդկաց Ովկիանոսի մէջ, Բաբ-էլ - մանդէբի նեղուցի մօտ, իսկ երկրորդը գտնւում է այդ նեղուցի մէջ։ Երկուսը էլ զեղեցիկ նաւահանգիստներ են։

Եդէնը 1839 թուականից սկսած, իսկ Պերիմը 1857 թ. Անգղիացիների ձեռքն են գտնւում. նոքա այդ նաւահանգիստների մէջ շատ ամրութիւններ շինեցին։ Անգղիայի այդ նաւահանգիստները իւրեանց ձեռքին ունենալով՝ կարող են իշխել Հնդկաց ովկիանոսին և Կարմիր ծովին։ Այդ նաւահանգիստների նշանակութիւնը Սուէիշի ջրանցքի վերջանալով աւելի մեծացաւ։ Այս պատճառով այդ նաւահանգիստները կարելի է Հնդկաց ովկիանոսի Ա՛իբրալդարներ անուանել։ Եդէնի բնութիւնը էլ Ա՛իբրալդարի նման է։ Ա՛իբրալդարի նման այս տեղում էլ բերդ գտնւում է մի թերակղզու վերայ, որ ցամաքի հետ միանում է նեղ և ցած պարանոցով։

Արևելեան ափի այն մասը, որ Հնդկաց ովկիանոսին է պատկանում, Օման է կոչվում։ Այն մասը, որ Պարսից ծոցի ափը է կազմում, բոլորովին անյայտ է։ Օմանի մէջ ծովի ափին գըտնըվում է Մասկատ քաղաքը, ուր նստում է Օմանին և նորա հակադիր ափում գտնուած Պարսկաստանի մի մասի տիրող Թագաւորը՝ որ Իմամ է կոչվում։

Արևելեան ափին պատկանում է և Պարսից ծոցի մէջ գըտնուղ Բաբէյն կոչուած կղզիները։ Այս կղզիների ափերի մօտ բռնում են մարգարիտի գաղտակուրները։ Հատ ժամանակ չէ, որ Անգղիացիները տիրեցին այդ կղզիներին այն նպատակով, որ ծովային վաճառականութիւնը ազատեն ծովային աւազակների ձեռից։

Մէջքէն Աբաբէխան կարելի է երկու մասը բաժանել, Հիւսիսային և Հարաւային։ Հիւսիսային մասը կամ Նէճէդը Արաբական ձիերի և ուղտերի հայրենիքը է *)։

(*) Աբաբէխայի ձիերը աշխարհիս մէջ բոլոր ձիերից նախապատիւ են. նոքա գոված են իւրեանց գեղեցկութեամբ, արագութեամբ և անդամների դիւրակորութեամբ և մեծամեծ նեղութիւններին համբերելովը։ Ո՜ղջը ինչպես բնութեան ամենայն անասուն արևելեան ազգերի համար շատ թանկագին է, անգին է նա մանաւանդ Արաբացու համար, որով նա լրացնում է իւր բոլոր կարիքները. ուղտը Արաբացու համար այն նշանակութիւնը ունի՝ ինչ որ Լապլանդացու համար եղջերուն։ Արաբի գլխաւոր կերակուրը ուղտի կաթը է, կաթից նա չինում է պանիր և իւղ։ Արաբացիները գործ են ածում և ուղտի միսը, մանաւանդ մատաղ ուղտինը, որ նոցա ասելով շատ համով է։ Արաբացու հագուստը ուղտի բրդից է, նորա վաճառականութեան գլխաւոր ապրանքը ուղտի բուրդը է։ Ուղտի մորթուց լաւ կաշի են պատրաստում, աղբը վառելու համար են գործածում։ Բայց գլխաւորն ուղտը կամ դրամագիրը առաւել նշանաւոր է այն պատճառով, որ գործ է ածվում ինչպես բնականին անասուն։ Աւազոտ անապատներում, ուր ոչ մի ընտանեկան կենդանի կարող չէ տանել կլիմայի պայմանները, ուղտը միակ կենդանի է, որ միջոց է տալիս այդ անապատի բնակիչներին հաղորդակցել օտար երկիրների հետ։ Եթէ ուղտը չլիներ, այն ժամանակ այդ անապատների դրացի երկրի բնակիչները ոչ մի կերպով կարող չէին միմեանց հետ հաղորդակցութիւն ունենալ. վաճառականութիւնը կդադարէր և բնակիչները կբարբարոսանային։ Կարծես թէ Արարիչը ուղտին ստեղծել է անապատի համար։ Նա կարող է ոչ միայն երկար ժամանակ ծարաւ մնալ, այլ և միանգամից այնքան ջուր կը խմէ, որ մի քանի օր նորան բաւական է. նորա ստամոքսը չորս բաժանումն ունի, և ամենից մեծ բաժանումը իւր մէջ շատ խուռոչներ ունի, ուր պահում է նա իւր խմած ջուրը. և երբ ծարաւում է՝ այդ ջրի մի մասը ստամոքսից յետ է գալիս որկորը։ Ուղտը այդ յատկութիւնը ունենալովը կարող է երեք կամ չորս օր ջուր չխմել, ամենալաւ ուղտերը մինչև անգամ տասը կամ տասն և երկու օր ծարաւ մնալ։ Բացի դորանից՝ Արարիչը նորան տուել է մի ուրիշ յատկութիւն, այն է ուղտը կարող է ի-

---

Համար, որովհետև նորա մզկիթներից մինի մէջ գտնվում է մարգարէի գագաղը։

Մահմետականները նմանապէս գնում են Մէտինէ, բայց այդ մի անհրաժեշտ հարկ չեն համարում իւրեանց համար. Մէտինէ գալիս են Քեաբի ուխտաւորների միայն երրորդ մասը, այս պատճառով նորա վաճառականութիւնը շատ ծաղկած չէ։

Սինայ Ընդարձակը իւր անունը ստացել է այն լեռներից՝ որոնք գտնվում են նորա հարաւային մասում: Ընդարձակ հիւսիսային մասի նման այս թերակղզին գտնվում է սակաւ անձրևոտ գօտու տակ, ուստի գրեթէ անապատ երկիր է, նորա հողը աւազոտ և քարոտ է, և բուսականութեամբ շատ աղքատ: Ռնիկ բնակիչները Պէդուինները են: Թերակղզու մեծ մասը բաղկացած է Սինայի լեռներից: Գլխաւոր գագաթները են Սինայ և Հորէբ. առաջինը երկու վերստ բարձրութիւն ունի, իսկ երկրորդը հարիւր սաժէնով փոքր է առաջինից: Սինայն այն լեռը է, ուր Աստուած Մովսէսին տուեց տասն պատուիրանը: Սինայ լեռը Մահմետականների համար ևս նուիրական տեղ է. ըստ աւանդութեան այս տեղ Մահմէդը քառասուն օր ծոմ է պահել: Պէդուինները երկրպագութիւն են տալիս Մահմէդի շաւիղներին, որ գտնվում են այդ սարի վերայ. այսպէս ուրեմն այս լեռը նուիրական է Քրիստոնեաների, Հրէաների և Մահմետականների համար: Այս լեռի ստորոտում գտնվում է սուրբ Պատարինէի վանքը, որ շրջապատած է ամուր պարսպով: Քաղաքական կողմից Սինայ Թերակղզին Տաճկաստանի կայսերութեան մի մասը է կազմում:

մանալ թէ շրջակայ տեղերում ջուր կայ թէ ոչ, և եթէ սաստիկ ծարաւ է՝ ճանապարհից շեղուելով շուտով վազում է և խմում, այս կերպով ազատում է թէ իւրեան և թէ իւր տիրոջը ծարաւութիւնից: Ուղտը կարող է երկար ժամանակ քաղցած մնալ և այդ ժամանակ կերակրվում է նա իւր ողնի մէջ եղած իւղով, այնպէս որ եթէ ուղտը երկար ժամանակ քաղցած մնայ՝ անհետանում է ողնը բոլորովին, և ընդհակառակը՝ եթէ նորա կերակուրը առատ է և պարարտ, այն ժամանակ ողնը սաստիկ հաստանում և մեծանում է: Այդ գեղեցիկ յատկութիւններին պէտք է աւելացնել և այն, որ ուղտը շատ արագընթաց կենդանի է և մինչև անգամ կարող է մի քանի օր անդադար վազել: Սակ ուղտը եթէ բեռը շատ ծանր չէ, 24 ժամ առանց կերակուրի կարող է անդադար վազել:

Այս յատկութիւնների պատճառով ուղտը անապատի նաւ է կոչվում: Տար երկիրներում ուղտը միևնոյն նշանակութիւնը ունի՝ ինչ որ եղջերուն

ԸՍԻԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Ընդհանուր գիտելիք: Ասիական Տաճկաստանի ծովային սահմանները են Պարսից ծոցը, Միջերկրական, Մարմարեայ և Սև ծովերը, ցամաքայինները՝ Պարսկաստանը, Արաբիան, Սինայ Թերակղզին և Եգիպտոսը: Ընդհանրապէս ասելով ծովային սահմանները յաջողակ են, մանաւանդ Միջերկրական ծովի ափերը և Սիրայի բարձրաւանդակութեան ստորոտում հին Փիւնիկէի ափերը. ցամաքային սահմանները ընդհակառակը Ռուսաստանի և Պարսկաստանի սահմաններում մեծամեծ բարձրաւանդակութիւններ և լեռնային շղթաներ ունենալով, Արաբիայի և Եգիպտոսի սահմանները աւազոտ անապատներ լինելով՝ աւելի դժուարամերձենալի են: Ասիական Տաճկաստանի տարածութիւնը 25,000 քառ. մղոն է. այս թուի մէջ չէ գտնվում Հնձասի և Եգիպտոսի տարածութիւնը: Ռնակիչների թիւը 16 միլիոն է: Ռնակիչները պատկանում են Կովկասեան ցեղին *):

հիւսիսային և ցուրտ երկիրներում: Այս պատճառով արտաքսուհին իւր մարդին սիրելու և փայփայելու ժամանակ՝ նորան ուղտ է կոչում, և մինչև ժամանակ ողբալով ասում է, "ով դու իմ տան ուղտ, դուն մեռար, ոմ պէտք է այսուհետև իմ բեռը տանի":

(*) Ռնակիչները են Տաճկներ — Օսմանցիներ, որոնք տիրապետող ազգն են կազմում, և մեծ մասամբ քաղաքների մէջ են բնակվում: Թուրքմաններըը մեծ մասամբ գտնվում են փոքր Ասիայի բարձրաւանդակութեան վերայ և թափառական կեանք են վարում: Քուրդերը Իրանի և փոքր Ասիայի բարձրաւանդակութեան վերայ Մեսոպատամիայի (Միջագետքի) մօտերին՝ մասամբ թափառական և մասամբ հաստատ բնակութիւն ունին, ձմեռը Հովիտներում են, իսկ ամառը լեռների վերայ: Հայերը Հայաստանում և իւրեանց հայրենիքից դուրս գտնվող քաղաքներում են բնակվում: Ասիայի ամենաճարտար ժողովուրդը են: Ցոյները փոքր Ասիայի ծովափանց մօտ, և ծովեզերեայ կղզիներում: Արաբ ու Պէդուինները թափառում են Միջագետքի անբնակ եր-

Ասիական - Տաճկաստանի նահանգները են, Միջագետք. այս երկիրը իւր անունը ստացել է իւր բնակիչների անունից և գտնվում է Իրանի և Հայաստանի բարձրաւանդակութիւնների վերայ Մեսոպատամիայի մօտ։ Գլխաւոր քաղաքը է Դիարբեքիր կամ Տիգրանակերտ՝ Տիգրիսի ափին, անուանի է իւրեան սեկիրով (կաշեայ ապրանք)։

Հայաստանը՝ Հայկական լեռնային հանդոյցը ունի բռնած։ Երևմտեան Ասիայի երկիրներից ամենաբարձրը է. այս երկրում Երասխի հովտի հարաւային մասում Տաճկաստանի, Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանում գտնվում է արևմտեան Ասիայի ամենաբարձր լեառը - Երարատը, որ $4^1/_2$ վերստից աւելի բարձրութիւն ունի, ուստի նորա գագաթը մշտնջենական ձիւնով է ծածկուած։ Այս երկրից սկսվում են Եփրատ և Երասխ ու Կուր գետերը։ Վաղաքներից նշանաւորը է Էրզրում կամ Կարինը։

Մեսոպատամիա (յունական բառ է և նշանակում է Միջագետք) կամ Ալճեզիէ (արաբերէն է և նշանակում է կղզի). այս

կիրներում և Սիրիայի բարձրաւանդակութեան արևելեան կողմում։ Տիգրիսը Սիրիայում և Ասիրիայի լեռների վերայ թռուով շատ փոքր են, բայց յայտնի են իւրեանց պատերազմասէր բնաւորութեամբ։ Ասիական Տաճկաստանում կան և Եզդիներ և Հրեաներ։ Օսմանցիները, Թուրքմէնները, Արաբները և Քուրդերի մի մասը Մահմետական են։ Քուրդերի միւս մասը, Հայերը և Յոյները Քրիստոնեաներ են. Տիւրքմէնները առանձին կրօն ունին, որ Մահմետականութեան նման է։ Այդ ժողովուրդներից մի քանիսը ինչպես Քուրդերը, Բեդուինները, Դրուզները միայն անունով Սուլթանի իշխանութեան ներքոյ են, ուրիշները ինչպես Թուրքմանները միայն նշանակեալ փոքրիկ հարկ են տալիս։ Քուրդերը, Թուրքմէնները, Դրուզները իւրեանց առաջնորդները ունին, որոնց և իշխանութեանը են հպատակում։ Բնակիչների այն բազմաթիւ մասը, որ զբաղնվում է Սուլթանի իշխանութեան տակ, նահանգապետ փաշաների շահասիրութեան և ագահութեան պատճառով շատ նեղութեան մէջ են գտնվում. փաշաների այս վարմունքը ոչնչացնում է բոլորովին երկրի ճար-

երկիրը այսպէս է կոչվում, վասն զի գտնվում է Եփրատ և Տիգրիս գետերի մէջ տեղը *)։

Վաղաքներից նշանաւորները են՝ Մոսուլ և Պաղդատ՝ Տիգրիսի ափերի վերայ, Պասրա՝ Շատ-էլ-Արաբի վերայ։

տարութիւնը։ Այս պատճառով Ասիական - Տաճկաստանը՝ որ երբեմն ծաղկեալ երկիր էր, այժմ շատ տեղեր միայն ամայի աւերակների է նմանում։

(*) Մեսոպատամիայի մակերևոյթը ցած դրութիւն ունի և գտնվում է այն գօտու տակ՝ ուր ամառը անձրևը շատ հազուագիւտ է, որ մի կողմից այս հանգամանքը և միւս կողմից հողի յատկութիւնը (աւազոտ) պատճառ են գարձել, որ նա ամեն տեղ արգաւանդ չէ. արգաւանդ երկիրները գտնվում են միայն գետերի ափերին։ Այժմ ամենարգաւանդ երկիրը Շատ-էլ-Արաբի հովիտը է։ Այդ հովտում ամեն տեղ գտնվում են արմաւենիք և մարգագետիններ։ Մինչև տաճիկների ձեռը անցնելը այս երկիրը շատ արգաւանդ և բարեբեր էր. այս տեղում գտնվում էին բազմաթիւ ջրանցքներ, լճեր և շատ բազմամարդ և վաճառաշահ քաղաքներ, մինչև անգամ Պաղեստինի վաճառականները այս երկրից հաց էին տանում։ Այսպէս ուրեմն զարմանալու չէ, որ Սուրբ Գիրքը Տիգրիս և Եփրատ գետերի միաւորութեան տեղը մարգկութեան խանձարուր է անուանում. նոյնպէս զարմանալու չէ, որ Մեսոպատամիան արևելքի և արևմուտքի ազգերի մէջ շատ անգամ արիւնահեղ կռիւների պատճառ է գարձել։ Մեսոպատամիան այժմ միայն իւր նախկին փառքի ստուերը է համարվում. Նորա քաղաքները կամ բոլորովին կործանուած են, կամ թէ մնացել են մինչև այժմ. կորցրին իւրեանց նախկին շքեղութիւնը և պերճութիւնը, հարստութիւնը և բնակիչների բազմութիւնը։ Այժմ Նորա միջին երկիրները անապատներ են գարձած, ուր թափառում են աւազակների խումբերը, վայրենի կենդանիներ, մերկեսի խումբեր և տօթակէզ քամիներ։ Բայց այս երեւոյթը նշանաւոր է ոչ թէ իւր աշխարհագրական դրութեամբ, որովհետև այս գաշտավայրը տարածվում է Պարսից ծոցից սկսած գրեթէ մինչև Միջերկրական ծովը։ Եփրատ և Տիգրիս երկու նաւագնաց գետերը աւելի նշանակութիւն են տալիս Նորան, որը առաւել կատարեալ երը գտնս բերութեան Եփրատի նաւագնացութիւն, և այն երկաթուղու նախագծերը, որով պէտք է միանայ Եփրատի ամենամեծ գալարը Միջերկրական ծովի հետ։ Այն ժամանակ բնութեան սկսածը կվերջացնէ մարդ՝ այն է կմիացնէ Միջերկրական ծովը, հե-

Մոսուլը իր վաճառականութեամբ և իր ձեռագործնեբով երբեմն արևելքի նշանաւոր քաղաքներից մին էր. նշանաւոր էր նորա կէսիան (musseline):

Պաղդադը երբեմն գանվում էր Տիգրիսի երկու կողմում և հինգ հարիւր տարի արաբական ակրութեան գլխաւոր քաղաքը էր, Խալիֆների վերջին մայրաքաղաքը, հնդկա-լեբանանի վաճառականութեան և արաբական գիտութիւնների կենդրոնը էր:

Պասրա՝ Շատ-էլ-արաբի արևմտեան ափի վերայ, խալիֆների ժամանակ համաշխարհական վաճառականութեան կենդրոն էր համարվում Հնդկաստանի և Եւրոպայի մէջ:

Մեսոպատամիայի հին քաղաքների աւերակներից նշանաւորները են Նինո-էի աւերակները - Մոսուլի հանդէպը, Խաբեղանի աւերակները - Պաղդադից փոքր ինչ հարաւ, Պէլոֆոնի և Սելևկիայի աւերակները - Պաղդադի շրջակայքի հարաւում Տիգրիսի վերայ:

Սէրիան տարածվում է Միջերկրական ծովափանց երկայնութեամբ Եգիպտոսի և Սինայ թերակղզու սահմաններից սկսած դէպի հարաւ և դէպի հիւսիս մինչև փոքր Ասիայի սահմանները*): Սիրիան պատմական կողմից՝ երիք գլխաւոր մաս է բաժանվում, Պալէսթին՝ որ նորա $^1/_3$ մասը է կազմում և դանըվում է հարաւային կողմում մինչև Հերմոն լեառը. բուն Սիրիան Փիւնիկիի հետ կազմում է մնացած $^2/_3$ մասը:

տևաբար և Եւրոպան Պարսից ծոցին, ուրեմն և Հնդկաց օվկիանոսի հետ: Այս ճանապարհը Եւրոպայի և Հնդկաստանի մէջ եղած ճանապարհից ամենակարճը կլինի:

(*) Սիրիան իր մէջ պարունակում է Սիրիայի բարձրաւանդակութիւնը և մի նեղ բայց երկայն ստորավայր՝ որ գտնվում է բարձրաւանդակութեան և Միջերկրական ծովի մէջ տեղը: Մի և նոյն տեսակ մի նեղ հովիտ բարձրաւանդակութեան երկայնութեամբ նորա մի ծայրից մինչև միս ծայրը է տարածվում. այս հովտի հարաւային մասը ծովի մակերևոյթից

Փէնիկէ կոչվում է ծովափնեայ նեղ երկիրը, որ տարածվում է Լիբանան շղթայի երկայնութեամբ: Այդ երիք մասերի մէջ եղած գլխաւոր զանազանութիւնը յետագան է. Պաղէսթինը շատ արդաւանդ և բարեբեր է, բայց մի և նոյն ժամակ զըժուարամերձենալի: Փէնիկէն թէպէտ արդաւանդ և բարեբեր չէ, սակայն բազմաթիւ նաւահանգստներին պատճառով շատ դիւրամերձենալի է: Բուն Սիրիայն երկու կողմից էլ այդ երկու մէջ տեղը է բռնում. բայց նա իր մէջ Օրոնտը ունենալով և Միջագետքին ամենամերձ երկիրը լինելով ամենաբնական առևտրական և ժողովրդական ճանապարհը է Միջագետքի և Միջերկրական ծովի մէջ:

$^1/_3$ վերստ ցած դրութիւն ունի: Բացի դրանից՝ Սիրիայի բարձրաւանդակութիւնը ըստ լայնութեան ընդհատվում է շատ հովիտներից, որոնցից մի քանիսի բերանը դարձած է դէպի Միջերկրական ծովը, իսկ միւսներինը դէպի նորա երկայնութեամբ վերոյիշեալ հովիտը: Բայց այդ հովիտներից ոչ մինը չէ ձգվում բարձրաւանդակութեան լայնութեան մի ծայրից մինչև միւս ծայրը: Սիրիայի բարձրաւանդակութիւնը առանձին լեռների և լեռնային շղթաների հիմն է կազմում, որոնց գագաթների վերայ բաւականին երկար ժամանակ ձիւնը մնում է: Այդ լեռնային շղթաներից ամենաբարձրները գտնվում են հիւսիսում և են Սպիտակ լեառը և Անտիլիբանանը. այս շղթաները ձգվում են հովիտի եզրների երկայնութեամբ, հարաւում միմեանց հետ միանալով կազմում են Հերմոն լեռնային գոտին, որ ընդմիջում է նորա երկայնութեամբ ձգվող հովիտը: Հերմոնի բարձրաւանդակութիւնը $2^1/_2$ վերստ է և գագաթը ծածկուած է մշտնջենական ձիւնով, այս պատճառով Հերմոնը Սիրիայի ջրերի գլխաւոր ջրամբարը է համարվում. այս տեղից սկսվում է Յորդանանը, որ իր երիք լճերի հետ միասին ոռոգում է նորա երկայնութեամբ տարածվող հովտի հարաւային մասը: Լիբանանի և Անտիլիբանանի ջրերը թափվում են Օրոնտին մէջ, որ ոռոգում է նորա երկայնութեամբ տարածվող հովտի հիւսիսային մասը և յետոյ թափվում է Միջերկրական ծովը: Որովհետև Սիրիան գտնվում է այն գօտու տակ, ուր ամառը անձրև չէ լինում, ուստի վերոյիշեալ լեռները և մանաւանդ Հերմոնը շատ կարևոր են այդ երկրի համար, իսկ հովիտները մանաւանդ Յորդանանինը այդ երկրի ամենագո-

Ը). **Պաղեստին:** Պաղեստինի արդարանդութիւնը և մեկուսի դրութիւնը միակ պատճառ էին, որ նորա նախկին բնակիչները - Հբէանները երկար ժամանակ կրօնական և քաղաքական անկախութիւն ունէին: Պաղէստինի մեկուսի դրութիւնը ծագում է նորանից որ, նորա ցամաքային սահմանները արևել-

---

ւանդ մասերը են կազմում. Սիրիայի հարաւային մասը—Պաղեստինը բոլորովին համապատասխանում է «ուրբ դրքի ապածին, «երկիր՝ ուր մեղր և կաթն բղխէ»: Բայց ցաւալին այն է, որ Սիրիայում ևս Մեսոպատամիայի նման միայն փառաւոր ժամանակուայ աւերակների հետքերը էին մնացել: Սէրիան նշանաւոր է ոչ այնքան էր արքեաանդրութեամբ, այլ աշխարհագրական դրութեամբ և քեղեցիկ նաւահանգիստներով: Սիրիան Միջագետքին դրացի լինելով՝ Եւրոպայի և Հնդկաստանի մէջ եղած ամենաբնական, յարմար և կարճ ճանապարհի վերայ է գտնվում: Միջագետքի և Միջերկրական ծովի և Սիրիական ափանց բնակիչների մէջ վաճառականութիւնը միշտ կարաւանով է կատարուել և կատարվում. հին ժամանակները կարաւանները գլխաւորապէս Փիւնիկէ էին գնում. Այն ժամանակը Փիւնիկէն համաշխարհական վաճառանոց էր Հնդկաստանի, Արաբիայի և մինչև Աղանտեան Ովկիանոսը տարածուղ երկիրներէ համար:

Բայց երբ Փիւնիկէն Նեղոսի և Եփրատի վերայ գտնուող տէրութիւնների համար կռուի առարկայ դարձաւ, այն ժամանակ վաճառականութիւնը անցաւ Սիրիայի հիւսիսային մասը, Օրոնտի բերանը, այն է Սելևկիա աշխարհը, և նորա մայրաքաղաք Անտիոքը այդ վաճառականութեան կենդրոնը դարձաւ: Այս վերջին ճանապարհը աւելի յարմար և կարճ էր, այս տեղից անցնում էին արևելեան Ասիայի ապրանքը, կարաւանները և ղօրքերը: Սելևկիայի անկմանից յետոյ վաճառականութիւնը անցաւ Սիրիայի արևելեան բարձրաւանդակութեան վերայ բնակուղ ժողովրդի ձեռը, այդ ժամանակից Սիրիայի բոլոր նաւահանգիստները կորցրին բոլորովին իրենց նշանակութիւնն: Թէպէտ նոցանից մի քանիսը (Պէյրութ, Եաֆա և ուրիշները) այժմեան ժամանակ մնացել են՝ այն ևս շատ փոքր նշանակութիւն ունին. այժմ վաճառականութեան պլխաւոր կենդրոնը է Մեքկան: Այժմեան ժամանակ վաճառականական կարաւանը Եփրատից գնում է յետագայ կերպով. առաջ Դամասկոս, այս տեղից կամ Պէյրութ կամ թէ Սէյդէդից և Բեյրութից անցնելով գնում է Եաֆա, կամ թէ Երուսաղէմից գնում է Եփրա և Մեքկա. այս ճանապարհի կենդրոնը Դամասկոսը է:

քում և հարաւում աւազոտ անապատներ են, իսկ ծովային սահմանները՝ յարմար և դիւրամերձենալի նաւահանգիստներ չունին. ծովային հոսանքները Միջերկրի ափերից, մանաւանդ Նեղոսի բերանից բերում են միշտ աւազ և սիկ, որոնք մնում են Պաղէստինի ափերի մօտ, իսկ դէպի հիւսիս այդ հոսանքները միայն պարզ ջուր են տանում. ահա այս պատճառով այս տեղ գտնվում է միայն մի լաւ նաւահանգիստ - Եաֆա, որ Երուսաղէմի վաճառականական նաւահանգիստ է համարվում:

Հին ժամանակները Պաղեստինը չորս մաս էր բաժանվում, նորանից մին - Պէրէան, որ Երուսաղէմի հովտից դէպի արևելք է գտնվում, ամենից անկեր մասը լինելով, երբէք նշանաւոր չէ եղած, այս պատճառով նորա քաղաքներն աւերակները հետաքրքիր և դրաւիչ չեն, մնացեալ երեք մասը Յորդանանի և ծովի մէջ գտնուած երկրներն են, որոնցից հարաւայինը կոչվում է Հրէաստան, միջինը — Սամարիա, հիւսիսայինը Գալիլէա:

Նշանաւոր քաղաքները: Հրէաստանի մէջ բացի Եաֆայից նշանաւոր են Ռէքէրն, որ բաւականին մարդաշատ (10,000 բնակ.) քաղաք է, որովհետև Դամասկոսից Մեքկա գնալու ճանապարհի վերայ է գտնվում. այստեղ գտնուում Երրահամ, Իսահակ, և Յակոբ նահապետների գերեզմանները: Երեղեհեմ Հրէական լեզուով նշանակում է Հաշտ տուն, Երուսաղէմից երկու ժամուայ հեռաւորութիւն ունի, և որովհետև վաճառականական ճանապարհի վերայ չէ գտանվում, ուստի ոչ հարուստ է և ոչ բազմամարդ, բայց նշանաւոր է Քրիստի ծննդեան տեղը լինելով: Այն տեղ, ուր ծնեց Քրիստը, Հելենէ թագուհին մի տաճար շինեց Աստուածածնի անունով, աշխարհիս ամեն կողմերի քրիստոնեանները գալիս են այս տեղ երկրպագութիւն տալու: Տաճարը և նորա մէջ եղած Քրիստոսի ծննդեան այրը բաժանած է Հայերի, Հռովմէական կաթոլիկների և Յոյների մէջ: Երեռաղեմ Հրէական լեզուով նշանակում է աշխարհի քաղաք, Պաղեստինի մայրաքաղաքն էր, այնպիսի տեղում է շի-

նած, որ շատ դժուարամերձենալի է. այս իսկ յատկութեան պատճառով էր նա մայրաքաղաք ընտրած, ահա այս մի և նոյն պատճառով էր, որ թշնամիները քանի անգամ կործանեցին, աւերեցին այդ քաղաքը, այնու ամենայնիւ նորա բնակիչները միշտ նորոգում և կրկին շինում էին նորան մի և նոյն տեղում: Երուսաղէմը գտնվում է մի թերակղզու վերայ, որ ծովի մակերևոյթից կէս վերստ բարձրութիւն ունի և կազմուած է երկու գետակներով — Կեդրոն արևելքում և Գեհոն արևմուքում, որոնք քաղաքի հարաւային մասում միանում են միմեանց հետ: Յովսափաթի և Էննոմի ձորերը, որ կազմուած են այդ գետակներով՝ շատ խոր են և զառիվայր ափեր ունին, այս պատճառով Երուսաղէմը երեք կողմից — արևմուքից, հարաւից և արևելքից բոլորովին անմատչելի է. իսկ հիւսիսային կողմից հոյակապ պարսպով է պատած քաղաքը, միայն հիւսիսային կողմից կարող էր ընդարձակվիլ և մեծանալ: Երդարև քաղաքի հիւսիսային կողմում են գտնվում Ակրա և Վեզեթա նոր մասերը, այն ինչ հին մասերը Սիօն և Մօրիա գտնվում են հարաւային կողմում: Ամբողջ քաղաքը բաժանված է Մահմետականների, Քրիստոնեաների, Հայերի Հրեաների և Ափրիկացիների թաղերի. այս թաղերից ամենամեծը մահմետականներինն է: Բնակիչների թիւը 17000, որոնցից 7000 Հրեաներ են. մահմետականները ղօրքի հետ միասին 6000 են, իսկ բոլոր Քրիստոնեաները միասին 4000: Մեծ մասը յոյներ են: Քրիստոսի գերեզմանը գտնվում է քաղաքի արևելահիւսիսային մասում — Քրիստոնեաների թաղում, ուր շինած է հոյակապ տաճար: Տաճարի մէջ գտնվում է Քրիստոսի խաչելութեան տեղը և գերեզմանը: Տաճարի մէջը և նորա շրջակայքը բաժանած են քրիստոնեաների մէջ. Երուսաղէմի շրջակայքում գտնվում են — Ձիթենեաց լեառը, որ Երուսաղէմից դէպի արևելք է գտնվում, Յովսափաթի ձորի յետևում, այդ լեռան սոսրոտում գտնվում է Գեթսեմանի պարտէզը, ուր Յուդան մատնեց Փրկչին, այս տեղ է Տիրամօր գերեզմանը: Գալիլեայում նշանա-

ւոր քաղաքները են Ակկա ծովափնեայ ամուր քաղաքը, հին ժամանակուայ Պտղոմայիդան է. Նազարէթ, ուր կենում էր Փրկիչը իւր մանկութեան ժամանակ:

Ե) **Փիւնիկէ**: Հին Փիւնիկէի գրեթէ բոլոր քաղաքները (Տիւրոս, Սիդոն, և Տրիպօլիս) այժմ աննշան և կիսաւեր են, բացի հին Բէրիթից կամ այժմեան Պեյրութից, որ Սիրիայի գլխաւոր վաճառաշահ քաղաքն է — Դամասկոսի մօտ գտնուելով՝ նորա նաւահանգիստը է դարձել:

Զ) **Ռուն Սիրիա**: Ռուն Սիրիայում նշանաւոր են միայն երկու քաղաք — Հալէպ և Դամասկոս *), ճանապարհները կամ կործանուած են կամ կորցրել են իւրեանց նշանակու-

---

(*) Հալէպը իւր աշխարհագրական դրութեամբ Դամասկոսից մեծ նշանակութիւն ունի, որովհետև Օրոնտ գետի բերանը Եփրատ գետի հետ միացնող ճանապարհի վերայ է գտնվում. բայց Բեդուինների յարձակմունքները և Քիւրդերի աւազակութիւնները արգելք են դառնում նորա վաճառականութեան զարգանալուն և հարստանալուն: Բաւական բազմամարդ քաղաք է (100 000 բնակիչ):

Դամասկոսը Սիրիայի առաջին վաճառաշահ քաղաքը է: Մի քանի վաճառականական կարաւանները Միջերկրական ծովի նաւահանգիստները գնալու համար յարմար և անվտանգ ուղղակի ճանապարհ չունենալով՝ ստիպուած են անցնել Դամասկոսի միջով, որից հետէ չէ և Պէյրութը: Իսկ ինքը Դամասկոսը հաղորդակցութիւն ունի Պաղեստինի միջնորդութեամբ մահմետական նուիրական քաղաքների մանաւանդ Մէքկայի հետ:

Երկու հազար ուղտ Եւրոպական և Դամասկոսի ապրանքը տանում են Արաբիա, և մի և նոյն կերպով բեռնաւորուած յետ են դառնում այն տեղից: Այս վաճառականութեան պատճառով Դամասկոսի բնակիչները (100 000) գլխաւորապէս պարապում են վաճառականութեամբ. այս տեղ կան նշանակէս և շատ գործատուններ:

Բալբեքի աւերակները գտնվում են Սիրիայի այն մասում, որ հին ժամանակներում Պէյօ-Էրէա, այսինքն Հոր Սէրէա էր կոչվում և գտնվում է Լիբանանի և Անտիլիբանանի մէջ տեղը: Այդ քաղաքի աւերակներից եւս երիկը են Արեգական տաճարի մեծագործները:

թիւնը. այդ աւերակներից ուշադրութեան արժանի են Բալբէկ կամ Պեէլբէկ և կամ Պալբէկ աւերակները:

Փոքր Ասիան կամ Անատօլիան բարձրաւանդակ երկիր է: Այս բարձրաւանդակութեան արևմտեան մասում գտնվում են բաւականին խոր երկայն հովիտներ, իսկ միացեալ երիք կողմերը շրջապատած են լեռնային շղթաներից, որոնց ներսի կողմերը շեղուած են, իսկ արտաքինները գահավէժ: Դոցանից հիւսիսային և հարաւային շղթաների ստորոտները մեծ մասամբ տարածվում են մինչև ծովը և շատ սակաւ տեղ այդ ստորոտների և ծովերի մէջ ծովափնեայ նեղ երկիրներ կան: Փոքր Ասիայում բացի Էրմէնէ պլեատոր գագաթից, որ բարձրաւանդակութեան կենդրոնումն է գտնուած, կան շատ ձիւնապատ գագաթներ մանաւանդ հարաւային շղթայում: Բայց այդ ձիւնապատ գագաթները շատ սակաւ օգուտ են տալիս եղ երկիրներին, որովհետև ոչ թէ կենդրոնական լեռներին են պատկանում, այլ ծովեզերեայ լեռներին և դոցա ձիւների հալուելուց յառաջացած ջրերը կամ սրընթաց հեղեղներ կազմելով իսկոյն ծովը են հոսում, և կամ Իրանի և Արևելեան Ասիայի բարձրաւանդակութեան ջրերի նման երկրի ներսերը գնալով՝ ապի լճեր են կազմում: Այսպէս ուրեմն չնայելով Փոքր Ասիայի ընդարձակ տարածութեանը և ձիւնապատ լեռներին, նա ոչ մի նաւագնաց գետ չունի: Երգաւանդութեան և կլիմայի կողմից ամենալաւ երկիրները գտնվում են բարձրաւանդակութեան երկայնութեամբ ձգուող արևմտեան երկայն հովիտներում. նոցանից ամենանշանաւորը Պրուսայինը է (փոքր Ասիայի այգին). բայց Փոքր Ասիայի գլխաւոր նշանակութեան պատճառը նորա աշխարհագրական դրութիւնը, նաւահանգիստները և հարաւային Եւրոպայի թերակղզիների նման լինելը է: Փոքր Ասիան այդ կղզիների նման մի և նոյն աստիճանի տակ է գտնվում և մակերևոյթի կազմուածքի կողմից ևս մեծ նմանութիւն ունի. իսկ այդ հանգամանքներից բնականաբար հետևում է բոյսերի և կենդանիների նմանութիւնը: Փոքր Ասիան հարաւային Եւրոպայի նման լինելով, միջնորդ դարձաւ աշխարհիս երկու մասերի հաղորդակցութեանը, ահա սորա համար Փոքր Ասիան կոչվում է կամուրջ լուսաւորութեան, որ տարածուեցաւ առաջ արևելքից դէպ արևմուտք, իսկ յետոյ ընդհակառակը: Հին և միջին դարերում երբ նաւագնացութիւնը դեռ ևս զարգացած չէր, երկար ժամանակ ստպարէզ էր գտնվել Ասիայից Եւրոպա և փոխադարձ գնացող ազգերի համար: Նաւագնացութիւնն զարգանալով Փոքր Ասիան կորցրեց իւր նախկին նշանակութիւնը, այնուհետև Ասիայից Եւրոպա գնալու համար անցնում էին Սիբիրյով (ծովային ճանապարհ), այն ինչ Փոքր Ասիան ցամաքային և բաւական դժուար ճանապարհ է:

Փոքր Ասիայի քաղաքներից առաւել նշանաւորներն են Զմիռնիա, որ արշիպելագոսի ծոցերից մինի մօտ է գտնվում, իւր նշանակութեամբ առաջին քաղաքը է, 150,000 բնակիչ ունի:

Տրապիզոն՝ Սև ծովի մօտ՝ նշանաւոր է իւր դրութեամբ, որովհետև սա Սև ծովի և Պարսկաստանի մէջ գտնուող ամենակարճ վաճառականական ճանապարհի ծայրումը է: Այս պատճառով Սև ծովի նաւագնացութիւնն զարգանալով կենդրոն դարձաւ Սև ծովի ափի երկրների համար: Այս քաղաքը ծաղկելով, ծաղկեցան և այն քաղաքները (Էրզրում, Թաւրիզ) որոնք գտնվում են Պարսկաստան գնալու այդ ճանապարհի վրայ:

Տարսոս-ըչայ աւերակները Դամասկոսից դէպի հիւսիս են գտնվում, արդաւանդ ովազիսի մէջ: Ծոյները այդ քաղաքին Պալմիրա այս ինքն արմաւենու քաղաք էին կոչում, որովհետև շրջակայքում արմաւենիները շատ կան: Կարծում են որ Տադմուրը Սողոմոնի շինածը է, նա հին ժամանակները յայտնի էր իւր վաճառականութեամբ, բայց զանազան քաղաքական պատճառների համար Հռովմայեցիները կործանեցին այդ քաղաքը: Բազմաթիւ աւերակներից ամենանշանաւորը է արեգական քառանկիւնի տաճարը, իւրաքանչիւր կողմի երկայնութիւնը 100–107 սաժէն է:

Պ ը ո ա ա՝ նշանաւոր է իւր դրութեամբ, գտնւում է Փոքր Ասիայի հովիտներից ամենալայնատարածի և ամենադիւցիի մէջ։ Սորա մօտերում գտնւում են ծովի փրփրի հանքերը, որոնցից ծխափողներ են շինում։ Ընգ ո ր ա կամ Ընկ ո ր ա, անուանի է սորա այծերի բուրդը։

Փոքր Ասիային պատկանում կղզիները երբեմն շատ մշակած էին, բայց երբ դուրս բնակիչները, որոնք յունական ծագում ունէին, ազատութիւն ձեռք բերելու նպատակաւ սկսեցին պատերազմել տաճկաց դէմ, այնուհետև այդ կղզիներից շատերը բոլորովին ամայացան։ Երևելիներն են Մ ի տ ի լ ի ն է, որ հին Լ ե ս բ ո ս է։ Վ ր ո ս կղզիներից ամենահարուստը և բազմամարդը է (150000 բն.)։ նշանաւոր է մաղտաքիա (պիտակը)՝ որի խեժը շատ նշանաւոր է, և որին ծամում են արևելեան ազգերը առաւօտները պահպանելու համար։ Ս ա մ ո ս՝ իւր համար առանձին Յոյն իշխան ունի, որ Սուլթանին հարկատու է։ Հ ո ւ ր ո ս՝ համանուն գլխաւոր քաղաքով, ուր գտնւում է Տաճկաստանի նաւատորմիղը։ Կ ի պ ր ո ս այս ինքն (պղնձիա)։

Ա Փ Ր Ի Կ է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔԸ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ։

Ափրիկէի անունը ծագել է Փիւնիկեցիների ,, Փրիգի ,, բառից, որ նշանակում է պատուղ, որովհետև նոքա այս երկրի հիւսիսային ափերում գաղթականութիւնները հիմնելով, տեսան որ շատ պտղատու երկիր է։

Դ ի ր ք ը։ Ափրիկէի ամենահիւսիսային ծայրը - Ռ ա ն կ ո (սպիտակ) գլուխը հասնում է մինչև 37° հիւսիսային լայնութեան. ամենահարաւայինը Լ ա գ ո ա ս (ազաղանց) գլուխը գրեթէ մինչև 35° հարաւային լայնութեան է հասնում. արևմտքում Կ ա ն ա ղ գ լ ո ւ խ գրեթէ մինչև առաջին միջօրէականին է հասնում։ Իսկ արևելքում Գ ո վ ա ր դ ա ֆ ո ւ հի գրեթէ մինչև 70° արևելեան երկայնութեան է հասնում, ուրեմն Ափրիկէն մեծ մասամբ Հ ր ե գ ե լ գօտու տակ է գտնվում։

Ս ա հ մ ա ն ը։ Ափրիկէի ծովային սահմանները են, հիւսիսում՝ Միջերկրական ծովը, արևմտքում – Ա տ լ ա ն տ ե ա ն Ովկիանոսը, արևելքում - Հ ն դ կ ա ց Ովկիանոսը և Կ ա ր մ ի ր ծովը։ Հ ա մ ա փ ա չ ի ն սահմանները են Սուէզի պարանոցը։ Ափրիկէին շրջապատող ջրերը գրեթէ ոչ մի տեղ ծովերը չեն կազմում, այս պատճառով նորա միջին երկիրները աւելի մեծ դժուարութեամբ հաղորդակցութիւն ունին ծովերի հետ քան թէ Ասիայում։ Ուրեմն այս կողմից Ափրիկէն բոլորովին Եւրոպային հակառակ կերպարանք ունի։ Ափրիկէի ափերը յետագայ յատկութիւն-

նները ունին։ Հիւսիսային մասերը աւազոտ և զառիվայր են։ Երևմտեան ափերը կանաչ գլխից սկսած մի և նոյն տեսարանը են ներկայացնում։ Կանաչ գլխից դէպի հարաւ ափերը բարձրաբանդակ դրութիւն ունին, և բաւականին յարմար են նաւաշինարանութեան համար։ Բայց Նէփրայ և Քարէյ-օսայ գլուխները մէջ շատ ապառաժուտ և քարքարոտ են։

Երևելեան ափերը Հասարակածից հարաւ աւազոտ և զառիվայր ձահճային են և շատ կորաղեան խութեր ունին. նաւահանգիստները շատ սակաւաթիւ են. Հասարակածից հիւսիս մինչև Քար-էլ-Մանդէրի նեղուցը բարձր են և մի քանի յարմար նաւահանգիստներ ունին. այս նեղուցից դէպի հիւսիս կրկին ժայռոտ ափեր են, որոնք շատ կորաղեան խութեր և ծովեզերեայ ապառաժների կտորներով լի են։ Ափրիկէի նաւահանգիստների մեծ մասը գետերի բերաններումն են. բայց նաւերը այդ նաւահանգիստները մտնելուց առաջ՝ սպասում են որ ծովային մակընթացութիւն լինի և կամ պարբերական անձրևներից շատանայ գետի ջուրը։ Ուրեմն Ափրիկէն իր ափերի յատկութիւններով ևս Եւրոպային բոլորովին հակադիր է։ Ափրիկէի ափերի մօտ եղած ծովերը երբէք սառում չեն. արևմտահարաւային ափերի վերայ փոթորիկներ (ուրագաններ) են փչում։

ԱՓՐԻԿԷԻ ԳԻՐՔԻ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՏՈՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ։

Ափրիկէն մեծ մասամբ թէպէտ մի գօտու տակ է գտնվում, բայց որովհետև այդ գօտին Այրեցեալ է, ուստի նա Եւրոպայի նման լուսաւորութիւն տարածուելու համար յարմարութիւն չունի։ Այդ անյարմարութիւնը ևս է այն պատճառով, որ (ինչպէս տեսանք) նորա ափերը մեծ մասամբ անմատչելի են։ Այս պատճառով չ'նայելով, որ Ափրիկէն շատ մօտ է Եւրոպային և ամենահին ժամանակներից հետէ յայտնի

է նորան, սակայն ևս ևս սակաւածանօթ է և յետամնաց է լուսաւորութեան մէջ քան թէ Ամերիկան, որ միայն 400 տարի է յայտնի է Եւրոպային և այս վերջինիցս բաժանվում է Ատլանտեան Ովկիանոսով։

Մակերևոյթների կազմուածքը։ Մակերևոյթի կազմուածքի կողմից Ափրիկէն կարելի է երկու մասը բաժանել, հարաւային բարձրաբանդակ և հիւսիսային դաշտավայր։ Այս երկու մասերը միմեանցից բաժանվում են այն գծով, որ անցնում է Քար-էլ-Մանդէրի նեղուցից մինչ Ռէնինեան ծոցը։

Հիւսիսային Ափրիկէն միայն հարաւայինի հետ համեմատելով կարելի է դաշտավայր կոչել, ապա թէ ոչ՝ եթէ աւանձին վեր առնելու լինինք՝ նորա մէջ բարձրութիւնները աւելի շատ են քան թէ դաշտավայրերը։

Հարաւային Ափրիկէն առհասարակ բարձրաբանդակ երկիր է, միջին մասերում տեղ տեղ խոր կաթսայաձև ձորեր ունի, իսկ արտաքին մասերում՝ երեք գար։ Միջինը լեռնային շղթաներով բաժանված է թէ արտաքին և թէ ներքին բարձր սարափարակներից։ Արտաքին գարը գրեթէ ամեն տեղ հարթ հաւասար է, միջինը անընդհատ լեռնային շղթաներից է բաղկացած, ներքինը՝ որ ամենաբարձր է՝ շատ լեռնային շղթաներ ունի, այստեղ էվերեստը Լեռնեան—ղղնան՝ որ երկու վերստ բարձրութիւն ունի։ Արտաքին գարը փոքր ինչ բարձր է ծովի մակերևոյթից։ Միջինը կէս վերստ բարձրութիւն ունի. ներսինը մօտ մի վերստ բարձրութիւն ունի։ Ներսին ձորի յատակը միատեսակ բարձր է ինչպէս և միջին գարը։ Լեռնային շղթաներից նոքա, որոնք ծովափնեայ գարը բաժանում են միջինից, աւելի ցած են այն շղթաներից, որոնք միջինը բաժանում են ներսինից։ Գոյանից շատերը աշխարհիս ամենաբարձր լեռների կարգից են և մեծ ազդեցութիւն ունին երկրի ջրերի՝ կլիմայի և բուսականութեան վերայ. այնպիսի բարձր գագաթներ կան, որոնք երկրիս վերայ ամենաբարձր գագաթների թուից են,

ինչպէս են Աբնիա 1^0 և Կիլիմանճարայ 2^0 հարաւային լայնութեան տակ։ Այս երկու գագաթնները ևս գտնվում են այն շղթայում, որ բաժանում է միջին գաղը ներքսինից. Կիլիմա — նճարոյ մինչև հինգ վերստ բարձրութիւն ունի։ Արևելահիւսիսում, Բրաբական ծոցի արևմտահարաւային ափերի մօտ բարձրաւանդակ Ափրիկէն վերջանում է Աբեսինեայ բարձրադիր աշխարհով, որ (Ափրիկէի Հունգերեան) հարաւային Ափրիկէի նման երիք դարով է բարձրանում և գրեթէ երիք անգամ բարձր է առաջինից։ Միջին դարի բարձրութիւնը մէկ և կէս մինչև անգամ երկու վերստ է. վերինը երկու և կէս վերստ բարձրութիւն ունի։ Այդ դարերի վերայ առանձին սրածայր կամ սոյնաձև ապառաժներ կան, որոնց բնիկ բնակիչները ասիան են կոչում։ Հիւսիսից, արևմուքից և հարաւից Աբեսինիայի բարձրաւանդակութիւնը շրջապատած է ձահիճներից, արևելքից աւազոտ անապատներից, որի հարաւային մասին կից են այնպիսի տարածութիւններ, որոնք հարիւր սաժէն ցած են ծովի մակերևոյթից։ Արևմտահիւսիսում Գովինէյի ծոցի ափերի մօտ հարաւային բարձրաւանդակ Ափրիկէին կից է Սոպան բարձրաւանդակը։ Այս բարձրաւանդակ աշխարհը շատ բարձր չէ, նորա գլխաւոր շղթան Աձպա է, որ Գովինէի ծոցի ափին զուգահեռական ուղղութիւն ունի։ Կոնզոյի գագաթը մի վերստ բարձրութիւն անգամ չունի։ Կոնզոյից դէպի ծովը երկու ճիւղեր են ձգվում, որոնք երկու ևս գլուխ են կազմում — Սոբէ Լանի և Ընմաննո։

Հիւսիսային Ափրիկէ։ Հիւսիսային Ափրիկէի բարձրաւանդակութիւնից նշանաւորները են — Պէրբերպան լեռնաշղթան, Պարկի պաչբուկը, Սահարայի Եաշբուրլը և Նեղոսի Եաշբուկը։ Առանցից ամենանշանաւորը Պէրբերպանին է։

Պէրբերպան լեռնադաշտը փոքր ինչ ցած է հարաւային Ափրիկէի բարձրաւանդակութիւնից, և նորա նման սահմանափակվում է լեռնային շղթաներից։ Նորա սահմաններում եզած լեռնային շղթաներից նշանաւորները են հիւսիսում Փոքր Եոլաս, հարաւում Մեծ Եոլաս, արևմուքում Կարչ Եոլաս, որ բարձրաւանդակութեան ամենաբարձր մասը է, և որի միջին բարձրութիւնը երիք վերստ է։ Կարճ Եոլասը շատ զագաթներ ունի, որոնք միշտ ձիւնապատ են. այս ասածներից ապացոյց կարող է լինել և Եոլաս բառը, որ Բրաբերէն նշանակում է Ձիւնապատ լեռ։ Եոլասի մէջ քարանձաւներ շատ կան։ Բրաբացիները ասում են, որ այդ քարանձաւների մէջ բնակվում է լեռնային ոգի, որ պահպանում է այդ լեռների մէջ թագցրած գանձերը։

Կարկաչ տափարակը Ափրիկէի Միջերկրական ծովի մէջ մանող փոքրիկ մասը է Սիդրեայի ծոցի։ Նեղոսի քաղցրաւազը թէ արևելքից և թէ արևմուքից սահմանափակուած է ցածր լեռնային շղթաներից, որոնք բաւականին յարմար անցքեր ունին, իսկ մի քանի ցածր լեռնային շղթաներ նորան ընդմիջում են և բոլ լայնութեան։

Սահարայի բարձրադաշտը։ Սահարայի բարձրադաշտը ցածր լեռնային կրակազմը շղթաների հիմն է. օրինակ՝ այդ բարձրադաշտի միջին մասերի վերայ այնպիսի գագաթներ կան, որոնք գրեթէ մի վերստ բարձրութիւն ունին։ Այդ բարձրաւանդակութեան արևելեան և արևմտեան մասերը ստորավայրեր են։ Արևելեան ստորավայրի (Աիվահ) մի քանի տեղերը մինչև անգամ ծովի մակերևոյթից ցած են։ Թէ բարձրաւանդակութիւնը և թէ նորա սահմանակից ստորավայրերը աշխարհիս ամենըղարձակ (Եւրոպայի տարածութեան $^2/_3$ մասին չափ) և ամենաչամանգաւոր Սահարայի աւազոտ անապատը են կազմում։ Սահարան, սովորաբար երկու մաս են բաժանում, — արևելեան Սահարա, որ Լիբիական անապատ է կոչվում, և արևմտեան՝ որ Սահել այս ինքն դաշտավայր է կոչվում։ Որովհետև Սահարայում փչում են միշտ արևելեան քամիները և աւազը արևելքից դէպ արևմուտք են տանում, ուստի Լիբիական անապատը Սահելից սակաւ աւազոտ է և շատ ոզտին-

ներ ունի։ Սահելը ընդհակառակը աւազեայ լեռներ ունի մանաւանդ արեւմտեան եզերում, որոնք մինչև 400 ոտնաչափ բարձրութիւն ունին։ Քամիների տարած աւազը թափվում է Ովկիանոսը և այնտեղ ջրի տակը նստելով փոքր առ փոքր բարձրացնում է ծովի յատակը այնպէս, որ Սահարայի ափերի մօտ Ովկիանոսը շատ վտանգաւոր է նաւագնացութեան համար — այդ աւազներից կազմուած ծանծաղուտների պատճառով։ Սահարայի ովազիսներից երեւելիները են արեւելքում Սիվահը և Ղեզոսի բարձր տափարակի արեւմտեան սահմանում ովազիսների ամբողջ խմբեր. Սահարայի միջում գտնվում է Ֆիլեան ովազիսը՝ որ ամենամեծը է։

Ընտպատի նկարագրութիւնը։ Թէ մարդիկների և թէ անասունների համար ամենասարսափելի անապատները նոքա են՝ որոնց երեսը ծածկուած է աւազով և որոնք Հրեցեալ գօտու տակը են։ Հեւի վտանգաւոր են նոքա ցերեկով այն ժամանակ, երբ փչում են քամիները։ Հին ժամանակ Հրեցեալ գօտու անապատները վառուած հնոցի նման տաքանում են, տաքութիւնը կրակի նման այրում է վերևից և ներքևից. քամիների ժամանակ տաք աւազը այնպէս է տարածվում օդի մէջ՝ որ ծածկում է երկինքը։ Երիգակի ճառագայթների լուսաւորութեամբ սկզբում այդ ամպերը կարծես հրային ամպեր են, յետոյ փոքր առ փոքր դունափոխվելով կապարի գոյն են ստանում։ Այ ճանապարհորդի դլխին՝ եթէ այդ ժամանակ նա այդ տեղ է գտնվում։ Նորա դլուխը սկսում է ցաւիլ, շնչառութիւնը ընդհատուիլ, սրտի բաբախումը արագանում է, շրթունքները ձեղքռտվում են և արիւնով լցվում, Թոզի նման մանր տաք աւազը հանդերձից անցնելով հասնում է մինչև մարմնուն և ճանապարհորդի նեղութիւնները աւելի սաստկացնում։ Քամիների բարձրացրած աւազը այնպէս մեծ քանակութեամբ է լինում, որ մի քանի ժամում ամբողջ բլուրներ են կազմվում 1 1/2 և 3 սաժէն բարձրութեամբ։ Որովհետև նոքա երբեմն արգելք են լինում ճանապարհորդին իւր դը-

նալու ճանապարհը գտնելու մի կողմանէ հեռուն խափանելով նորա աչքի առաջից, իսկ միւս կողմանէ մինչև նոր փոթորիկը սովորաբար իւրեանց տեղերում անշարժ մնալով։ Երբ փչում է քամին, նոքա քանդուելով մի տեղից գնում են միւս տեղը և այսպէսով բոլորովին մոլորեցնում են ճանապարհորդներին։ Շատ ճանապարհորդներ չկարողանալով տանել այդ նեղութիւններին՝ նուաղած վեր են ընկնում։ Պատահում է երբեմն որ այդպիսի կիսակենդան թշուառի վերայ յարձակվում են գիշատիչ թռչունները և նորան մահից առաջ կուրացնում են. այս՝ մի և նոյնը պատահում է և կենդանիների հետ։ Երեք քամիները բաւականին երկար ժամանակ շարունակվում են մի ուղղութեամբ, այն ժամանակ գետնից բարձրացած աւազը քամիների զօրութեամբ ահագին տարածութիւններ անցնելով լցնում է գետեր, գիւղեր և քաղաքներ. իսկ Եփրիկէի արեւմտեան ափում Ովկիանոսը այդ աւազով լցուելով շատ ծանծաղուտ տեղեր ունի. նաւագնացները մի քանի վերստ հեռաւորութեամբ են անցնում այդ ափերի հանդէպից։ Այդ ժամանակում կազմուած բլուրները 50 սաժէնից աւելի բարձրութիւն են ունենում։ Այս ասածներիցս յետոյ զարմանալու չէ՝ որ աւազի անապատը ծովի հետ են համեմատում։ Երբեմն նա շատ նման է ծովին, նա ևս իւր ալիքները և կղզիները ունի, ունի և նաւահանգիստներ, նա ևս ունի իւր նաւերը — ուղտերը և ջորիները, նա ունի և իւր նաւավարները, որոնք ապրանքը մի կղզուց (ովազիսից) միւս կղզին են տանում, կամ մի ափից միւս ափը։ Եփրիկէին պատկանող կղզիները մեծ մասամբ լեռնոտ են։ Հալանտեան Ովկիանոսի մէջ գտնուող լեռնոտ կղզիներից մեծ մասը հրաբղեային ծագում ունին. այդ կղզիներից Ասորեան և Պանաբեան կղզիները հրաբուղխներ ունին։ Պիկոյ — որ — Տէյտէ հրաբուղխը գտնվում է Տէներիֆ (Կանարեան կղզիների մէջ) կղզու վերայ և երկար վերստ բարձրութիւն ունի։ Հնդկաց Ովկիանոսի մէջ եղած կղզիներից մի քանիսը Կորալեան ծագումն ունին։

Ա ապագայում կղզին՝ իբր մակերևույթի կազմուածքով Ափրիկէին նման է: Ափրիկէն հանքերով շատ հարուստ է: Ին ժամանակներում ևս նա յայտնի էր իբր ոսկու առատութեամբ (ոսկու աւազը Սուտանում Աֆղանստանում): Այժմեան ժամանակներում Պէրբերատանի լեռների մէջ գտել են կապարի և երկաթի հանքեր. Ատլասի երկաթը իբր յատկութեամբ Շուէտիայի երկաթից պակաս չէ. կան նոյնպէս շատ պղինձ, քարածուխ լաւ մարմարիոն: Հանքային ջրերը իբրեանց առողջարար յատկութիւններով Եւրոպայի հանքային ջրերից յետ չեն մնում:

Ափրիկէի մակերևոյթի կազմուածքի հետևանքները: 1). Ափրիկէն Ասիայի նման մեծ մասամբ բարձրութիւններից է կազմուած. 2). բարձր երկիրները ինչպէս Ասիայի մէջ, նոյնպէս և այստեղ գրեթէ մի ամբողջ են կազմում. 3). ստորավայրերը այս տեղում ևս միայն բարձրութիւնների ափերի մօտ են գտնվում. 4). բարձր երկիրները մեծ մասամբ լեռնադաշտերից են բաղկացած. 5). բարձրաւանդակութիւնների արտաքին կողմը դարերից է բաղկացած, որոնք լեռնային շղթաներով բաժանվում են միմեանցից. 6). Ասիայի բարձրաւանդակութիւնների նման այստեղինները ևս իբրեանց մէջ խոր ձորեր ունին: Ուրեմն թէ Ափրիկէն և թէ Ասիան իբրեանց մակերևոյթի կազմութեան կողմից Եւրոպային բոլորովին հակառակ են: Ափրիկէի մակերևոյթի այս տեսակ կազմուածքի հետևանքը այն է 1) որ բարձրաւանդակութիւնները շրջապատած լինելով լեռնային շղթաներից միջին Ասիայի նման ջրով աղքատ են, 2) նորա գետերի սկիզբները շատ հեռացած են միմեանցից, 3) նոցա դաշտերը շատ քարքարոտ են, որովհետև բարձրաւանդակութիւնների վերայով են հոսում, 4) նոցա մէջ շատ սահանքներ և ջրվէժներ կան, որովհետև Ովկիանոսը թափվելուց առաջ՝ նոքա պէտք է անցնեն լեռնային շղթաների միջից, 5) որովհետև Ափրիկէն բարձր երկիր է և Հասարակ գետու տակ է, ուստի նորա կլիման ցեղվայ և զիշերուայ, ամառուայ և ձմեռուայ միջ չափազանց հակադիր յատկութիւններ ունի, 6) Ափրիկէի բնակիչները շատ գժուարութեամբ միմեանց հետ հաղորդակցութիւն ունին, ուստի առաւել տակաւ են կրթուած և լուսաւորուած քան թէ Ասիայինը: Այս կերպով Ափրիկէի մակերևոյթի կազմուածքից մենք պարզ եզրակացնում ենք ինչ պատճառով նա մինչ ցարդ այդպէս տակաւ է յայտնի Եւրոպացիներին:

ՋՐԵՐԸ:

Ափրիկէի ոռոգման և ջրաբաշխութեան ընդհանուր նկարագրութիւնը: Ջրերի կողմից Ափրիկէն կարելի է երեք մասը բաժանել, Հասարակ, այբեցեալից դէպի հիւսիս և դէպի հարաւ: Հասարակ Ափրիկէին ոռոգում են անձրևները, որոնք պատահանների հետևանք են: Ինչ ուղղութեամբ են փչում պատահանները, ուրեմն Ափրիկէի որ մասում աւելի շատ անձրևներ են գալիս: Հասարակ Ափրիկէի ոռոգումը քննելուց առաջ պէտք է նախ ուշադրութիւն դարձնել յետագայ երեք հանգամանքի վերայ: 1) Պատահանների ժամանակ եկած անձրևները՝ կամ որ մի ևոյն է՝ Հասարակ գոտու անձրևները գալիս են ոչ բոլոր Հասարակ երկիրներում, այլ միայն մի քանի երկիրներում՝ այն ևս նշանակեալ ժամանակներում կամ պարբերական կերպով, այս պատճառով Հասարակ գոտու անձրևները կոչվում են պարբերական անձրևներ: Պարբերական անձրևները մի որոշեալ տեղում այն ժամանակ են գալիս՝ երբ արեգակը մօտենում է այդ տեղն զենիտին: Այդ ժամանակ արեգակի գօրութիւնը աւելի սաստիկ լինելով՝ Հասարակ գոտու ծովերից աւելի շատ գոլորշի է բարձրանում և լցնում միջնորդաը, որոնք յետոյ անձրև դառնալով թափվում են կամ այն տեղ՝ որ տեղից բարձրացել էին, կամ պատահանները տանում են նոցա դէպի ցամաքը, ուր և թափվում են: Երբ մի նշանակեալ տեղից նուազում է արեգակի գօրութիւնը, այն ժամանակ գադարում են անձրև-

նները և սկսում է երաշտը: 2) Տարուայ մէջ անձրևային ժամանակ ասելով՝ չպէտք է հասկանալ որպէս թէ այդ ժամանակում անդադար անձրև է գալիս, այլ միայն այդ ժամանակում ամենայն օր գալիս է անձրև նշանակեալ ժամերում՝ այն է կէս օրից մինչև 4 ժամը: Առաւօտը, երեկոյանը, և գիշերը երկինքը բոլորովին պարզ է լինում: 3) Որովհետև Ափրիկէն Ասարակածի երկու կողմումը է գտնվում, ուստի Ա) Ասարակածից դէպի հիւսիս գտնուած երկիրների անձրևային եղանակները այն ժամանակ է լինում՝ երբ Ասարակածից դէպի հարաւ գտնուող երկիրների համար երաշտ եղանակ է և ընդ հակառակը. Բ) այդ Գօտու միջին երկիրները երկու անձրևային և երկու երաշտ եղանակներ ունին, որովհետև այդ երկիրներում արևը երկու անգամ է լինում իւր զենիտում, մի անգամ երբ հիւսիս է գնում, երկրորդ անգամ երբ հարաւ է դառնում, միայն այդ Գօտու սահմանակից երկիրները մի եղանակ ունին:

Հիւսիսային Ափրիկէի Այրեցեալից դէպի հիւսիս գտնուած մասը ողողվում է այն անձրևներով, որոնց բերում են արևմտահարաւային քամիները. իսկ այրեցեալից դէպի հարաւ գտնուած մասը՝ այն անձրևներով, որոնց բերում են արևմտահիւսիսային քամիները: Այդ երկու տեսակ քամիները և միայն ձմեռուայ ժամանակ են լինում, գարնանային և աշնանային ժամանակներում միայն մասամբ են փչում նոքա, այն ինչ այդ եղանակներում պէսպէս չոր քամիներ են փչում. բայց ամառուայ ժամանակ միայն այս վերջիններն են փչում, հիւսիսում արևմտահարաւայինի փոխարէն փչում է արևելահիւսիսայինը, հարաւում արևմտահիւսիսայինի փոխարէն արևելահարաւայինը: Ուրեմն Այրեցեալից դէպի հիւսիս գտնուած մասում անձրևային ամիսները են պէսպէս Դեկտեմբեր, Յունվար և Փետրվար ամիսները. այրեցեալից դէպի հարաւ գտնուած մասում, Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսները: Այս ընդհանուր կանոնից բացառութիւն կազմում են Վէնեէ յի Ծոցի ափերը, ուր ամառը մուսսոն է փչում Ատլանտեան ովկիանոսից:

Այս մուսսոնի ծագման պատճառը այն է, որ Սահարայի ջերմութիւնը չափազանց սաստկանում է, ուստի և ջերմութիւնից հօսքացած օդը վերև է բարձրանում, իսկ նորա տեղ Ատլանտեան ովկիանոսից աւելի սառն օդ է գալիս: Պարբերական անձրևների ժամանակ Ափրիկէի այրեցեալ մասի գետերը սաստիկ մեծանում են: Այն ժամանակ Ափրիկէի գետերի և լճերի դաշտերը չափազանց ընդարձակւում են, մի քանի գետերի մէջ ջուրը սովորական մակերևոյթից 8—10 սաժէն բարձրանալով ծածկում է շրջակայ դաշտավայրերը և այնպիսի մեծ քանակութեամբ են ծովը թափվում՝ որ ափից մի քանի մղոն հեռու կարելի է լինում քաղցր ջուր գտնել: Այդ երաշտ ժամանակներում Ափրիկէի գետերից մի քանիսը այնպէս սակաւաջուր են լինում, որ մինչև անգամ ոտքով կարելի է նոցա մի ափից միւս ափը անցնել. իսկ մի քանի գետերի դաշտերում միայն տեղ տեղ կարելի է փոքրիկ լճակներ տեսնել, կամ գետերի մէջ մի քանի փոս ընկած տեղեր նկատելով մտածել որ այդ տեղերից երբեմն ահագին հեղեղատներ են անցել: Այս պատճառով դժուար է որոշել Ափրիկէի մի քանի գետերի ընթացքի ուղղութիւնը և մի քանի լճերի մեծութիւնը: Այրեցեալից դուրս գտնուած մասերի գետերը միայն գարնան ժամանակներն են մեծանում՝ երբ լեռների վերայ սկսում է ձիւնը արագութեամբ հալել: Այդ գետերից շատերը ամառը շատ սակաւաջուր են լինում: Բացառութիւն կազմում են միայն Ատլաս լեռներից սկսուող գետերը:

Արտաքին աւազաններին պատկանեալ գետերը և լճերը: Նեղոս գետը թափվում է Միջերկրական ծովը: Նեղոսը երկու գետերից է բաղկացած՝ Բաբ-էլ-Ազրէկ (կապոյտ) և Բաբ-էլ-Աբիաթ (սպիտակ գետ):

Ազրէկը սկսվում է Աբեսինիայի լեռնապաշտի ձահճներից, որոնք երկու վերստ բարձրութիւն ունին ծովի մակերևոյթից. լեռնապաշտի վերայ անցնում է Դեմբէնայ կամ Յանա լճով, որ մի ու կէս վերստ բարձրութիւն ունի, և Աբեսինիայի լեռնապաշ-

ան կողքով պատելով գնում է դեպի հիւսիս և միանում Էբիադի հետ։ Ազբէկը՝ որովհետև բարձր լեռներից է սկսվում և մինչև Էբիադի հետ միանալը շատ կարճ տարածութիւն է անցնում, ուստի շատ արընթաց է, ապա ուրիշն անյարմար է նաւագնացութեան համար, մանաւանդ որ շատ սահանքներ ունի։

Էբէ-ոլը սկսվում է Նիանյա*) լճից։ Նիանյա լիճը (բնիկ լեզուով) կոչվում է նոյնպես Վ-իկ-Նզիա (ի պատիւ Անգղիական թագուհուն) և Ո-Նէբէվէ (արաբական անուն է) գանվում է 2 աստիճանի և 50 $^{1}/_{2}^{0}$ արևելեան երկայնութեան երկու կողմում։ Նա պատկանում է հարաւային Ափրիկէի բարձրաւանդակութեան հիւսիսային մասին և ծովի մակերևոյթից մի վէրսա բարձրութիւն ունի։ Իւր մեծութեամբ Վ-իրին լճին հաւասար է և հինգ անգամ մեծ է Լ-աոակա լճից։ Նայց չնայելով այդ ընդարձակութեանը, շատ փոքր խորութիւն ունի։ Էբիադը Նիանյից դուրս գալուց յետոյ՝ կազմում է Նօ լճակը, կամ լաւ ևս ասել՝ ճահիճը, և մինչև Ազբէկի հետ միանալը՝ երկու կողմից ևս նորա մէջ թափվում են բազմաթիւ վտակներ։ Էբիադը Ազբէկից հանդարտագնաց է։ Ի՞նչի։ Խառնականին խոր լինելուն (3—5 սաժէն մինչև անգամ երբեմն ժամանակներում), և հանդարտագնաց լինելուն պատճառով շատ յարմար է նաւագնացութեան համար։

15° ից փոքր ինչ հիւսիս Ազբէկը և Էբիադը միանալով կազմում են՝ որ սկզբում Նէղոսի դարաւանդներից գլորուելով մտնում ընդարձակ հովտի մէջ։ Էրևելեան կողմից Նիղոսի մէջ թափվում են Տակացա կամ Աֆաբա գետակը, որ սկսվում Աբեսինիայի լեռնադաշտից։ Նացի վերոյիշեալ գետակից, Նիղոսը մինչև Միջերկրական ծովը ուրիշ ոչինչ վտակ չունի. ծովը թափուելու ժամանակ բերանին մօտ Նիղոսը շատ առաջ-

(*) Շատ ժամանակ չէ, որ Բիկէը ճանապարհորդը գտաւ մի նոր լիճ, որ տեղից բղխում է Նեղոսի վտակներից մին, այդ լիճը կոչվում է Ալբէրտ-Նիանցա։ Նա գտնվում է 2° հիւսիսային լայնութեան տակ։

նում է բաժանւում և Դէլտա է կազմում։ Այդ առաջքներից նշանաւորներն են Դամիէտինը արևելքում և Ռոզիէինը արևմտքում։ Դէլտայի հիւսիսային եզերքում շատ թերալճեր և թերաճահիճներ կան, որոնք ծովից բաժանվում են ցամաքի շերտերով։ Նեղոսը նաւագնաց է միայն ջրերի առատութեան ժամանակը, այն էլ միայն ընթացքին ուղղութեամբ, այն ինչ ուրիշ ժամանակներում 15—25° լայնութեան աստիճանների մէջ բոլորովին անկարելի է նաւագնացութիւն անել, շատ գալարուն ափերի և ժայռերի պատճառով, որոնցից ամենանշանաւորներն տասն են։ Նեղոսը աշխարհիս ամենանշանաւոր գետերից մին է, որով 1) աշխարհիս մէջ ամենաերկար գետը է, 2) Ափրիկէի խորքը գնալու համար ամենահին ջրային ճանապարհը է, 3) առանձին ֆիզիքական յատկութիւններ ունի։ Ֆիզիքական յատկութիւններից ամենանշանաւորը նորա պարբերական յորդառատութիւնը է։ Նեղոսի վերին մասերը, որովհետև պարբերական անձրևների գօտու տակ են գտնւում, ուստի Նեղոսի ջուրը Այրեցեալ գօտու միւս գետերի նման՝ միայն նշանակեալ ժամանակներում է շատանում. նորա ջուրը մեծանում է մեր Յուլիս, Օգոստոս և Սեպտեմբեր ամիսներում. այդ ժամանակներում Նեղոսի հովիտը մի ընդարձակ լճի կնմանի, որի մէջ տեղ տեղ երևում են քաղաքներ և գիւղեր, որոնք մարդի միտք են բերում ծովերի արշիպելագոսները. յորդառատութեան ժամանակ ջրի բարձրութիւնը 22 ոտնաչափի է հասնում։ Գետի հանդարտ հոսանի պատճառով՝ նորա պղտոր ջուրը շատ սիկ է իւր անցանելուն տեղերի վերայ։ Ջուրը պակասելուց յետոյ այդ սիկը պարարտացնում է երկիրը և այնուհետև Նեղոսի հովիտը ծաղկեալ այգի է դառնում։ Այդ շքեղ տեսարանը աւելի գեղեցկացնելի է այն պատճառով, որ արևելքում և արևմտքում ցցուած են մերկ ժայռեր, կամ աւազոտ անապատներ։ Պտուղները քաղելուց յետոյ Նեղոսի հովտի տեսարանը երրորդ անգամ է փոխվում. առատ բուսականութեան փոխարէն, արեգական կիզող ճառագայթներից ճարճատած ա-

նապատ է ՃՈՒՄ: Եգիպտացիների համար շատ թանգ արժէ Նեղոսի ջուրը: Հին Եգիպտացիները Նեղոսի ջուրը պահելու համար ջրանցքներ և արհեստական լճեր էին փորում. այդ տեսակ ջրանցքներից նշանաւոր է Յովսէփի ջրանցքը, որ 40 մղոն երկայնութիւն ունի, և որի ուղղութիւնը գետի սորին ընթացքին զուգահեռական է, և տարածվում մինչև ձախ առաջքի (Ոսկեհի) կէսը. լճերից նշանաւորը էր Մոէրիսը, որի հետ միանում էր ջրանցքը: Այս տեսակ լճերը և ջրանցքները ջրամբարների նշանակութիւն ունէին, որոնց Նեղոսի յորդառատութեան ժամանակ լցնում էին ջրով, որ յետոյ գործ էին ածում երաշտ և ջրի նուազ ժամանակներում: Նեղոսի հովտի առատութեան համբաւը հին ժամանակներում արդէն տարածուած էր և իւր դրացի Եւրոպական և Ասիական երկիրների շահմարանն էր համարվում. այդ հովտում շատ քաղաքներ և զանազան շինութիւններ կային:

Աղանդեան ովկիանոսը թափվում Սենիգալ, Գամբիա, Ռիո-Գրանդէ, Սիերրա-լէօնէ, Նիգեր իւր Բենէ—Նուէ (այսինքն ջրերի մայր) կամ Ձադդա գետակցով, նոյնպես Գաբոն, Օգոյէ կամ Կոնկո-կոանգօ և Օրանժ կամ Գարիպ *):

(*) Վերոյիշեալ գետերից իւրաքանչիւրը որ տեղից է սկսվում, Սենիգալը, Գամբիան և Ռիո—Գրանդէն մինչև լեռների միջից դուրս գալը բաւականին սրընթաց են և շատ սահանքներ ունին: Նիգերը շատ սրընթաց է և շատ սահանքներ ունի իւր մէջ, մանաւանդ իւր հիւսիսային մասում մինչև 10 գ զուգահեռականը, Կոնկոն Կոանգէ և Օրանժը անձրևների ժամանակ հեղեղատների նման են, իսկ երաշտ ժամանակներում գրեթէ բոլորովին ցամաքում են: Երաշտ ժամանակներում Օրանժ գետից կարելի է անցնել ոտով, այն ինչ պարբերական անձրևների ժամանակ նա այնպես մեծանում՝ որ նորա վերայ կարող էին մեն գալ Հարիւր թնդանօթներ նաւեր: Այսպէս ուրեմն Սենիգալը, Գամբիան և Ռիո գրանդէն իրենց սորին մասերում միայն յարմար են փոքրիկ նաւերի համար, այն ևս միայն պարբերական անձրևների և ծովային մակընթացութիւնների ժամանակ: Նիգերի վերին մասերը նաւարկելի են մինչև Կաբարա, իսկ սորին մասերը

Հնդկաց Ովկիանոսը թափուղ գետերից նշանաւոր է Ձամբեզը (ձկնաւորների գետը), որի վերին ընթացքը կոչվում է Լիաբէյ (այս ինքն գետ): Ձամբեզ գետը իւր բերանի մօտ Նեղոս և Նիգեր գետերի նման առաջքներ է բաժանվում, որոնցից ամենանշանաւորը Աչլճնանի է կոչվում:

Ձամբեզ—Լիամբէյը շատ սրընթաց է և իւր մէջին ջրվէժներ ունի: Ջրվէժներից ամենանշանաւորը է Մոզի—օա—Տունիա (այս ինքն այն տեղերում ծուխը դնդչում է)՝ ինչպէս կոչում են բնակիչները, կամ Վիկթորիա (ի պատիւ Անգլիացուց թագուհու)՝ ինչպէս կոչում են Եւրոպացիները *):

—Բուասայէց սկսած մինչև ծովը. նորա առաջքներից նաւագնաց է միայն միջինը—Նուն. Նիգերի վտակ Բէնուէն 500 վերստ տեղ և կամ առաւել նաւագնաց է ընթացքին հակառակ. Գաբոն՝ ինչքան միայն յայտնի է, շատ յարմար է նաւագնացութեան համար:

Կապոյտ Նեղոսի նման Նիգերը երիք կողմից շրջապատում Սուտանի բարձրաւանդակ երկիրը և Նեղոսի նման իւր բերանի մօտ մի ընդարձակ դելտա է կազմում. Նիգերի դելտան այնպէս լոր է մանում ծովի մէջ, որ երկու ծոց է կազմում: Նիգերի անունը ծագել է Նեգիրէյ—neghirreu բառից, որ Ափրիկէական Իմաշաղ ժողովրդի բարբառով նշանակում «ջուր», կամ մեծ գետ: Եւրոպայի ժողովրդների մէջ ամենից առաջ Հռոմէացիները լսեցին այդ գետի անունը, որոնք և իւրեանց նոյնահնչիւն niger բառին փոխեցին, որ նշանակում սև, որով կամենում էին ցոյց տալ այն գետը՝ որ անցնում է սևերի այս ինքն Նեգրոների երկրից: Նիգերը իւր ընթացքի զանազան տեղերում զանազան անուն է կրում, վերին մասերում Ջէ-լիբա, միջին մասերում Եօա, սորին մասերում Կվորրա. այս բոլոր անունները կամ ջուր կամ գետ են նշանակում:

(*) Նիգերի եղերքը և կղզիները ծածկուած են խիտաւէտ անտառներով. սորերկրեայ որ և իցէ յեղափոխութիւնից այդ լայնատարած գետի յատակը ճեղքուած է մի ափից սկսած մինչև միւս ափը և աւելի երկար՝ մինչև 50 վերստ երկայնութեամբ: Այս սարսափելի ճեղքուածի լայնութիւնը 30 քայլ է, իսկ խորութիւնը 100 ֆուտ: Ջրվէժը այս տեղումը է յատակնում՝ երբ գետը բարձրից թափվում է այս ճեղքուածքի մէջ: Գետի այստեղ թափուիլը աշնպէս սաստիկ զօրութեամբ է լինում, ։։

Ծովից սկսած մինչև Տէտէ քաղաքը Կիլիմանի առաջքին միջնորդութեամբ Չամբեզի — Լաբէյը նաւարկելի է, նոյնպէս Մօզի — օա — Տունիա ջրանցքից փոքր լինչ բարձր, բայց պէտք է ասել, որ Կիլիմանի իւր բերանի մօտ վտանգաւոր ծանծաղուտներ ունի *):

Ներքին աւազանների լճերը և գետերը։ ա). Հարաւային Աֆրիկէի լեռնագաշտի աւազանի լճերից նշանաւորները են. 1) Տանգանայիկա կամ Ուջիջի լիճը երկու անգամ մեծ է Ուսատատանի Լատոկա լճից. դանվում է մի խոր հովտի մէջ, և ամեն կողմից շրջապատած է լեռներից, կէս վերստ բարձրը է Հնդկաց Ովկիանոսի մակերևոյթից։ 2). Նգամի լիճը նա-

---

նորա որոտումը 70 վերստ հեռուից լսվում է, և խառոչի յատակից ահագին սիւներով բարձրանում են ջրի ցնցուղները։ Սիւների ներքին մասը սպիտակ է, իսկ վերևը սև ծխի նման։

Այսպէս ուրեմն այդ փրփրուղ, որոտացող, սրսկուղ սիւները մինչև 43 սաժէն բարձրանալով հեղեղի նման թափվում են խառոչի ափերի վերայ։ Այդ անձրևներից աղբիւրներ են կազմում և թափվում են խառոչի մէջ, բայց երբէք մինչև յատակին չեն հասնում. ցնցուղների սիւները իւրեանց արագութեամբ կարծես թէ կլանում են նոցա և կրկին բարձրանում 43 սաժէն, որ կրկին վայր ձգեն այդ բարձրութիւնից։ Այդ վիթխարի սիւները արեգակի ժամանակ փայլուն ծիածաններ կազմելով մի գեղեցիկ տեսարան են ներկայացնում։ Այդ ծիածանները քամու զօրութեամբ անդադար տարածվում են, բայց երբէք չեն ոչնչանում։ Ռնիկ բնակիչները այդ ջրվէժը աստուածութեան բնակարան են համարում։ Ընտրելով այն տեղը, ուր ջրվէժի աղաղակը ամենից բարձր է և ուր ծիածանները աւելի սաստիկ են փայլում, նոքա ջրվէժին զոհեր են անում։

(*) Կոնկոյ և Զամբեզ գետերը իւրեանց փոխադարձ դրութեամբ Հրոռենոսի և Դունայի նման են, ինչպէս որ այդ երկու Եւրոպական գետերից մին ընթանում է դէպի արևմտա — հիւսիս, իսկ միւսը դէպի արևել — հարաւ, և ջրանցքների միջնորդութեամբ միացնում են երկու ծովեր, նոյնպէս և ընթանում են Կոնկոյ և Զամբեզ գետերը, և մի ընդհանուր լճից սկսող իւրեանց վտակների օգնութեամբ միացնում են երկու ովկիանոսները։ Միայն ցաւալին այն է որ Աֆրիկէի այդ ջրային ճանապարհը նաւա-

---

խընթացից շատ փոքր է, բայց դրանից նա մակընթացութիւն և տեղատուութիւն ունի, որոնք լուսնի ներգործութիւնից են առաջանում։ Շրջակայ բնակիչները այդ երևոյթները բացատրում են այնպէս՝ թէ լիճը ժամանակ առ ժամանակ գնում է կերակուր ճարելու։ 3) Նիասա (Նիանձա առաջվայ ժամանակները Մորաւիա) դեռ ևս շատ փոքր է յայտնի։

Ր) Պերբերատանի տափաստանը միայն շօտեր ունի, այս ինքն այնպիսի լճեր, որոնք իւրեանց ձևը յաճախ փոխում են և շատ խոր չեն։ Գ) Սահարայի լճերը։ Սահարայի մէջ տեղ տեղ գտնուած ջրերը կամ սկսվում են Հարաւային Աֆրիկէի լեռնագաշտի հիւսիսային կողմից շրջապատող բարձրութիւններից, կամ Պերբերատանի բարձրաւանդակութիւնը հարաւից շրջապատող բարձրութիւններից։ Այդ բարձրաւանդակութիւնների ներքինների սկսուած ջրերի մեծ մասը կամ բոլորովին գաղրշիանում են, կամ թէ նոցա սառթատում շօտերը, կամ լաւ ևս ասել ճահիճներ են կազմում, կամ թէ սառըկրկիայ ջրանցքներով տարածվում են Սահարայի մէջ տեղ տեղ ներքի երեսը դուրս բղխելով՝ աղբիւրակներ և առուներ են կազմում. այդ լիճ — ճահիճներից ամենանշանաւորը է Ջադ իւրեան երկու վտակներով Կամադուգու — Գուռ — Ուսուգու-Բէ և Շարի։ Ջատ լիճը խոր չէ։ Նորա ճանապարհորդը մի քանի անգամ ձիով բաւականին ներս գնաց այդ լճի մէջ, և նա ասում է, որ այդ լճի ամենախոր տեղը երկու մարդահասակից աւել չէ։

գնացութեան համար անյարմար լինելուն պատճառով, ոչ ունեցել է և ոչ էլ կունենայ նշանակութիւն, ապա թէ ոչ երկու Ովկիանոսներին միացնց հետ հաղորդակցելու ճանապարհը երեք անգամ կկարճանայ։

Գետերի և լճերի իբրև հաղորդակցութեան ճանապարհների նշանակութիւնը։ Ափրիկէի գետերի և լճերի մասին կարելի է ասել 1) որ միմեանց հակադիր ուղղութեամբ ընթացող գետերի սկիզբները միմեանցից շատ հեռու են. 2) գետերի դաշտերը մեծ մասամբ քարոտ են, գրեթէ ամենի մէջ սահանքներ և խոխոջներ կան, ջրվէժներ էլ կան. 3) բոլորը նակաբաջուր են, բացի պարբերական անձրևների ժամանակներից. 4) գետերի բերանները մեծ մասամբ ծածկուած են աւազով կամ սիով, որոնց կամ ծովային հոսանքները են բերում և կամ ինքեանք գետերը. այս պատճառով բերանների մօտ վտանգաւոր ծանծաղուտներ և ցած կղզիներ են կազմում. 5) ապա ուրեմն Ափրիկէի գետերի և լճերի մեծ մասը հաղորդակցութեան համար ոչինչ նշանակութիւն չունին։ Միայն մի քանիսի վերայով կարելի է ընթացքին ընդդէմ գնալ ամեն ժամանակ՝ այն էլ փոքր տեղ՝ նաւելով գետի երկայնութեանը։

Այս կերպով Ափրիկէն, որ իւր սահմանների յատկութիւնների և մակերևոյթի կազմուածքի պատճառով անմատչելի է, անմատչելի է նոյնպէս և իւր գետերի կողմից։ Այս կողմից Ասիայից շատ յետ է մնացած Ափրիկէն։ Ասիայի գետերը իւրեանց բերաններից սկսած բաւականին երկար տեղ նաւագնաց են։

ԿԼԻՄԱ, ԲՈՅՍԵՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ։

Որովհետև Ափրիկէն մեծ մասամբ Հրեղեալ գօտու տակ է գտնվում, ուստի գլխաւորապէս տաք կլիմայ ունի։ Մի քանի տեղերում տաքութիւնը չափից դուրս սաստիկ է մինչև անգամ ստուերի մէջ։ Օրինակ Սին Գամբիայում առաւօտեան ժամը 6-ին տաքութիւնը լինում է 23^0 Ռ. իսկ ճաշուայ ժամանակներում տաքացած աւազի մէջ կարելի է ձու խաշել առաւօտեան 10 ժամից սկսած մինչև երեկոյեան 4 ժամը։ Ձմեռից յետոյ ոչ մի կենդանի կարող չէ բաց օդի մէջ ձիել։ Մի և նոյն տեսակէ և Նուբիայում։ Որովհետև և Ափրիկէի եղերքների մէջ ծովերը չեն մտնում, իսկ միջին երկրները մեծ մասամբ աւազոտ և քարոտ են, ուստի Ափրիկէի կլիմայի յատկութիւններից մին էլ ջրա-կնձ-նէ է։ Մի քանի տեղերում օրինակ Սահարայում Սամում, Եգիպտոսում Համ-սին (մի և նոյն Սամումը է), Գվինեայում Գարմանդան (պատատ է) ժամանակ առ ժամանակ այդ ջրութիւնը այնպէս սաստիկ է լինում՝ որ կարասները, դռները, պատուհանների փեղկերը տաքութիւնից փեռնկատվում են, գրքերի կազմերը գալարվում, մարդի շրթունքները և ձեռները տապտապում և այլն։

Ուրեմն Ափրիկէի կլիման սաստիկ տօթ և չոր է, և համ տօթ յուռթայնն է։ Բայց կլիմայի կողմից Ափրիկէն շատ հակառակ յատկութիւններ ունի. այդ միմեանց հակառակ յատկութիւնները երևում են չորութեան և խոնաւութեան մէջ և տարբեր եղանակների բարեխառնութեանց մէջ։ Ափրիկէում ամեն բան արեգական ջերմութիւնից է կախուած, երբ նա հիւսիսային կիսագնդում է, այն ժամանակ տաքութեան հետ շատանում է օդի խոնաւութիւնը և պարբերական անձրևներ են լինում (բացի Սահարայից). իսկ հարաւային կիսագնդում ընդհակառակը օդը չոր և ցուրտ է լինում, չորութիւնը այնպէս սաստիկ է լինում, որ երբէք անձրևի կաթիլ չեն տեսնում, և նոցա միակ մխիթարանքը այդ ժամանակ ցօղը է, հարաւային Ափրիկէի լեռնագաշտի հարաւային մասում մինչև անգամ ձիւն է գալիս։ Երբ արեգակը հարաւային կիսագունդը է դառնում, այն ժամանակ երևոյթը բոլորովին փոխվում է, հարաւային կիսագնդում սկսվում են տաքութիւնը և անձրևները, իսկ հիւսիսայինում լինում է ցուրտ և չոր։

Պերբերատանի բարձրաւանդակութեան վերայ մինչև անգամ ձիւն է գալիս։ Ափրիկէում ցերեկուայ և գիշերուայ մէջ աւելի սաստիկ հակադրութիւն կայ. ցերեկը աւազի մէջ կարելի է ձու խաշել, այն ինչ գիշերը ջուրը սառում է։ Այս տեսակ

սաստիկ հակապրութիւնից բացառութիւն են կազմում ծովափնեայ երկիրները, մանաւանդ Հնդկեայ ովկիանոսի ափերը, միայն բնիկ բնակիչները սովորած լինելով կարող են այդ միմեանց չափազանց հակառակ փոփոխութիւնները և Ափրիկէի օդը անվնաս իւրեանց առողջութեան համար անել, այն ինչ այդ տեսակ կլիման Եւրոպացու համար չափազանց վնասակար է *):

Ռէ — Նո՜է և Գաբօնա գետերի ջրապատառները և միջնի երկրներից մի քանիսը, նմանպէս և Սուրեան, Պանարեան և Մատէյրա կղզիները: Ճանապարհորդները ասում են, որ Սպ. աշխարհի և Սորեան կղզիների կլիման աշխարհիս ամենառողջարար կլիմաներից է:

Բոյերից ամենանշանաւորը և բնակիչների զբաւորը կուրակուրը գո՜րյան ջոյք է — Ափրիկէի բրինձը: Այդ բոյսը երբեմն մի և երբեմն երկու սաժէն բարձրութիւն ունի: Դուրս

(*) Օրինակ Ալժիրը նոյնանալու համար Փրանսիայի ուղղակի 100 հոգալ զօրքից միայն $^1/_{25}$ մասը մեռաւ պատերազմում, այն ինչ բոլոր մեռացածը գոհ գարձաւ այդ անասնական կլիմային: Ալժիրում մեռնողների թիւը այնքան մեծ է, որ Ֆրանսիայում մնացածաւի տարուայ մեռածների թիւը երկու անգամ փոքր է այն թուից, որչափ սովորաբար ամեն տարի մեռնում են Ալժիրում Եւրոպայի զաղթականները:

Գվինեայում, Սիերրա — Լէօնի ափում ամեն տարի զրկիչ Եւրոպացիների երրորդ մասը մեռնում է և շատ սակաւ է պատահում՝ որ Եւրոպացին չորս տարուց աւելի կարողանայ կենալ: Ափրիկէի արեւելեան ափում Մոզանբիկում 100 Եւրոպացիներից 5 — 7 է ոչ մեռում հինգ տարուց յետոյ: Ծովափնեայ երկիրներում օդը ապականվում է մեծ մասամբ ափերի վերայ նեխուած և փշուած բոյսերի գոլորշիներից, գլխաւոր հիւանդութիւնները են տենդը և տիֆ (վարցաբ, Տարինք): Բայց պէտք է ասել որ, կան և տեղեր, որոնք գեղեցիկ և առողջարար կլիմայ ունին, թէպէտ այդ տեղերը շատ հազուագիւտ են. այդ տեղերը են Հարաւային Ափրիկէի բարձրաւանդակութեան Հարաւային մասը, Արեւմտեան լեռնաշաւթի միջին և վերին հովտները, մասամբ Եգիպտոսը, մանաւանդ վերին Եգիպտոսը՝ ուր Հարուստ բնակիչները գնում են առողջանալու համար:

բան շատ պտղատու է, այնպէս որ ցանած քանակութիւնից 200 անգամ աւել է ստացվում: Ռնիկ բնակիչները դուբրան կամ ջրով կամ կաթով խաշում են և ուտում. նորանից պատրաստած հացը շատ ծանր է լինում:

Ափրիկէի կենդանիները շատ մեծ և զօրեղ են. այս տեղ գտնվում են մի և նոյն կենդանիները, ինչ որ կան Հարաւային Ասիայում, ինչպէս են, Փիղ, երիզոչ-րանի ռընձիզոչ-ը, ռո-է-ժ, ձիացեբռ, կոկոդրիլոս, զանազան տեսակ կապիկներ և օձեր, միայն այս ցամաքին սեպհական են ընձուղտը, վագրաձին, կվակա և զանազան տեսակ անթիլոպներ: Ընտիլօպներից նշանաւորները գնու-ն է. գնուն փոքրիկ ձիու նման է, սաստիկ բարակ ոտներ ունի, գլուխը մեծ և մորուսը խիտ, բաշը կոշտ և կանգուն, հոգնելիները փոքր են և մինչ աչքերն են հասնում՝ և յետոյ յետ են ծռվում և սրածայր վերջանում: Միսը սատիկ համով է:

Վագերաձին ձիու նման է. կոշտ վերայ սպիտակ և սև շերտեր կան. մի և նոյն տեսակ է և գիշատիչ, սորա մարմնի միայն առաջին մասում կան շերտեր: Ընձուղտը մի զարմանալի կենդանի է. գլուխը հղջերուի գլխի նման է, պոչը կովի, վիզը ուղտի, մորթին պանտերի, ձայները և բնութիւնը ձիու, որովհետև և ձիու նման խրխնջուն գարիը է հատանում: Բայց Ափրիկէում աւելի մեծ նշանակութիւն ունին միջատների տեսակները, ինչպէս են՝ հարաթ գտնվում է բոլոր հիւսիսային Ափրիկէում, կոբրիճ, Տարանդուլա-Սահարայում, թէրմիտները գրուած են բոլոր Ափրիկէում, քա-րա. ֆոշակը սպիտակ Նեղոսի վերին մասերում, ցեցե-ճանճը Զամբէզ-Լիամբէյի (վերին մասերում) շրջակայքում: Ա յս միջատները շատ վնասակար են այն երկիրների համար՝ ուր գտնվում են. նորա վնասակար են թէ բնիկ բնակիչներին և թէ գաղթականներին. մարախները արտորանները են ոչնչացնում, տերմիտները տարեկան անային պաշարը, կարիճը և բասրան վտանգաւոր են ձիերու համար. ցեցե-ճանճը վտանգաւոր է պրնաւոր կենդանիների համար:

Վերոյիշեալ միջատներից ամենանշանաւորը մարախը է: Մարախը գլխաւորապէս Ափրիկէին է սեպհական: Փոքր ինչ հատկացողութիւն տալու համար, նոցա բազմութեան մասին մենք առաջ ենք բերում մի քանի փաստեր: Մի անգամ քամին մարախներին տարաւ և ծովը թափեց, ուր նոքա խեղդուեցան, և ծովի ափին 75 վերստ երկայնութեամբ և 3—4 սանժէջի բարձրութեամբ ծանծաղուտ կազմեցին-այդ ծանծաղուտի դարշահոտութիւնը 200 վերստ էր տարածվել: Մարախները այնքան խեղդվում են գետի մէջ, որ յետագանները ոտքով անցնում են նոցա վերայից գետի մի ափից միւս ափը. մի և նոյն պատճառով կրակը նոցա կարող չէ խոչընդոտ լինել: Ընութեան օձը տեսել էր մարախներին թռչելու ժամանակ, որոնք իւրեանց բազմութեամբ ծածկում էին արեգակի լոյսը: Մարախը միջատների այն տեսակից է, որոնց մենք կոչում ենք ծղրիտ, ճպուռն և այլն. իւր արտաքին կերպարանքով ճպուռնի նման է. իւր երկու զոյգ թևերով ճպուռի նման ձայն է հանում. այդ ձայնը հանում է այն փոքրիկ թաղանթիկ փամփուշտը, որ գտնվում է առջևի զոյգ թևերի մօտ: Եւ այդ փամփուշտը ձայն է հանում երբ աջ թևը քսում է ձախին: Բայց ամենից նշանաւորը այն է, որ մարախը երկու զոյգ ծնօտ և մի մեծ սատանքս ունի: Եւ այդ ծնօտները են պատճառը, որ նա բուսական թագաւորութիւնից ամեն բան կարող է ուտել: Ւր որովհետև նա շատ արագ ու մեծ բազմութեամբ ածում է, ուստի մարդի համար կարծես թէ աստուածային պատիժ է դառնում:

Մահմեդականները ասում են, որ նոցա մարգարէն մարախի թևերի վերայ կարդացել է յետագայ դրած բառերը. «Մենք Աստուծոյ հօտ ենք, և ձու ենք դնում 99 հատ. իսկ երբ 100 դնեինք, այն ժամանակ բոլոր աշխարհը կուտէինք,,: Երդարև մայիս ամսում իրաքանչիւր էգ մարախը 700 հազար ձու է դնում: Ձորս հօթնեկից յետոյ այդ ձուերից դուրս են գալիս ձագեր, որոնք սկզբում սև մրջիւնների նման են: Եւ այդ բազմութիւնը ուղիղ յառաջ է գնում ոչնչացնելով ամեն բան՝ ինչ

որ պատահում է: Ձորս հօթնեկից յետոյ մարախը հասնում է իւր կատարեալ հասակին, այն ժամանակ նորա կաշին արաքվում է և միջից դուրս է գալիս թևաւոր մարախը:

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ:

Որովհետև Ափրիկէն մեծ մասամբ անապատ է, ուստի շատ դժուար է ճշմարտութեամբ որոշել բնակիչների թիւը: Ոմանք ասումեն որ 200 միլիոն է, ապա ուրեմն իւրաքանչիւր քառակուսի մղոնի վերայ 370 մարդ է բնակվում: Ուրիշն թէ բնակիչների բազմութեան և թէ նոցա խտութեան կողմից Ափրիկէն երրորդ ցամաք է: Ամենաբազմամարդ երկիրները Աբեկեալ գտնում են. ճանապարհորդների կարծիքով վերին Նեղոսի շրջակայքը ոչ միայն Ափրիկէի ամենաբազմամարդ երկիրը է, այլ աշխարհիս մէջ այդ կողմանէ առաջնակարգ երկիրներից մէկը է:

Բնակիչների ծագումը: Ափրիկէի բնակիչները գրեթէ միայն Նեգրներն և Սովկասեան ցեղը է: Սոցանից առաջինը բնակվում է Հարաւային Ափրիկէի բարձրաւանդակութեան, Սուտանի բարձրութեան վերայ և առհասարակ հիւսիսային լայնութեան 10^0ից սկսած դէպի հարաւ է տարածուած. իսկ երկրորդ ցեղը բնակվում է Ափրիկէի միացեալ երկիրներում: Նեգրների ցեղը իւր բնակութեան սահմանի հիւսիսային մասերում աւելի Սովկասեան ցեղին է մօտենում իւր կերպարանքով, իսկ հարաւային մասերում — Մալայեան ցեղին: Հիւսիսային մասերում Սովկասեան ցեղին փոքր ի շատէ նման են Սահարայի բնակիչները, օրինակ Ֆուլպներն, որոնք անապատի արևմտեան մասում են բնակվում: Նեգրների Սովկասեան ցեղի հետ խառնուելովը ծագել են Ֆուլպներն, որովհետև նոցա մորթու գոյնը Սովկասեան ցեղի ժողովուրդների մորթու գոյնից սև է, բայց Նեգրներից սպիտակ է: Հարաւում Մալայեան ցեղին նման են Հոթենտոտներն և նոցա դրացի

ժողովուրդները. իրենց մորթու գույնով նորա Մալայան ցեղին նման են, իսկ գանդուրաւոր մազերով, լայն և տափակ քթով և հասա շրթունքներով՝ Նեգրների նման են։

ԱՓՐԻԿԷԻ ՔՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

ՆԵԳՐՆԵՐԻ ՑԵՂԻՆ ՊԱՏԿԱՆՆԵԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՒ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Վերին Սուդանի դետերի և Չատ լճի ափամերձներում բնակուող Նեգրները ամենալուսաւորեալները են։ Այս երկիրներից քանի հարաւ գնանք՝ այնքան ագէտ ժողովուրդներ կ՚տեսնենք։ Եւ ժամեան ժամանակներում ամենալուսաւորեալը Ֆելլաթա ժողովուրդը է, որ բնակվում է Նեգրերի շրջակայքում. սոցանից յետոյ Խորնու-ացիները, Խաբէրցիները, Ո-ապայիները և Դապֆուրները են - արևելեան Սուդանում։ Մանդինգոյ և Նօլօֆներ - արևմտքում, Ըլաձաձները և Դեբոֆենները՝ Վերին Գվինէայում, և Գաբօ-ները սաղրինում. այս վերոյիշեալներից յետոյ լուսաւորութեան կողմից երրորդ տեղը բռնում են Ֆալլաները և Սօմաու-լեները, որոնք բնակվում են Սենեգալից հարաւային և արևելահարաւային լեռնադաշտի սաորոտներում։ Ֆաստրակացից դէպի հարաւ Նեգրների ցեղին պատկանող ժողովուրդներից նշանաւորները են կաֆրները Ափրիկէի արևելահարաւային եղրում, Հոթոթինգոտները՝ հարաւում և այլն։

Ֆելլատները և Ֆելլատեան տէրութիւնները։ Մինչև այս դարի սկիզբները Ֆելլատները ոչինչ նշանակութիւն չունէին։ Նորա ցրուած էին բոլոր Սուդանի մէջ՝ պարապում էին անասնապահութեամբ. բնակվում էին վրաններով և մեծ մասամբ անմատչելի անտառների մէջ. շատ աստուածապաշտ մարդիկ էին, ազատ ժամանակները միշտ Կուրան էին կարդում։ Երբեմն երբեմն նորանից մի քանիսը գալիս էին Սուդանի մի որ և իցէ Սուլթանի մօտ և ծառայում էին և այդ տեղ մնում էին

այնքան ժամանակ, մինչև որ բուսականին հարստութիւն հաւաքէին, այնուհետև թողում էին ծառայութիւնը և գնելով զանազան ընտանի կենդանիք վերադառնում էին իրենց անմատչելի անտառները և կրկին սկսում էին թափառական կեանք վարել։ Այս դարի սկզբներում Օսման-փա-ն-Ֆոդիոյ անուանով մի մարդ բոլորովին փոխեց նորա կեանքի եղանակը, նորա բոլորովին միացրեց, վառեց պատերազմական հոգով, նորա օգնութեամբ կարճ ժամանակում բոլոր Սուդանը նուաճեց և այսպէսով հզօր և ընդարձակ տէրութիւն հիմնեց։ Ֆելլատների նուաճած երկիրները այժմ երեք անկախ տէրութիւններ են կազմում. Սօկոթոյի տէրութիւնը, մասամբ գտնվում է Չատի աւազանում և մասամբ Նիգեր գետի միջին մասը թափուող ձախակողմեան գետակիցների վերայ հիւսիսային լայնութեան 15° ից մինչև Բէնուէ գետը։ Գանդոյ տէրութիւնը գտնվում է Նիգեր գետի միջին ընթացքի երկու կողմում գրեթէ վերոյիշեալ աստիճանների տակ։ Մասինա տէրութիւնը գտնվում է Նիգերի վերին ընթացքի մի մասում. նորա ամենահիւսիսային կէտից սկսած մինչև հիւս. լայնութեան 12°։ Վերոյիշեալ երեք տէրութիւնները յայտնի են իրենց արդաւանդութեամբ, նորա ժողովուրդները պարապում էին զանազան արհեստներով. Ֆելլատները իրենք աշխատասէր երկրագործներ, շատ լաւ անասնապահներ և չափազանց լաւ ձիաւորներ են. նորա հպատակ ժողովուրդները մեծ մասամբ պարապում են արհեստներով և վաճառականութեամբ։ Ֆելլատների տէրութիւնների լուսաւորութեան մասին պէտք է ասել, որ Ֆելլատների մէջ կան այնպիսիներ, որոնք չափազանց լաւ գիտեն արաբական գրականութիւնը, անգիր գիտեն ղուրանը, Խալամի մի քանի գլխաւոր գրքերը, երևելի աստուածաբաններ և իրաւաբաններ են համարվում։

Սօկոթոյ պէրու-ին-ը իւր երկրի արդաւանդութեան, ժողովուրդի լուսաւորութեան, ճարտարութեան և բազմամարդութեան կողմից առաջինը է և Ֆելլատների երեք տէրութիւննե-

րից ամենաընդարձակը է։ Նորա նահանգներից ամենանշանաւորը Կանոն է։ Կանոյ նահանգը իւր բնական հարստութեամբ ոչ միայն Աֆրիկէում, այլ և բոլոր աշխարհիս ամենալաւ երկրներից մէկն է. Կանոյի մէջ այնպէս առատ հաց է լինում որ ոչ միայն բաւականանում է իւր բազմաթիւ ժողովուրդին, այլ և մեծ քանակութեամբ ուղարկում են արտասահման. նորա պարարտ արօտները շատ յարմար են անասնապահութեան համար, բայց այս նահանգի բնական բերքերից ամենանշանաւորը բամբակը և լեզակը է։ Երկնտանների և վաճառականութեան կողմից Կանոյ նահանգը ոչ միայն Սօկոտոյի մէջ, այլ և բոլոր Սուդանում առաջինը է և նորա հմանոռն գլխաւոր փաղաքը իրաւացի է կոչուում Սուդանի Լօնդոն*)։

Գանդոյ տէրութիւնը։ Այս տէրութեան ամենալաւ մասը Նիլների արևմտեան մասումը է, ամենալաւ նահանգը

(*) Նահանգի և քաղաքի բնակիչները պարապում են բամբակեղէն ապրանք պատրաստելով և նոցա լեզակով ներկելով։ Բացի դորանից - կաշեղէներով, օրինակի համար հողմոսափ, մաշիկ, ճանապարհի մահակ և այլն։ Վերջիշեալ բոլոր ձեռագործները գեղեցիկ և արժան են, ուստի Աֆրիկէի հեռաւոր երկիրներից անդամ վաճառականներ են գալիս այս նահանգը այդ ապրանքները գնելու համար։ Օտար վաճառականները Կանոյի բերքի փոխարէն իւրեանց երկիրներից բերում են իւրեանց ապրանքները, և այդ լինում է տարուայ չոր եղանակին։ Սուդանի վաճառականութեան ամենալաւ ժամանակը Նիգերի ափերից բերում են նիգի անուանեալ շապիկները, որոնք երկու տեսակ են լինում. մի տեսակը սեազոյն է, գուցա բամբակից գործած, շատ մեծ և այս պատճառաւ կոչուում է փղի շապիկ. իսկ միւս տեսակը նախշուն է բամբակի հետ մետաքս խառնած և կոչուում է պղպեղ կամ ցեսարկի։ Գվինեէի վաճառականները բերում են գուրջի ընկոյզ կամ Թէ Սուտանի սուրճը և մի տեսակ գաղտակուրներ։ Գոբոյէ ընկոյզները Լուբիայի նման են կարմիր կամ սպիտակ գոյնով սալորի մեծութեամբ դառը համ ունին։ Միջին Աֆրիկէում գաղտակուրը փողի տեղ է գործածվում, (30 գաղտակուրը 1 կոպէկ) Սահարիայից բերում են աղ, որով Սուդանը և Գվինեէն շատ աղքատ են. Բորնուից - աղեղորակ, Ուադայից - պըղինձ, մի քանի բերքեր բերում են և Եւրոպայից։

է Նիգեր գետ։ Գուլջայի բնակիչները Կանոյի բնակիչների նման գործածական են իւրեանց բամբակեղէն գործուածքների, փիլ և պղպեղ շապիկների և վաճառականութեան համար։ Գուլջայի քաղաքը արուեստների կողմից Սուդանի երկրորդ քաղաքը է։

Մասինոյի պէտ-նեանը գտնվում է հիւսիսային Աֆրիկէի ամենավաճառաշահ և ամենապեղցիկ Տիմբուկտու քաղաքը, այս պատճառով Եւրոպացիները նորան Նեգրների տէրութեան մայրաքաղաք են կոչում։ Տիմբուկտուն իւր անունը բռնացել է այն տեղի անունից, ուր նա շինած է։ «Տիմբուկտու», բառը նշանակում է փոս, որովհետև Տիմբուկտուն Թէպէտ Նիգերից 14 վերստ հեռու է գտնուում, բայց այդ դետի ջուրը շատանալու ժամանակ փոքրիկ նաւակներով կարելի է մինչև քաղաքը հասնել. իսկ միանգամ քաղաքի ցածր մասը բոլորովին ջրով ծածկուեցաւ, այնպէս որ մի քանի ամիս շարունակ ձկագետինները էին կենում այդ ջրի մէջ, այս պատճառով քաղաքի այդ մասը ձկագետինների թաղ է կոչուում։ Տիմբուկտուի շրջակայքը հինգ վերստ է. Տիմբուկտուի մէջ գտնվում են սալայատակ փողոցներ, ջրասահներ, երկյարկանի զարդարած տներ։ Տիմբուկտուի բնակիչները ոչ մի ճարտարութեամբ չեն պարապում, այս քաղաքի հարստութեան և վաճառականական փառքի գլխաւոր պատճառը նորա աշխարհագրական դրութիւնը է, այն ինչ Կանոյի շքեղութեան և ծաղկելու պատճառը իւր սեպհական բերքերը և ձեռագործերը են*)։

(*) Տիմբուկտուն գտնվում է՝ 1) անապատի եզերքին. 2) Սուդանի ամենամեծ գետի մօտ, որի ափերի մօտ նա ունի Կապարա նաւահանգիստը. 3) այն գալարի սկզբումն է, ուր միանում են Նիգերի վերին և ներքին ընթացքները և վերջապէս 4) նոյն գալարի այն կետի վերայ է, որ Մարօկկոյին ամենամերձ է։ Ուրեմն Տիմբուկտուն իւր տեղի դրութեամբ, Մարօկկոյի և Սուդանի մէջ եղած վաճառականութեան գլխաւոր կենդրոնը է կազմում, նոյնպէս արևմտեան և միջին Սուդանի համար, սրանց բերքերը մի կողմից Գուլջի և միւս կողմից Խասու վերայով տանում են Տիմբուկտու, ուր կամ

Խրնո-ասիները, Խափերճիները և Ո-ապոյիները բնակուում են Ջաա լճի շրջակայքում. առաջինները բնակուում են Ջաաի ձորի արևմտեան մասում, Կամադուգու, գետի երիւ կողմում. Ուազո-բէ Սօկոտոյ ակրութիւնից դէպի արևելք, Ջաա լճից և նորա Շ՚արա վտակից դէպի արևմուտք. երկրորդները բնակուում են վերոյիշեալ ձորի արևելահարաւում, Շ՚արա գետից դէպի արևելք, երրորդն էլ - արևելահիւսիսում: Դաջոպները բնակուում են Սուդանի ամենաարևելեան մասում. Մանդինգոները և Իօլոֆները բնակուում են արևմտեան մասի ամենահեռաւոր երկրներում. Այնտեղ Գամբիա և Ովոյ - Գր անդէ գետերի աւազաններում. Ընդանդիները և Դեգոնէները բնակուում են բարձրաբաւանդակ Սուդանի հարաւային մասերում: Ընիսիասյին Գվինէայում, առաջիններն — Ոսկու ափերի վերայ, երկրորդները — մինչև Սարկաց ափերը, վերջապէս Գաբո-ոները բնակուում են Գաբուն գետի ափերի վերայ - հարաւային Գվինիայում: Վերոյիշեալ բոլոր ժողովուրդները, Ֆելլաաների նման մահմեդական են. բայց նոցա մէջ կան և կռապաշտներ, որ օրէն հաւատում են իւրեանց կախարդներին և վհուկներին և կամ իւրեանց բառաբաւով գրիս — գրիսներին խորհրդաւոր զօրութեանը: Վերոյիշեալ բոլոր ժողովուրդները իւրեանց առանձին ակրութիւններ ունին, նոցա կառավարիչները կառավարում են այնպէս, ինչպէս իւրեանք կամենում են, հպատակների կեանքը իւրեանց ձեռքին է: Խրնաւաանների գլխաւոր քաղաքը է Պո-կա. Խափերներինը — Մասաենկայ, Ուազայներինը — Վ՚ապա, Ընդանաներինը

փախում են միմեանց հետ, կամ թէ այն ապրանքների հետ, որոնք բերում են Մարօկկոյից և Տրիպօլիսից: Այս փոխանական վաճառականութեան ամենագլխաւոր ժամանակը Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսները են: Վաճառականութեան գլխաւոր առարկաները են ոսկի, որ բերում են արևմտեան Սուդանից Մանդինգոյից. Սահարայից բերում են աղ, Սենեգամբիայից և Գվինէից գուրց ընկոյզներ, Գվինէի ափերից գաղտակուրներ. Բաց ի դրանից Արաբները բերում են արմաւ և Եւրոպական ապրանքները բերում են կամ Մարօկկոյից կամ Տրիպօլիսից:

— Պո-ֆոոսի, Դէպոմէյներինը — Ընդոմէ: Վերոյիշեալ ժողովուրդների երկիրները բաց ի Իօլոֆների Մանդինգների և Խրնոաների երկիրներից կարող չեն հաւասարուիլ Ֆելլաների երկիրներին, ոչ իւրեանց կլիմայի կողմից (բաց ի Գաբոների կլիմայից) և ոչ իւրեանց բնական բերքերի կողմից: Կլիմայի գլխաւոր պակասութիւնը այն է, որ շատ տաք և չոր է: Խափիների երկրում այդ պակասութեանը պէտք է աւելացնել և այն ճանճերը, որ տալիս են նոցա տերմիտները և որդերը, որոնք ամբողջ արտեր են ոչնչացնում: Այս տեղում կայ նմանապէս մի միջատ (pulex penetrans) որ տասիկ թիւնաւոր է, ոտի մատների ընդունիների տակը մտնելով կծում է և տասիկ բորբոքում է պատճառում: Խրնոի կենդանիները շատ գոված են, այս կողմից նա Սօկոտոյից բարձր է: Ուշադիր նշանաւոր են նորա երկայն մազերով ոչխարները, այծերը, եղջերաւոր անասունները, բազմաթիւ վայրենի եղերը, ձիերը, փղերը, էրեմները և գիշատիչ կենդանիները: Ընտանի կենդանիները չափազանց արժան են: Բայց չնայելով կլիմայի անյարմարութեանը և բնութեան աղքատութեանը այնու ամենայնիւ այդ երկիրներում ճարտարութիւնը փոքր ի շատէ ծաղկած է. Ուազայների մէջ ծաղկած է փոքր ի շատէ հանքային արհեստը, իւրեանց հանքերից ստանում են պղինձ. Մանդինգները և Ընդանաները կարողանում են լուանալ ոսկի. բաց ի դորանից Մանդինգները լաւ կաշիներ և կաշեղէններ են պատրաստում, եղեգներից զամբիւղներ և գլխարկներ են գործում ևն. ոսքա և Ընդանաները գարբիններ ունին, որոնք երկաթից զանազան գէնքեր են շինում, ինչպէս են՝ սուր, երկբաթգործական, ընտանեկան կտրասիներ, իսկ ոսկուց զանազան զարդեր են պատրաստում: Ընդանաների թագաւորի գահը և մի քանի ուրիշ կարասիներ զուտ ոսկուց են շինած. բաց ի դորանից Ընդանաները բամբակից գործում են բաւական պինդ և գեղեցիկ նկարներով զարդարած զանազան գործուածքներ: Վերոյիշեալ ժողովուրդների գլխաւոր պարապմունքներից մէկը կազմում է վաճա-

ականութիւնը։ Ուատայների վաճառականութեան գլխաւոր առարկան պղինձ և պղնձեղէններ են, Մանդինգների, Աշանտիների և Դեգոմէյների—գուրոյ ընկոյզը, ոսկին և փղոսկրը է, Դեգոմէյները վաճառում են նոյնպէս և սարուկներին։ Ափրիկէի այս ամենահին բերքը ձեռք բերելու համար Դիգոմէյները ժամանակ առ ժամանակ գնում են մարդիկ որսալու։ Պէտք է ասել, որ վերջին ժամանակները սարուկներին վաճառելը բաւականին նուազել և դորա փոխանակ սկսել են պարապել ուրիշ բնական բերքերի—գլխաւորապէս արմաւինու իւղի վաճառականութեամբ։ Վաճառականութիւն ունին թէ Սուատանի միջին երկիրների հետ (ապրանքը մեծ մասամբ Կանոյ են տանում. իսկ այս տեղից այլ և այլ ճանապարհներով տանում են զանազան երկիրները) և թէ Եւրոպացիների հետ (Անգլիացիների, Ֆրանսիացիների, մանաւանդ Հիւսիսային Ամերիկացիների հետ), այս վերջիններին, վաճառելու համար, ապրանքը տանում են կամ Եւրոպացւոց տղեակները և նաւահանգիստները, կամ թէ երկու Նեգրոների գիտախառնուածքի մօտ։ Նշանաւոր վաճառականական նաւահանգիստներից ամենալաւը է Այդաթ Դեկոմէյի թագաւորութեան մէջ։ Երոյիշեալ ժողովուրդներից մի քանիսը մինչև այն աստիճան լաւացել են, որ մի քանի արուեստներ, գիտութիւններ էլ գիտեն։ Օրինակ Ուատայների ուսուցիչները շատ քիչ տարբեր են Ֆելլատաների ուսուցիչներից. Մանդինգոների մէջ ամենալաւ վերաբոյժները և բժշկի օգնականները կան. Մանդինգոների և Խօսֆների մէջ երգիչները և նուագածուները առանձին դաս են կազմում և առանձին երաժշտական գործիքներ ունին։ Ընդհակառակ այսքան կրթութեան, նորա աշխարհիս մի քանի առարկաների մասին բոլորովին օտարոտի հասկացողութիւն ունին։ Օրինակ երկրիս համար ասում են որ մի ընդարձակ հովիտ է, որի վերջը ամպերով է ծածկուած, ուսոտի և մարդի համար անանցանելի է։ Նորա կարծիքով ծովը մի մեծ գետ է, որի ջուրը աղի է։ Նորա ոչնչ հասկացողութիւն չունին արեգակի մասին, չգիտեն թէ նա գիշերը ուր է գնում։ Որովհետև Գաբունները Եւրոպացիների—Ֆրանսիացիների հետ յաճախ հաղորդակցութիւն ունին, ուստի նորա կեանքի մէջ Եւրոպական սովորութիւններ շատ կան, նորա հիւրընկալ և քաղաքավարի են, իւրեանց հիւրերին մեծարում են գարեջրով դինիով ևլն. Եւրոպացիների հետ պատահելիս ամենից առաջ բարևում են։ Շատ շուտ և հեշտութեամբ սովորում են օտար լեզուներ, շատերը շատ լաւ գիտեն Ֆրանսերէն, Իսպաներէն, Պորտուգալերէն։ Նորա խրճիթները երեք մաս է բաժանվում—սեղանատուն, հիւրանոց և ննջարան, այդ խրճիթների մէջ կարելի է գտնել շատ անգամ Եւրոպական կարասիներ—մահճակալ, հանդերձների դարան (կամօա) գղտոց, բազմոց, սեղան, բազկաթոռ, աթոռ, պատկերներ, ժամացոյցներ ևլն։ Թագաւորը ունի ոսկեայ և արծաթեայ անթներ և ամենալաւ սեղանի ծածկոց։ Բայց մի և նոյն ժամանակ նորա հասարակաց կեանքի մէջ կան մի քանի օտարոտի սովորութիւններ։ Օրինակ Դեգոմէյների մէջ այնպիսի սովորութիւն է, որ հասարակաց պաշտօնները կանայք են կատարում, այն ինչ այլ մարդիկ տանը մնում են և ընտանեկան գործերը են կատարում։ Թագաւորական թիկնապահ զօրքը կանայք են. կնոջ վերաւորելու համար ասում են «դուն կատարեալ այր մարդ ես»։

Մնացեալ բոլոր Նեգրոները հեթանոսներ են. օրինակ Էֆէքը, որոնք Աբիսինիայի բարձրաւանդակութեան հարաւային մասի սատրոտում են բնակուում. Գամաո-լանները—Վաբզագֆուլի գետի և Նար-էլ-մանդէպի Նեղուցի մէջ տեղ եղած երկիրներում, Գաֆրերը (արաբական քեաֆիր, այս բնիկ անհաւատ, այս անունը արաբացիք տուել են Ափրիկէի արևելահարաւային ափերում եղած բոլոր բնակիչներին)։ Հոտենտոտները Օրանժ գետի աւազանում և ուրիշ շատերը։ Այս ժողովուրդները բնակուում են խրիերով, որոնք բաղկանում են 20—30 հազար մարդիկներից, իւրաքանչիւր խումբը իւր կա-

ամավարիչը ունի, մի քանիսների մէջ այդ կառավարիչները մի ընդհանուր իշխողի իշխանութեան տակ են դանուում, բայց թէ առաջինները և թէ վերջինները անտահման իշխանութիւն չունեն: Այս ժողովուրդների պարապմունքը անասնապահութիւնն է. կան և այնպիսիներ, որոնք երկրագործութեամբ էլ պարապում են. իսկ Սամաուլիները մինչև անգամ արուեստահմանական վաճառականութիւն են անում, որի գլխաւոր կենդրոնը նոցա քեբքեբ նաւահանգիստը է: Հայտ ժամանակ չէ, որ Հոտենտոտների մէջ սկսել են քրիստոնէութիւնն տարածել. իսկ քրիստոնէական սկզբունքի հետ սիսուում են տարածուիլ և շինական անտեսութեան սկզբունքները մինչև անգամ այն տեղերում, որոնք իւրեանց ազգաբնութեամբ շատ տակաւ են վարձատրում երկրագործի քրանաջան աշխատանքները: Հոտենտոտները սկսում են կարդալ և գրել սովորել:

Լիբերիացի Հասարակապետութիւնը: Հիւսիսային Գվինէայում, Սերմանց և Փղոսկրեայ ափերի վերայ բնակուղ Նեգրոները Լիբերիացիներ են կոչուում: Այսպէս կոչուում են նոքա այն իւրեանց կազմած տէրութեան, այն է Լիբերիայ Հասարակապետութեան անունով (liber բառից, որ նշանակում է ազատ): Այդ Հասարակապետութիւնը հիմնեցին միացեալ Նահանգների բնակիչները այս դարի սկզբներում (1822 ին) բնակեցնելով այդ երկիրներում ստրկութիւնից ազատուած Նեգրոներին: Այդ հիմնարկութեան գլխաւոր պատճառը այն էր, որ Հիւսիսային Ամերիկացիները կամենում էին մի կերպով ազատուիլ բազմաթիւ Նեգրոներից, որոնք այնտեղ սաստիկ արտօնութեամբ բազմանում էին: Գաղթականութիւնից 20 տարի յետոյ Լիբերիացիները այս տեղում, միացեալ Նահանգների նման հասարակապետութիւն հիմնեցին: Լիբերիացիների մէջ կրօնի ազատութիւն է, օրի և գինի վաճառելը կամ գնելը սաստիկ արգելած է, իւրաքանչիւր քաղաքացի պարտական է ուսում տալ իւր զաւակներին: Այժմեան ժամանակներում այդ հասարակապետութեան երկիրը

Ամերիկէի ամենալաւ երկիրներից մին է: Այս տեղում արուեստների և լուսաւորութեան ծաղկուած լինելուն պատճառ է այն որ, 1) քանի գնում է այնքան հարստանում է այդ հասարակապետութիւնը. 2) այդ Հասարակապետութեան Մոնրովիա (այսպէս կոչուեցաւ այս քաղաքը ի պատիւ Միացեալ Նահանգների Մանրոէ նախագահին, որի ժամանակ հիմնեցին այս հասարակապետութիւնը) մայրաքաղաքում, որ դանվում է Հեզուբրադայ գլխին վերայ, կայ լսարան (музей), հասարակաց գրատուն, և լրագիր է հրատարակվում, որ ամբողջ Ամերիկէի մէջ մի հատ է: Ինակիչները պարապում են յիշոյ պրմա- մշակելով և ազնուացնելով. ցանում են ֆալաֆեաի պղպեղ բերնի և կասավա: Երկրից դուրս ուղարկած ապրանքների մէջ առաջին տեղը բռնում են ձիթենին և մոլագետի պղպեղը. իսկ բրինձը և կասավան գործ է ածվում իւրեանց երկրի մէջ *):

(*) Հրեայ արմատի բունը 30 ոտնաչափ բարձրութիւն ունի: Պտուղները ողկոյզ են կազմում, ամեն ողկոյզ 600—800 պտուղ ունի, իւրաքանչիւր պտուղը ադամանդ ձուի չափ է: Այդ պտուղները այնպէս շատ ձէթ են պարունակում իւրեանց մէջ, որ ձեռքով ճմլելով կարելի է քամել միջի ձէթը: Ձէթը սաստիկ թանձր է և դեղին գոյն ունի: Ինակիչները այդ իւղով օծում են իւրեանց գլուխը և մարմինը, որով պահպանում են իւրեանց՝ ցուրտ օդի ներգործութիւնից. այդ իւղը նոյնպէս գործ են ածում այրելու համար և համեմունքի փոխանակ խառնում են կերակրի մէջ: Աշխարհիս ոչ մի մասի արմատը այնպէս մեծ նշանակութիւն չունի վաճառականութեան մէջ՝ ինչպէս Ափրիկէի արևմտեան ափի ձէթարմատը: Այժմ Գվինէի ափը տարեկան 3 միլիոն փութից աւելի ձէթարմատ է տալիս, որ Եւրոպայի մէջ գոնեա 12 միլիոն ռուբլի արժէ: Ամենից շատ ձէթ գտնում են ուղարկում Նիգերի բերանի վերայ շինած նահանգները: Այդ ձէթի վաճառականութիւնը առաւել ծաղկեցաւ այն ժամանակից սկսած, երբ Անգլիացիները դադարեցին Նեգրոների վաճառականութեամբ պարապելուց: Կասավան (մանիօկա, եատրոֆֆա) մի այնպիսի բոյս է, որ պահպանում է մարդու կեանքը, իսկ շատ անգամ մահ է տալիս նորան: Նորա հիւթը սաստիկ թունաւոր է. իսկ նորա ալիւրից պատրաստում են համեղ կերակուր, որ Եւրոպացու սպիտակ հացի և Հնդկացու բրնձի տեղը է բռնում: Կասասվայի բունը մի մետր հաստութիւն ունի, իսկ 5-6 ոտ-

Սիերրա—Լէօնի հասարակապետութիւնը բաղկացաւ այն նեգրերից, որոնց Անգղիացիները անցեալ դարի վերջերին ազատեցին հիւսիսային Ամերիկացիների ձեռքից. վերջին ժամանակները այս տեղ գաղթեցին և շատ Անգղիացիներ: Անգղիացիները մեծ եռանդով սկսեցին տարածել նոցա մէջ քրիստոնէութիւնը և կրթութիւնը, նոցա սովրեցրին երկրագործութիւն, զանազան արհեստներ, այնպէս որ այդ գաղթականութիւնը այժմ Ափրիկէի ամենալաւ երկիրներից է: Այդ գաղթականութեան մէջ ծագած է ոչ միայն երկրագործութիւնը է, անաստնանապահութիւնը, զանազան արհեստները (դարբնութիւն, հիւսնութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն) և վաճառականութիւն, այլ և գիտութիւնները և արուեստները: Բացի նախակրթական ուսումնարաններից նոքա ունին մի համալսարան, ուր ուսուցանում են Լատիներէն, Յունարէն, Եբրայեցերէն և բնական գիտութիւնները: Գլխաւոր քաղաքը Ֆրիտաուն է կոչուում, որ կնշանակէ ազատ քաղաք:

Նաչափ բարձրութիւն: Կարծր, հաստ և բազմաճիւղ արմատին վերայ գտնվում են ելակներ, որոնք այդ բոյսի նշանակութիւն ստանալուն միակ պատճառը են: Կաստան աճելու և պտղատու լինելու համար չոր երկիր է հարկաւոր: Այդ բոյսը բազմացնելու համար բոյնը մի քանի կոր են անում և ծուռը ցցում են երկրի մէջ: 5-6 ամսից յետոյ արմատի վրայի ելակները արդէն կարելի է գործածել: Գործածելու համար առաջուց կըճատում են, միջուկը մանրում են, աղում, քամում և յետոյ բարակ բլիթներ են թխում: Թունաւոր զօրութիւնը շուտ շուտ ոչնչանում է երբ զանգուածը փոքր ինչ տաքացնում են. Այսպէս եթէ կասավայի արմատը բարակ կտրատենք և մի քանի ժամ տաք արեգակի տակ դնելուց յետոյ անասուններին տանք ուտելու, անասունը ոչինչ վնաս չէ կրում, այն ինչ եթէ նա ուտէ թարմ բոյսը՝ խեղդն կը թունաւորուի և շուտով կմեռնի սաստիկ տանջանքով:

ԿՈՎԿԱՍԵՍԱՆ ՑԵՂԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՒ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Պերբերներ: Կովկասեան ցեղն ժողովուրդներից իւրեանց բազմաթիւամբ և զօրութեամբ առաջին տեղը բռնում են Պերբերները կամ Տուարիները: Այս ժողովուրդի երկու անուանքը ևս Արաբական բառերից են ծագած: Առաջինը ծագել է Արաբական պէր բառից, որ մարդ է նշանակում, երկրորդը փուարէք բառից — ուրացող: Երկրորդ անունը նոցա տուել են Արաբացիները այն պատճառով, որ նոքա ուրացան իւրեանց նախկին կրօնը — մի քանիսը քրիստոնէութիւնը, իսկ մեւնները — Մովսիսականութիւնը և Մահմետական դարձան: Եւրոպացիները Պերբեր կոչում են Մէջերկրական ծովի ափերի վերայ բնակուղ բոլոր ցեղերին, իսկ Տուարեգ կոչում են միայն Սահարայի արևմտեան կիսի բնակիչներին: Պերբերները ծագել են Ափրիկէի նախկին բնակիչների — Նումետացիների, Կարթագինացիների խառնուելուց Յոյների, Հռովմայեցիների, Վանդալների, Եգիպտացիների և Արաբացիների հետ: Մինչև 7-դ դարը նոքա բնակուում էին Ափրիկէի հիւսիսային կողմում, բայց Արաբացիներին գալով նոքա տարածուեցան Ատլասեան լեռների մէջ Սահարայում և այս անապատի արևմտեան մասում: Պերբերները Սահարայում ապրեցին Նեգրերի ցեղերին, խառնուեցան նոցա հետ և մի առանձին ժողովուրդ կազմեցին, որ իւր կերպարանքով փոքր ինչ զանազանվում է իսկական Պերբերներից: Նուն Պերբերի մորթու գոյնը սպիտակ է. միայն դէմքը արեգակի տաք ճառագայթների զօրութիւնից թուխ գոյն է ստացել: Նեգրոների և Պերբերների խառնուրդից ծագածների մորթու գոյնը մուգ է: Սորանից յետոյ միւսանգամ Պերբերները եկան Սահարայ, որոնք նուաճեցին իւրեանց Համազգիներին, որոնք ծագել էին Նեգրոների խառնուրդից, սարսուռ գարձրին նոցա և մինչև այժմ տիրապետում են և կոչուում են Իմոշաղ այս ինքն ազատներ, իսկ իւրեանց ձե-

ռի տակ նուաճուածներին կոչում են անապատ կամ կմպաս: Սահարայի Պերբէրներին Եւրոպացիները Տուարէդ են կոչում: Խմրատը արածացնում է խմոշարի հօտը, պահպանում է այդին, հաւաքում է պտուղները — մեծ մասամբ հնդկ — ոչխար և նշանակեալ մասը տալիս է իւր տիրոջը*):

(*) Հնդիկ արմաւենին աշխարհիս ամենանշանաւոր բոյսերից է: Ինչպէս կարծում են, նորա բուն հայրենիքը Արաբիան է. բայց այժմեան ժամանակներում նա հիւսիսային Աֆրիկէի գլխաւոր բոյսերից մին է, բուսնում է նմանապէս արևելեան Հնդկաստանում: Սահարայի ովազիսների մէջ ամեն տեղ բուսնում է Պերբէրացիների բարձրաւանդակութեան ստորոտում հընդիկ արմաւենիները ամբողջ անտառներ են կազմում, այս պատճառով այդ երկիրը Բէլէդ—էլ—Դեղիդ է կոչւում այս ինքն Հնդիկ արմաւենիների երկիր: Կենդանիների մէջ ուղտը, իսկ բոյսերի մէջ Հնդիկ — արմաւենին անբժամապաշտպանելի դրուագներ են: Այն հողում, ուր ոչնչացնում են ուրիշ բոյսերը (տաք, աւազոտ, աղօտ հողում) այն տեղ շատ յաջողակ զարգանում և աճում է Հնդիկ — արմաւենին, նորա համար բաւական է միայն փոքր ինչ խոնաւութիւն, մի բնական առուակ կամ երբեմն արհեստաբար ջրելը շատ բաւական է նորան և նա կնիհարանայ եթէ լաւ պարարտ հողի մէջ տնկեն: Այն երկրում, ուր Հնդիկ արմաւենին շատ բազմաթիւ և առատաբեր է, այն տեղ կեանքի միւս բոլոր պէտքերը պակասում են, այն տեղին անպատճառ մօտ է անապատը: Այդ ծառերը զանազան բարձրութիւն են ունենում 40—70 ոտնաչափ, գլուխ և տերևները՝ որոնց երկայնութիւնը երկու գրկաչափ է, բնիկ ծայրին պսակ են կազմում, ընդհանրապէս ասելով այս ծառը կոկոսեան արմաւենուն շատ նման է: Ծաղկում է գարնան Ապրիլ ամսում: Պտուղները ժողովում են աշնան — Սեպտեմբերին, Հոկտեմբերին և Նոյեմբերին: Պտուղները ողկոյզ են կազմում, որոնք թուով 20 են լինում իւրաքանչիւր ծառի վերայ: Իւրաքանչիւր ողկոյզը 200 Հնդիկ արմաւից է բաղկանում, իւրաքանչիւր ծառից 200—300 ֆունտ արմաւ է ստացվում, որ իւր տեղում մինչև 25 ռուբլի արժէ: Միջերկրական ծովի նաւահանգիստներում չորս անգամ աւելի է լինում այդ գինը: Հնդիկ — արմաւը ուտում են թարմ չորացրած, հում և եփած: Եթէ Հնդիկ — արմաւը կերակուրի տեղ գործածուի սաստիկ տաքացնում է ուտողին, ուստի ճանապարհորդները չեն գործածում նորան՝ վախենալով որ ճանապարհին ծարաւը նոցա չնեղացնի: Հնդիկ — արմաւը առաւել համեղ ճաշակ է՝ երբ թխում են գարու ալիւրից շինած խմորի մէջ: Պաշարի

Պերբէրները մի ընդհանուր լեզուով են խօսում, որը փոքր առ փոքր անհետանում է և որի տեղը բռնում է արաբական լեզուն. նոցա կրօնը մահմեդականութիւնն է: Բայց շատերը

համար պահելու պտուղները յետագայ կերպով են պատրաստում. պտուղները քաղելուց յետոյ փռում են չորանալու և երբ չորանալով քարի նման կարծրանում են, այն ժամանակ թաղում են աւազի մէջ, ուր մնում է մինչև 2 տարի. աւելի երկար պահում չեն, ապա թէ ոչ որդերը կուտեն բոլոր միջը և այնուհետև կմնայ միայն կօրիզը: Հնդիկ — արմաւից ալիւր են աղում, որ գործ են ածում հացի փոխարէն. թարմ պտուղներից հիմը քաղում և օշարակ են շինում, երբեմն օշարակից օղի են քաշում, իւղ են հանում նոյնպէս: Եթէ ծառի միջուկը հանենք, այն ժամանակ այդ կազմուած փոսի մէջ զովարար քաղցր հիւթ է հաւաքվում, որը մի քանի ժամից յետոյ թթվում է և սաստիկ հարբեցնող զօրութիւն է ստանում: Մի խօսքով Հնդկաստանի Հնդիկ — ընկուզենու նման, Հնդիկ — արմաւենին Աֆրիկէի և Արաբիայի անապատների բնակիչների շատ օգուտ է տալիս, որ է ապացոյց նոցա առածը թէ «փորձառու տանտիկինը մի ամբողջ ամիս զանազան կերակուրներ կարող է եփել նորանից: Սահարայի բնակիչների համար Հնդիկ արմաւենին այն նշանակութիւնը ունի՝ ինչ որ խաղաղ Ովկիանոսի բնակիչների համար — հացի ծառը: Նա ոչ միայն կերակրում է մարդին, այլև ընտանի անասուններին — ուղտին, ձիուն, շանը նոյն: Հնդիկ — արմաւենու կորիզները անգամ շատ տեղեր գործ են ածում անասուններին կերակրելու համար: Բայ ի կրակրից Հնդիկ — արմաւենին ուրիշ օգուտ ևս է տալիս, ընկից շինում են զանազան կարասիներ և վառում են, աղբատները ճիւղերից խրճիթներ են շինում, տերևներից հիւսում են զամբիւղ, պարաններ, գորգ և ուրիշ գործածներ: Այս ծառը բազմացնելու համար կամ կօրիզը կամ թէ մատաղ ճիւղերը տնկում են: Առաջին տեսակից բուսած ծառը 5 տարուց յետոյ է պտուղ տալիս, իսկ երկրորդ տեսակինը տասն և չորս տարուց յետոյ. Հնդիկ — արմաւենին մինչև 100 տարի տարում է, պտուղները զանազան տեսակ են լինում. Ֆեզզանում մինչև 37 տեսակ Հնդիկ արմաւենի կայ, որոնցից իւրաքանչիւրը առանձին անուն ունի: Աֆրիկէի հիւսիսային երկիրների վաճառականութեան գլխաւոր աղբիւրը Հնդիկ — արմաւը է, այդ վաճառականութեան գլխաւոր կենդրոնը Տրիպօլիսը և Աղէքսանդրիան են: Սահարայի ովազիսներում, բաց ի Հնդիկ արմաւենուց, կան նոյնպէս Արաբական խէժի ծառ և մանանայի թուփ: Այս վերջինի տերևները և կեղևը ձիուն նման սպիտակ հիւթ են տալիս, որը օդի մէջ պնդանում է:

Մահմետական դաւանութիւնից միայն այն դիտեն, որ "բաց ի ձշմարիտ Աստուծուց ուրիշ Աստուած չկայ, իսկ Մահմետը նորա մարգարէն է,,. որովհետև բոլորովին Բրաբերէն չգիտեն, որով գրուած է մահմետականների դաւանութիւնը: Կայերով երկրի հանգամանքներին պերբերները կամ նստակեաց են, ինչպէս Ալաս լեռների պաղատու հովիտներում, և կամ թափառական՝ օրինակ Սահարայում: Հեռուհեռու նոքա ուրիշ ժողովրդների նման մի հատատութիւն ունին: Խոշարները որոնք բնութիւնից հարկադրուած են դրեթէ միայն թափառական կեանք վարելու, պարապում են անասնապահութեամբ և վաճառականութեամբ: Այս նպատակով նոքա թափառում են Սահարայի անապատի մի ծայրից մինս ծայրը և այդ տեղի հանքային գլխաւոր բերքը — աղը և Ընդիկ — արմաւը տանում են Սուդան. իսկ այս վերջինից տանում են հիւսիսային Եվրիկէի զանազան երկիրները ոսկի, փղոսկր և մի քանի ձեռակերտներ: Արաբից դէպ ի հիւսիս և ընդհակառակը թափառելու ժամանակը որոշում են տարուայ եղանակները: Ձմեռը և գարունքին երբ Սահարայի ովազիսները Խոշարների հօտին բաւականին կերակուր են մատակարարում, Խոշարները չեն թափառում. բայց ամառվայ սկզբին երբ սկսւում է երաշտը, նոքա բեռնաւորում են իւրեանց ուղտերին զանազան բեռներով և կանանց ու երեխաների հետ գնում են դէպ ի հիւսիս Ալաս լեռների սառրատը, այդ տեղերում ճնում են ամբողջ ամառը, և ամառուայ վերջին կրկին վերադառնում իւրեանց նախկին ովազիսները: Սուդանի և Ալիբիկէի հիւսիսային երկիրների միմեանց հետ ունեցած հաղորդակցութիւնում Խոշարները մեծ նշանակութիւն

ունին: Առանց նոցա կամաց ոչ մի վաճառական կարող չէ անվտանգ անցնել Սահարայից: Այսպէս ուրիշն կարաւանի ճանապարհը նոցա ձեռն է: Իսկ այդ բանը կարաւաններին համար մեծ դժուարութիւն է, մանաւանդ որ Խոշարները զանազան ցեղերի են բաժանուած և իւրաքանչիւր ցեղ նշանակեալ գումար է առնում կարաւանից, երբ նա անցնում է այդ ցեղին պատկանեալ երկրից: Երաբները բոլորովին իրաւացի են ասում, որ Սահարայում միակ թշնամիները են խեցգետինը, տուարէգները:

Երաբները և Երաբական տէրութիւնները:

Երաբները 7 դ դարում Սուէզի պարանոցից անցնելով եկան Եգիպտէ և արագութեամբ տարածուեցան նորա հիւսիսային երկիրներում, Սահարայի արեւելեան մասում մինչև Կարմիր ծովի ափերը, մինչև Աբեսինիայի բարձրաւանդակութիւնը և Սուդանի միջին երկիրները: Այդ Երաբները հիւսիսային Եվրիկէում ոչ միայն կրցրին իւրեանց նախկին նշանակութիւնը, այլ և շատերը մինչև անգամ զրկուեցան իւրեանց ազատութիւնից. կան և այնպիսի տեղեր, ուր նոքա ողորմելի դրութեան մէջ են: Ամենողորմելի դրութեան մէջ են Եգիպտոսի Երաբները, ուր նոքա Ֆելլախ են կոչւում և բնակիչների մեծ մասը են կազմում. այս տեղ Տաճկաստանի լծի տակ սաստիկ տանջւում են: Միայն Տրիպօլսում, Տունիսում և Ալժիրում պերբերների հետ հաւասար իրաւունքներ ունի և լաւ վիճակ. առաջին երկու երկիրներում նոքա շատ փոքր կախում ունին Տաճիինիերից, իսկ վերջինում նոքա Եւրոպացիների — Ֆրանսիացիների իշխանութեան տակ են գտնվում: Մարոքկոյում նոքա բոլորովին անկախ են: Հիւսիսային Եվրիկէում միայն մի անկախ տէրութիւն կայ՝ որ է Ֆէս և Մարոկկ անուանեալ տէրութիւնը: Մարոքկոյում բաւականին բազմամարդ քաղաքներ կան, որոնցից գլխաւորները են ցամաքայինները Մարոկկ և Ֆէսոսցանից առաջինը Մարոքկան տէրութեան մայրաքաղաքը է: Ծովափնեայ քաղաքները են Տանժէր և Մագդաբ: Տաճկաս-

տանում գործածական ֆէս անունով զլեաւորը այս տեղից է ստացել իւր անունը։

Ընթացքը տարածուած են նոյնպէս Հարաւային Ամերիկէի արևելեան ափում, այն է Օրանոքէքէի ափերի և մի քանի կղզիների վերայ, ինչպէս են Ակոպորայ, Կամոչեան և այլն։ Օրանոքէքէի ափի վերայ նոքա առանձին տերութիւն ունին և պատրաստում են տորմիկների և փղոսկրի վաճառականութեամբ։

Եղեռվագիները կամ Ասպէները և Աբեսինիայի կամ Ասպէշատանի տերութիւնները։ Ասպէները իւրեանց դէմքով (մօրթու գոյնը թուխ է) շատ նըման են հարաւային Եւրոպացիներին։ Բնակուում են Աբեսինիայի բարձրաւանդակութեան վերայ և նորա շրջակայքում; կապոյտ Նեղոսի և Ատբարայ գետակի աւազանների վերին մասերում խօսում են այն լեզուով, որով խօսում են առհասարակ Նեղոսի վերին մասերի բնակիչները. կրօնը քրիստոնէական է, և Հայերի դաւանութեան շատ նման է։ Մինչև 16 դարը Հասպէները մի զօրեղ տերութիւն ունէին, որովհետև նոցա երկիրը անմատչելի է։

Բայց նոքին երկպառակութիւնը տասնիկ թուլացրեց նոցա զօրութիւնը, և չնայելով երկրի անմատչելի դրութեանը դրացի Նեգրոսների Հալլա ցեղը կարողացաւ նոքա մանել, և վերջապէս այդ երկպառակութիւնների հետևանքը այն եղաւ, որ Աբեսինիայի զօրեղ տերութիւնը բազմաթիւ անկախ տերութիւնների բաժանուեց։ Բայց այն տերութիւններից՝ որոնք իւրեանց թուլութեամբ Հալլերի ձեռքը ընկան, մեզ ծանօթներից նշանաւորները են արևելքում Տիգրէ, որ Ատբարայի կամ Տակացի վերին մասերում է գտնվում, արևմտքում Գոնդար, որ Հայանա լճի շրջակայքումը է, հարաւում Շօա ամենազօրեղը է*)։

(*) Բոյսերի և կենդանիների կողմանէ Աբեսինան շատ հարուստ է. բոյսերի միջից Աբեսինայի սեփհականութիւնը կազմում է մի տեսակ հացի դարլարի՝ որ պէֆֆ է կոչուում։ Այս բոյսի սերմերը գնատեղի ղեսի չափ են,

Տաճիկների երկիրները։ Ափրիկէում Տաճիկներին պատկանում են չետասպ երկիրները՝ Նեղոսի աւազանում — Նգէլպոոը, Նուբիան, Սենոա ազգը և Կորդոֆանը. Միջերկրական ծովի ափին-Տրիպոլիս և Տունիս. Սահարայում-Ֆեզանի ովասիսը։ Բնակիչների մեծ մասը Արերէրներ և Ընթացներ են։ Վերջիններըը Եգիպտոսում Ֆելլահ են կոչուում։ Վերոյիշեալ բոլոր երկիրները Տաճիկներից փոքր կամ շատ կախումն ունին։ Այդ երկիրներից ամենանշանաւորը Եգիպտոսը է։ Եգիպտոսի տիրապետողը փոխարքայ է։ Եգիպտոսի փոխարքան ինքնիշխան կառավարիչ է և միայն Սուլթանին 1) տարեկան $1\frac{1}{2}$ միլիոն ռուբլի հարկ է տալիս. 2) բարձրաստիճան կառավարիչներին Սուլթանը է նշանակում. 3) Եգիպտոսի փոխարքան 16,000 զօրքից աւելի չափաք է ունենայ։ Եգիպտոսի քաղաքական կառավարութիւնը Եւրոպական կառավարութեան շատ նման է։ Նրբքին գործոց համար առանձին նախարարութիւն կայ. բացի դորանից Եգիպտոսը բաժանած է նահանգների և գաւառների,

լաւ ալիւր են տալիս, որից և շատ լաւ հաց է լինում։ Աբիսինեան ընտանի կենդանիները շատ ունի։ Կապիկները ամբողջ խումբերով թափառում են Աբիսինիայի անտառներում իւրաքանչիւր խմբի մէջ 1000 կապիկից աւելի է լինում, Բաբէնները այնպէս բազմաթիւ են, որ մինչև անգամ քաղաքների և գիւղերի շուկաներում են թափառում։ Հաբէշները նոցա Եւրոպացի կախարդներ են համարում, ուստի և չեն սպանում։

Մշկապորտ կոպոռ, մշկատորտ այծեամի նման մուշկ է տալիս, որ արևելքում գործ են ածում անուշահոտ օծանելիքի փոխարէն. իսկ Եւրոպայում գործ է ածւում բժշկականութեան մէջ։ Միջատների միջից նըշանաւոր է պաղպաղչիա անունով ճանճը։ Անձրևային ժամանակներում այդ ճանճերը ցածր խոնաւ տեղերում սաստիկ շատանում են։ Կենդանիների վերայ նստելով շատ անգամ այնքան խածատում են, որ կենդանին մեռնում է, փղերը և ռնկղջիւրները ընդհակառակ իւրեանց հաստ կաշուն, այդ կենդանիներից ազատուելու համար պառկում են ցեխի մէջ։ Այս թռչնատոր ճանճերից ազատուելու համար Հաբէշները անձրևային ժամանակներում իւրեանց անասունների հետ բարձրանում են լեռների վերայ և այն տեղում բնակուում։

որոնք իւրեանց նահանգապետները ունին: Իւրաքանչիւր գաւառը վիճակներու է բաժանուած, իսկ վիճակները—կանտոններու, որոնցից իւրաքանչիւրը մի քանի գիւղերից է բաղկանում. իւրաքանչիւր գիւղ մէջ գիւղապետ կայ, որ երկիրը բաժանում է ֆելլահների մէջ, վճռում է նոցա մէջ եղած դատերը և հարկ է հաւաքում: Մահմեդականների դատաստանական կառավարութեան հիմը Ղուրանը է, գլխաւոր դատաւորը քարձրագոյն Ղազին է որ Գահիրէի մէջ է բնակւում: Նահանգներում նա իւր տեղակալները ունի: Ընդհանուր Եգիպտոսի կառավարութեան արտաքին բարեկարգ ձևերին, ֆելլահների (մօտաւ 5 միլիօն) վիճակը շատ անտանելի է: Եգիպտոսում երկիրը կառավարութեան սեփականութիւնը է կազմում: Իսկ ֆելլահները վարձկան մշակներ են տէրութեան համար և իւրեանց աշխատանքի համար ստանում են հնձի 5-դ մասը, այս սակաւ քանակութիւնից հանում են այն կենդանիների և գործիքների գինը, որ նոքա գործ են ածել երկիրը մշակելու ժամանակ. և սորա հետևանքը այն է, որ ֆելլահները այնքան են գործում, որ վերջանալուց յետոյ իրանց այնքան գումար է մնում, որ հազիւ հազ կարողանում են ապրիլ մինչև յետագայ հունձը: Բացի դորանից տէրութիւնը այնքան հարկ է դրել նոցա վերայ, որ ֆելլահը բոլորովին սրտաբէկ է եղած, և եթէ նա պատահում է որ և իցէ արհեստով, կամ բարւոքում է իւր տնական կառավարութիւնը, այդ միայն այն պատճառով է անում, որ կարիքը է ստիպում նորան: Օրինակ եթէ ֆելլահը արմաւենի անկ, դորա համար նա պէտք 90 կոպէկ հարկ տայ, եթէ կարէ արմաւենին նոյնպէս պէտք է հարկ տայ, եթէ ծախէ իւր կովը—կաշու գինը պէտք է տէրութեանը տայ. ձուկ է բռնում հարկ է տալիս. մի խօսքով ամէն արհեստի ամէն առարկայի պարապմունքի կամ գործի վերայ մեծ հարկ է դրած. փողոցում վաճառուող ուտելիքներու համար անգամ 60—80 առ կոսիք հարկ են առնում: Այս բոլոր հարկերը միայն ֆելլահների վերայ է դրած: Այն ինչ Եգիպտոսի հողը այնպէս արգա-

ւանդ է, որ տարէնը երեք հունձ է լինում: Այժմ Եգիպտոսի գլխաւոր բերքը բամբակը է: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների մէջ եղած պատերազմի ժամանակից սկսած բամբակի ցանքը—տարից տարի շատանում է: Ներքին Եգիպտոսում շատ լեզակ է լինում. տարէնը 10 անգամ են քաղում: Վերին Եգիպտոսում բուսնում է շաքարեայ եղէգը, թմենին, ձիթենին, վարդենի և խաշխաշ, որից օպիում են շինում: Եթէ ֆելլահների վիճակը բարելաւ լինէր ինչ մեծ օգուտ կարելի էր ստանալ, մանաւանդ որ Եգիպտոսի մի կողմում կարմիր ծովը է, միւս կողմում Միջերկրական ծովը. իսկ Եգիպտոսի մի ծայրից մինչև միւս ծայրը ձգվում է Նեղոսը: Միջերկրական ծովի միջնորդութեամբ նա հաղորդակցում է հարաւային Եւրոպայի հետ, կարմիր ծովով—Արաբիայի արևմտեան ափերի հետ, Նեղոսով Ափրիկէի ներքին երկիրների հետ: Այս տեսակ յարմար դրութեան պատճառով, Եգիպտոսի մի քանի տեղերը իւրեանց ծաղկեալ վաճառականութեամբ աշխարհիս առաջնակարգ երկիրների կարգիցը են: Վաճառաշահ քաղաքներից նշանաւորներն են՝ Միջերկրական ծովի վերայ-Ալէքսանդրիայ. Նեղոսի ափին—Գահիրէ, Ասուան և Կարթում. Միջերկրական ծովի վերայ գտնւում են նոյնպէս Ռոզեթտա կամ Թռաշիտ և Դամիէթտա կամ Դամիատ. կարմիր ծովի վերայ—Սէվէյշ կամ Սուէզ, Կոսէյր և Սուաքին: Եգիպտոսի հետ վաճառականութիւն ունեցողները են՝ Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Իտալիան, Տաճկաստանը և այլն *):

(*) Եգիպտոսի աշխարհագրական դրութիւնը վաճառականութեան համար մեծ նշանակութիւն ունենալուն ապացոյց կարող է լինել Սուէզի ջրանցքը: Սուէզի ջրանցքի նախագիծը տուեց Լեսեպս ճարտարապետը, իսկ դրամական օգնութիւն տուին Եւրոպական վաճառականների ընկերութիւնները և մի քանի տէրութիւններ (1854 թ): Այս ջրանցքը Միջերկրական ծովը Կարմիր ծովի հետ միացնելով երկու անգամ կարճացնում է Եւրոպայից արևելեան Հնդկաստան գնալու ճանապարհը: Այս ձեռնարկութեան դժուարութիւնը հասկանալու համար, հարկաւոր է մի-

Եւրոպայի վաճառականութիւնը միջին Ափրիկէի և Հընդկաստանի հետ լինում է Ալէքսանդրիայով. այդ վաճառականութեանը շատ օգնում են Մահմուտէ ջրանցքը և մի երկաթուղի, որ Գահիրէէ միջից անցնելով գնում է կարմիր ծովի ափին Սուէզ քաղաքը. ջրանցքով Ալէքսանդրիան միանում է միջին Ափրիկէի հետ, իսկ երկաթուղին միացնում է նորան Գահիրէի և Սուէզի հետ։

այն ասել, որ Սուէզի պարանոցի ափերից սկսած Միջերկրական և Կարմիր ծովերը բաւականին երկար տեղ շատ ծանծաղուտ են, պարանոցը ինքը աւազուտ է և իր կենդրոնում բաւականին մեծ բարձրութիւններ ունի։ Այդ դժուարութիւնները հեռացնելու համար, ուրեմն հարկաւոր էր. 1) ծովերի մէջ նաւանցեր շինել. 2) ամեն զգուշութիւններ պէտք էր գործ դնել, որ ջրանցքը չլցուի աւազով. 3) ճեղքել լեռները, ջրանցքի մի ծայրը սկըսում է Միջերկրական ծովի վերայ եղող Պորդ—Սայիդից, իսկ միւս ծայրը վերջանում է Սուէզ քաղաքում Կարմիր ծովի ափին. 150 վերստ երկայնութիւն ունի։ Այս ջրանցքով միայն շոգենաւեր կարող են անցնել, այն պատճառով որ Կարմիր ծովի ափերին վերայ շատ ժայռեր և ապառաժներ կան, ուրեմն և վտանգաւոր են առագաստաւոր նաւերի համար, բացի դորանից Կարմիր ծովի հարաւային մասը Մուսսոնների ներգործութեան տակ լինելով, գրեթէ անկարելի է որ առագաստաւոր նաւերը բաբէլ-Մանդէպի նեղուցից անվտանգ դուրս գան կամ ներս մտնեն։ Միջերկրական և Կարմիր ծովերի մէջ ջրով հաղորդակցութիւնը առաջին անգամ սկսուեցաւ 1865 թ. Յունվարի 1ին Լեսսէպսը ինքը գնաց Պորդ—Սայիդից Սուէզ։ Լեսսէպսը անցաւ մի այնպիսի նաւակով, որի վերայ 20—30 մարդ էր տեղաւորուում։ Շինութեան պայմանին նայելով 1869 թուի Սեպտեմբերի 1ին պէտք էր բոլորովին պատրաստ լինէր ջրանցքը. բայց ջրանցքը բացուեցաւ մի և նոյն տարուայ Հոկտեմբերին։ Այս ջրանցքի բացուելով շատ երկիրներ և ծովեր կորցրին իւրեանց նշանակութիւնը։ Այս անցքը գրեթէ բոլորովին հաւասար է Հնդկաստանի ծովային ճանապարհը գտնելուն, ինչպէս այն ժամանակ Եւրոպական տէրութիւններից և քաղաքներից մի քանիսը կորցրին իւրեանց բնակիչների մեծ մասը և աղքատացան. իսկ ուրիշները սաստիկ արագ հարստացան և բազմամարդ եղան, մի և նոյնը կլինի և այժմ։ Միջերկրական ծովի Հնդկաստանի ծովափնեայ քաղաքների ապագան շատ բաղդաւոր կլինի։

Գահիրէն գտնուում է Եւրոպայի, Ասիայի և Ափրիկէի վաճառականական ճանապարհների միութեան տեղում, ուստի հիւսիսային Ափրիկէում առաջին վաճառաշահ և բոլոր Եւրոպական աշխարհի մայրաքաղաքը է, իր բնակիչների բազմութեան կողմից ամբողջ Տաճկաստանի մէջ Կոստանդնուպօլսից յետոյ երկրորդ տեղը է բռնում (300,000 բնակիչ ունի)։ Գահիրէում գտնուում է մի ճեմարան, որ բոլոր մահմեդական աշխարհի մէջ առաջին տեղը է բռնում։ Ընթական գրականութեան, Մահմեդական աստուածբանութեան և օրէնքների ամենաքաջ տեղեակները՝ արևելքում Գահիրէի ուսուցիչները են *)։

Ասուանը այն կենդրոնը է, ուր աշունքի և ձմեռուան ժամանակներում գնում են Եգիպտոսի վաճառականները իւրեանց Եւրոպական ապրանքներով, այս տեղում վարձում են ուղտեր և գնում են Կոպտոս, որ կամ ծախեն իւրեանց ապրանքը և կամ թէ փոխանակին միջին Ափրիկէի բերքերի հետ։ Կարաւանի մէջ ամենավաճառականութիւն է լինում, ուր փոխանակում

(*) Ճեմարանի մէջ ուսուցանելու առարկաները են՝ արաբական լեզուի բառաշինութիւնը և համաձայնութիւնը, ճարտասանութիւն, տաղաչափութիւն, տրամաբանութիւն, աստուածաբանութիւն, զուրանի մեկնութիւն, մարգարէի մասին աւանդութիւններ, ամբողջ օրէնսգիտութիւն, այս ինքն հոգևոր կանոններ, բարոյական, քաղաքական և քրէական օրէնքները, որոնք մեծ մասամբ զուրանի և մահմեդական աւանդութիւնների վերայ են հիմնուած, թուաբանութիւն, ալժերրա և աստեղաբաշխութիւնից համառօտ տեղեկութիւններ, որոնք հարկաւոր են օրացոյց յօրինելու, տօների և այլ կրօնական սովորութիւնների ժամանակը որոշելու համար։ Իսկ մեծ նշանակութիւնների մասին Տաճիկ ուսուցիչները՝ շատ մութ հասկացողութիւն ունին, օրինակ աշխարհագրութիւն բոլորովին չգիտեն, չեն կարող ճշգութեամբ որոշել զանազան երկիրների դրութիւնը և երկիրս ընդունում են ինչպէս մի ընդարձակ դաշտ, որ շրջապատած է ովկիանոսով և այս վերջինս—լեռներով, նորա հաւատում են որ մեր երկնքից բարձր ուրիշ 6 երկինք ևս կայ, որին ապացոյց են բերում մահմեդի 7-դ երկինքը ճանապարհորդելը. կրօնը արգելում է ուսանել բժշկութիւն։

են հիւսիսային Ամերիկէի և մինչև անգամ Եւրոպայի ապրանքները միջին Ամերիկէի ապրանքների և բերքերի հետ։

Երևելեան Սուդանի համար կարտումը այն նշանակութիւնը ունի, ինչ որ Տիմբուկտուն՝ արևմտեան և կանոն՝ միջին Սուդանի համար։ Ս յ ս տեղ հաւաքւում են Եգիպտոսի, սպիտակ Նեղոսի աւազանի և Սուդանի վաճառականները։ Տամկաստանի վաճառականները բերում են Ընդղեայ մուսլինը և կալենկոր, պողպատեայ ձեռագործներ, սուր մարգարիտ, մահուտ, ասուղէղն գործուածներ, վառօդ, ծխախոտ, օղի, շաքար, սուրճ, բրինձ և կորաղներ։ Կորոֆանից բերում են. խէժ, փղոսկր. իսկ սպիտակ Նեղոսի երկիրներից սարուկներ։ Եգիպտոսի և Սիրայի մէջ եղած հաղորդակցութիւնը Ռօվէպապայով և մանաւանդ Դամիէթապայով է լինում։

Ընդղեայի և Ընդկատանի մէջ եղած հաղորդակցութիւնը Սուեզով է լինում։ Կոսէյրի մէջ հաւաքւում են միջին Ամերիկէի ուխտագնացները Մէկկայ և Մեդինէ գնալու համար։ Սուաքինը կենդրոն է Եւրոպայից միջին Ամերիկէ և ընդհակառակը գնացող ապրանքների համար։

Բացի դորանից Եգիպտոսում հնութեան ճանապարհներից նշանաւոր են կոթողները, ագիներկները (յուշիկապարիկներ) տաճարները, պալատները, բուրգերը, յուրանները, սարսերկրեայ դամբարանները և այլն։ Ս յ ս յիշատակարանների նիւթերը երկրի հին բնակիչները սանում էին Նեղոսի արևմտքում եղած գրանիտեայ, աւազոտ և կրոտ լեռներից։ Ս յ ս յիշատակարանները զարմացնում են մարդու իւրեանց բազմութեամբ, մեծութեամբ և արտաքին նկարներով և բազմանշան հերոգլիֆներով այս յատկութիւնների կողմանէ աշխարհիս միջի ամենահին յիշատակարանների մէջ առաջին տեղը են բռնում նոքա։ Նեղոսի Գետ անունով փոքրիկ կղզու վերայ բազմաթիւ տաճարների աւերակներ կան, որոնք տարածւում են մինչև հին Թեբայ քաղաքը։ Ս յ ս քաղաքի թէ սարերկրեայ և թէ երկրի վերայ եղած տաճարների, պալատների աւերակները հին ճարտարապետութեան ամենաարժէքի և հարուստ մնացորդները են։ Ս յ դ աւերակները ցրուած են Նեղոսի հովտի մէջ 2 մղոն տարածութեան վերայ։ Թեբայի մէջ այնպիսի սիւներ կան, որոնց շրջանը 20 ոտնաչափ, իսկ բարձրութիւնը 40. արձաններից ամենափոքրը 90 ոտնաչափ բարձրութիւն ունի, մի նստեալ արձան 30 ոտնաչափ բարձրութիւն ունի, այս է Միմնոնի երևելի արձանը, որ արեգակի ծագելու ժամանակ զանազան ձայներ էր հանում։ ,, Ինձ այնպէս թուեց, ասում է մի ճանապարհորդ, որ ես մտայ այնպիսի քաղաք, ուր բնակւել էին հսկաներ, և որոնք երկար ժամանակ պատերազմելուց յետոյ անհետացել են, և սրանց տաճարների մնացորդները վկայում են նոցա անցեալ գոյութիւնը ,,։ Լիւսիասում տաճարների և աւերակների փոխարէն գտնւում են շատ (40) բուրգեր։ Սուրբ թագաւորների գամբարանները, որոնք գտնւում են Լիբէական լեռների ստորոտում անապատ սահմանի մօտ, ջրոս խառն են կազմում, սրանցից ամենաերևելին Քհէլ խուսրը է որ 3 մեծ և 6 փոքր բուրգերից է բազկանում։ Բուրգերը քառանկիւնի ձև ունին, որոնք քանի բարձրանում այնքան նեղանում են և կամ սրածայր կամ փոքրիկ տափարակով են վերջանում։ Հ ասր կրից են շինած, մի քանիսը աղիւսից, պատերի վերայ հերոգլիֆներ կան նոցա բարձրութիւնը զանազան է 200—450 ոտնաչափ։ Եգիպտոսի վաճառականութիւնը բաւականին օգնում է և այդ երկրի բնակիչներին։ Ընութիւնը օգնում է վաճառականութեանը նորանով որ 1) կէս տարի ժամանակ Նեղոսի ժայռոտ և ապառա-

---

Մի և նոյն դրութեան մէջ են և մի քանի արուեստները մանաւանդ քանդակագործութիւնը և նկարչութիւնը։ Ուսանողները սովորում են ձրի. վարժապետները ևս ձրի են կարդում։ Ուսման ընթացքը տարաբերւում է տարի, ուսանողները ծառայութիւն են մտնում — իմաստները դատաւորներ, քաղաքական կամ պետական ուսուցիչներ են դառնում, իսկ մի քանիսը իւրեանց ամբողջ կեանքը անցնում են ճեմարանում։ Նոքա կազմում են հոգևորականութեան բարձր դասը — Ուլեմա։ Ուսանողները թուով 1 1/2 հազար են։

ժոա դաշտը հեղեղում է ջրով. 2) կարմիր ծովի վերայ փչող քամիները այնպես յարմարացած են հնդկական մուսսոններին հետ որ այն նաւը՝ որ կարմիր ծովից յաջողակ դուրս է գալու, կրկին քամիների ղօրութեամբ կարող չէ Հնդկաստանի ափերին հասնիլ և ընդհակառակը վաճառականը՝ որ Հնդկական բարեյաջող մուսսոնների ղօրութեամբ յաջողակ մտնում է կարմիր ծովը, կարող է յուսալ, որ մի և նոյն բարեյաջող մուսսոնները կարող են լինել և այս տեղ. 3) որ հիւսիսային Եփրիկեին պարգևել է ուղղութիւն։ Այս թանկագին կենդանու օգնութեամբ Եգիպտոսի վաճառականները ոչ միայն անցնում են Նեղոսի ժայռերից, այլ և կարող են մտնել Եփրիկէի այրեցեալ երկիրների ներսերը, ճանապարհորդել անապատի միջով և հաղորդակցութիւն ունենալ Ջաո լճի և Նիգեր գետի աւազանների հետ։

Եփրիկեում Տաճկաց երկիրների մէջ վաճառականական կարաւանների ճանապարհներից նշանաւորները երկուս են, մին հիւսիսում իսկ միւսը արևելքում։ Հիւսիսային ճանապարհը— Եգիպտոսից սկսուելով անցնում է արևելեան Սահարայի հիւսիսային ովազիսներից (Ախոհ ովազիս) գնում է դէպ արևմուտք մինչև Ֆիզանի ովազիսը. այս պատճառով Ֆիզանի Մուրզուկ գլխաւոր քաղաքը, հիւսիսային Եփրիկէի վաճառաշահ քաղաքներից մին է, որովհետև գնում է 1) Գահիրէից դէպ ի Մարոկկոյ գնացող ճանապարհի վերայ. 2) գնում է Տիմբուկտուի, Կանոյի և Տրիպոլիսի մէջ տեղը։ Պոռնուի երկրորդ գլխաւոր ճանապարհը, նա է որ գնում է Բոռնուից և վերջանում է Պորնու-ի մօտ, ուր միանում են երկու Նեղոսները և ուր այդ ճանապարհի հետ միանում է Սուակինի կարաւանի ճանապարհը։ Այս ճանապարհի նշանակութիւնը այն է որ Նեղոսի միջին նաւարկութեան համար անյարմար սահանքներով չեւաւն։ Արևելեան կարաւանի այս իսկ ճանապարհը առաջինից—այն է հիւսիսայինից աւելի նշանաւոր է այն պատճառով, որ նա միացնում է Եփրիկէի հիւսիսից սկսուղ միայնակ ջրային ճանապարհի զանազան մասերը և այս ճանապարհը միջին Եփրիկէի մէջ հեռու է գնում, քան թէ մի որ և իցէ այլ ճանապարհ։ Այս պատճառով ահա ամեն տեղից շատ այս տեղից են անցնում կարաւաններ և ամեն տեղից շատ, այս տեղից են տանում ապրանքներ (Եւրոպայի ապրանքները Եփրիկէ և Եփրիկէինը Եւրոպայ) ասրա համար և այն կէտը ուր նա վերջանում է (կարաւան) Եփրիկէի ամենավաճառաշահ քաղաքներից։

Եւրոպացիները և նոցա գաղթականութիւնները։ Որովհետև Եփրիկէն շատ հիւսիս չէ Եւրոպայից, ուստի շատ հին ժամանակներից հետէ գտնուում են այս տեղ Եւրոպական գաղթականութիւններ բայց սկզբներում այդ գաղթականութիւնները միայն հիւսիսային ափի վերայ էին — այն է այն մասին վերայ, որ աւելի մօտ է Եւրոպային Կարկի և Ռէբբերատանի բարձրաւանդակութեան վերայ, որոնցից առաջինը մօտ է Յունաստանին, իսկ երկրորդը Իտալիային։ Բայց ի այս ցամաքների մերձակայութիւնից, գաղթականութեան պատճառ դարձան և ծովային հաստատութիւնը, քամիները և հարաւային Եւրոպայի և հիւսիսային Եփրիկէի բնութեան միմեանց միանմանութիւնը։

Յոյների և Հռովմայեցիների համար Եփրիկէն սկիզբները այն նշանակութիւնը ունէր, որ այս տեղից հաց էին առնում նոքա, յետոյ նոքա այս տեղից առնում էին զանազան կենդանիներ, ոսկի փղոսկր։ Բայց մինչև մեր ժամանակները նոցա գաղթականութիւններից միայն աւերակներ են ճանաչել։ Ընդ առաջ ունենալով մի կողմից Եփրիկէի գլխաւոր բնակիչների— Տաճիկների, Իմօլաշների, Ֆելլահների, Հալների և Կաֆրների բնաւորութիւնը, միւս կողմից ճանապարհների սակաւութիւնը Եփրիկէի մակերևոյթի կազմութիւնը, անտանելի կլիման և վնասակար միջատները (փաղիժ, կարիճ, բառւդա, մոծակ, ցեցէ ճանճ և այլն) բոլորովին հասկանալի կլինի թէ Եւրոպական գաղթականութիւնները ինչու համար միայն նոքա ափերի վերայ են

զանուում: Բացի Մատագասկար կղզուց, որ առանձին տէրութիւն է կազմում, Սոկոտորա և Կոմորեան կղզիները, որոնք արաբների ձեռին են, ճնացեալ բոլոր կղզիները Եւրոպացիներին են պատկանում: Եւրոպացիներից Փիրիկէում բնակուում են—Անգլեացիներ, Ֆրանսիացիներ, Պորտուգալացիներ, Իսպանացիներ և Հոլանդացիներ:

Փիրիկէում Հոլանդացիներին պատկանում են միայն մի քանի աննշան տեղեր հիւսիսային Կվինէյի ոսկու ափերում: Մինչև այս դարիս սկիզբները նոցա պատկանում էր Փիրիկէի գաղթական երկիրներից ամենալաւը—Կապ աշխարհը, որը 1814 թուին Անգլեացիների ձեռք անցաւ: Բայց մինչև այժմ Կապ աշխարհի և նորանից արևելահիւսիս եղած երկիրների բնակիչների մեծ մասը Հոլանդացիներ են: Օրանժ գետի վերին մասերում և Կէզուանների երկրում նոքա երկու անկախ հասարակապետութիւններ հաստատեցին Օրանի և Տրանսվալի: Փիրիկէում Իսպանացիներին պատկանում են. 1) Րէր բէրսաանի հիւսիսային մասում մի քանի աննշան տեղեր, որոնցից երևելին է Յէսոպոյ ամրոցը. 2) Պանոպեան կղզիները և 3) Կվինէյի ծոցին մէջ եղած կղզիներից երկուսը—Ֆերնանդ-պոյ և Աննէբոն: Այս բոլոր երկիրները բացի Կվինէյի կղզիներից կառավարչական կողմից Իսպանացիների իւրեանց Եւրոպական նահանգների մի մասը են կազմում: Յէսոպոյ կղզին աքսորանոց տեղ է: Պանոպեան կղզիները շատ հրաբուխ լեռներ ունին իւրեանց վերայ, ուստի և շատ արգաւանդաբեր են, մանաւանդ Պանոպեա կղզին: Տէննէրեֆա կղզու վերայ գտնուում է Պիկ-դը Տէյդէ հրաբուխը, որ 3 վերստ բարձրութիւն ունի: Ֆերդոյ կղզին նշանաւոր է, որովհետև վաղուց արդէն այս տեղից սկսում են առաջին միջօրէական գիծը:

Պորտուգալացիներին պատկանում են. 1) Ասորեան կղզիները. 2) Մադէյրա (անտառոտ) կղզին. 3) Դալարի գլխոյ կղզիները Րէսոպոեան կղզիների հետ և մի քանի աննշան գաղթականութիւններ Սենեգամբիայի ափին. 4) Իշխանի և սուրբ Թոմա կղզիները Գվինէէ ծոցին մէջ. 5) Անգոլա և Բենգուելա երկիրները. 6) Սոֆալայի և Մոզամբիկի ափերի և Զամբէզ գետի աւազանի գաղթականութիւնները: Փիրիկէում Պորտուգալացիներին պատկանող երկիրները կառավարչական կողմից չորս մասի են բաժանւում, Ասորեան կղզիները Մադէյրայի հետ միասին Եւրոպական երկիրների կարգումը են, մնացածները կառավարուում են երեք նահանգապետներով, որոնցից մին կառավարում է Դալարի գլխոյ կղզիները, Սենեգամբիայի գաղթականութիւնները և Գվինէէի կղզիները. երկրորդը-Անգոլա և Բենգուելա, իսկ Փիրիկէի արևելեան երկիրները կառավարուում է երրորդը: Փիրիկէում Պորտուգալացիների երկիրները ամենը էլ շատ արգաւանդ և պտղատու են, բայց մի և նոյն ժամանակ գրէթէ բոլորը էլ (բացի Ասորեան կղզիներից, Մադէյրայից և Դալարի կղզուց) անառողջ կլիմա ունին. մանաւանդ Մոզամբիկեան նահանգի կլիման, Մոզամբիկի գաղթականները, բացի նահանգապետից, բոլորը մինչև անգամ և աստիճանաւորները էլ աքսորական են և Մոզամբիկ քաղաքը շատ նման է Ֆրանսիացիների Կայէննային: Այժմեան ժամանակներում Պորտուգալացիների գաղթականութիւնները շատ փոքր են օգուտ քաղում Փիրիկէի բնական բերքերից, մանաւանդ փղոսկրից և ոսկուց: Բայց սորանից երեք դար առաջ, երբ նոքա սպառելները վաճառելու գլխաւոր կէնդրոնը էին կազմում, այն ժամանակ այդպիսի թշուառ դրութեան մէջ չէին: Այդ վաճառականութիւնը այնպէս ծաղկած էր, որ Փիրիկէի զանազան նաւահանգստներից դուրս էին տանում տարեկան գրէթէ 100 հազար սպրուկ, և այդ քանակութեան մեծ մասը Պորտուգալացիներին էր պատկանում, որոնք սպրուկներին ուղարկում էին իւրեանց Արևելեան-Հնդկաստանի և Բրանզիլիայի գաղթականութիւնները, որ այն տեղ աշխատանի բամբակների պատերում և հանքերի մէջ: Բայց երբ Պորտուգալիայի Արևելեան Հնդկաստանի գաղթականութիւնների մեծ մասը Անգղիացիների ձեռքը անցաւ. իսկ Փիրիկայի գաղթականները անկախ

տէրութիւն կազմեցին (Թրանզվալիայի գաղթականութիւնը). այն օրից սկսած այդ վաճառականութիւնը կորցրից իւր նշանակութիւնը պորտուգալացիների համար։ Ուստի Ափրիկէի գաղթականութիւնները ևս իւրեանց նշանակութիւնը։

Ափրիկէում Ֆրանսիացիները պատկանում են՝ 1) Ալժիր կամ Ալճեզայիր. 2) Սենեգամբիայում մի քանի դղեակներ և գործակալութեան կայաններ թէ ցամաքի վերայ Սենեգալ գետի ափին (Դակէլ-այն տեղ է, որ տեղից Սենեգալը նաւարկելի է լինում) և թէ ծովափնեայ փոքրիկ կղզիների վերայ (նշանաւորները են Սուրբ Լուդովիկոս Սենեգալի բերանի և Գորէիայ). 3) Գաբոնի Գվինիայում՝ ոսկու ափերի դղեակները. 4) Գաբոնան գետի բերանը. 5) Կամերուան կղզիներից մին - Մայօթթէ. 6) Մադագասկարի ափերի մօտ երկու փոքր կղզիներ մին հիւսիսում և միւսը արևելեան հիւսիսում. 7) Ռեյնիօն կղզին, որ Մասկարեան կղզիներից ամենա արևմտեանը է։ Վաճառականական կողմից Ֆրանսիայի համար այս բոլոր երկիրներից ամենանշանաւորը Ռեյնիօն կղզին է։ Այս կղզու վերայ բերքերից միայն սուրճը և շաքարեայ եղէգը տարեկան մինչև 40 միլ. Ֆրանկ օգուտ է տալիս։ Սենեգամբիայի գաղթականութիւնները շատ նշանաւոր չեն, որ տեղից ինչպէս Ֆրանսիացիները, նոյնպէս Անգղիացիները և Պորտուգալացիները դուրս են տանում խէժ, կաշի, ջայլամի փետուր *) և ոսկէ աւազ։ Բայց կարծիք չը կայ, որ Ալժիրը շուտով Ֆրանսիացուց, ոչ միայն Ափրիկէում, այլ և միւս ցամաքներում ևս ունեցած գաղթական երկիրների առաջինը կը դառնայ։ Այդ գաղթականութեան մէջ երկրագործութիւնը և արհեստները ծաղկեցնելու և զարգացնելու համար Ֆրանսիայի կառավարութիւնը ոչինչ չէ խնայում։ Այժմ արդէն Ալժէրի ծովափնեայ քաղաքները ինչպէս միմեանց նոյնպէս և հարաւային Ֆրանսիայի նաւահանգիստների հետ շոգենաւերով հաղորդակցութիւն ունին և ծովի տակով տարած հեռագրական թէլը այդ գաղթականութիւնը միացնում է իւր մայր աշխարհի հետ. սալահատակ ճանապարհներ գտնուում են ոչ միայն նորա գլխաւոր քաղաքների մէջ, այլ և այնպիսի տեղերում, որոնք առաջ բոլորովին անմատչելի էին, շրջապատել են ժանտաբեր ճահիճները. վտանգաւոր հեղեղատների վերայ կամուրջներ են շինած, որոնք մեծ մասամբ քարից են. վայրենի գազաններին կամ բոլորովին ոչնչացրել են և կամ իջել են ցամաքի ներսի կողմերը։ Տիզիքական կողմից հիւսիսից դէպի հարաւ ուղղութեամբ Ալժէրը կարելի է երեք մասը բաժանել. ծովափնեայ նեղ մասը 70 վերստ տարածութեամբ, որ Ատլանտեան լեռների ժամանակներից հետէ Տէլլ է կոչուում (լատիներէն tellus բառից որ նշանակում է մշակութեան համար պիտանի երկիր). միջին նեղ մասը որ Սալլա այս ինքն անապատ է կոչուում, որովհետև մեծ մասամբ աղտաղտուկ անապատներից է բաղկացած, և հարաւային — որ Սահարայ է կոչուում. այսպէս կոչուելուն պատճառը այն է՝ որ համանուն անապատից ոչնչով զանազանվում չէ. մի կարգ ովազիսներով բաժանուում է իսկական Սահարայից։ Ալժէրի երեք մասերից ճարտարութեան կողմից, ամենանշանաւոր մասը Ֆրանսիայի համար Տէլլը է։ Տէլլի հողը շատ արգաւանդ և բարեբեր է, բուսականութիւնը շատ ճոխ. իսկ նորա լեռների ծոցերի մէջ զանազան տեսակ հանքեր են գտնուում։ Տէլլի հողը այնպէս արգաւանդ է, որ փոքր աշխատելով մի հատ ցորենը 10 է տալիս, բամբակը և ծխախոտը, իւրաքանչիւրը առանձին 400 % շահ է տալիս. այս տեղ առատօրէն բուսնում է տորոն, թմրենի և այն բոյսը, որի վերայ լինում է կարմիր որդան։ Տէլլի արօտներում միշտ արածում են բազմաթիւ հօտեր, անտառները շատ խիտ և բազ-

(*) Ջայլամի սպիտակ և սև փետուրները վաճառականութեան մէջ բաւականին դեր են խաղում։ Կապշտատում փետուրների մի ֆունտը 75 ռուբլի արժէ։ Այսպէս թանգ լինելուն պատճառը այն է, որ ջայլամին որսալը շատ դժուար է, որովհետև նոքա սաստիկ արագ վազում են մինչև անգամ, փորը ինչ տեղ կարող են երկաթուղու հետ միասին վազել իւրաքանչիւր թռչունից 12 փետուրից աւել դժուար է ստացվում, այն ինչ մի ֆունտի մէջ 70—90 փետուր է լինում։

մատեսակ են։ Փշատերև ծառերից նշանաւոր է Տո–խա ծառը (յունական thuo բառից, որ նշանակում է զոհ իմ բերում, որովհետև այս ծառը երբ որ վառում են անուշ հոտ է տարածում, ուսւսի հնումը այրում էին զոհարերութեան ժամանակ) սա գործ է ածուում շինութեան և կարասիների համար։ Եթէ կեղևը կարնք տակից կաթում է մի հիւթ որ քնարակ է կոչ–վում։ Տելի հանքերից առնում են երկաթ, կապար, մարմարիոն, որ իւր սպիտակութեամբ և գեղեցիկ յատկութիւններով Պարոսոսի մարմարիանից ոչնչով պակաս չէ. բացի դորանից կան շատ հանքային ջրեր, որոնք իւրեանց յատկութիւններով Խաէն — Խազէնի և Տիպլեցի ջրերից պակաս չեն. 1830 թուից սկսած մինչև 1859 թիւը Ֆրանսիան անդադար պատերազմում էր բնիկ բնակիչների հետ այս երկիրը ձեռք բերելու համար։ Ալժէրի կառավարութեան համար Գրան սիայի կառավարութիւնը առանձին նախարարութիւն հաստատեց։ Կառավարչական կողմից այս երկիրը արևելքից դէպ արևմուտք երեք մաս է բաժանուում արևմտեան - Օրան, Մէջին — Ալժէր և արևելեան- Կոնսթանդինա։ Քաղաքներից նշանաւորները են Ալժէր կամ Ալջեզայէր, նաւահանգիստ քաղաք է Միջերկրականի ծովին վերայ, այս քաղաքից են առնում Ֆրանսիայի բերքերը Ալժէրից Րոն նաւահանգիստ է, այս տեղից Ալժէրի բերքերը առնում են Ֆրանսիայ։

Ալժիրիէում Անգլիացիները պատկանում են մի քանի գործակալութեան կայաններ և դղեակներ. 1) Սէնէգամբիայի մէջ մեծ մասամբ Գամբիա գետի ափերի վերայ. 2) Սիէռա—Լէոնի գաղթականութիւնը համանուն գետի վերայ, բնակիչները ազատ նեգրոներ են. 3) մի քանի գործակալութեան կայաններ և դղեակները Ոսկո– Էֆէ վերայ. 4) Ջամբեզեան, սուրբ Հելենէի կղզիները և Տբնոպան — ը' Ակո–նի կղզիների խումբը Ատլանտեան ովկիանոսի մէջ. 5) Կապ աշխարհը որ գտնուում է Ալժիրիկէի հարաւային մասում Օրանի գետից սկսած. 6) Նապոլ աշխարհը Բաֆրերի երկրում. 7) Ամերանեան և Աբյսինեան կղզիները.

8) Մադագասկարեան կղզիները, որոնցից նշանաւոր են Մաւրիկիոս և Ռոտրիկ. 9) 1865 թուից սկսած Ջանզիպար կղզու հիւսիսային մասը։

Եթէ Պորտուգալացիների գաղթականութիւնները երբեմն մեծ նշանակութիւն ունէին, եթէ Ֆրանսիացիները մեծ յոյս ունէին ժամանակով օգուտ իւրեանց Ալժիրիկէի գաղթականութիւններից. Անգլիացիները վազուց արդէն իւրեանց գաղթականութիւններից քաշում են բոլոր օգուտը ինչքան միայն կարելի է։ Դորա պատճառը այդ ազգի վաճառականութեան մէջ ունեցած հմտութիւն է որով նոքա կարողանում են ընտրել իւրեանց գաղթականութիւնների համար տեղեր, Անգլիացիները Ալժիրիկէի մէջ գաղթականութիւններ հիմնելու ժամանակ ընտրել են իւրեանց համար այնպիսի տեղեր, որոնք յայտնի են իւրեանց արգասաւորութեամբ, մի և նոյն ժամանակ աչքի առից չեն թողել և այն պայմանը որ կլիման ինչքան կարելի է առողջարար լինի, որի մէջ կարելի լինի անվնաս բնակիլ. Թէպէտ Ալժիրիկէում նոցա պատկանալ հողերից ոչ մին յատնի չէ իւր արգասաւորութեամբ, սակայն բոլորը էլ փոքր ի շատէ քաղաքական նշանակութիւն ունին, այդ հողերը թէպէտ շատ փոքր և աննշան են, սակայն նոքա Անգլիական նաւերի համար հետու գաղթականութիւններ գնալու ժամանակ իջեւանի տեղեր են, ուր նոքա վիզ են առնում պաշար, ջուր և այն հարկաւոր պիտոյքները, և այս տեղից նոքա միշտ պաշարպատում են իւրեանց օգուտները և շահերը հետաւոր ծովերում և երկիրներում։ Այս նշանակութիւնը ունին ահա Ջամբարձման, սուրբ Հելենէի և Բրիտանեան Ակունի կղզիները։ Մի և նոյն նպատակով իւրեանց ձեռի տակ առան և Պէրիմ կղզին։ Գետ էլ Լիսէպսը նոր էր սասկել Սուէզի ջրանցքի նախագծի հաստատութիւնը, երբ Անգլիացիները տիրեցին այդ կղզուն և այժմ ամրացնում են նորան, որ վաճառականութեան համար ժամանակով Պերիմը մի նոր պարանոց դառնայ։

Ընդհանուր դաղթականութիւնների մէջ Ափրիկէում առաջին տեղը բռնում է Կապ աշխարհը:

Ֆիզիքական կողմից հարաւից դէպի հիւսիս Կապ Աշխարհը երկար մաս է բաժանուում. Ժովափնեայ նէղ- և արգաւանդ է. Ներքնը-տարուայ զանազան եղանակներում զանազան է լինում և պղպջ. այս ինքն անապատ և հիւանդոտին, որ մասամբ քարքարոտ, մասամբ կաւոտ է, ուսոի և արգաւանդ չէ: Այս երկիր մասը միմեանցից բաժանուում են լեռնային շղթաներով: Կապ Աշխարհի ծովափնեայ մասը Տէլլու նման արգաւանդ է, նորա հողը մի հատ ցորենի փոխարէն մէկին 70 և երբեմն 100 է տալիս, շատ սիզաւէտ արօտներ ունի, ուր բազմաթիւ ոչխարների (մերինոների) հօտեր են արածում: Այս պատճառով Կապ Աշխարհը Ընդհանի շտեմարանը է և այս տեղի հացը բաւական է լինում ոչ միայն այս տեղի նաւաստիներին, այլ և այս տեղից ուղարկում են ուրիշ գաղթականութիւններ: Կապի անասնապահներից մի քանիսը 5—6 հարիւր հատ եղջերաւոր անասուն ունին և 4—5 հազար ոչխար: Եղջերաւոր անասուններըը լաւ իւղ և լաւ կաշի են տալիս: Կապի բուրդը Եւրոպայում մեծ արժէք ունի: Բայց Կապ Աշխարհը նշանաւոր է ոչ իւր բուսականութեամբ և անասուններով, այլ իւր առողջ կլիմայով, գեղեցիկ նաւահանգիստներով և աշխարհագրական դրութեամբ: Ա՛նապարհորդների ասելով, նորա կլիման ոչ միայն Ափրիկէում, այլ և բոլոր աշխարհում ամենաառողջարար կլիմաներից մինը է, նորա նաւահանգիստները և ռմբոցից առաջինը կապղաթա է, Ափրիկէում ամենալաւերից են: Կապ Աշխարհը գրեթէ աշխարհիս 5 ցամաքների միմեանց հետ հաղորդակցութեան ճանապարհների կենդրոնում է: Եւ Ընդհացիների արևելեան — Հնդկաստան, Աւստրալեայ և Զինաստան գնալու գլխաւոր ճանապարհի վերայ է. ուսոի դորանով այդ երկրի ինչպէս կլիմայի, նոյնպէս և նաւահանգիստների նշանակութիւնը աւելի մեծանում է: Այս պատճառով կապշաատը իջևան է համարուում թէ Ընդհացիների և թէ

օտար ազգինների նաւերի համար. հարաւային Ափրիկայի, Աւստրալեայի, արևելեան Հնդկաստանի և Զինաստանի ապրանքների համար շատ մատուցանի է, այս տեղումն է և Ընդհացինների ծովային բանակը, այս նաւահանգիստը Հնդկաց ովկիանոսի բանալին և կիսատրանների ժողովատեղն է. Կապի կառավարութիւնը առանձին նահանգապետ ունի, որի իշխանութիւնը գրեթէ անսահման է: Կապի նահանգապետի իշխանութեան տակն են Տրիստան-դ' Ակունի կղզինները և Գաւառ երկիրը:

Տրիստան-դ' Ակունի խումբը գտնուում է Ատլանտեան ովկիանոսի հարաւային մասում գրեթէ Գոլդ և Բարբէյոոսյ գլխների մէջ Պորտուգալացի նաւագնաց Տրիստան-դ' Ակունին գտաւ այս խումբը: Ընդհակառակ նորա գժուարամերձութեանը այս տեղ բերում են նաւեր, պաշար և ջուր փոխում են հանդերձներով և զանազան կարասիներով: Մի և նոյն ժամանակ աւելի յարմար է այս կղզինների մօտով գնալ Հնդկաստան և Աւստրալեայ, կամ թէ Կապշաատի մօտով ճանապարհը աւելի կարճ է, թէպէտ այս վերջինը աւելի կարճ է Բրիտանի գաղթական երկիրներից - Կապի գաղթականութիւնը աւելի նման է: Գաղթական ջրհորը: Այսպէս կոչուում է այն պատճառով, որ Եւրոպական առաջին նաւագնացը (Վասկոյ-դը-Գամա) գտաւ նորան Բրիտանի Ծննդեան օրին: Գտնուում է Կապերի երկրամէջ Օրանժ հասարակապետութիւնից դէպի արևելք մինչև ծովը: Գաղթականը Կապ աշխարհից շատ արգաւանդ է, մի քանի տեղերում տարին երկու անգամ կամ երեք կարելի է հունձ քաղել. բայց գաւառին այն է, որ բնակիչները (կապերը) սիրում են պարապել անասնապահութեամբ. իսկ գաղթականները — Ընդհացինները վաճառականութեամբ. նոքա դուրս են տանում այս տեղից իւղ, ոչխարի բուրդ, փայտ և փղոսկր: Գաղթականը Կապ աշխարհի պէս առողջարար կլիմայ ունի. բայց նաւահանգիստները Կապի նման յարմար չեն: Գաւառացութիւնը դժուարանում է Մողանբիկի յորձանքից. Գաղթից Կապշաատ գնալու համար 5 օրից աւել հարկաւոր չէ. իսկ ընդհակառակը Կա-

պից Նատալ գնալու համար գոնէ երկու շաբաթ հարկաւոր է և այն էս միշտ պէտք է ափերի մօտից գնալ։

Սիերրա—Լեօնի գաղթականութեան բնակիչները նեգրոսներ են։ Այս գաղթականութիւնը հաստատուեցաւ այն ժամանակ, երբ հիւսիսային Ամերիկայում Անգղիացիների գաղթականութիւնները ինքնագլուխ դարձան։ Հիւսիսային Ամերիկացիների իւրեանց անկախութեան համար Անգղիացիների պատերազմելու ժամանակ, Անգղիացիները իւրեանց հովանաւորութեան տակ առան այն նեգրոսներին, որոնք օգուտ քաղելով այդ պատերազմից ազատուեցան իւրեանց տէրերի ձեռքից։ Այդ նեգրոսների մի մասը Անգղիացիները տեղաւորեցին Սիերրա—Լեօնի բերանի մօտ 1787 թուին, այստեղ բերում էին ժամանակ առ ժամանակ և այն նեգրներին, որոնց ազատում էին Անգղիացիք նեգրոսների վաճառականութեամբ պարապող նաւերից, նեգրոսների հետ բնակուեցան յետոյ և մի քանի Անգղիացիներ։ Անգղիացիները սկսեցին այս գաղթական նեգրոսների մէջ տարածել քրիստոնէութիւնը և լուսաւորութիւնը։ Սովորեցրին նոցա երկրագործութիւն և զանազան արհեստներ և այժմեան ժամանակ Ափրիկէում ամենալաւ գաղթականութիւններից մինը է դա։ Այժմեան ժամանակ այդ գաղթականութեան մէջ զարդացել են ոչ միայն երկրագործութիւնը, անասնապահութիւնը, զանազան արհեստները (դարբնութիւն, հիւսնութիւն, կոշկակարութիւն, դերձակութիւն և այլն) և վաճառականութիւնը, այլ և դիտութիւնները և արուեստները։ Այս տեղում բացի նախակրթական ուսումնարաններից կայ և համալսարան, ուր սովորում են լատիներէն, յունարէն, երբայեցերէն և բնական դիտութիւնները։ Գլխաւոր քաղաքը է Ֆրէ—տաուն այս ինքն ազատ քաղաք։

ԱՄԵՐԻԿԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ԵՒ ՍԱՀՄԱՆ

Իտալացի Ամերիկայ Վեսպուչիոնը 16-դ դարումը առաջին անգամը այս ցամաքը նկարագրեց. ուստի և երկիրը նորա անունով Ամերիկա կոչուեցաւ։

Դիրքը։ Ամերիկայի ամենահիւսիսային ծայրը վերջանում է Լաբրադոր կամ Նորդով Գլխով, որ 71^0 հիւս. լայնութեան է հասնում ամենահարաւային ծայրը վերջանում է Ցիօվարդ գլխով, որ դանուում է 53^0 հարաւային լայնութեան տակ, ամենաարևմտեան ծայրը Վալկիրան պռոէփ գլխով է վերջանում 209^0 արևել. երկայնութեան. ամենաարևելեանը Ս. Ռոքոսի գլուխը է 343^0. ուրեմն Ամերիկան դանուում է չորս գոտիների տակ։

Սահմանները։ Ամերիկայի սահմանները կազմում են Հիւսիսային Սառուցեալ, Ատլանտեան, և Մեծ կամ Խաղաղ ովկիանոսները. Ամերիկան Եւրոպայի նման բազմաթիւ ծովեր և ծոցեր չունի. բայց որովհետև Ամերիկան իւր տարածութեանը համեմատ շատ նեղ երկիր է. ուստի այս պատճառով նորա միջին երկիրները Եւրոպայի նման կարող են հաղորդակցութիւն ունենալ շրջակայ ծովերի հետ։

Ամերիկայի ափերը յետագայ յատկութիւնները ունին։ Հիւսիսային ափը ըստ մեծի մասին ժայռոտ է։ Ընդհանուր ափը

գրե թէ իւր բոլոր տարածութեամբը բարձրաւանդակ երկիր է կազմում և միայն Սալվադորիայից դէպի հիւսիս ժայռոտ է։ Հիւսիսային Ամերիկայի-Բրեզիլեան ափի այն մասը որ գտնուում է Գատերաս գլխի և Ս. Լաբրենտիոսի ծոցի մէջ, բարձրաւանդակ դրութիւն ունի. այդ տեղից դէպի հիւսիս ժայռոտ է, իսկ դէպի հարաւ ցած և աւազոտ։ Հարաւային Ամերիկայի արեւելեան ափը, ըստ մեծի մասին ցած է։ Սորանից երեւում է, որ Ամերիկայի ափերի վերայ շատ քաջողջ և լաւ նաւահանգիստներ կան, քան թէ Ասիայի, ևս առաւել Եվրոպիկի ափերի վերայ։ Ամերիկայի ափերը շրջապատող ծովերը յատկապես ատկութիւններ ունին, Հիւսիսային սովկիանոսը, Ատլանտեան սովկիանոսի արեւմտա-հիւսիսային ափերը, Գրէնլանտիայի և Լաբրատորի ափերը, մինչև Նիւֆաունդ լենդը, նոյնպէս և Հուդսընեան ծովը, կամ բաւականին ժամանակ, կամ բոլորովին սառում են։ Սառուցի ահագին կոշտերը, ծովային հոսանքների հետ միասին Նիւֆաունդ լենդից շատ հարաւ են գնում, ուր ամառը տաքութիւնից հալւում են։ Կարաիբեան ծովում, մանաւանդ հիւսիսային մասի մէջ գտնուում են շատ ծանծաղուտներ և կորագիան խութեր։ Այս ծանծաղուտները և ժայռերը մրրիկների ժամանակ շատ վտանգաւոր են նաւատնտեսութեան համար։

Ամերիկայի գրքի և Սահմանների յատկութիւնների հետևանքները։ Որովհետև Ամերիկան գրաւում է շատ գօտիների տակ, ուստի նորա կլիման բազմատեսակ է, այս պատճառաւ նոյնպէս բազմատեսակ են և այս ցամաքի կենդանիները և բոյսերը։ Այս կողմից Ամերիկան բոլորովին Եւրոպային հակադիր յատկութիւն ունի։ Ամերիկան իւր նեղ դրութեան պատճառով աւելի շատ է գտնուում ովկիանոսի ազդեցութեան տակ, քան թէ Եւրոպան և կամ երկրիս միւս մասերը։ Օդի խոնաւութեան պատճառով բուսականութիւնը չափից դուրս առատ է։ Աշխարհիս մասերից ոչ մինը, չունի այնպիսի պերճ և ճոխ (մեծ, դեղեցիկ և այլն) բոյսեր,

ինչպէս Ամերիկան. խոնաւ մթնոլորտը ազդում է և կենդանիների վերայ։ Ամերիկայում կաթնասուն անասունների մէջ մենք չենք տեսնում այն գիշատիչ գազանները, որոնցով հարուստ են Ասիան և Աֆրիկէն։ Այն տեղ գտնուում են միայն այն կենդանիները, որոնց կեանքը սերտ կապուած է խոնաւութեան հետ, այն է երկակենցաղ կենդանիներ և միջատներ։ Աւելի պէս խոնաւ օդի ներգործութեան տակ են նոյնպէս և այն տեղի բնիկ բնակիչները, որոնք հանդարտ և խաղաղ բնաւորութիւն ունին։ Ամերիկայի ափերի և նոցա սահմանակից ծովերի լաւութիւնից է, որ Եւրոպացիները հեշտութեամբ մանելով նոցա երկիրները տարածում են այն տեղ Եւրոպական լուսաւորութիւնը։ Ահա տեսքն են այն պատճառները, որոնցից Ամերիկան այժմ աւելի լուսաւորեալ է քան թէ Ասիան և Աֆրիկէն։

ՓԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ։

Խարձրաւանդակութիւնների համառօտ նկարագրութիւնը։ Ամերիկայի գլխաւոր լեռները Գորդիլեաններն են, որ աշխարհիս միւս լեռներից գերազանցուում են իւրեանց երկայնութեամբը, կազմուածքի յատկութեամբը և ընդարձակ տարածութեամբը. այս լեռները տարածուած են ցամաքի բոլոր երկայնութեամբ Ֆրովարդ գլխից սկսած մինչև հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը 14,000 վերստ տարածութեամբ. նոցա բռնած երկիրները գրեթէ $1\frac{1}{2}$ անգամ մեծ է Եւրոպայից, նոցա կազմուածքի յատկութիւնը այն է, որ հարաւում միայն մի շղթայով են սկսուում, բայց մինչև հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը հասնելը, մի քանի անգամ երկու և երեք կամ աւելի զուգահեռական շղթաների են բաժանուում, այդ շղթաների յատկութիւնը այն է, որ լեռնային հանդոյցների նման միանալով իւրեանց մէջ պարունակում են ընդարձակ և լայն բարձրաւանդակութիւններ։ Գորդիլեան գոտու արեւմտեան կողմի շղթաները աւելի քիչ է քան թէ ա-

բևեռականները։ Թե ընդհանուր և թե առանձին գագաթները վեր առած Կորդիլեան լեռները, Հիմալայեան գօտուց յետոյ երկրորդ տեղն են բռնում աշխարհիս լեռների մէջ. նոցա ամենաբարձր գագաթը Լիւիման է 20^0 հար. լայնութեան տակ է գտնուում. ծովի մակերևոյթից $6^1/_2$ վերստ բարձրութիւն ունի։ Ընդհակառակ այս բարձրութեանը, Կորդիլեան լեռները բաւականին յարմար անցքեր ունին։ Այդ անցքերի ամենանշանաւորներից չորս հատ գտնուում են Միջին Ամերիկայում, իսկ երկու հատ Հիւսիսային Ամերիկայում։ Միջին Ամերիկայի այդ անցքերի միևի միջով կամենում էին մինչև անգամ ջրանցք տանել, այդ անցքերից ամենակարճի միջով երկաթուղի է շինած (Պանամեան)։ Հիւսիսային Ամերիկայի անցքերից մինը կոչվում է Sautha-pass այսինքն հարաւային անցք, որ անցանում է ապառաժոտ շղթայի միջով 42^0 հիւսիսային լայնութեան տակ։

Պանամեան պարանոցով Կորդիլեան շղթայն երկու մասն է լինում. Հարաւային Ամերիկայի Կորդիլեան շղթայ կամ թէ Անդիր և Հիւս. Ամ. Կորդիլեան շղթայ։ Այս երկու մասերը ևս զանազան անուններ են կրում։ Հարաւային Ամերիկայի շղթայն նշանաւոր է իւրեան բարձրութեամբ. նորա ամենաբարձրը մասը Պերուի Կորդիլեռներն են, որոնց միջին բարձրութիւնը երիք և կէս վերստ է, այս տեղում է ահա և Լիւիման գագաթը։ Այս տեղից սկսած դէպի հարաւ և հիւսիս Անդիրը փոքր առ փոքր ցածանում են։ Հիւսիսային Ամերիկայի Կորդիլեռները նշանաւոր են իւրեանց լայնութեամբ ապառաժուտ (արևելքում) և պատսատան (արևմուտքում) լեռների մէջ, նոցա լայնութիւնը մինչև $2^1/_2$ հազար վերստ է, այս տեղից սկսած դէպի հիւսիս և դէպի հարաւ նորա նեղանում են։ Հարաւային Ամերիկայի բարձրաւանդակութիւնից անուանիներն են Տիթիկակա գտնուում է Պերուի Կորդիլեռներում աշխարհիս մէջ ամենաբարձրը է (3 վերստ) և Կիլիսօ հասարակածի տակ ($2^1/_2$ վերստ) Հիւսիսային Ամերիկայի բարձրաւան-

դակութիւններից անուանիներն են՝ Մեխիկայի բազմաբանդակութիւնը կամ թէ Անահուակ (2 վերստ) ուր գտնուում է հիւսիսային Կորդիլեռների պօպօկա ամենաբարձր գագաթը, որ դրեթէ 5 վերստ բարձրութիւն ունի և Կալիֆօրնիայի բազմաբանդակութիւնը կամ Ուտա որը նախընթացից փոքր ինչ ցած է։ Կալիֆօրնիայի բարձրաւանդակութիւնը հիւսիսից և հարաւից սահմանափակուում է ընդմիջող շղթաներից և իւր բնութեամբ շատ նման է Ասիական Գօբի անապատին։ Հարաւային Ամերիկայի բարձրաւանդակութիւնները նշանաւոր են իւրեանց բարձրութեամբ, և այս կողմից աշխարհի մէջ առաջին տեղը են բռնում։ Հիւսիսային Ամերիկայի բարձրաւանդակութիւնները շատ ցած են հարաւային Ամերիկայի բարձրաւանդակութիւններից, բայց դորա փոխարէն նոքա շատ ընդարձակ են։ Երէ Կորդիլեան շղթայն Ամերիկայի արևելեան մասում լինի, այն ժամանակ այրեցեալ Ամերիկայի ոռոգման մէջ ինչ փոփոխութիւն կլինի։ Կորդիլեռների լինելը լուսաւորութեան ինչ նշանակութիւն ունի լուսաւորութիւն տարածելու համար։ Տօհմագրութեան և օդաբաժինների վերաբերութեամբ Կորդիլեռները ունին ինչ նշանակութիւնը ինչ որ ունին Հիմալայեան, Կովկասեան, Ալպեան և ևն. լեռները որոնք արևելքից դէպ արևմուտք են տարածուում։

Ամերիկայի առանձին դասաւորուած լեռներից նշանաւորներն են. Ա) Հարաւային Ամերիկայում 1) Բրազիլիայի լեռնոտ երկիրը, նա միջին բարձրութիւն ունեցող սարահարթներից է բաղկացած, այդ սարահարթերի վերայ զանազան ուղղութեամբ դասաւորուած են ցած լեռնային շղթաները. 2) Գուիանայի լեռնոտ երկիրը, որ գտնուում է վերոյիշեալից դէպի հիւսիս նոյնպէս սարահարթերից է բաղկացած որի վերայ տարածուած են ցածր լեռնային շղթաներ մեծ մասով արևելքից դէպի արևմուտք. 3) Վենեցուելայի լեռները տարածուում են Կարայիբեան ծովի ափերում։ Երկու զուգահեռական շղթաների են բաժանուում, նոցա բարձրութիւնը վերոյիշեալներին չափ է.

4) Սիերրա — Նեվադա — եը — Սանթա — Մոբրա գտնուում է Գնեյհուբլա ծոյից դէպ արևմուտք Կարաիբեան ծովի ափին բոլորովին չափ միւսներից ինչպէս լեռնային ուրանի ձևով: Այս լեառը այնպէս բարձր է, որ թէպէտ ուղղակի Հասարակածի տակ է գտնուում, այնու ամենայնիւ միշտ ձիւնով է ծածկուած. գլխաւոր գագաթի բարձրութիւնը 5 վերստից աւելի է:

Բ) Հիւսիսային Ամերիկա—ս. 1) Ըլեղինի կամ Ապալաչեան լեռները, մի քանի զուգահեռական շղթաներով տարածուած են հիւսիսային Ամերիկայի արևելեան ափում: Ըլեղինի լեռների միջին բարձրութիւնը Գերմանիայի լեռների միջին բարձրութեանը է հաւասար:

Ստորավայրերի համառօտ նկարագրութիւնը: Աշխարհիս ոչ մի մասը Ամերիկայի չափ դաշտավայրներ չունի, Եւրոպայի մեծութեամբ գրեթէ երեք աշխարհ կարելի է կազմել: Ամերիկայի դաշտավայրերը զանազան տեղերում զանազան յատկութիւն և անուն ունին: Հարաւային Ամերիկայում Գորդիլեռների և Ատլանտեան ովկիանոսի միջը մօտաւորապէս 40° հարաւ. լայն. դէպի հարաւ գրեթէ միանգամայն ստորոգով պատած դաշտավայր է և կոչւում է Պատագոնեան անապատ: Այդ անապատը 40°-ից դէպի հիւսիս փոքր առ փոքր ծածկւում է բարձրաբերձ խոտով և պամպաս է կոչւում: Այս պամպասը տարածւում է մինչև Բրազիլեան լեռների հարաւային մասը: Դէպի հիւսիս Գորդիլեռների (արևմտքում) Գուբինիայի և Բրազիլի լեռնոտ երկիրների միջ պամպասները փոխւում են Սիլվանների: Սիլվանները այնպիսի տարածութիւններ են, որոնք ծածկած են սկզբնական խիտ անտառներից և հսկայական բոյսերից: Սոցանից հիւսիս Գորդիլեռների և Ատլանտեան ովկիանոսի Վ. Նեյովիլեայի և Գուբինիայի միջ տեղերը Սիլվանները փոխւում են Լլանոների: Լլանոները ևս պամպասների նման ծածկուած են խոտով, միայն տարուայ մի նշանակեալ այն է անձրևային ժամանակում, իսկ

տարուայ չոր ժամանակ, Լլանոները թողում անապատներ են: Դաշտերը հիւսիսային Ամերիկայում երկու յատկութիւն ունին: Նորա հարաւային մասում դէպի Մեքսիկայի ծոցը արևմուտքում Գորտիլերների և արևելքում Ըլեղինի լեռների միջ տեղը բուսականութիւնը շատ ձոխ է և արդաւանդ, արևմուտքում և արևմտեան հիւսիսում խիտ անտառներով. իսկ արևմտեան հարաւային մասում բարձրաբերձ խոտերով՝ անտառային մասը Սիլվաններին նման է, իսկ խոտաւէտ մասը Պամպասներին: Խոտաւէտ տարածութիւնը իւր հիւսիսային մասում Սաւան է կոչւում, իսկ հարաւային մասում—Պրէրի: Հիւսիսային Ամերիկայի դաշտավայրի հիւսիսային մասը իւր ժայռոտ երկրի յատկութեամբ և իւր բևեռային դրութեամբ Պատագոնեան անապատին է նմանում: Բաց ի Լաբրադոր և Տրէնէպոպոյ կղզիներից՝ Ամերիկայի պատկանեալ ճեպացեալ բոլոր կղզիները լեռնոտ են. բարձրաբերձ լեռները գտնուում են մեծ Անտիլեան կղզիների վերայ: Ամերիկան իւր արևմտեան եզերով այն է Գորտիլերներով, նոյնպէս և Ալեուտեան կղզիներով գտնուում է Խաղաղ Ովկիանոսը շրջապատող հրաբղխային գօտու արևելեան մասում, ուստի Գորտիլերների և Ալեուտեան կղզիների լեռների գագաթներից շատերը շրջած կամ ներգործող հրաբուղխներ ունին: Ամերիկայի հրաբուղխները աշխարհիս մէջ ամենամեծերը են: Էկուադոր աշխարհիս մէջ ամենաբարձրը է, 6 վերստից աւելի բարձրութիւն ունի և գրտնուում է Ընդու Գորտիլերների մէջ: Բացի գորանից նշանաւոր են հիւսիսային Ամերիկայի սուրբ Ելենա (ապառաժուտ լեռներին մէջ). հարաւային Ամերիկայում Ընթերդանոյ (Կուիտո Կորտիլերների մէջ): Բարձրային գլխաւոր գօտուց դէպ արևելք Ընապուակի բարձրութեան վերայ ցրուած են հրաբուղխներ, նշանաւորներն են Տօլո-կա և Պոպոկա: Բաց ի գոցանից արևելեան Անդկաստանի կղզիներից մի քանիսի վերայ նոյնպէս կան հրաբուղխներ:

Հանքային հարստութիւնը: Ամերիկայի բարձրաւանդակութիւններն իւրեանց երակների մէջ ամենահարուստ ոսկու ակեր ունին Կալիֆորնիայի ծովային Ղպերում և Ռքազիլի լեռներում. առաջինի բոլոր հանքերից միասին մինչև 1856 թ. այնքան ոսկի էր ստացւում՝ որ աշխարհիս ոչ մի մասը այնքան չէ տալիս: Բայց ի դորանից Ամերիկան հարուստ է արծաթով — Մէքսիկոյի բարձրութիւններում — երկաթով և քարեայ — ածուխով — Ալեղինի լեռներում, թանկագին ակներով Ռքազիլի լեռներում (Ռքազիլի ալմաստի հանքերը աշխարհիս մէջ ամենաերևելիներն են) և հանքային թագաւորութեան ուրիշ բերքերով:

Ամերիկայի մակերևոյթի կազմութեան հետեւանքները: Ամերիկայի մակերևոյթի կազմութեան մասին կարելի է ասել 1) որ Ամերիկան ըստ մեծի մասին դաշտավայր երկիր է, նորա մէջ դաշտերը երկու անգամ շատ են բարձրաւանդակութիւններից. 2) դաշտավայր տեղերը գրեթէ մի անընդհատ ամբողջ են կազմում. 3) ուրիմն բարձրաւանդակութիւնները միմեանցից բաժան մի քանի առանձին մասեր են կազմում. 4) բարձրաւանդակութիւնները մեծ մասով լեռների շղթաներից են բաղկացած. 5) լեռնային գլխաւոր շղթայն ոչ թէ ցամաքի մէջ տեղովն է անցնում, այլ նորա ափերից մինի վերայով. 6) այդ լեռները նշանաւոր են իւրեանց բարձրութեան անանցանելի լինելովը. 7) այդ շղթայն տարածւում է ոչ թէ արևելքից դէպ արևմուտք, այլ ընդհակառակը հիւսիսից դէպ հարաւ: Ուրիմն Ամերիկան իւր մակերևոյթի կազմութեամբ մասամբ նման է Եւրոպային և մասամբ Ասիային և Աֆրիկէին. բայց մի և նոյն ժամանակ այնպիսի յատկութիւն ունի, որը չունի ոչ Եւրոպան, ոչ Ասիան և ոչ Աֆրիկէն: Նա Եւրոպային նման է, որովհետև նորա դաշտավայրերը երկու անգամ շատ են բարձրութիւններից և գրեթէ մի անընդհատ ամբողջ են կազմում. իսկ ընդհակառակը բարձրութիւնները միմեանցից բաժան գլխաւորապէս մի քանի առանձին լեռնային

շղթաներից են բաղկացած: Ասիային և Աֆրիկէին ի միասին, Ամերիկան նման է, որովհետև նորա լեռնային շղթան նշանաւոր է իւր բարձրութեամբ և անանցանելութեամբ: Մակերևոյթի կազմուածքի կողմից Ամերիկայի յատկութիւնը այն է՝ որ նորա լեռնային շղթաներից գլխաւորը ոչ թէ ցամաքի մէջտեղովն է անցնում, այլ նորա ափերի մինի վերայով է՝ այն է արևմտեան ափերով և նորա ուղղութիւնը ոչ թէ արևելքից դէպի արևմուտք, այլ ընդհակառակը հիւսիսից դէպի հարաւ է. Ամերիկայի մակերևոյթի այս տեսակ կազմութեան պատճառով 1) անձրևները նորա մէջ աւելի առատ են՝ քան թէ աշխարհիս միւս մասերի մէջ. 2) հակադիր աւազանների գետերը հաւասար չեն սփռվում զանազան կողմեր. 3) թէպէտ նորա գետերից շատերի սկիզբները միմեանց մօտ են, բայց ջրանցքներով միացնելը միմեանց հետ անկարելի է. 4) գետերի դաշտերը նշանաւոր են իւրեանց մաքրութեամբ և խորութեամբ, որովհետև նորա հոսում են ոչ թէ կոշտ հողի վերայով ինչպէս Ասիայում և Աֆրիկէում, այլ փխրուն հողով ինչպէս Եւրոպայում. 5) Ամերիկայի թէ կլիման և թէ բուսականութիւնը չունին այնպիսի մեծ զանազանութիւններ Եւրոպայում և Ասիայում. 6) նորա մակերևոյթի կազմուածքից կախուած է Եւրոպական լուսաւորութեան շատ տարածվելը պատճառը: Եթէ Կորտիլերները արևելեան ափի վերայ տարածուած լինէին, այն ժամանակ Եւրոպացիների համար դժուար կլինէր Ամերիկայում բնակութիւն հիմնել:

ՕԹՈԳՈՒՄՆ.

Ամերիկայի ուռոգման մասին և նորա ներքին ջրաբաշխման ընդհանուր նկարագիրը: Ուռոգման կողմից Ամերիկան Աֆրիկէի նման երեք մասը է բաժանվում, Ասիայի պէս պէտք հե-ա և պէտք հարաւ: Ասիայի Ամերիկան ուռոգւում է կանոնաւոր հողմերից բերած անձրևներով:

Նորա զանազան մասերը Ամերիկի զանազան երկիրներին նման ոռոգուում են պարբերական անձրևներից։ Հիւսիսային Ամերիկայի այրեցեալից դուրս գտնուած մասը ոռոգուում է այն անձրևներից, որոնց բերում են արևմտա — հարաւային քամիները։ Հարաւային Ամերիկայի այրեցեալից դուրս գտնուած մասը ոռոգուում է այն անձրևներից, որոնց բերում են արևմտա — հիւսիսային քամիները։ Այդ երկու տեսակ քամիներն ևս միայն ձմեռուայ ժամանակները են լինում, գարնանային և աշնանային ժամանակները նոքա միայն մասամբ են փչում՝ տեղի տալով ուրիշ քամիներին. իսկ ամառնային ժամանակում նոքա բոլորովին չեն փչում։ Հիւսիսային Ամերիկայում ամառուայ ժամանակ արևմտա — հարաւային քամիների փոխանակ՝ փչում են արևելա — հարաւային քամիները։ Հիւսիսային Ամերիկայի ամառուայ հարաւային քամիները իւրեանց ծագման տեղի համեմատ (այրեցեալ կողմեր) նոյնպէս և արևմտա — հարաւային քամիները խառնաւ են։ Հարաւային Ամերիկայի արևմըտա — հարաւային քամիները իւրեանց ծագման տեղի համեմատ չոր են։ Ահա սորանից ծագում է հիւսիսային Ամերիկայի այրեցեալից դուրս դէպի հիւսիս և հարաւային Ամերիկայի Այրեցեալից դուրս հարաւ գտնուած երկիրների մէջ եղած ահագին տարբերութիւնը ոռոգման կողմից։ Հիւսիսային այրեցեալից դուրս եղած երկիրներում գրեթէ ամբողջ տարին անձրևոտ է, իսկ հարաւայինում անձրևները լինում են միայն ձմեռը, այսինքն Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսներին։ Ահագնագոյն ալեծփումն ովկիանոսի ոչ մի մասը Հնդկական նման տարածութեամբ գիտեք ըստ։ Թէպէտ Ամերիկայում կան տեղեր, ուր շատ սակաւ են լինում անձրևները, զոր օրինակ Կալիֆորնիայի բարձրաւանդակութիւնում, Լապլատայի Պամպասներում և Պատագոնիայի անապատներում. կան և այնպիսի երկիրներ՝ ուր բոլորովին անձրևներ չեն լինում, զօ. Պերուի Կորդիլլերներից դէպի արևմուտք — հարաւային Ամերիկայի ծովեզերքում։ Կալիֆորնիայի բարձրաւանդակութիւնում անձրևները սակաւ

լինելուն պատճառը այն է, որ այդ երկիրը շատ բարձր է և ամեն կողմից Գորի անապատի նման շրջապատած է լեռներով. Լա-Պլատայի պամպասներում և Պատագոնիայի անապատներում անձրևի սակաւութեան պատճառը այն է, որ Կորդիլլերները արգելք են գառնում արևմտա-հարաւային խոնաւ քամիներին այդ երկիրներում փչելու. իսկ Պերուի ծովափնեայ երկիրների և Ատակամի անձրևներից զուրկ լինելուն պատճառաւը ամենաբարձր Անտիրը են, որոնք արգելք են գառնում կանոնաւոր հողմերին այդ տեղերում փչելու։ Որովհետև Ամերիկայի մակերևոյթը ընդարձակ կամթասյաձև ձորեր չունի, ուստի նա ներքին մեծամեծ աւազաններ չունի։ Ամենամեծ աւազանը գտնուում է հիւսիսային Ամերիկայում Կալիֆորնիայի բարձրաւանդակութեան վերայ և ունի 8½ ապէ լիճ։ Հիւսիսային Ամերիկայում միւս ներքին աւազանը գտնուում է Մէքսիկայի բարձրաւանդակութեան վերայ։ Հարաւային Ամերիկայի ներքին աւազանը, որ գտնուում է Պերուի բարձրաւանդակութեան վերայ, ուրիշ նշանաւոր է հիւսիսային Ամերիկայի աւազաններից, ոչ թէ իւր ընդարձակութեամբ, այլ իւր առաջնակարգ բարձրութեամբ. այդ աւազանի նշանաւոր լիճը Տիտիկակա է կոչուում։

Այս լիճը ծովի մակերևոյթից ունեցած դրութեամբ Ասիայի ներքին աւազանի գլխաւոր լճին (Մեռեալ լիճ) բոլորովին հակադիր յատկութիւն ունի։ Ամերիկայի արտաքին աւազանի գետերը և լճերը ցամաքի մակերևոյթի կազմուածքին համեմատ՝ նորան շրջապատող ովկիանոսների մէջ յետագայ կերպով է դասաւորուած։

Արտաքին աւազանին պատկանեալ գետերը և լճերը։ Ե. Մէջ կամ Խաղաղ Ովկիանոսի ափերը։ Ցրէյդէր և Կոլո-Ռաֆա կամ Օրեգոն։ Երկրորդի ստորին ընթացքի հովիտը մի մասն է կազմում այն գլխաւոր ճանապարհի, որը անցանում է հարաւային անցքով հիւսիսային Ամերիկայի արևելեան մասից դէպ արևմտեան մասը. Կոլըմպիա և

Սակրամէնտոյ։ Երկրորդի հովիտը նշանաւոր է իւր ոսկեայ հանքերով, որոնց գտնելը շատ ժամանակ չէ (1848) և որոնց պատճառով բնակիչների թիւը կարճ ժամանակում շատ բազմացաւ։

(Ն.) **Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսի աւազանին պատկանեալ գետերը և լճերը։** Մեէնդէ ամենաերկար գետը երկու աղբիւրներից է սկսւում, որոնք Ապաչաակոյ լճում միանում են միմեանց հետ, այդ տեղից հիւսիս, այդ ջրերը հաւաքւում են Սպէյոյ ծեծ լճին մէջ, որ տեղից դուրս գալով՝ արդէն Մէքէնզի անունը են ստանում, որի ստորին մասի մէջ, աջ կողմից թափւում է աղային լճի վտակը։ Մեծ Չկանոյ գետը անուանի է, որովհետև նորա բերանի հանդիպում վ. Լիհտիմ թագաւորի կղզու վերայ Մէկ-Կլէր անուանի ծովածոցը գտաւ Ֆրանկլինի ճանապարհորդութեան հետքերը։ Սահալավան՝ որ Ուինիպիգ լճից դուրս գալով մինչև Հուդսընի ծոցը թափուիլը Նելսոն է կոչւում։

Ընտանեան Ովկիանոսի աւազանին գետերը և լճերը։ Սո-ըէ վ.-Լաբրադորոյ գետը։ Այս գետի վերին և միջին ընթացքը կազմում են հինգ մեծամեծ լճեր՝ այն է՝ վ.-Էրէն լիճ, որ անուշ ջուր ունեցող լճերից ամենամեծը է, Հուրոն, Միչիկան, Էրիէ և Օնտարիոյ։ Աշխարհիս ոչ մի մասում այնքան անուշ ջուր չկայ՝ որքան այս լճերի մէջ, ուստի վերոյհիշեալ լճերը միասին անուշ ջրի ծով են կոչվում։ Էրիէ թափւում է Օնտարիոյ լճի մէջ Նեագարէ ջրվէժով, որ աշխարհիս մէջ ամենամեծ ջրվէժը է 23 սաժէն բարձրութեամբ և $1\frac{1}{2}$ վերստ լայնութեամբ։ Ջրվէժի վերայով երկաթուղի է շինած։ Սուրբ Լաւրենտիոսի գետի ստորին ընթացքը լայնանալով հասնում է ծոցը կազմում, որ 150 վերստ լայնութիւն ունի։ Պոնչարթրեյն-ը և Հուրոնը երկուսը և շատ խոր և յարմար են նաւադնացութեան համար։ Միսսիսիպի (ջրերի հայր) նշանաւոր է թէ իւր երկայնութեամբ, թէ իւր ընդարձակ աւազանով և թէ խորութեամբ։ Միսսիսիպի գետը իւր երկայնութեամբ

Եհապնէյ մեծ է, (եթէ նորա սկիզբը ընդունինք Մէսսո-ըէ գլուխաւոր գետակի վերին մասերը $6\frac{1}{2}$ հազար վերստից աւելի). իսկ Ամազոնից աւելի գերազանցւում է նորանով, որ այս գետի վերայ նաւադնացութիւնը շատ ծագկած է. վասն զի այս գետը ամենաբազմամարդ երկիրներից է անցնում. հազարաւոր նաւեր անց ու դարձ են անում թէ նորա և թէ նորա գետակիցների վերայով։ Զատ կողմից առաջ նորա մէջ թափւում են Իլլինէյս, իսկ յետոյ աջ կողմից Մէսսո-ըէն, որ նորա գետակիցներից ամենամեծը է. իսկապէս ասելով Միսսուրին թէ իւր ջրի շատութեամբ և թէ իւր երկայնութեամբ Միսսիսիպուց մեծ է։ Միսսիսիպին իւր ստորին մասերում ձախ կողմից ընդունում է Օգէհօ (այս նոյնն գեղեցիկ գետ), իսկ աջ կողմից Էրկանզաս և Կոլրէդ։ Միսսիսիպին իւր բերանի մօտ բազմաթիւ ճիւղերի է բաժանւում, որոնք ճահճոտ տեղեր են կազմում, որ իւրաքանչիւր տարի հեղեղւում է գետի ջրով։ Միսսիսիպու աւազանը պարբերաբար միանում է Սուրբ Լաւրենտիոս գետի աւազանի հետ Իլլինէյս գետով և Մէղիկան լճով։ Ուհոյ-գետ, Մասքինոնգ գետը, Մարքայիթէյ լիճը, Օրինոկոյ և Ամազոն գետերը։ Վերջին երկու գետերի աւազանը միմեանցից այնպէս անշուշտ կերպով են բաժանւում, որ առաջին վտակներից մին-Կասկիվարէ միանալով վերջինի վտակներից մինի Ուհոյ-Նեգրոյ (սև գետ) գետի հետ՝ այդ երկու աւազանները միացնում են և բնական ջրանցք են կազմում։ Ամազոն (Մայնտօնա, Մառանյոն-Տունգուրակվայ-Օրելեանա), իւր երկայնութեամբ Նեղոսից յետոյ երկրորդ տեղը է բռնում. իսկ իւր աւազանի ընդարձակութեամբ և թէ իւր վտակների խորութեամբ և լայնութեամբ, ուրիշն և իւր նաւադնացութեան յարմարութեամբ առաջին գետը է։ Մի խօսքով եթէ անուշ ջուրերը Ամերիկայի գլխաւոր յատկութիւնը են կազմում, ապա ուրիշն նա այդ ջրերի ներկայացնողը և աշխարհիս գետերի թագուհին է, բայց դա իւր նշանակութեամբ շատ գետերից ստոր է։ Վ.-ան զի նորա ափերի վերայի բնակիչներին իւր մեծութեան համեմատ

օգտակար Ամազոնը անցնելով. Հարաւային Ամերիկայի այրեցեալ երկիրներով ոռոգուում է այդ գետի աւելնարգաւանդ երկիրները - Սէվաննէրը: Ամազոն գետը *) սկսւում է Պերուի Օրտիլերների վերայ գտնուող Լաուրիկոճա լճից, որ մեծ ովկիանոսի ափերից 70 վերստ հեռաւորութիւն ունի: Նորա բազմաթիւ

(*) Իսկապէս ասելով այս գետը Ամազոն անունը կը կրէ իւր բերնից մինչև Ռիոյ — Նէգրոյի թափուելը միայն: Ռիոյ — Նէգրոյից դէպի բարձր մինչև Ուկայալի բերանը — Սօլի-մօէս է կոչւում, իսկ Ուկայալից բերանից մինչև Լաուրիկոճա լիճը, որ տեղից սկսւում է, կոչւում է Տունջուրագվայ կամ Մարանիօն: Նորան կոչում են Օսկեանի՝ այն Իսպանացու անունով, որ Եւրոպացիներից առաջինը է, որ կարողացաւ նաւել այդ գետի վերայով նորա աղբերակներից սկսած մինչև բերանը 16 դարի կէսերում (1541 թուականին): Եթէ Ամազոն գետի սկիզբը Ուկայալին ընդունելու լինինք, այն ժամանակ նորա երկայնութիւնը 6000 վերստից փոքր չի պակաս կը լինի (Կէյտէն). եթէ նա հին աշխարհի միջով սահելու լինէր, ոչ միայն Եւրոպայի արևմուտքից սկսած մինչև արևելք կհասնէր, այլ և մինչև Չինական կայսրութիւնը: Այս գետի երկայնութիւնը այնպէս զարմանալի է՝ որ երբ Մարանիօնի ջուրը Անդէսների մօտ շատանում է Յունվարին, այդ շատութիւնը միայն Փետրվարին է հասնում Սօլիմօէսին, իսկ Ամազոնում կամ Մարտի վերջին կամ Ապրիլի սկիզբներին է ջուրը բարձրանում: Անդէսներից դուրս ելնելու ժամանակը նորա լայնութիւնը աւելի շատ է քան թէ Հռենոսի ընթացքի ամենալայն տեղը, որ Կէլնի մօտ է. (Հարտվիկ) Մատէյրի բերանի մօտ Ամազոնի լայնութիւնը 5 վերստ է, իսկ Տօպահօսին իւր մէջ ընդունելուց փոքր ինչ ցած, նորա լայնութիւնը Պատէնք լճի լայնութիւնից պակաս չէ. եթէ Ամազոնի Դէլտայի հետ հաշուելու լինինք և Մարայս մեծ կղզին, այն ժամանակ նորա բերանի լայնութիւնը (300 վերստ) հաւասար կլինի Պալթիկ ծովի ամենամեծ լայնութեանը: Ամազոն գետի ամենափոքր խորութիւնը 2 1/2 սաժէն է: Մատէյրայի թափուելու տեղից դէպի ցած նորա խորութիւնը մինչև 22 սաժէնի է հասնում. ջրերի շատանալու ժամանակ գետը իւր սովորական ափերից դուրս գալով մի քանի տեղերում բարձրանում է մինչև 6—7 սաժէն: Ամազոն գետը իւր մեծութեամբ ովկիանոսի նման է: Ովկիանոսի նման Ամազոնը ևս կենդանիների ցեղերը և տեսակները բաժանում է միմեանցից. օրինակ, նորա հիւսիսային ափերի կապիկները բոլորովին զանազանւում են հարաւային ափերի կապիկներից. շատ միջատների և թռչունների համար անանցանելի

վտակներից անուանիները են՝ ձախ կողմից Ռիո-Նէգրօյ, և աջ կողմից Ռիո-Մադէյրա (այս ինքն փայտ, որովհետև շատ փայ-

սահման է նաև Ովկիանոսների նման սորա ջրերում ևս գտնւում են գրէ-փիններ և ափերին վերայ կտկտում են որորները, իսկ ծովային բազմաթիւ ձիճեռնները խաբուելով նորա մեծութիւնից՝ թռչում են նորա վերայով: Ինչպէս ծովերի վերայ՝ նոյնպէս և սորա վերայ լինում են օդերևոյթներ. ինչպէս ծովերի վերայ՝ այնպէս և այս տեղ մրրիկները յուզում են նորա ալիքները. Այս գլխաւոր գետի լայնութեանը՝ երկայնութեանը և խորութեանը համապատասխանում են և նորա մէջ թափուղ վտակները: Ռիո-Նէգրոյին իւր երկայնութեամբ հաւասար է Վիսլային, Էլբային և Վեզերին միասին վեր առած. Շինգէն իւր երկայնութեամբ գրեթէ երկու անգամ մեծ է Հռենոսից. Օտերը և Վիսլան միասին առած հաւասար են Տօպահօսին. Մադէյրան իւր երկայնութեամբ Վօլգայից փոքր չէ. Ռիո-Նէգրոյի բերանի լայնութիւնը 3,600 քայլ է, իսկ խորութիւնը 16 — 17 սաժէն: Մատէյրայի բերանը 2,500 ոտք լայնութիւն ունի:

Ամազոնի և նորա գլխաւոր վտակների երկայնութեամբ ափերի մօտ անթիւ լճեր և ճահիճներ կան: Երևի թէ այդ լճերի և ճահիճների կազմուելու պատճառը ջրերի երբեմնապէս շատանալը և բարձրանալը է: Այդ ճահիճներից շատերը ջրանցներով միանում են գետերի հետ: Մի խօսքով Ամազոն գետի աւազանը այնպէս մեծ է (2/5 Եւրոպայի), որ նորա հիւսիսային և հարաւային վտակների աղբիւրների մօտ պարբերական անձրևները տարուայ հակադիր ժամանակներումն են լինում, Հետևապէս, որ Ամազոն գետի աղբիւրները սկսում են 3 1/2 վերստ բարձրութիւնից, այնուամենայնիւ նա շատ հանդարտ ընթացք ունի. Մի և նոյն ընթացքը ունին և նորա գետակները: Ծովի մակընթացութիւնը մինչև Մատէյրայի բերանին է հասնում. բայց այդ մակընթացութիւնը շատ դանդաղաշարժ է. 7 մակընթացութիւններ իւրեանց տեղատուութեան հետ իրիասին միևնոյն ժամանակ պատահում են միմեանց երկար ճանապարհի վերայ. վերջին տատանութիւն սկսած այն օրից՝ երբ Ովկիանոսում յառաջացել է մակընթացութեան աւելքը, հէնց օրից յետոյ է անցնում. Բրազիլիայի անտառների միջով նաւարկութեան համար այս տեսակ յարմարութիւններ լինելով Ամազոնի վերայով գնելա մինչև Ռիո—Նեգրոյ, կարող են մինչև անգամ պատերազմական նաւեր անց ու դարձ անել, իսկ հասարակ նաւերը մինչև Անդէսի ստորոտը անխափան կարող են հասնել: Մինչև անգամ Անդէսի մէջ եղած Մարանիոնի ընթացքը ևս նաւարկութեան համար յարմար է: Մարա-

տեր են ծփում նորա մէջ)։ Լապլատա կամ արծաթեայ գետը բաղկանում է երկու գետերից՝ Պարանայից իւր աջակողմեան Պա-

---

նիանի նաւագնացութեան համար եղած միակ վտանգները են ափերի ահագին կտորները, որոնք կոտրելով ընկնում են ջրի մէջ. վտանգաւոր են նոյնպէս ծանծաղտանները, քառաժայռերը, որոնք գտնւում են մի քանի տեղում։

Առաջին տեսակ վտանգը յաճախ է, մանաւանդ երբ ափերի վերայ եղած բարձր ծառերը ընկնում են ջրի մէջ։ Ծանծաղուտներ շատ կան Ամազոնի բերանին մօտ։ Նաւագնացութեան համար վտանգաւոր է նոյնպէս պղպջակները կոչեցեալ երեւոյթը, որ կայանում է մակընթացութիւնից յառաջացած ալեաց արագութեամբ բարձրանալուց գլխաւոր գետի և նորա գետակների ծանծաղուտ բերանում։ Այս երեւոյթը, որ ինչպէս յայտնի է լինում և ուրիշ գետերի բերանում (Գանգէսի, Ինդոսի, Գարօնի, Սէնի և այլն) երբէք այնպէս սաստիկ չէ լինում՝ ինչպէս այստեղ, ուր մակընթացութեան ահագին ալիքը գետի բոլոր լայնութեանը տարածեալ 12—15 կանգուն բարձրանալով՝ այնպիսի զօրութեամբ է խորտակվում, որ ձայնը մի քանի վերստ հեռաւորութիւնից կլսուի։ Դորանից յետոյ ալիքը խորը տեղերում կրկին հանդարտ հոսանք է ստանում և ծանծաղուտ տեղերում կրկին մի և նոյն զօրութեամբ խորտակվում։ Մի քանի գետեր՝ ինչպէս օրինակ Նեգրոսը՝ ուշադրութեան արժանի են իւրեանց պատմաբանական յիշատակներով, որոնք անցել են ժամանակի հետ. միւսները՝ ինչպէս օրինակ Թամմուզը՝ անուանի են իւրեանց վաճառականութեամբ, որոնց նմանը դեռ չէ եղած աշխարհում. ուստի առաջին տեսակները կոչվում են անցեալ ժամանակի, իսկ վերջին տեսակները ներկայ ժամանակին։ Ամազոն գետը՝ իւր դերը խաղալու է ապագայում, որովհետև մարդկային աշխատասիրութեան և հնարագիտութեան համար մեծ ասպարէզ է բացվում այս տեղում։ Այս գետի աւազանում բնութիւնը շռայլօրէն տարածել է իւր բոլոր բարութիւնները։ Մարանիոնի մօտի աղբիւրների մերձ լեռների ծոցերում չափեցը դեռս շատ են գտնվում զանազան մետաղներ և թանկագին քարեր. դաշտերում և հովիտներում բուսականութիւնը ամենառատօրէն է սփռած։ Այս տեղ այրեցեալ աշխարհի ամենաթանկագին արդասիքները անհատական կերպով շատ են. մի խօսքով նորա աւազանում մինչև անգամ քաղաքակրթեալ մարդի համար ամենայն կարևոր բան գտնվում է։ Երկրագնտիս այժմեան բոլոր բնակիչները առանց չքաւորութեան ազատ կարող են ապրիլ նորա աւազանում. մինչև այժմ Պարայի մէջ իւրաքանչիւր քառակուսի մղոնի վերայ 4 բնակիչ կայ միայն։

րակվայ վտակով և Ո–րակվայից։ Պարանայ, Պարակվայ և Ո–րակվայ այնպիսի աւազան ունին, որ իւր մեծութեամբ Ամերիկայում երկրորդը է։ Լապլատայի աւազանը Օրինոկոյի աւազանին նմանն բարձրութիւններով է բաժանվում Ամազոնի աւազանից։

Գետերի և լճերի իրրև հաղորդակցութեան ճանապարհների նշանակութիւնը։ Ամերիկայի գետերի և լճերի մասին կարելի է ասել, որ 1) Հիւսիսային և Միջին Ովկիանոսի մէջ թափուղ գետերի վերին մասերը թէպէտ ինչպէս Եւրոպայում միմեանց շատ մօտ են, բայց ըստ մեծի մասին անկարելի է նոցա ջրանցքներով կամ երկաթուղիներով միացնել՝ ինչպէս Ասիայում և Եվրոպիկեում։ 2) Որ դորա փոխարէն Հիւսիսային Ովկիանոսը թափուղ գետերի աւազանների մէջ եղած հեռաւորութիւնը այնպէս անհնարին է, որ շատ տեղ բնութիւնը ինքը օգնել է նոցա հաղորդակցութեանը (Օրինոկոյ և Ամազոն), շատ տեղ էս պարբերական կերպով է լինում այդ հաղորդակցութիւնը (սուրբ Լաւրինտիոս և Միսսիսիպի). ուստի ամենափոքր աշխատութիւն է հարկաւոր մարդի կողմից նոցա ջրանցքներով միացնելու համար։ Ուստի այն տեղ՝ ուր մարդս փոքր ի շատէ տիրել է բնութեանը, ինչպէս Հիւսիսային Ամերիկայում, շատպէտ է օգուտ քաղելու բնութեան այդպիսի յարմարութիւններից։ Ահա այդ է պատճառը, որ աշխարհիս ոչ մի մասը այնպէս ընդարձակ ջրանցքների դրութիւն չունի, ինչպէս Հիւսիսային Ամերիկայի Հիւսիսային Հովիանոսի աւազանը։ Միսսիսիպին և սուրբ Լաւրինտիոսի գետը ոչ միայն միմեանց հետ են միանում ջրանցքներով, այլ և արևելեան ծովափնեայ գետերի հետ, իսկ այս վերջիններս միմեանց հետ։ 3) Ամերիկայի գետերի դաշտերը ըստ մեծի մասին շատ մաքուր են. միայն նոցանից քիչերը ծանծաղուտ տեղեր ունին և սրընթաց են։ 4) Բոլոր գետերը տարուայ ամեն եղանակում ջրերով շատ առատ են։ 5) Գրեթէ բոլորը էս հանդարտ են հոսում (ինչու), և վերջապէս 6) նոցանից շատերը թափվում են Հիւսի-

տեան ովկիանոսը. թէ այս հանգամանքը և թէ Կորտիլերների արևմտեան տարածութիւնը շատ օգնում են Եւրոպական լուսաւորութեանը տարածուելուն։ Այսպէս Ամերիկայի ահռելիութիւնը, մակերեսոյթը և գետերը հաղորդակցութեան համար ոչինչ խոչընդոտներ չեն։

Ամերիկան իւր գետերի կողմից աւելի նման է Եւրոպային՝ և բոլորովին հակադիր Ասիային մանաւանդ Սիբիրիային։

ԿԼԻՄԱՅ, ԲՈՅՍԵՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ։

Ամերիկայի կլիման ծովային է և բոլորովին հակադիր է Ասիայի և մանաւանդ Սիբիրիի կլիմային։ Դորա պատճառը այն է՝ որ ծովի ազդեցութիւնը շատ մեծ է Ամերիկայի վերայ։ Դորա պատճառը մասամբ նորա մակերևոյթի կազմութիւնը և մասամբ այն՝ որ այս ցամաքը շատ նեղ է։ Որովհետև Ամերիկան գտնվում է 4 գօտիների տակ և իւր բոլոր երկայնութեամբ բարձր լեռներ ունի, ուստի կլիմայի կողմից նորան կարելի է երեք բաժանել, Այրեցեալ, Այրեցեալից դէպի հիւսիս և դէպի հարա-*)։

(*) Ամերիկայի Այրեցեալ մասը գտնվում է կանոնաւոր հողմերի գաւառում։ Կանոնաւոր հողմերը գրեթէ միշտ արեգակի ուղղահայեաց ճառագայթների և Հասարակածի տաք հոսանքի ներգործութեան տակ լինելով սաստիկ տագանում են, ուստի այնքան շոգի են ծծում՝ որ նոցա խտանալու ամենափոքր պատճառը անգամ առատ անձրև է պատճառում։ Եթէ Այրեցեալ Ամերիկան Անդերի պէս բարձր լեռներ չունենար կամ թէ Անդերը հիւսիսից դէպի հարաւ չտարածուէին, այն ժամանակ Ամերիկայի բոլոր այրեցեալ մասը միատեսակ կլիմայ կունենար։ Իսկ Անդերը, մանաւանդ Պէրուի Անդերը գտնուելով կանոնաւոր հողմերի փչելու ճանապարհի վերայ՝ այն երևոյթը են պատճառում, որ նոցանից դէպ արևմուտք եղած մասը ընդհակառակ ծովի մերձակայութեանը, շատ չոր է, իսկ դէպի արևելք գտնուածը շատ խոնաւ։

Հիւսիսային Ամերիկայի Այրեցեալից դուրս եղած մասին ևս մեծ մասը երկու քամիների՝ արևմտա - հիւսիսային և արևելա - հարաւային քամիների ներգործութեան տակ է։ Արևմտա - հիւսիսային քամիները իւրեանց ծագման տեղի համեմատ (այրեցեալ երկիրներ) աւելի տաք և խոնաւ են քան թէ արևելա - հարաւայինները, որոնք բևեռային են, ուստի և չոր են. բայց իւրեանց փչելու ճանապարհների յատկութիւններին հակառակ նոքա բոլորովին փոխվում են։

Ամերիկայի կլիման ըստ մեծի մասին խոնաւ է, որով նըպաստամատոյց է լինում բուսականութեան առատ զարգաց-

---

են արևելա - հիւսիսայիններից. արևմտա - հարաւային հողմերը սկսում են այրեցեալ երկիրներում, իսկ արևելա - հիւսիսայինները - բևեռային երկիրներում։ Արևմտա - հարաւայինների ճանապարհը ծովային տաք ջրերի հոսանքները են, իսկ արևելա - հիւսիսայինների համար ցուրտ ջրերի հոսանքները։ Եթէ Կորտիլերները չլինէին, այն ժամանակ այդ հողմերը խառնուելով միմեանց հետ՝ հիւսիսային Ամերիկայում այրեցեալից դուրս գտնուած երկիրներին փոքր ի շատէ հաւասարաչափ տաքութիւն և խոնաւութիւն կպատճառէին, ուրեմն կլիման գրեթէ միատեսակ կլինէր ամեն տեղ։ Ի հարկէ արևմտեան մասերը արևելեան մասերից աւելի տաք և աւելի խոնաւ կլինէին։ Իսկ Կորտիլերները պատճառ են գտնում նոցա արևելեան և արևմտեան կողմերի մէջ եղած սաստիկ զանազանութեանը. նոքա մի կողմից պատճառում են այն՝ որ արևմտա - հարաւային հողմերի խոնաւութեան մեծ մասը և գրեթէ բոլոր տաքութիւնը մնում է արևմտեան մասում, միւս կողմից նոքա չեն թողնում արևելա - հիւսիսային ցուրտ և չոր հողմերին դէպ արևմուտք փչելու։ Ահա այս է պատճառը՝ որ Ամերիկայի արևմտեան մասը աւելի տաք է արևելեանից. այս մի և նոյն պատճառով ևս արևելեան ցամաքում Եւրոպական երկիրները Ասիայի երկիրներից տաք են։ Կորտիլերների այդ ներգործութիւնը աւելի սաստիկ կլինէր՝ եթէ տեղական մի քանի հանգամանքներ չմեղմացնէին այդ սաստկութիւնը. այդ հանգամանքները մուսսօնները են, որոնք ամառնային ժամանակին փչում են այրեցեալ երկիրներից դուրս գտնուած արևմտա - հարաւային երկիրներում։ Մուսսօնները Միքսիկոյի ծոցից իւրեանց հետ բերելով անձրև և տաքութիւն՝ բարեխառնացնում են Ամերիկայի այդ մասի թէ տաքութիւնը և թէ խոնաւութիւնը։ Բայց սուրբ Լաւրենտիոսի գետի աւազանից դէպ ի հիւսիս ամրողջ տարածութիւններ, մանաւանդ Անադուակի և Կալիֆօրնիայի բարձրաւանդակութիւնները, յաւետ են իւրեանց չորութեամբ, ուստի ցամաքային կլիմայ ունին։ Հարաւային Ամերիկայի այրեցեալից դուրս եղած երկիրները ևս ըստ մեծի մասին երկու քամիների՝ արևմտա - հիւսիսային և արևելա - հարաւային քամիների ներգործութեան տակ են։ Արևմտա - հիւսիսային քամիները իւրեանց ծագման տեղի համեմատ (այրեցեալ երկիրներ) աւելի տաք և խոնաւ են քան թէ արևելա - հարաւայինները, որոնք բևեռային են, ուստի և չոր են. բայց իւրեանց փչելու ճանապարհների յատկութիւններին համաձայն նոքա բոլորովին փոխվում են։

մանը։ Ամերիկայի, մանաւանդ այրեցեալ երկիրներին, բուսականութեան գլխաւոր յատկութիւնը այն է՝ որ բնափայտը և տերեւները շատ զարգացած են. բայց դորա փոխարէն մշենղորտի խոնաւութեան պատճառով Ամերիկայի բուսականութեան պտուղները առհասարակ այնպէս համեղաճաշակ չեն՝ ինչպէս Ասիայինը։ Ամերիկայի անտառների գլխաւոր յատկութիւնը այն է՝ որ նոքա ոչ թէ միատեսակ ծառերից են բաղկացած, այլ զանազան տեսակներից, զոր օրինակ՝ մայր փայտի հետ միասին բուսնում են կաղնի, կեղի, թխտենի և այլն։ Կենդանիների նաֆտաոպո-Ընեան կողմից Ամերիկայում ըստ մեծի մասին գտնւում են այն տեսակները, որոնք գլխաւորապէս կամ բուսականութիւնից կամ ջրից են կախուած։ Այդ տեսակ կեն-

---

Արևմտահիւսիսայինները անցնելով Պերուի ցուրտ հոսանքի վերայով արևմտեան ափերը զովացնում են, մինչդեռ արևմտա-հարաւայինները անցնելով Բրազիլի տաք հոսանքի վերայով, հարաւային Ամերիկայի այրեցեալից դուրս գտնուած երկիրների արևելեան ափերը տաքացնում են։ Ուրեմն հարաւային Ամերիկայի այրեցեալից դէպ ի հարաւ գտնուած ծովափնեայ երկիրները իւրեանց կլիմայով բոլորովին հակադիր են հիւսիսային ծովափնեայ երկիրներին. հիւսիսում արևմտեան ափերը արևելեաններից տաք են, իսկ հարաւում ընդհակառակը։ Կորտիլիերները այս տեղ ևս մեծ նշանակութիւն ունին։ Եթէ Կորտիլիերները չլինէին՝ այն ժամանակ արևմտա-հիւսիսային և արևելա-հարաւային հողմերը միմեանց հետ առատօրէն կարող էին բարեխառնացնել թէ ջերմութիւնը և թէ խոնաւութիւնը։ Բայց Կորտիլիերները արգելք լինելով խլում են արևմտա-հիւսիսային խոնաւ հողմերից նոցա խոնաւութեան մեծ մասը, և ապա թոյլ են տալիս նոցա ինչպէս չոր հողմեր փչելու դէպ արևելք. մի և նոյն պատճառով ևս արևելա-հարաւային հողմերը չեն կարող իւրեանց տաքութեամբ փչել դէպ արևմտեան ափերը և այսպէս բարեխառնել ջերմ կլիման։

Առհասարակ Ամերիկայի մանաւանդ հիւսիսային մասի կլիմայական գլխաւոր յատկութիւններից մին կազմում է նոյնպէս պոտոմէնկի յանկած գոբդ փոխուելը լոբոմենկի յանկած խոնաւութեան։ Այդ երևոյթի պատճառը այն է, որ Ամերիկայում չկան այնպիսի բարձր լեռներ, որոնք բևեռային սառուցեալ ցուրտը բաժանեն այրեցեալի խորշակից։

դանիները գերազանցւում են երկրագնդի միւս մասերում զտնուած իւրեանց նմաններից թէ իւրեանց մեծութեամբ, թէ արտաքին գեղեցկութեամբ և թէ իւրեանց պայծառ և զանազան գոյներով, որոնցով շատ հարուստ են՝ մանաւանդ միջատները։ Այդ բուսականութեան տիրապետութիւնը տպաւորուած է մինչև անգամ Ամերիկայի սկզբնական բնակիչների վերայ ևս, որոնք հանդարտ՝ բայց մաղձոտ բնաւորութեան տէր լինելով, չեն կարողանում շարունակաբար դժուար աշխատութիւն կրել. ահա այս էր պատճառը՝ որ Նեգրոներին սկսեցին Ամերիկայ բերել։ Ուստի Ամերիկայի բնիկ բնակիչները մինչև անգամ մինչև ցարդ ճնշած են ամենաստորին կարգի լուսաւորութեան մէջ *)։

(*) Ամերիկայի այրեցեալ երկիրներում եղած միջատներից անուանիները են պեղչին խածօղները (кусакь) - Գվիանայի մէջ - անկոպոծանները (Անգլի արևելեան ստորոտում), և ֆեռնէ լոբերը (աւազոտ երկիրներում)։ Այդ միջատները մարախների և Ափրիկէի ցեցերի նման թէ ընտանեկան կեանքի և թէ մարդիկների համար մեռակ Աստուծոյ են. ամբողջ տարածութիւններ բոլորովին ամայացնում են։ Պեղչին խածողները չեն վախենում շոգուց և ոչ ձիից. իւրեանց երկար խայթոցներով նոքա խածում են մարդկանց մինչև անգամ մուշտակների վերայից։ Սանկուտօանների մի քանի տեսակները մինչև անգամ թունաւոր են. նոցա կծած տեղերում կարմրուկի նման բշտիկներ մինչև անգամ ուռուցքներ են գուրս տալի. նոցանից ազատուելու համար շները աւազի մէջ են թաղում իրանց, հաւերը լղարում են և այլն։ Տարուայ մէջ չկայ մի այնպիսի եղանակ մինչև անգամ մի այնպիսի օր և ժամ, որ նոցանից մարդս ազատ լինի։ Ինդոսները նոցանից ազատուելու համար օծում են իւրեանց մարմինը մի քանի տեսակ բոյսերի հիւթերով և քնում են պարկերի մէջ։ Պէտք է ասել, որ Ուիօ-Նեգրօյի սև ջուրը սանկուտօանների համար բարկայաջող չէ։ Գետնի լուսերը սողալով կենդանիների և մարդկանց ոտքերի եղունգների տակ՝ ձու են ածում այնտեղ և սորանով շատ անգամ ջուրը կորելու պատճառ են դառնում։ Բացի դորանից այրեցեալ Ամերիկայում գտնւում են փէրիպոնէր, զանազան տեսակ բզէզներ և գեղեցիկ թիթեռներ։ Ամերիկայի գետերը և լճերը, մանաւանդ ջրի առատութեան ժամանակ, լիքն են կոկորդիլոսներով (Այման), ահագին մողէսներով (Իգուան), վասելիսկոսներով ևն.

ԲՆԱԿԻՉՆԵՐ·

Ամերիկան թէ իւր բնակիչներէն թուով, որոնք 60,000,000 ի չափ են, և թէ նոցա բնակութեան խտութեամբ (80 մարդ մի ք· մղ· վերայ) աշխարհիս մասերի մէջ չորրորդ տեղը է բռնում: Հիւսիսային Ամերիկայում բնակիչների թիւը աւելի շատ է քան թէ հարաւայնում. հիւսիսային Ամերիկայի ամենաբազմամարդ երկիրները արևելեան մասերումը են: Ըլեգենի հիւսիսային զառիվայրը բազմամարդութեան կողմից առաջին տեղը է բռնում բոլոր Ամերիկայում: Ամերիկայի բնակիչները երեք ցեղ են պատկանում, Կոքէյ կամ Ներկեայ Սև և կամ Նեգրոներէն և Սպէոակ կամ Կովկասեան ցեղ:

1) Ներկեան ցեղը (Ամերիկայի բնիկ բնակիչները), որոնց թիւը 13 միլիոն է, ցրուած է և բնակւում է բոլոր ցամաքի վերայ և զանազան ազգերի է բաժանւում: Այդ ազգերից նշանաւորը են՝ Նաւխոաներէը, որոնք բնակւում են բևեռային երկիրներում, Ցոէկներէը - Մէքսիկայի բարձրաւանդակութեան վերայ, Ինկերէը - Պերուի Անդէսի զառիվայրի վերայ, Պապոսներէնէը - Համանուն անապատներում, Պեկերկներէը - ցամաքի հարաւային մասում: Ներկեան ցեղի ժողովուրդները ըստ մեծ մասին ամենևին զուրկ են լուսաւորութենէնէ և թափառական կեանք են վարում անտառների և անապատների մէջ. ուսկան կեանք են վարում անտառների և անապատների մէջ. ուսկան կեանք են վարում անտառների և անապատների մէջ. ուսկան

նեըքոյ են։ Եւրոպացիների կազմած անկախ տէրութիւնների մէջ միայն միապետական կառավարութիւն ունի, իսկ միւսները հասարակապետական։

Գաղթականութիւններից ամենըընդարձակները և ամենաբազմամարդները Անգղիացիներին կպատկանին։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԵՆՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ· ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ·

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՑՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ·

Սահմանը և տարածութիւնը։ Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների սահմանները կազմուած են Ալանտեան և մեծ ովկիանոսները *), Հիւսիսում Անգղիացւոց երկիրները, իսկ հարաւում Մէքսիկայի Հասարակապետութիւնը։ Նահանգների տարածութիւնը՝ որ վերոյիշեալ սահմանների մէջ է պարունակուած՝ մինչև 155000 քառակուսի մղոնի է հասնում։ Ապա ուրեմն հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգները իւրեանց տարածութեամբ փոքր են միայն Ռուսաստանից,

(*) Նահանգների ծովային սահմանները յետագայ յատկութիւնները ունին։ Ալանտեան ովկիանոսի ափերը հիւսիսից սկսած մինչև Բալտէրա-սի հրուանդանը ամենայաջողակ և գիւրամերձենալի են նաւերի համար, իսկ այդ հրուանդանից սկսած դէպի հարաւ՝ ընդհակառակը շատ անյարմար և դժուարամերձենալի նաւադնացութեան համար։ Որովհետև ցած ջիլք ունենալով՝ շատ ծանծաղուտ տեղեր ունին, որոնք առաջացած ծովի և գետերի միացեալ զօրութիւնից, - այս ինքն գետերը իւրեանց հետ սիկ են բերում, իսկ ծովային հոսանքները, որ միշտ մի ուղղութիւն ունին, այդ սիկը տանում են ափերի մօտ և թողնում։ Մեծ ովկիանոսի ափերը յարմար չեն նաւադնացութեան համար, որովհետև ժայռոտ են։ Նահանգները ուսումնական ծովերի նաւահանգիստները և նոյն իսկ ծովերի գլխաւոր արժանաւորութիւնը այն է՝ որ չեն սառում, ապա ուրեմն միշտ յարմար են նաւագնացութեան համար։

Հինաստանից և Անդղիայից, եթէ որ այս վերջինի գաղթական երկիրները ևս հաշուելու լինինք։

Մակերևոյթի կազմուածքը և ուռոգումն։ Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների սահմանների մէջ գանուում են Կորտիլեան շղթայն, Ալլեկինի լեռները և մի ընդարձակ հովիտ Ասիան և Պրերի անուամբ։ Կորտիլերների ամենընդարձակ մասը այն է՝ Կալիֆօրնիայի կամ Ուտայի բարձրաւանդակութիւնը պատկանում է միացեալ նահանգներին. նահանգների սահմանում գանուող Կորտիլերների միացեալ շղթաներից նշանաւորներ են՝ Ապալաչոս լեռները, որոնք արևելեան կողմից սահմանափակում են Ուտայի բարձրաւանդակութիւնը։ Պաչոփեան և Սիերանեվադայի լեռները, որոնք արևելեան կողմից սահմանափակում են վերոյիշեալ բարձրաւանդակութիւնը և Կալիֆօրնիայի Ծովային Ալեղէ անուանեալ լեռները, որոնք մեծ ովկիանոսի ափերի վերայ են։ Կորտիլերների լեռնային շղթաները՝ չնայելով որ Ամերիկայի ամենաբարձր լեռներից են, սակայն երկու անուանի անցքեր ունին. Հապոյային անց (Southa pass) որ գանվում է ապատաժուտ լեռների մէջ 42° հիւսիսային լայնութեան տակ, և երկրորդը այստեղից դէպի հարաւ 35° տակ. բարձրաւանդակութեան բարձրութիւնը հաւասար է Իրանի բարձրութեանը։ Ալլեկինի լեռները միջին կարգի մեծութեամբ մի քանի զուգահեռական շղթաներից են բաղկացած և ճանապարհորդութեան համար շատ յարմար են *)։

(*) Միացեալ նահանգների մակերևոյթի կազմուածքը այս տէրութեան համար յետագայ նշանակութիւն ունի։ Նախ՝ նորա բնակիչները օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ իրանց հայրենիքում այնքան երկաթուղիներ և ջրանցներ են շինել, որչափ աշխարհիս մէջ ոչ մի երկիր չունի։ Օրինակ, միացեալ նահանգների երկաթուղեաց երկայնութիւնը 1861 թուին (47000 վերստից աւելի) հաւասար էր Եւրոպայի բոլոր առաջնակարգ տէրութիւնների և նոցա երկաթուղիների երկայնութեանը մասին։ Երկրորդ՝ մակերևոյթի կազմուածքը այնպիսի յարմարութիւն ունի, որ թոյլ է տալիս արևելա-հիւսիսային քամիներին տարածել ազատօրէն զովութիւն և հրաշ, իսկ

Միացեալ Նահանգի նշանաւոր գետերը են Կօլո՛ռէկա կամ Օրեկօն, Սակրամենդօ, Կալըֆօռ, Ռիօ-Նորդէ. Միսսիսիպի, որի աջակողմեան վտակները են Միսսիսո՛ւրի, Արքանզա և Կաբ-ֆը. ձախակողմեաններն են Իլլինէյս և Օհեյօ. այս վերջինիս մէջ ձախ կողմից թափվում է Տեննեսսի: Ալաբամա, Սավաննա, Ջեյմս, Ռոապոկանօք, Պօտոմաք, Սո՛ւկեհաննա, Դելավէր, Հէյսն, որ Ջամֆլենի լճի հետ միասին կոչվում է Կոննէկթիկո՛ւտ, Սո՛ւբ Լո՛ռենթիօ, Վերին Միչիկան, Նո՛ւռն, Էրի և Օնտարիոյ լճերի հետ միասին: Բացի դորանցից Միացեալ Նահանգին է պատկանում և Մեծ ապի լիճը, որ գտնվում է Ուտա բարձրաւանդակութեան վերայ: Այս գետերից ամենակարևորը է Միսսիսիպի գետ՝ իւր Միսսիսուրի վտակով: Այս գետը իւր երկայնութեամբ աշխարհիս առաջնակարգ գետերիցը է: Այդ գետի դաշտը տեղ տեղ պարունակում է իւր մէջ ահագին ծառերի սրածայր բուներ, որոնց ծայրերը կամ ջրի երեսին է լինում և կամ ծածկուած է ջրի տակ: Այս բուները շատ անգամ կղզիներ կազմե-

Հարաւային քամիներին - ջերմութիւն և խոնաւութիւն, որովհետև Նահանգները Հիւսիսից և Հարաւից երևելի բարձրութիւններով սահմանափակուած չեն. Մակերևոյթի կազմուածքից է՝ որ արևմտա - հարաւային խոնաւ քամիները մինչ Նահանգներին հասնելը՝ խոնաւութիւնից զրկվում են և այդ տեղ չոր են լինում. սորա պատճառը այն է, որ Նահանգների արևմտեան մասում բարձր լեռներ կան. Երրորդ, այս տէրութեան մակերևոյթի կազմուածքը այնպէս է, որ նորա լճերը և գետերը բոլորը արտաքին աւազաններին և գլխաւորապէս Ատլանտեան ովկիանոսի աւազանին են պատկանում: Այս յատկութիւնը շատ նշանաւոր է տէրութեան համար, որովհետև սորանով Նահանգների հաղորդակցութիւնը Եւրոպայի հետ հեշտանում է: Վերջապէս չորրորդ, Նահանգները մեծ մասամբ հարթ մակերևոյթ ունենալով՝ Եւրոպացիների գաղթականութիւններին շատ օգնեց նոցա գործունէութեան մէջ, որով նոքա կարողացան տիրել բնիկ բնակիչներին և կազմել այնպիսի մի տէրութիւն, որ իւր հաստատութեամբ և զօրութեամբ ոչ մի Եւրոպական տէրութիւնից յետ չէ մնում: Մակերևոյթի կազմութիւնը Նահանգների մէջ բնիկ ժողովուրդների համար ապաստանութեան ապաստանարաններ չունի, որ կարողանային ընդդիմանալ իրեանց իշխաններին՝ ինչպէս որ կան Եւրոպական շատ տէրութիւնների մէջ:

ւելու պատճառ են լինում: Կղզիներ կազմւում են յետադայ կերպով. ջուրը իւր ափերից փլուցանելով հողը, տանում է դէպ այդ բուները, այս կերպով ծանծաղուտները են կազմւում. ծանծաղուտը շուտով կղզի է դառնում, որը շուտով ծածկւում է բուսականութեամբ. թափային բուսականութիւնը իւր սերմանելով աւելի ամրացնում է նորաշէն կղզին, յետոյ բոլոր կղզին ծածկւում է անտառով. երբեմն ջրերի շատանալու ժամանակ այդ կղզիները քանդւում են, և ջուրը նորա հողը տանելով մի ուրիշ տեղում կազմում է մի նորը: Այս մի և նոյն երևոյթները լինում են նոյնպէս Միսսիսիպի վտակների մէջ: Այդպիսի վտանգներից ազատուելու համար Միսսիսիպու և նորա վտակների վերայ նաւատնտացութիւնը առանձին կերպով շինած հարթ յատակ նաւերով է լինում *):

Կլիմայ և բուսականութիւն: Հիւսիսային Ամերիկայի միացեալ Նահանգների կլիման աւելի ցամաքային է քան թէ ծովային, որի պատճառը այդ տէրութեան մակերևոյթի կազմուածքը է: Ինչպէս մեզ յայտնի է՝ այդ երկիրը գտնւում է գլխաւորապէս արևելա - հիւսիսային և արևմտա - հարաւային և մասամբ հարաւային քամիների ազդեցութեան տակ: Արևելա - հիւսիսային քամին իւր ճանապարհի վերայ ոչինչ նշանաւոր բարձր լեռներ չպատահելով, ազատօրէն տարածւում է Նահանգների մէջ զո-

(*) Նահանգների գետերը յետադայ ուղղութիւնները ունին. Նախ չափազանց բազմաջուր են, զրէմէ բոլոր գետերը խոր և բաւական լայն են, իսկ Միսսիսիպին և իւր Միսսուրի վտակը իւրեանց երկայնութեամբ աշխարհիս մէջ առաջնակարգ գետերից են: Երկրորդ՝ Նահանգների գետերը Եւրոպայի գետերի նման իւրեանց աղբիւրներից փոքր հեռու արդէն յարմար են նաւարկութեան համար: Երրորդ՝ բոլորը թափվում են բաց ծովերի և մեծ մասամբ Ատլանտեան ովկիանոսի մէջ: Այս յարմարութիւնը միջոց է տալիս միջին Նահանգներին ազատ հաղորդակցութիւն ունենալ ծովերի մանաւանդ Եւրոպայի հետ: Հորրորդ՝ Ատլանտեան ովկիանոսը թափվող բոլոր գետերի սկիզբները այնպէս մօտ են միմեանց, որ գրէմէ բոլորը կարելի եղաւ միացնել միմեանց հետ ջրանցքներով:

վութիւն և չորութիւն. արևմտա-հարաւայինը իր ճանապարհի վերայ մեծամեծ լեռնային շղթաների և բաւական բարձր բարձրաւանդակութեան պատահելով՝ չէ կարողանում տարածել նահանգներին մէջ ոչ խոնաւութիւն և ոչ տաքութիւն, որոնց թողնում է արևմտեան լեռների արևմտեան կողմում։ Ուստի դորանից յառաջանում է, 1) որ նահանգների արևմտեան մասը յայտնի է իր խոնաւութեամբ, այն ինչ ապառաժուտ լեռներից դէպ արևելք բոլոր երկիրները և Ուտայի բարձրաւանդակութիւնը յայտնի են իրենց չորութեամբ. 2) արևմտեան մասը աւելի տաք է քան թէ նահանգների միացեալ մասերը։ Արևմտեան մասի և արևելեան տարածութեան մէջ տաքութեան և խոնաւութեան այժմեան եղած զանազանութիւնը աւելի շատ կլինէր՝ եթէ ամառուայ ժամանակ այս վերջինի վերայ չփչէր հարաւային քամին։ Այս քամին Մէքսիկայի ծոցից է յառաջանում, ուստի հետը իր տաքութիւն և խոնաւութիւն բերելով, նահանգների արևելեան և արևմտեան մասերի մէջ եղած զանազանութիւնը բաւական ոչնչացնում է։ Այս քամու շնորհքով է որ այդ նահանգներում գտնվում են ճոխ Սաւաններ, հոյակապ և ծառախիտ անտառներ և զանազան բոյսեր, որոնք տարածւում են ապառաժուտ լեռներից մինչև Միսիսիպի գետը *)։

(*) Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների չոր օդ ունենալը յայտնի է լինում յետագայ երևոյթներով. 1) Ամերիկայ գաղթող Եւրոպացիները զարմանում են, թէ ի՞նչպէս շուտ է չորանում լուացքը այս տեղ, և որովհետև լուացքը երկու անգամ աւելի շուտ է չորանում այս տեղ քան թէ Եւրոպայում, ուստի միացեալ նահանգներում իւրաքանչիւր շաբաթ լուացք են անում։ 2) Մի և նոյն Եւրոպացիները յուսահատւում են հացի շատ շուտ չորանալուց, իրենց հայրենիքում սովորած լինելով ամբողջ շաբաթը ուտելու համար հաց պատրաստելու, նորա յուսահատւում են՝ երբ մի և նոյն սովորութեամբ մի շաբաթուայ համար պատրաստած հացը մի երկու օրում չորանում է և ուտելու համար անպիտանանում է։ Նորա առաջին անգամ մեղադրում են ալիւրը, ջուրը և միշտ

Բնակիչները։ Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների բնակիչների թիւը (32,000,000) փոքր է միայն Չինաստանի, Ընդհային, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Աւստրիայի բնակիչների թուից։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների բնակիչների խոռ-ըն-ը (202 մարդ մի ք. մ. վրայ) Եւրոպական տէրութիւնների հետ համեմատելով տեսնում ենք, որ նահանգները այդ կողմից յետադաս չիշեալ տէրութիւնների շատերից յետադաս են։ Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների խտութիւնը աւելանում է հարաւից դէպ արևելք—հիւսիս։ Նահանգների մէջ ամենաքաղաքաշատ տեղը Նէրէ և Օհայոյից Լճերի շրջիկը և Փիլադելֆիան ովկիանոսի ափերը են. այդ տեղերում այնպիսի նահանգներ կան, ուր մի քառակուսի մղոնի վերայ $1\frac{1}{2}$, 2 և մինչև անգամ 3 հազար մարդ է բնակւում։ Խաղմամարդութեան կողմից Մասսա-չուսէտս նահանգը առաջին տեղը է բռնում. մի և նոյն տեղում Ատլանտեան ովկիանոսի ափերի վերայ գտնւում են ոչ միայն այդ տէրութեան՝ այլ և ամբողջ Ամերիկայի ամենաբազմամարդ քաղաքները։ Միացեալ նահանգների բնակիչները Ամերիկայում բնակող երեք ցեղերից են բաղկացած.—Ամերիկեան ցեղ, Նեգրոսներ, և Կովկասեան ցեղ*)։

տրանջում են, բայց վերջ ամենայնի ստիպվում են Ամերիկացիների նման եթէ ոչ ամեն օր, գոնէ երկու օրը մի անգամ հաց թխել։ 3) Վերջապէս Միացեալ նահանգների չոր օդի ներգործութիւնը երեւում է և բնակիչների վերայ, որովհետև նորա բաւականին վախտ են, Ամերիկայի քաղաքների շուկաներից անցնելիս շատ հազիւ կարող էք հաստ և լիք մարդ տեսնել, և եթէ պատահին՝ նորա ևս օտարականներ են։

(*) Ամերիկեան ցեղը թուով $\frac{1}{3}$ միլիոնի չափ տէրութեան միայն արևմտեան մասերումն են բնակվում մինչև Միսիսիպի գետը. նորա շատ տոհմերի են բաժանւում։ Այդ տոհմերը միմեանց հետ անպատար կռւում են մեծ եռանդագործութեամբ։ Պատերազմը սկսում են պատերազմական վայրենի պարերով. թշնամիները սաստիկ կատաղութեամբ արձակւում են միմեանց վերայ քարեայ կացինով (տոմահաուկ) սպանելով իր թշնա-

Ա՛ստատութիւն։ Միացեալ Նահանգների ժողովուրդը արհեստների մէջ այնպէս առաջացել է, որ մինչև անգամ մի քանի բանում Անգղիացիներից բարձր է։ Օրինակ,

---

մուն, վայրենին մաշկաղերծ է անում գլուխը և այդ մաշկը մի կապ գանգուրի հետ կապում է իւր գօտուն։ Անտանելի է պատերազմի ժամանակ գերի ընկողների վիճակը. նոցա տանջում են չարչարանաց սիւնի մօտ. իսկ Նոքա մանկութիւնից սովորած լինելով տանջանքներին՝ իւրեանց Թշնամիներուն արհամարհելու համար՝ այդ անտանելի չարչարանքների ժամանակ հոգիավարքի երգեր են երգում։ Հաշտութիւնից յետոյ տօմագաւակին Թաղում են գեանի տակ, իսկ Թշնամիներն ծխում են հաշտութեան ծխափողը։

Այդ ծխափողը բերնից բերան է անցնում խորհրդաւոր կրակի շուրջը նստող առաջնորդների մէջ։ Նոքա պատում են այն մեծաթիւն հոգուոն, որ պահպանում է քաջերին և բարիներին. հաւատում են հանդերձեալ կեանքի երջանկութեանը, ուր Թուփերի մէջ լիք կլինին Թռչունները, անտառները առատ են էրէնիով, իսկ լճակները ձուկերով։ Նեբրոսներէ Թիւը 4 միլիոն է, գրեթէ միայն արևելահարաւային մասումը են բնակւում դեպի հիւսիս մինչև Օգիյօ գետը, իսկ դէպ արևմուտք յօտաւորապէս մինչև Միսսիսիպի գետը։ Մինչև 1865 Թիւը արևելահարաւային նահանգներում՝ Նեգրոնները ստրուկներ էին, իսկ այժմ Նոքա ազատ են։ Բայց այդ բարի գործի պատուղները տեբութիւնը դեռ շատ ուշ կվայելէ. ազատութիւն ստանալով՝ ոչ միայն չէին աշխատում ուրիշների համար, այլ և իւրեանց համար աշխատելուց անգամ դադարեցան, իսկ Սպիտակները և Նեգրոնները միմեանց վերայ հաշտ աչքով չեն նայում։ Այժմեան ժամանակ Միացեալ Նահանգների բնակիչների այդ երկու ցեղի մէջ շատ խոովութիւն է լինում, երբեմն քաղաքական իշխանութիւնները հրատարակում են՝ որ անպործ Նեգրոնները արտաքսեն, և այս պատճառով ամբողջ երկիրներ անմշակ մնալով ամայանում են, և երբեմն Նեգրոններից կազմուած զօրագունդը սկսում է կռուել սպիտակներից կազմուած զօրագնդի հետ, և այլն։

Կովկասեան ցեղը Թուով մինչև 27 1/2 միլիոնի է հասնում. գրուած է բոլոր Նահանգների մէջ, կամ բոլորովին բաժանուած է միւս ցեղերից, ինչպէս արևելահիւսիսում և կամ Նեգրոնների հետ խառն՝ ինչպէս արևելահարաւում, կամ Ամերիկեան ցեղի հետ՝ ինչպէս Միսսիսիպի գետից դէպ արևմուտք։ Կովկասեան ցեղը տեբութեան մէջ առաջին տեղը է բռնում Թէ իւր կրթութեամբ և Թէ իւր բազմութեամբ։ Անկարելի է Կովկասեան ցեղի ազգութիւնների բնակութեան տեղերը ցոյց տալ և որոշել այն լեզուները՝

վերջին ժամանակներում Եւրոպայի բնակիչների մեծ մասի համար Միացեալ Նահանգները շահեկան դարձան. այս տեղ բուսնում է երկրագնտիս վերայ ստացած բամբակի 6/7 մասը և այդ քանակութեան գրեթէ կէսը իւրեանց սեփական գործատուններում են մշակում, ուրեմն այս կողմից Անգղիացիներին վտանգաւոր հակառակորդներ են դառնում։ Միացեալ Նահանգներում գնատեղի և պողպատեղէնների գործատունները աւելի լաւ են քան Թէ Անգղիայում. մեքենայագործութեամբ էս պակաս չեն Անգղիացիներից. վերջապէս Միացեալ Նահանգների նաւերը գնում են աշխարհիս ամեն կողմը. վերջին ժամանակներում Ա՛պոնիայի և Չինաստանի հետ էս վաճառականութիւն սկսեցին. առհասարակ Թէ արտաքին և Թէ ներքին վաճառականութիւնը շատ ընդարձակ է։ Կարճ ասել, Միացեալ Նահանգները ունին իւրեանց Մէնչեստերը (Լօվել), Բերմինգամը (Պեռսպուրդ) և Լիվերպուլը - Նոր - Եօրք - *)։

որոնցով Նոքա խօսում են։ Որովհետև այդ ազգերը ամուսնութեան միջոցաւ խառնւում են միմեանց հետ։ Նոյնպէս դժուար է որոշել, Թէ այս կամ այն դաւանութեանը ի՛նչքան ժողովուրդ է պատկանում, որովհետև տեբութեան մէջ բոլորովին կրօնի ազատութիւն է։

(*) Արհեստների այս տեսակ զարգանալուն պատճառները են, 1) Մէջեալ Նահանգներէ աշխարհագրական դրութիւնը՝ որ գտնւում է աշխարհիս հինգ մասի բնական բնդքով և պարապմունքով հարուստ երկիրների մէջ տեղը։ 2) Նահանգներէ դրացութիւնը դէպ և Ա.պալաչեան ովկիանոսները, որոնք այդ երկիրների հետ հաղորդակցութիւնը շատ հեշտացնում են։ 3) Ա.փերէ մասնաւոր Ա.պալաչեան ովկիանոսէ ափերէ յաջող դրութիւնը։ 4) Գետերէ առղութիւնը և լաւ յատկութիւնը։ 5) Գետերէ ջրանցքերով միանալու առնչած յարմարութիւնները։ Այժմեան ժամանակ Միացեալ Նահանգներում մինչև 90 ջրանցք կայ։ Բոլորը միասին 6000 վերստ տարածութիւն են բռնում, որ գրեթէ Ռուսաստանի ջրանցների երկայնութիւնից 5 անգամ մեծ է և ոչ մի երկրի ջրանցները այդքան մեծ տարածութիւն չունին։ Ջրանցներով միանում են Միսսիսիպի և Սուրբ Լաւրէնտիոս գետերի աւազանները Թէ միմեանց հետ և Թէ Ատլանտեան ովկիանոսի ծովեզերաց գետերի հետ։ Այդ ջրանցներից ամենանշանաւորը Պէնսօնի գետը միանում է Էրի լճի հետ.

Ժողովրդի նիւթ պատրաստող ճարտարութիւններից մենք կ՚յիշենք միայն ամենագլխաւորները։

1) Երկրագործութիւն։ Միացեալ նահանգների բնակիչների հարստութեան ամենագլխաւոր աղբիւրը է կազմում։ Երկրագործութեան գլխաւոր աւարկաները են եգիպտացորեան, բրինձ, բամբակ (ծխախոտ և շաքարեայ եղէգ *)։

այս տեղից զանազան կողմեր ճիւղեր են գնում։ 6) Ընկերութիւններ շինելու համար քննութեան յատկութիւններ։ Այժմեան ժամանակ երկաթուղիների երկայնութիւնը միասին մինչև 50,000 վերստ է և Եւրոպական բոլոր առաջնակարգ տէրութիւնների երկաթուղիների ի միասին վեր առած տարածութիւնից մեծ է։ 7) Նահանգների հարստութիւնը բնական բերքերով։ 8) Ժողովրդի գործունեայ բնաւորութիւնը։ Ճարտարութիւնը գլխաւորապէս ծաղկուած է տէրութեան արևելեան մասում, որովհետև այս կողմում կան յաջող նաւահանգիստներ, նաւաշինաց գետեր, քարեայ ածուխի, երկաթի հայրն հարուստ հանքեր. այս տեղում է գտնւում երկաթուղիների մեծ մասը և ջրանցները։ Նոր Անգղիայում և նորան սահմանակից Նոր—Եորք, Օհէյո, Ինդիանա և Իլլինէյս նահանգներում գտնւում է բոլոր երկաթուղիների երկայնութեան $2|_3$ մասը, այն ինչ այդ նահանգները տէրութեան $1|_{14}$ մասը են կազմում. այս պատճառով այս նահանգներում գտնւում է գործատուն աւոր և վաճառականական քաղաքների մեծ մասը։

(*) Եգիպտացորենը կամ ինդիոյը բուսնում է բոլոր տէրութեան մէջ, բացի արևմտեան մասից գլխաւորապէս Օրեգոն գետի և Աղանտեան ովկիանոսի ափերին, Հիցուն և Պոտոմական գետերի մէջ եղած տարածութեանց վերայ։ Ամերիկայի բնակիչների համար այնպէս կարևոր է Եգիպտացորենը, ինչպէս որ Բուդդայի և Պրամի երկրպագուների համար բրինձը. եգիպտացորենի բունը $1\,|_2$ - 2 արշաւի բարձրութիւն ունի։ Այդ բոյսի ծայրին գտնւում է զանազան գոյնանի փունջ, որի տակ է պտղատու ծիլը. 8 կարգ կամ առաւել հատիկներ ունի, իւրաքանչիւր կարգին մէջ 30 - 40 հատիկ կայ։ Դորա վերայ եթէ աւելացնենք որ այն երկիրներում՝ ուր Եգիպտացորենը առատութեամբ է բուսնում, իւրաքանչիւր բնի վերայ 3 և երբեմն 7 ծիլ կայ, այն ժամանակ եգիպտացորենը այդ երկիրների համար ինչպէս դրուսնատ կարելի է ընդունել։ Եգիպտացին շատ զոհ է լինում եթէ ցորենի մի հատիկը քսան հատիկ տայ. բայց Մէքսիկոյի մէջ այնպիսի երկիրներ կան, ուր արհեստական ոռոգմամբ մի հատիկ Եգիպտացորենը 400 հատիկ է տալիս և ուր տարին երեք անգամ կարելի է ցանել և հնձել։ Եգիպտացորենը այնպէս առատ է լինում, որ հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների մէջ՝ ընակչով այդ հացի չափազանց արժանութեանը՝ այնու ամենայնիւ տարուայ մէջ նորանից ստացած օգուտը երկու անգամ շատ է միւս բոլոր հացերից ստացած օգուտներից։ Եգիպտացորենի լաւ յատկութիւններից մինը այն է, որ նա միւս ցորիններից առնի փոքր է վնասւում և անպտուղ մնում։ Եգիպտացորենը ուտելու համար շատ զանազան կերպով են պատրաստում. վեռ ևս խակ Եգիպտացիները խորովելով կրակի վերայ համեմում են իւղով պղպեղով և աղով. հասածները խաշում են և ուտում են. իւղով չորացած հատիկները ամբողջ տարիներով պահում են. խաշածները շատ համով են լինում. հասուն հատիկները կամ անկի են ուտում կամ թէ եփում են կամով։ Եգիպտացորենից պատրաստում են գարեջուր (հիմա) և օղի։ Իսկ Եգիպտացորենի անպիտան մասերով կերակրում են անասուններին։ Բրինձը ըստ մեծի մասին ցանում են Մէքսիկայի ծոցի և Աղանտեան ովկիանոսի ափերին մինչև Պոտոմակայ գետը, նոյնպէս և Միսսիսիպի գետի ափերին Օհէյո գետի խառնուելու տեղից սկսած դէպի ցած. մանաւանդ Փիորգ և Կարօլինա ծովեզերեայ ափերի վերայ։ Բայց աշխարհիս մէջ ոչ մի երկիր այնպէս առատ՝ մեծ և յստակ հատիկներ չէ տալիս՝ ինչպէս հարաւային Կարօլինան։ Հիւսիսային Ամերիկայի մէջ գործածուած բոլոր բրինձը գրեթէ հարաւային Ամերիկայից է ստացւում, այս տեղից տանում են նոյնպէս և Եւրոպայ։ Այսպէս հարաւային Կարօլինային անսահման ճահիճները, որոնք երբեմն լիքն էին միայն գորտերով՝ այժմ այս ջրասէր բոյսի համար արգաւանդ դաշտեր են դարձած։ Բամպակը մեծ մասամբ, հարաւային Կարօլինայ և Փիորգ նահանգներում։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների երկրագործական դրուատը կարելի է բամպակը համարել։ Այս երկրի բնակիչների փառքը և հարստութիւնը է կազմում նա։ 1858 - 59 թուականներում Միացեալ նահանգներում $1560\,|_2$ միլիոն ֆունտ բամբակ է ստացուել։ Գլխաւորը մեծ մասամբ բուսնում է Մէրիլանդ Կենտուկկի և Վերգինեայ նահանգներէ մէջ։

2) Ընտանեպահութիւնը։ Ընտանի անասուններից նշանաւորները են ձիեր, որոնք մեծ մասամբ գտնւում են հիւսիսային նահանգներում, աւանակներ և ջորիներ՝ հարաւային նահանգներում, եղջերաւոր անասուններ և ոչխարներ գտնւում են հիւսիսային նահանգներում. ոչխարներ չափազանց շատ են Նոր—Եորք և Օհէյոյ գաւառներում։ Խոզերը մեծ մասամբ

պանում են Կենտուկկի, Տէննէսսի և Ինդիանա նահանգներում։ 3) Զինոպոս-Ընկ-ը լինում է ձկների և առաւելապէս ծովերի մէջ, Լօբրադօրի, Նոր Ֆաունդլէնտի ափերին։ Որսում են կեռ, փրփրուկ ևլն։ 4) Տէրօ-Ընկ-ը հարստանում է նոյնպէս հանթահանո-Ընեան մեծամեծ արդիւնքներով. իւրեանց գնով առաջին տեղը բռնում են քարեայ ածուխը և երկաթը։ Ընդհայի նման Միացեալ նահանգները անսպառելի թաքնեայ ածուխի հանքեր ունին. այդ հանքերը անընդհատ տարածւում են Ըլեգինի արևմտա— հիւսիսային մասերից մինչև 80° արևմտ. երկայն. և 33° լայնութիւնից մինչև մեծ ձկների երկիրները. ահա այսպէս նոքա գրեթէ աէրութեան կէնտրոնումը են։ Ըյժմեան ժամանակներում քարեայ ածուխը մշակւում է Օգէոյ, և վերին Միսսիսիպի և Ֆուրոն ձկների մէջի երկիրներում։ Նրկաթը մշակւում է մի և նոյն տեղերում, ուր և քարեայ ածուխը՝ միայն այն զանազանութեամբ, որ նորա մշակութիւնը տարածուած է նոյնպէս փոքր ինչ հիւսիս մինչև սուրբ Լաւրենտիոս գետի ափերը։ Ըյս հանքի առատութեան կողմից Միացեալ նահանգները Ընդհայից յետոյ առաջին տեղը են բռնում։ Նահանգները իւրաքանչիւր տարի Կալիֆորնիայից մեծ քանակութեամբ ոսկի են ստանում։ Մինչև ցարդ Կալիֆորնիան՝ ոսկու հանքերի հարըստութեան կողմից աշխարհիս երեսին առաջին տեղը է բռնում։ Ֆիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների նիւթի մշակող ձարտարութիւնը մեծ մասամբ կենդրոնացած է Նոր-Ենօրք և Պէնսիլվանիա նահանգների մէջ։ Նիւթի մշակող ձարտարութեան գլխաւոր տեղերը են, Նոր—Ենօրք, Լօվել, Սալըմ-ըն, Ռոսթօն, Ֆիլատելֆիա, Բալթիմօրա, Ցինցինատի, Պատ-

Շատերս եղել ենք բուսանում է Մեքսիկայի ծոցի ափերին գտնուած նահանգներում. շաքարեայ եղեգի բոնած տարածութիւնը աւելի լայն է քան թէ բրինձինը. միայն Միսսիսիպի տերության վերայ չորս անգամ աւելի շատ շաքարեայ եղեգը է բուսնում՝ քան թէ միւս միացեալ բոլոր տարածութիւնների վերայ։

պէրօն, Պիտսպուրգ։ Գլխաւոր բերքերը են բամպակեղէն ձեռագործները, որոնք ըստ մեծի մասին պատրաստւում են նոր Ընդհայի նահանգներում, Շօվել քաղաքը՝ Ամերիկայի Մէնչեսդերը է։ Իւրեանց արժանաւորութեամբ Միացեալ նահանգների բամբակեղէն ձեռագործները Ընդհացիների բամբակեղէններից ցած են։ Պողպատեայ ձեռագործները և մանաւանդ մեքենաները աւելի ազնիւ են քան թէ Ընդհացիներինը. մեքենաները մեծ մասամբ շինւում են Պիտսբուրգի, Ցինցինատի և այլն մէջ։

3) Վաճառականութիւնը։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների թէ արտաքին ու թէ ներքին վաճառականո-Ընկ-ը շատ ընդարձակ է։

Ներ քերքլ— գլխաւոր առարկաները են, զանազան ապրանքներ իւրեանց գաղթականութիւններից. գինին բերում են Ֆրանսիայից, Պորտուգալիայից և Իսպանիայից. մետաքսը և մետաքսեայ գործուածքները՝ Չինաստանից և Ֆրանսիայից։

Պոռք պանել— գլխաւոր առարկաները են հացեղէնից՝ ցորեն, ալիւր և թխած հաց, բրինձ, գետնախնձոր, ծխախոտ, բամբակ և բամբակեայ գործուածք, բուրդ, և բրդեղէն ապրանքներ, վուշ, կանեփ, կաշի, թուղթ, վառօդ, ոսկի, արծաթ, կապար, երկաթ և պողպատեայ ձեռագործներ, երկաթուղեայ հեռագրներ, մեքենաներ։ 1859-60 թուին հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգներից պոռք են տարել 450 միլիոն ռուբլու ապրանք, իսկ ներս են բերել 500 միլիոն ռուբլու ապրանք։ Միացեալ նահանգների ամենամեծ վաճառականութիւնը՝ մեծ Բրիտանիայի հետ է։ Ըյս երկրի հետ վաճառականութիւնը գրեթէ նոցա բոլոր վաճառականութեան կէսը է կազմում։ Մեծն Բրիտանիայից յետոյ երկրորդ տեղը բռնում է Ֆրանսիան։

Միացեալ նահանգներում արտաքսահմանի վաճառականութեան ամենալաւ նաւահանգիստը Նոր-Ենօրք է։ Ըյս նաւահանգստի վաճառականութիւնը 1859 թուին իւր արժո-

դուքեամբ բոլոր նահանգների վաճառականութեան $^1/_3$ մասը էր։ Միացեալ նահանգների բնակիչները արհեստների մէջ աւելի շատ են յառաջ գնացած քան թէ կրթութեան։ Ընկերական պակասութիւնը աւելի զգալի է հասարակ ժողովուրդի մէջ, որի պատճառը գլխաւորապէս այն է, որ ժողովուրդը ահագին տարածութեան վերայ ցրուած է բնակուած։ Խարձր կարգի ուսումնարանների մէջ գանուում են շատ համալսարաններ, բայց այդ ուսումնարանների մէջ միայն այն առարկաները են կարդում՝ որոնք կարևոր են կեանքի մէջ։ Ուսումնական փառքի վերայ ոչ ոք չէ մոռանում։

4) **Տէրութեան կազմութիւնը**։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգները բաղկացած են 36 նահանգներից, 1 գաւառից և 10 վիճակներից *)։ Օրէնսդրական իշխանութիւնը Կոնգրէսի ձեռքին է, որ բաղկացած է երկու բաժանմունքից (դահլճից)՝ այն է ծերակոյտներից և ներկայացուցչական ներից։ Կոնգրէսի նիստը Վաշինկտոնում է, ուր և նա հաստատուած է բոլոր դաշնակցութեան համար օրէնքներ։ Գործադիր իշխանութիւնը նախագահի ձեռքին է, որը 4 տարին մի անգամ է ընտրուում։ Նախագահի բացակայութեան ժամանակ պաշտօնը կատարում է նորա փոխանորդը, բայց այդ ժամանակ մանակից են լինում և ծերակոյտները։ Նախագահը իւր նախարարութիւնը ունի, որ բաղկացած է հինգ կառավարիչ ատենադպրից։ Միասեռակ կազմուածք ունի նմանապէս և իւրաքանչիւր նահանգը. նահանգների կառավարիչները առանձին նահանգապետներ են։

Դաշնակցութեան բոլոր քաղաքացիները միասեռակ արտօնութիւններ ունին. ոչ մի քաղաքացիները զանազան դասեր չեն բաժանուում։ Դաշնակցութեան տարիճանաւորները թէ և քան ընտրութեան առաջին կարգի պաշտօնները ունենան, սա-

(*) Վիճակ կոչում են այն երկիրները, ուր 60,000 բնակիչից տակաւ է։

կայն իւրեանց ընտրութեան ժամանակ լռանալուց յետոյ հասարակ քաղաքացիներից ոչնչ արտօնութեամբ բարձր չեն կարող լինել։ Վաշինկտոն-ից գնում է Յովնէկտիկուտի երկու ափերին վերայ. կոչւում է նոր Ընդհայի մայր երկիր. իւր բնակչաց բազմութեան, (գրէ թէ 3500 ք. մ. վերայ) լուսաւորութեան և արուեստների զարգացման կողմից դաշնակից նահանգների կարգին առաջին տեղը է բռնում։ Նորա քաղաքները են - Բոստոն՝ որ Ամերիկայի Աթէնքը է Ատլանտեան ովկիանոսի ծոցի վերայ և Լօվել՝ երկուսն էլ Դաշնակցութեան ամենագլխաւոր քաղաքներիցը են։ Բոստոնի բնակիչները (178000) մեծ մասամբ պարապում են ձկնորսութեամբ (փրփրուկ, կէտ) և երկաթի վաճառականութեամբ։ (Ամերիկայի ամենագլխաւոր վաճառափողոցը)։ Լօվելի բնակիչները մեծ մասամբ պարապում են բամբակեայ ձեռագործութեամբ, և այնպիսի՛ մեծ քանակութեամբ՝ որ այս քաղաքը կարելի է Ամերիկայի Մէնչէսթր կոչել։

Նիւ-Նէօրք գնում է Ջամպլէյն, Էրի, Օնտարիոյ լճերի և սուրբ Լաբրենտիոսի գետերի մէջ անցը. արևելեան մասից անցնում է Հէյոն գետը։ Իւր ժողովուրդի ճարտարութեան մանաւանդ վաճառականութեան կողմից դաշնակցութեան առաջին նահանգն է։ Այս նահանգի վաճառականութիւնը այնպէս ընդարձակ է, որ այս կողմից նա ոչ միայն Ամերիկայի մէջ առաջինը է, այլ և բոլորովին հաւասար է Մեծն Բրիտանիային, որ իւր վաճառականութեամբ աշխարհիս մէջ առաջին տեղը ունի բռնած։ Այս նահանգը վաճառականական հաղորդակցութիւն ունի ոչ միայն Դաշնակցութեան ամենագլխաւոր տեղերի հետ, այլ և աշխարհիս առաջնակարգ երկիրների հետ։ Նորա վաճառականութեան այդպիսի տարածութիւնն նպաստամատոյց են լինում քարեայ ածուխի և երկաթի անսպառելի հանքերը, սուրբ Լաբրենտիոսի գետի աւազանի և ծովի մերձակայութիւնը, Հէյոն նաւահանգստի գետը, բազմաթիւ երկաթուղիները և ջրանցները։ Հէյոն գետը ջրանցներով միանում է մի կողմից

Լէրի և Օնտարիոյ լճերի հետ, իսկ միւս կողմից Դէլավէր, Սուսկիհան և Միսսիսիպի գետերի հետ: Ասյ բոլոր հանգամանքները նպաստաւոր են եղել այս նահանգի հարստանալուն և բազմամարդանալուն, մինչ դի Նոր-Եօրքը իւր բազմութեամբ առաջին նահանգը է (1861 թ. գրէ թէ 4 միլիօն): Ասյ նահանգի գլխաւոր քաղաքը Նոր-Եօրքն է, Հիւսն գետի բերանի մօտ. նա այս նահանգի ճարտարութեան մանաւանդ վաճառականութեան նախատիպը է: 1858 թուականին այս քաղաքի առևտուրը հաւասար էր բոլոր տէրութեան $^1/_3$ առևտուրին: Կարճ ասենք, Նոր-Եօրքը Լօնտոնից յետոյ աշխարհիս մէջ առաջին վաճառաշահ քաղաքն է: Ասյ քաղաքը իւր նահանգին նման ամենաբազմամարդ է ոչ միայն տէրութեան մէջը, այլ և բոլոր Ամերիկայի մէջ. նորա բնակչաց թիւը 815-000 ից աւելի է: Յետոյ դորանից նշանաւոր քաղաքները են, Բրուքլին, որ գտնւում է Լօնգ-Այլանդ կղզու վերայ, 275000 բնակիչ ունի:

Ալբանի-Հէդսոնի վերայ, և Բուֆֆալօ-Լէրի լճի ափին՝ ջրանցքի սկզբի վերայ ներքին վաճառաշահ քաղաքներից մինը է: Պէնսիլվանիան արևելեան կողմից սահմանափակուած է Դէլավերով. արևմտա-հիւսիսային մասում գտնւում է Լէրի լճը, արևելեան մասում գտնւում է Սուսկիհաննա գետը, արևմտեան մասում-Օգէօյ գետի արևմտեան ջրադաւառը: Պէնսիլվանիան դաշնակից նահանգների կարգում ընդհանրապէս իւր ճարտարութեամբ երկրորդ տեղը է բռնում, իսկ իւր մշակող ճարտարութեամբ՝ այն է կաշխղէն և յախճապակեղէն պատրաստելով՝ առաջին տեղը է բռնում: Պէնսիլվանիայի մէջ արհեստանների ծաղկելուն և յառաջ գնալուն նպաստաւոր է լինում արդաւանդ երկիրը, որի ծոցի մէջ գտնւում է անհատնելի քարնայ ածուխի և երկաթի հանքեր. նպաստաւոր են լինում նոյնպէս նաւագնաց գետերը, ջրանցները և երկաթուղիները: Ահա այս է պատճառը, որ Պէնսիլվանիան իւր բնակչաց բազմութեան կողմից երկրորդ տեղը է բռնում տէրութեան մէջ:

Որովհետև բնակիչների մեծ մասը Գերմանացիներ են, ուստի այդ նահանգը Ամերիկեան Գերմանիա է կոչւում: Գլխաւոր քաղաքը Ֆիլադելֆիան է: Դէլավէր գետի ափին (ընդարձակ և խոր նաւահանգիստ), թէ արհեստանոցի և թէ բնակիչների բազմութեան (550,000) նահանգի առաջին քաղաքն է: Յետի պորտանից՝ Ֆիլադելֆիան նշանաւոր է իւր ուսումնական և բարեգործական հաստատութիւններով: Ֆիլադելֆիայում կայ երեւելի զրաստարան, ուր գործադրւում է Ամերիկայի բանտարկութեան կարգը, այն է բոլորովին զրկում են հասարակութեան տեսութիւնից, իսկ սրդում մինչև անդամ և կերակուրից: Պէննսիլվանիայի՝ Օգէոյ գետի այն տեղում՝ որ տեղից սկսում է նաւագնացութիւնը և որ տեղ շրջակայքում գտնւում են քարնայ ածուխի անհատնելի հանքեր: Ահա այս է պատճառը, որ նա մի կողմից հիւսիսային և հարաւային նահանգների ապրանքների համբարանոց է դարձել, իսկ միւս կողմից գերազանց գործատուններ ունին: Ասյ տեղ կան երկաթ ձուլելու գործարաններ, նոյնպէս և երկաթի և պողպատի ձեռագործներ են պատրաստում այս տեղ՝ մանաւանդ մեքենաներ: Ասյ քաղաքը Ամերիկայի Բիրմենգամը է: Օգէոյ իւր արհեստների և ժողովրդի բազմութեամբ երրորդ նահանգը է, որովհետև նախընթացի նման արդաւանդ երկիր ունի, և գտնւում է Օգէոյ նաւագնաց գետի և Լէրի լճի մէջ: Ասյ նահանգի երկիրը իւր ծոցին մէջ պարունակում է քարնայ ածուխի և երկաթի անսպառելի հանքեր, իսկ նորա մակերևոյթը հարուստ է հացի, գործատունեութեան պիտանի և ընտանի կենդանիների համար անդադար խոտերով: Գլխաւոր քաղաքն է Ցէննչինատի (160000 բ.)՝ որ գտնւում է Օգէոյի վերայ. հիւսիսային նահանգների երկրագործական բերքերի վաճառատեղին է՝ մանաւանդ խոզի և ձկի մսի վաճառականութեամբ: Ասյ քաղաքում իւրաքանչիւր տարի մորթում են միլիոնի չափ խոզեր և շատ եղջիւրաւոր կենդանիներ: Ասյ քաղաքում պատրաստում են նոյնպէս երկաթեայ և պողպատեայ զանազան ձեռագործներ, մեքենաներ:

Այս քաղաքը նշանաւոր է նոյնպէս ուսումնական և բարեգործական հաստատութիւններով, ուսում և արհեստագիտութիւն է կոչւում: Իլլինէյս գետը երկու ափերի վերայ, ունի կապարի և քարեայ ածուխի հանքեր: Քաղաքներից ամենանշանաւորը է Ջիկահօ: Որովհետև այս քաղաքը գտնւում է Միչիգան լճի մօտ, ապրութեան գլխաւոր ջրանցների և երկաթուղիների կենդրոնում, ուստի վաճառականութիւնը շատ ծաւալած է: Ջրանցներից նշանաւորը է Իլլինէյ-սկո - Մէրիգան կոչուած ջրանցքը՝ որ Ջիկահօն միացնում է Միսիսիպի գետի աւազանի հետ. այս քաղաքից դէպի հարաւ, արևմուտք, արևելք դէպ Էրի լիճը և Դէտրուա լեռը տարածւում են երկաթուղիները. Դէտրուայից մինչև Բուֆֆալօ շոգենաւեր են գնում. իսկ Բուֆֆալօյից և դէպի Նոր - Եօրք գնում են կամ ջրանցքներ կամ երկաթուղիներ: Ահա այս պատճառներով Ջիկահօ աննշան քաղաք կարճ միջոցում այնպէս բազմամարդացաւ (121,000), և մի և նոյն ժամանակ իւր հսկայ վաճառականութեամբ աշխարհիս մէջ ամենանշանաւոր տեղը բռնեց:

Մերիլենդ, այսպէս կոչւում է ի պատիւ Յակովբ Ա թագաւորի տղայոյն, գտնւում է Չեզապեկեան երկու ափերի վերայ մինչև Պոտոմակ գետը: Այս նահանգին մէջ բնակիչների 7 մասը սպիտակներ են, իսկ մի մասը սեւեր: Ժողովուրդը մեծ մասամբ ծխախոտ է ցանում: Այս բոլոր աշխարհիս և Ամերիկայի մէջ ոչ մի տեղ այնպէս առատ չէ բուսնում՝ ինչպէս այս նահանգում: Գլխաւոր քաղաքը Պալտիմօրա է կոչւում և գտնւում է Չեզապեկեան ծոցի ափին. իւր ժողովուրդի բազմութեամբ (214000 բ.) դաշնակցութեան մէջ երրորդ քաղաքն է:

Վիրգինիա, այսպէս կոչւում է ի պատիւ Ներսէսեան կոյս Թագուհու՝ որի իշխանութեան ժամանակ այս տեղ առաջին գաղթականութիւն հիմնուեցաւ: Առաջին ժամանակներում այս նահանգին պատկանում էին և այն երկիրները, որոնք այժմ Մերիլենդ, Վիրգինիա և երկու Կարօլինաների մէջ են բաժանած, գտնւում է Պոտոմակ գետից և Օհէյօ գետի վերին մասերից դէպի հարաւ և Ալլեղին լեռների հիւսիսային և արևմտեան կողմերի վերայ մինչև ծովը: Այս նահանգում Նեգրոների թիւը աւելի շատ է քան թէ Մերիլենդում և բնակիչների կիսից փոքր ինչ պակաս է միայն: Այս տեղում ժողովուրդը մեծ մասամբ ծխախոտ է ցանում:

Հնախոյն Կարօլինա, այսպէս կոչւում է ի պատիւ Կարլոս Ա թագաւորին. տարածւում է Ալլեղինի լեռների արևելա - հարաւային կողմի վերայ մինչև ծովը. բնակիչների կէսը սեւեր են, ժողովուրդը մեծ մասամբ ցանում է բամբակ և ծխախոտ. Ատլանտեան ովկիանոսի ափին ցանում են և բրինձ:

Հարաւային Կարօլինա տարածւում է Ալլեղիններն արևելեան կողմերից մինչև ծովը: Այս տեղ Նեգրոները աւելի շատ են քան թէ սպիտակները, և ոչ մի նահանգի մէջ չկան այնքան՝ որքան այս նահանգում: Սեւերը կազմում են բնակիչների 4/7 մասը: Այս նահանգի բնակիչներ մեծ մասամբ պարապում են բրինձ կամ բամբակ ցանելով, և այս տեղում աւելի շատ են լինում այդ բերքերը քան թէ վերոյիշեալ նահանգում: Գլխաւոր քաղաքը Չարլսթաուն է, որ աշխարհիս մէջ առաջինն է իւր բամբակի և կարօլինեան բրնձի ամբարներով:

Լուիզիանա, այսպէս է կոչւում ի պատիւ Լուտովիկոսի, իւր մէջ պարունակում է Միսիսիպի գետի դելտան և այս գետի ներքին ընթացքի արևելեան ափի մի մասը: Բնակիչների կէսը գրեթէ սեւեր են: Բնակիչների պարապմունքը գլխաւորապէս շաքարեայ եղէգի մշակութիւնը է. այս տեղում ջրոյս անգամ շատ է լինում շաքարեայ եղէգը քան թէ ճնայեալ բոլոր նահանգներում միասին: Գլխաւոր քաղաքը Նոր Օրլէան է, և որովհետև գտնւում է Միսիսիպի բերանի մօտ, ուստի իւր վաճառականութեամբ երկրորդ տեղը է բռնում ոչ միայն Միացեալ նահանգներում՝ այլ և ամբողջ Ամերիկայում. 171,000 բնակիչ ունի:

Միչիկոնի դաշտում է համանուն գետի ընթացքի երկու կողմերի վերայ։ Բնակիչների $^{1}/_{10}$ մասը սևեր են։ Գլխաւոր քաղաքը Սուքի Լուին է կոչւում, ոչ հեռի այն տեղից՝ ուր Միսսուրին միանում է Միսսիսիպու հետ. որովհետև այդ քաղաքը գտնւում է Միսսիսիպի գետի աւազանի կեդրոնում, որ պարունակում է իւր մէջ անպատճառելի անասուններ, քարեայ ածուխ և ուրիշ հանքեր (մանաւանդ երկաթ), ուստի և ենթևեթիւր երկրագործութեամբ. և որովհետև նա գտնւում է ջրանցքների և երկաթուղիների կենդրոնում, ուստի հաւանական է որ ժամանակով դաշնակցութեան մայրաքաղաքը դառնայ. 162,000 բնակիչ ունի։ Գալէֆօրնիա գտնւում է Սիերրա-Նեվադայ շղթայի և մեծ Ովկիանոսի ափերի մէջ տեղը։ Ունի արգաւանդ երկիր, ոսկի և լաւ անասուններ։ Այդ նահանգի միջի նաւազնաց գետերը, Ովկիանոսի ափի վերայ գեղեցիկ նաւահանգիստները և աշխարհագրական դրութիւնը (մօտ Չինաստանին Ճապոնիայ և Ամուրիան կողմերը) ձեռնտու են նորա վաճառականութեան չափազանց արագ ծաղկելուն։ Գլխաւոր քաղաքը Սուքը Ֆրանցիսկոյ է կոչւում՝ որ գտնւում է ամենայարմար տեղում, ուր կարող են տեղաւորուել աշխարհիս բոլոր նաւատորմիղները։ Այս քաղաքը 1848 թ. դիւղ էր, իսկ այժմ 70,000 բնակչից աւելի ունի, որոնք զանազան ազգերից են բաղկացած։ Այս քաղաքը Ամերիկայի արևմտեան ափին վերայ իւր վաճառականութեամբ առաջին քաղաքն է, այս տեղից դուրս տարած ապրանքների գինը հաւասար է Նոր-Նորքից դուրս տարած ապրանքների գնին։

Կոլումբիայի գաւառ՝ Պոտոմակ գետի երկու ափերի վերայ 2 ք. մղոն տարածութեամբ։ Այս գաւառը ուղղակի կոնգրէսը է կառավարում։ Վաշինգտոն բոլոր դաշնակցութեան գլխաւոր քաղաքը է, Կոնգրէսի (Կապիտոլիայի մէջ) և նախագահի բնակութեան տեղը է։

Միւս նահանգները են, Մէն, որ հարուստ է անտառներով և մեծ առևտուր է անում փայտով։ Նոր-Համպշիր՝ իւր գեղեցիկ դրութեամբ Ամերիկեան Օվերնիա է կոչւում։ Վերմոն, որի անունը ծնացած է կանաչ լեռներից՝ որոնք Ալլեգինների մի մասը են։ Կոննեկտիկուտ։ Ռոդ-Այլենդ դաշնակից նահանգներից ամենափոքրը է։ Նոր Զերսէյ՝ Գետափը գետի և ծովի միջը է. բնակիչների գլխաւոր պարապմունքը է երկաթ և պղինձ հալելը։ Վիլմինգտոն գտնւում է Վերին Լճից դէպի հարաւ. Միսսիսիպի գետի և Միջնեգան լճի միջ տեղը։ Մինեսոտա դրանում է Միսսիսիպի գետի վերին մասերում։ Յովա՝ Միսսիսիպի և Միսսուրի գետի միջ տեղը։ Կանզաս գտնւում է Միսսիսուրի գետի կանզաս վտակի վերայ։ Օրէգոն գտնւում է Կոլումբիայ կամ Օրէգոն գետի ջրապատառում։

Դելավեր գտնւում է Չեզապիկի և Դելավերի ծոցերից կազմուած թերակղզու արևելեան մասում։ Բնակիչների $^{1}/_{60}$ մասը միայն սևեր են։ Բնակիչները մեծ մասամբ պարապում են հացի բոյսեր մշակելով։

Պենսիլվանիա, այսպէս է գոչւում ի պատիւ Պենդ Թագաւորին, տարածւում է Ալլեգինի արևելա-հարաւային կողմ վերայ մինչև ծովը։ Բնակիչների $^{2}/_{3}$ մասը Նեկրոներ են։ Նահանգի մէջ տարածուած են հնութեան յիշատակներ, ամրոցներ զանազան վերնադրերով և կուռքերով, ժայռեր, գերեզմաններ և այլն. կարծում են որ այս յիշատակները Ինդիկներից առաջ բնակած ազգերին են պատկանում։ Վաշինգտոն համանուն թերակղզու վերայ։ Ալաբամա։ Միսսիսիպի։ Տէխաս՝ Դաշնակցութեան նահանգներից ամենաընդարձակն է, իւր տարածութեամբ Սկանդինաւեան թերակղզուց մեծ է։ Արկանզաս գտնւում է Օգէյ գետի ներքին ընթացքից դէպի հարաւ։ Տէնեսէ, գտնւում է Միսսիսիպի գետի և Ալլեգինի մէջ։ Արկանզաս գտնւում է Միսսիսիպի գետի և Արկանզաս գետի երկու ափերի վերայ։ Ինդիանա, Նեբրասկա։

Վիճակներ։ Ինդիական Տերիտորիա, Դակոտա, Նոր Մեքսիկայ, Մոնդանա, Իդահօ, Արիզոնա, Ութա, Նեվադայ, Ուշինգտօն։ Վիճակներից ամենանշանաւորը Ութան է։ Ութան

գանուում է ապառաժուտ լեռների և Սիբիրա-Նեվադայի մէջ. ժայռուտ անապատ է. այն տեղում ապաստանարան գտաւ իւր համար Մորմոնների աղանդը: Գլխաւոր քաղաքը Նոր-Երուսաղէմը է:

Նահանդի պատկանեալ երկիրները: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանդներին պատկանում են Գալիֆորնիա կամ Արիանների կղզիները, որոնք Ամերիկական Պօլինեզիայ են կոչւում և Սուրբ Յովհաննէսի արշիպելագոսը, որ Գրէվէր գետի բերանի մօտ է, և մօտ ժամանակներս Ռուսաց Ամերիկայի երկիրները՝ որ գնեցին Ամերիկացիները: Գալիֆորնիա կղզիները կոչւում են և Արիանների կղզիներ, որովհետև նոցա ափերի մօտ բազմաթիւ կրիաներ են որսում: Մի քանիները կրիայի միսը գործ են ածում կերակուրի համար. ձարպից, և ձուերից ստանում են ձկնաճարպ (ворвань). խեցից շինում են սանդրներ և ուրիշ տեսակ կարասիներ:

Մանիլեայում կրիայի խեցից շինած բաների մի փութը 1000 ռուբլի արժէ: Ամերիկայի Պօլինիզիան մեծ նշանակութիւն ունի նահանգների համար, որովհետև հարուստ է Գուանոյով: Ռուսաց Ամերիկայի երկիրները հարուստ են ծովային անասուններով, աղուամազ ունեցող կենդանիներով:

ԳԱՂԹԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ:

Բրիտանական հիւսիսային Ամերիկա կոչւում են այն երկիրները, որոնք Միացեալ Նահանգներից դէպի հիւսիս են գտնում: Ընդհանուր կողմից այդ երկիրների սահմանները են, Մեծ Ովկիանոսը և Նահանգների նոր ստեղծ երկիրները, հիւսիսային կողմից՝ հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը, արևմուտքից՝ Ըղանտեան ովկիանոսը: Այդ երկիրների թիւրն են պատկանում Մեծ, Հիւսիսային և Ըղանտեան ովկիանոսների ծովափնեայ կղզիները և Բերմուտեան կղզիները: Բրիտանական Հիւսի-

սային Ամերիկան 150,000 ք. մ. տարածութիւն ունի, բայց բնակիչները շատ սակաւաթիւ են: Այս երկիրը տարուայ մէջ ուեք ամիս ծածկուած է ձիւնով և ցուրտը սաստիկ է. կարճ ամառը ոչ ինչ չէ կարողանում առաջացնել: Ռոյսերը են կարճահասակ ուռիներ, տգեղ թուփեր, մամուռներ և քարափոսներ: Կենդանիների կողմից այս երկիրը այնքան աղքատ չէ:

Այս երկրի ջրերի մէջ լիքը են ձկներ, և ծովային գեր կենդանիներ (կէտ փոկ, ծովաձի և այլն): Ծովային թռչունները մանաւանդ որորները շատ բազմաթիւ են: Ձորքոտանիներից այս տեղում գտնւում է վայրենի եղջերու, սպիտակ արջ, որ իւր մեծութեամբ և ուժով շատատ արջից գերազանց է. շատ յաճախ նաւագնացները մարանչում են նորա հետ: Ռամիաւական կարճահասակ Էսկիմոսները կեղտոտ և շատակեր ժողովուրդ են: Էսկիմոսները ամառը բնակւում են կենդանիների հաշիւներից պատրաստուած վրանների մէջ, իսկ ձմեռը ձիւնից պատրաստած կիսարոլոր խրճիթների մէջ. թափանձիկ սառուցի կտորը նոցա լուսամուտի ապակին է կազմում: Առաստաղից կախում են փրփրակի իւղով կանթեղ, որով տաքացնում են տունը և կերակուր են պատրաստում. նոցա պարապմունքը միայն անասնապահութիւնը և ձկնորսութիւնը է, որոնց անյաջողութեան ժամանակ սաստիկ սով է լինում: Բազաքական կողմից Բրիտանական Հիւսիսային Ամերիկան հետևեալ մասերի է բաժանւում:

1. Հարաւային Նոյ երկիրը Լաբրադոր Ընդարձակ հեռ պատկանում է Հիւսիսի ընկերութեանը, բայց գտնւում է Կըվեբեկի նահանգապետի վերահսկութեան տակ: Այս ընկերութիւնը իրաւունք ունի Գրէվէր գետի աւազանում ոսկու հանքեր որոնելու և մորթիների վաճառականութեամբ պարապելու: Այդ ընկերութիւնը մորթիների համար մի քանի մթերանոց ունի, իսկ երկրի պահպանութեան համար մի քանի ամրոցներ:

2. Կանադա՝ հիւսիսային Ամերիկայի մէջ Անգղիական երկիրներից ամենապլեսաւորը է, և բաղկացած է այն երկիրներից, որոնք գտնւում են մեծ լճերից դէպի հիւսիս մինչև այդ լճերի ջրերի և Հուդսոնի ծոցի ջրերի միմեանցից բաժնուելը, և սորը Լաբրինտոս գետի ստորին հոսանք երկու ափերում: Հիւսիսային Ամերիկայի Անգղիական երկիրների $^{1}/_{6}$ մասը է կազմում. իսկ ժողովուրդի թիւը բոլոր քանակութեան $^{1}/_{6}$ մասը է կազմում: Ժողովուրդը մեծ մասը Ֆրանսիացիներ են, որովհետև այս երկիրը մինչև 1763 թ. Ֆրանսիացիներին էր պատկանում: Ժողովուրդը պարապում է երկրագործութեամբ, որսորդութեամբ և ձկնորսութեամբ, անտառներ կարիլով և վաճառականութեամբ: Քաղաքները. գլխաւոր քաղաքը է Օտտավա համանուն գետի վերայ, որ թափւում է սորը Լաբրինտոս գետի մէջ: Մօնրէալ, Կինգսթոն և Կվէբէկ քաղաքները գտնւում են սորը Լաբրինտոս գետի ափերի վերայ, առաջինը այն տեղում՝ ուր Օտտավան թափւում է այդ գետի մէջ, երկրորդը՝ նորա ձախ դուրս գալու մօտ, իսկ երրորդը՝ բերանի մօտ:

3. Նոր Բրաունվիկ և Նոր Սկովշիա թերակղզիները հարուստ են անտառներով և քարեայ ածուխով: Քաղաքներից երևելին՝ Հալիֆաքս է, գտնւում է Սկովշիայում, շատ դիպուկ նաւահանգիստ ունի: Կառավարչական կողմից նոր Սկովշիային պատկանում է նոյնպէս Կապ կղզին, Բրէթօն՝ նոյնպէս հարուստ է անտառով և քարեայ ածուխով:

4. Նոր-Ֆաունդլէնդ և Լաբրադոր եղեանի կղզիները նշանաւոր են իրենց յարմարութեամբ ձկնորսութեան համար: Նոր-Ֆաունդլէնդը շատ ծոցեր և նաւահանգիստներ ունի՝ որոնք առհասարակ նաւագնացութեան համար են. շատ անտառներ՝ լճեր և ճահիճներ ունի. այս կղզու ծովափնեայ մասը միայն մշակած է. այս կղզին հարուստ է շատ աղուամազ ունեցող կենդանիներով (շների մի տեսակը)՝ մանաւանդ փոկերով և ձկներով՝ ևս և փրփրուկով:

Փրփրուկը որսում են Նոր-Ֆաունդլէնդի ծանծաղուտ տեղերում Ապրիլից մինչև Հոկտեմբեր ամիսները: Այդ որսորդութիւնը այնպիսի մեծ նշանակութիւն ունի, որ շատ անգամ Անգղիայի և Ֆրանսիայի մէջ կռուի պատճառ է եղել. հիւսիսային Ամերիկացիները իրենց ազատութեան հետ իրաւունք ստացան այս տեղում ձկնորսութեամբ պարապելու. այժմ բացի նոցանից այս տեղում ոչ ոք ձկնորսութեան իրաւունք չունի:

5) Ռէյֆոռթեան կղզիները Անգղիացիների համար պատերազմական և վաճառականական կայաններ են, հիւսիսային Ամերիկայի երկիրների և արևմտեան Հնդկաստանի մէջ: Ուստի այդ կղզիների վերայ բերդեր և ամրոցներ շինելու համար կառավարութիւնն ոչինչ խնայում չէ: Տանիմարքացիները իրենց են համարում Գրէնլանդիայի կղզին, որ թէ անտեսական և թէ քաղաքական կողմից մեծ նշանակութիւն չունի, որովհետև մեծ մասամբ ծածկուած է սառուցով:

Ֆրանսիացիներին պատկանում են սորը Պետրոս և Միկելօն փոքրիկ կղզիները, որոնք գտնւում են Նոր – Ֆաունդլէնդի հարաւային ափերի մօտ և նշանաւոր են իրենց ձկնորսութեամբ:

ՄԻՋԻՆ ԱՄԵՐԻԿԱ:

Ընդհանուր նկարագիր: Միջին Ամերիկան շատ հարուստ բուսականութիւն ունի, մանաւանդ նորա ծովափնեայ երկիրները: Բայ և հարուստ բուսականութիւնից՝ բնութիւնն առատօրէն պարգևել է այս երկրին և հանքային հարստութիւն, այն է արծաթ: Ընագուայ բարձրաւանդակութիւնը ամենաառատ արծաթի հանքեր ունի: Երկրի այսպիսի հարստութիւնը և աշխարհագրական դրութիւնը պէտք է ձեռնտու լինէին այս երկրում ճարտարութեան ծաղկելուն: Մանաւանդ որ երկիրը իր նեղութեան պատճառով Սպանիան Ամերիկո-

սից Մեծ Ովկիանոսը գնալու համար ճանապարհ է դարձել: Բայց այդ յառաջադիմութեանը խոչընդոտ դարձան զանազան պատճառները, որոնք են անյարմար նաւահանգիստները, նաւաստիների համար անտանելի և վտանգաւոր կլիման, մանաւանդ Ծովեզերեայ ցած ափերում, ուր անպակաս է դիզենտերիան, երկրի լեռնոտ դրութիւնը, որ արգելք է լինում բնակիչների միմեանց հետ հաղորդակցելուն, և քաղաքական շարունակ երկպառակութիւնները: Բացառութիւն կազմում են ամերիկեան Հնդկաստանի կղզիները: Այդ կղզիների գլխաւոր զանազանութեան պատճառը այն է, որ այն տեղ կլիման լաւ է, նաւահանգիստների թիւը շատ է և հաղորդակցութեան ճանապարհները յարմար են: Մի խօսքով, ամերիկեան Հնդկաստանը Եւրոպայի վեց ազգերի համար մի ծաղկանոց է, որ տեղից տեղ քաղուածների նման մեղր են ժողովում:

Միջին Ամերիկան երեք մասն է բաժանւում. Մեքսիկայ, կեդրոնական Ամերիկա և արևմտեան Հնդկաստան:

1. Մեքսիկայ: Ռնո-Ռիո: Մէքսիկան իւր սահմանների մէջ պարունակում է Հնագուսկի բարձրաւանդակութիւնը իւր բազուկներով և երկու Ծովեզերեայ ստորավայրերով արևելքում և արևմտքում: Այս երկրի տարածութիւնը Ֆրանսիայից չորս անգամ մեծ է:

Մեքսիկայի Ծովեզերեայ ցած երկիրների դրության բուսականութիւնը, նորա ամենատաք հանքերը, մանաւանդ արծաթը և նորա երկու Ովկիանոսների մէջ դանուած աշխարհագրական դրութիւնը, նորան Միացեալ Նահանգներին հետ կարող էին հաւասարացնել. այդ արգաւանդ տեղերի անառողջ կլիման, հաղորդակցութեան ճանապարհների պակասութիւնը, յարմար նաւահանգիստների սակաւութիւնը և գրեթէ անդադար ներքին երկպառակութիւնները խոչընդոտ են լինում ճարտարութեան ծաղկելուն: Մեքսիկայի բուսականութեան մէջ ամենանշանաւորները են, Ագիպատացորենը, բրինձը, շաքարեայ եղէգը, գետնախնձորը, կարմրաբեր կուզին, որի վերայ լինում է որդան կարմիրը, վանիլայ, Եամս և կակաո *):

(*) Որդան կարմիրը իւր մեծութեամբ և տեսքով մլուկի նման է, բայց դորա պէս փափուկ չէ, այլ ձուաձև և կարմրագոյն է: Այս միջատը շատ շատ է բազմանում Հօպալ անուանեալ բոյսի վերայ: Որդան կարմիրը պահելու ժամանակ ոչնչացնել է աշխատում են ազատ պահել նորան արևելեան քամուց: Միջատներին քիրում են ծառի վերայից բութ դանակով, յետոյ սպանում են եփ եկող ջրի մէջ. յետոյ մի քանի օր արեգակի տակը դնելով չորացնում են. այն ժամանակ որդան կարմիրը փոքրիկ հատիկների ձև է ստանում ծիրանի գոյնով և մխրճագոյն փոշիով: Մեքսիկայի մէջ որդան կարմիր հաւաքելու ժամանակը տանում են՝ ինչպէս Եւրոպայում՝ այգեկութը: Աշխարհիս մէջ ամենաշատ որդան կարմիր տուողը Մեքսիկան է: Իւրաքանչիւր տարի գրեթէ 9 միլ. ռուբ. բերում են միայն Եւրոպայ ամենալաւ տեսակը. Գոնտուրասի մէջ է գտնւում: Վանիլայ կամ Համեմուկ պատկանում է միայն Ամերիկային: Այս բոյսը պատատուկի նման փաթաթւում է մեծամեծ ծառերի բուներին: Տերևները հիւթառէտ են և 1 1/2 ոտնաչափ մեծութիւն ունին. բունը մի մատ հաստութիւն ունի. ծաղիկները սպիտակ են, պտուղը երկար, նեղ պատուտակի մէջն է լինում, ուր բացի բազմաթիւ սերմերից՝ կայ նոյնպէս կաղկղ բալասան: Այս բոյսը շատ հեշտ է բազմանում պատուաստելով: Պտուղները հաւաքում են դեռ ևս լաւ չհասած, չորացնում են արեգակի տակ, յետոյ թաթախելով իւղի մէջ ծախում են: Վանիլայի ֆունտը Համբուրգի մէջ 40 ռուբլի արժէ: Եամս: Այս բոյսը որ միայն արեգեալ երկիրներում է գտնւում, ունի այնպիսի արմատ, որի համը գետնախնձորի համի նման է: Գետնից հանած արմատները արեգակի տակ չորացնելուց յետոյ կարելի է պահել երկար ժամանակ ապակի կամ տակառների մէջ: Եամսը շատ առատութեամբ է բուսնում: Կակաո, և այս բոյսից պատրաստած խմելիքը, շոքոլատը - իւրեանց անունը ստացել են Մեքսիկայի մէջ: Երևելի բնագէտ Լինէյը նորա դէօքրօմա այս ինքն աստուածային կերակուր կոչեց: Բուսնում է ամենատաք երկիրներում, մանաւանդ Վենեցուելայի, Բրազիլիայի, կենդրոնական Ամերիկայի և Անտիլեան կղզիների վերայ: Ամենալաւը լինում է Մեքսիկայի մէջ: Շոքոլատի ծառը նման է մեր կեռասենուն. 3 սաժէնից բարձր շատ հազիւ է պատահում: Տերևները ձուաձև և ծայրերը շատ սուր են: Կարմրագոյն կամ գեղնագոյն ծաղիկները գտնւում են տերևների ստորոտում, ճիւղերի վերայ և մինչև անգամ

Մեխիկայի քնակիչների թիւը 8 ¼ միլիօն է, որոնք բաղկացած են սպիտակներից (2 միլ.), Արէօլներից, գոյնաւորներից (2 ⅔ միլ.), որոնք սպիտակների և ուրիշ ցեղերի (Միախաներ, Մուլատներ *) խառնուրդներն են. Հնդիկներից (3 ½ միլիոնի չափ) և Նեգրոներից (16,000 հոգի)։ Յողովուրդի տիրապետող մասը սպիտակներն են. բոլոր մշակաց հողը գրեթէ սպիտակներին է պատկանում։ Կառավարութիւնը հասարակապետական է։ Քաղաքներից երեւելիները են Էլ-Պասո՝ Մեծ Ովկիանոսի ափին, և Վերա-Կրուսը՝ Մէքսիկոյի ծոցի վերայ, ամենալաւ նաւահանգիստները են, բայց սոցանից ոչ մին յարմար չեն նաւերի համար, որովհետև գտնւում են քամիների առաջ։ Էյս վերջին նաւահանգիստը երկաթուղով միանում է Մէքսիկայի հետ, որ տէրութեան գլխաւոր քաղաքը է, շինութիւնները գեղեցիկ և կանոնաւոր են, Մէքսիկայի վաճառականութեան կենդրոնը է՝ ուսոի բաւականին բազմամարդ քաղաք է (200000 բն.)։ 1865 թ. Մէքսիկայի մէջ հիմնեցին գիտութեանց ձեմարան։ Լա-Պուէբլա, Վերակրուսի և Մէքսիկայի վաճառականական ձանապարհի վերայ բաւական բազմամարդ քաղաք է (75,000)։ Ո-ախակա՝ նշանաւոր է որդան կարմրի վաճառականութեամբ. (70,000 բ.)։ Վուռապալախարա՝

բնի և արմատի վերայ։ Պտուղները դեղնագոյն կամ կարմրագոյն են. պըտուղի մասերի մէջ գտնւում են սերմերը, այդ սերմերից ստանում են և չոքոլատ։ Չոքոլատի ծառը բուսնում է մեծ մասամբ սերմերից, միայն այն տեղերում՝ ուր չկան սաստիկ քամիներ։ Իւրաքանչիւր ծառը տարեկան 1 ֆունտից փոքր ինչ շատ կակաօ է տալիս։ Չոքոլատի հատիկները գործածութեան համար պատրաստում են այնպէս՝ ինչպէս և սուրճի հատիկները բաժանում են փափուկ մասից, չորացնում են աղում և հետը խառնում են վանիլայ էլն։

(*) Միխանէք կոչւում են Ամերիկացիների բնիկ ժողովուրդի և Եւրոպացիների որդիքը։ Մուլատներ Եւրոպացիների և Նեգրոների որդիքը. Կրէօլներ կոչւում են Եւրոպացիների որդիքը, որոնք Ամերիկայումն են ծնուած,

նշանաւոր է իւր բամբակով (70,000 բն. Ս.)։ Լա-Պա-Պասոզի և Օ-ախաքէլօ իւրեանց շրջականերում ամենահարուստ արծաթի հանքերը ունին։

2) Կենդրոնական Ամերիկան՝ իւր մակերեսոյթի դրութեամբ Մէքսիկայի նման բարձրաւանդակ է, կամ աւելի ճիշտ ասել, նա մի քանի բարձրաւանդակութիւններից է բաղկացած, որոնք միմեանցից բաժանւում են ահագին հովիտներով, իսկ ծովեղերքից մօտ՝ ցած և նեղ լերկիրների են փոխւում։ Կենդրոնական Ամերիկայի բնութիւնը նոյն և նման է Մէքսիկայի բնութեանը. այս տեղ կան նոյնպէս վերոյիշեալ դրոպիկական բոյսերը, նոյնպէս արդաւանդ է. անառողջ կլիմայ ունի և զուրկ է յարմար նաւահանգիստներից. այս տեղում քան երեւութին բնութիւնը աւելի աղքատ է քան թէ Մէքսիկայի մէջ, որովհետև Կենդրոնական Ամերիկան Մէքսիկայի նման բազմաթիւ հանքեր չունի, բայց նորանից գերազանցւում է այնով՝ որ Ամերիկայի ամենանեղ երկիրը լինելով՝ և միևնոյն ժամանակ մի կողմից դէպի միւս կողմը գնալու համար ամենայարմար լինելով, նա Մեծ և Ատլանտեան Ովկիանոսների մէջ ամենայաջող հաղորդակցութիւնը կազմում է։ Էյս պատճառով նա վաղուց արդէն դրաւել է Եւրոպացիների ուշադրութիւնը. շատերը Ամերիկայի այդ պատնոյի միջով ջրանցք բաց անելու և երկու Ովկիանոսները միմեանց հետ միացնելու համար յատակագծեր կազմեցին. այդ երկու Ովկիանոսների մէջ ջրային ճանապարհ բանալու համար ամենայարմար տեղը Նիկարագուա լճի տեղը է, որից յատաջանում է Սուրբ Յովհաննէս գետը և թափւում է Կարայիբեան ծովը. այս կերպով աշխարհիս հինգ մասերը միմեանց հետ հեշտութեամբ հաղորդակցութիւն կունենային. բայց որովհետև այդ ջրանցքի փորելու համար մեծ դրամ էր հարկաւոր, ուստի ջրանցքի փոխարէն լաւ համարեցին մի այնպիսի երկաթուղի շինել՝ որ Վռնտուբասով անց կենայ։ Յաւելին այն է՝ որ քաղաքական զանազան անկարգութիւնները խանգարում են այս երկրի բնակիչներին օգուտ քաղելու այս

երկրի աշխարհագրական դրութիւնից և հարստութիւնից, և պատճառ են դառնում այս երկրում օտարականների աւրապետելուն:

Կենդրոնական Ամերիկայի ժողովուրդը, որ թուով 2 ½ միլիոն է և բաղկացած է սպիտակներից և գոյնաւորներից, (որոնք միասին բոլոր ժողովուրդի ⅔ մասը են կազմում,) և Ընդհնդներից: Այս վերջիններս երկուսն են բաժանւում, հնդազանդներ և անհնազանդներ: Անհնազանդ Ընդհնդները հեթանոսներ են, իսկ միւս բնակիչները կաթոլիկական դաւանութիւն ունեն: Վարչական կողմից Կենդրոնական Ամերիկան 8 մասերից է բաղկացած, որոնցից 5ն անկախ հասարակապետութիւններ են, մին Ընդհնդացիներին է պատկանում, և երկու աէրութիւններ՝ մին միապետութիւն՝ Մօսկիտոյ, և միւսն հասարակապետութիւն՝ Հրէյտօուն, որ քիչ թէ շատ Ընդհնդացիներից կախում ունէ: Անկախ հասարակապետութիւններն են. Կոստարիկա, Գոնդուրաս, ուր գտնւում է որդան կարմրի ամենալաւ տեսակը. Նիկարագուա, Սան-Սալվադոր, և Կոստա-Ռիկա, որ կենդրոնական Ամերիկայի ամենանոր տերութիւն է գտնւում: Գոնտուրասի լճի մօտ Ընդհնդացիները փոքր ինչ հող ունին: Այս Բրիտանական Գոնտուրասը կամ Բելիզ գաղթականութիւնը Ընդհնդացիներին թոյլ են տալիս միայն այն պայմանով, որ ոչինչ իշխանութիւն չունենան նորա վերայ, այլ միայն օգուտ քաղեն նորանից. բայց իշխանացիների իշխանութիւնը կործանուելուց յետոյ՝ այդ հողը Ընդհնդացիները իրանց սեփականացրին, նոյնպէս և Խահ կղզիները, որոնք Գոնտուրասի ծոցի հարաւային մասումը են գտնւում և լաւ նաւահանգիստներ ունին: Ընտանեսիրային գաւառից, այսպէս է կոչւում այս երկիրը, իւրաքանչիւր տարի առնում են Կամպէչի ծառը, որ կապոյտ ներկ է տալիս, մեծ քանակութեամբ բուսնում է Նուկատանի ճահճային տեղերում՝ Կամպէչի և Գոնտուրասի ծոցերի մօտ: Խոլմանում է շատ արագ, ամենից լաւ յատաջանում է ճահճոտ տեղերում, 4—8 սաժէն բարձրութիւն ունի. առհասարակ բուն ծառը ճուռ և անճոռնի է: Շատ կարճ ճառ է: Նորանից ստացած կապոյտ ներկից զանազան ներկեր են պատրաստում:

Մօսկիտոյի Թագաւորութիւնը գտնւում է Նիկարագուայ լճի արեւելեան կողմի ծովափնեայ երկրում: Իւր անունը ստացել է ծովափնեայ բնակիչների (Սպիտակների, Ընդհնդների և Նեգրոների խառնուրդներից) անունից: Այս երկրի միապետը Ընդհնդացիների հովանաւորութեան տակ է գտնւում:

Հրէյտօուն փոքրիկ հասարակապետութիւնը Մօսկիտոյի աէրութեան հարաւումն է գտնւում. նշանաւոր է իւր աշխարհագրական դրութեամբ, որովհետև Սուրբ Յովհաննէս գետի (Նիկարագուայ լճից է բղխում) բերանի մօտ է. սորա օգնութեամբ երկու Ովկիանոսների ջրային ճանապարհը շատ կարճանում է:

3. Բրնամբեան Ընդհանրապետութիւնը չունի ոչ Մեքսիկայի հանքային հարստութիւնը և ոչ կենդրոնական Ամերիկայի յաջող դրութիւնը, բայց մի և նոյն ժամանակ պէտք է ասել՝ որ չունի և նոցա անյարմարութիւնները: Այս կղզիների կլիման անհամեմատ առողջարար է Մեքսիկայի և կենդրոնական Ամերիկայի ծովափնեայ երկիրների կլիմայից. կենդրոնական Ամերիկայի ահարկու երկրաշարժութիւնները այս տեղ չկան: Նորա կղզիների ափերը և միջին երկիրները աւելի դիւրաւարձնալի են քան թէ Միջին Ամերիկայի ափերը և երկիրները: Բայց որովհետև արեւմտեան Ընդհանրապետի կղզիների հողը այնպէս գիպկիկ և արգաւանդ է՝ ինչպէս Մեքսիկայի և կենդրոնական Ամերիկայի ծովափնեայ երկիրների հողը, ուստի այդ կղզիները Եվրոպացիներ գալուց առաջ գտնուելով և ճոխ բուսականութիւն ունենալով, շատ յաջող են ժողովրդեան պարապմունքը և վաճառականութիւնը ծաղկեցնելու: Եվրոպացիները այս երկիրը գտնելով՝ զարմացան նորա ճոխ և շռայլ բնութեան վերայ, ուստի կարծում էին որ իւրեանց որոնած ամենահարուստ Ընդհանրապետը է այդ նորագիւտ երկիրը: Այս կղզիների վերայ առատօրէն բուսնում են շաքարեայ եղէգ, ծխախոտ, պիմէնտ, բամբակ, լնդակ, վանիլայ և այլն:

Նկրտումների ազատութիւնից յետոյ սուրճի մշակութիւնը շատ նուազեց։ Երդաւանդութեան կողմից առաջին տեղը բռնում են Միջ Ընտիլեան կղզիները, յետոյ Փոքր Ընտիլեան կղզիները, և յետոյ Խահամեան կղզիները։ Այսպէս ուրիմն արևմտեան Հնդկաստանը իւր հարստութեամբ և բնութեան լաւութեամբ հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից յետոյ Ամերիկայի ամենալաւ մասերից մինը է կազմում։

Արևմտեան Հնդկաստանի բոլոր կղզիները միասին փոքր ինչ մեծ են Միջ Երիտանիայի կղզուց. 4 միլ. բնակիչ ունին։ Բնակիչները բաղկացած են Եւրոպացիներից և Նեգրոներից։ Պատաքական կողմից արևմտեան Հնդկաստանը երկու անկախ տէրութիւններից է բաղկացած՝ Հայիթի և Սուրբ Դոմինկոյի հասարակապետութիւնից. մնացեալ բոլոր երկիրները Եւրոպական գաղթականութիւններ են կազմում։

Հայիթի հասարակապետութիւնը իւր մեծութեամբ պէտքին հաւասար է, 800000 բնակիչ ունի, մեծ մասամբ Նեգրոներ են, կան և Մուլատներ և շատ քիչ սպիտակներ։ Տիրապետող լեզուն Ֆրանսերէնն է, որովհետև կղզու այս մասը երբեմն Ֆրանսիացիների ձեռքն էր գտնում։ Գլխաւոր քաղաքն է Պօրտ-Օ-Պրէնս։

Սուրբ Դոմինկոյի հասարակապետութիւնը 1 ½ անգամ մեծ է Հայիթից, բայց չորս անգամ քիչ բնակիչ ունի (200 հազ.)։ գլխաւոր քաղաքը է Ս. Դոմինիկոյ։

Անգղիացիներին պատկանում են Նասսաւ կղզին, որ Մեծ Անթիլեան կղզիներից ջինը է, որ նշանաւոր է Պիմենտ անուանեալ պղպեղով. նոցա պատկանում են նոյնպէս Փոքր Անթիլեան կղզիների մեծ մասը, և Խահամեան բոլոր կղզիները։ Վիրջինների մէջ ուշադրութեան արժանի է Դոմինգոյի կղզին, որ Սոլոմոնը Ամերիկայում առաջին անգամ գտաւ, և որը Սան-Սալվադոր կոչեց։ Փոքր Ընտիլեան կղզիներից Տրինիդադը ամենահարաւայինը է, և մի և նոյն ժամանակ երևելի է իւր նաւթնայ ջրերի և լաւ նաւահանգիստների պատճառով. նա Մեքսիկայի ծոցի բանալին է։

Ֆրանսիացիները պատկանում են, Մարտինիկա, Գուադելուպա և մի քանի փոքր կղզիներ։ Մարտինիկան կարելի է Ամերիկայի մէջ սուրճի հայրենիք կոչել, որովհետև այս տեղից տարածուեցաւ առաջին անգամ սուրճի մշակութիւնը բոլոր Ամերիկայի մէջ. իսկ այս տեղում սուրճի ծառերը բազմացան միայն մի ծառով, որ բերել էին Փարիզի անկաբանական պարտիզից։ Մոկկայի և Ռուբրոնի սուրճերից յետոյ՝ Մարտինիկայի սուրճը առաջինը է։

Բայց այժմ տերկութիւնը վերջանալով՝ նորա մշակութիւնը շատ նուազեց։

Տանիմարքացիներին պատկանում է, Սուրբ Խաչի կղզին։ Շվետացիներին՝ Սուրբ Բարթողոմէոսի կղզին. Հոլանտացիներին՝ Սուրբ Եւստաթիոսի և Կուրասաւ կղզիները։ Իւսիսային Ամերիկացիներին՝ Սուրբ Թօմասի և Սուրբ Յովհաննէսի կղզիները։ Իսպանացիներին՝ Արևմտեան-Հնդկաստանի կղզիներից ամենալաւները՝ Կուբա (2,200 ք. մ. և 1 ½ միլիօն բնակիչ). գլխաւոր քաղաքը է Հաւանայ. շատ բազմամարդ է (180,000) և ամենալաւ նաւահանգիստ ունի։ Պորտ-օ-Որնեյ։

ՀԱՐՈՒԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ։

Ընդհանուր նկարագրութիւն։ Հարաւային Ամերիկայի ափերն Ափրիկէի նման շատ ծոցեր և հրուանդաններ չունին, և ինքը թէպէտ մեծ մասամբ Հյուսիսային գօտու տակ է գտնում, սակայն բնութեան կողմանէ Ափրիկէին ամենևին հակառակ է։ Այս զանազանութեան պատճառը գլխաւորապէս մակերևոյթի կազմուածքը է, որովհետև եթէ Ափրիկէի այրեցեալ բարձրաւանդակութիւնը արգելք է դառնում այդ ցամաքի վերայ խոնաւ քամիների տարածուելուն, այն ինչ Ամերիկայի մէջ Ընդհանները Արևմտեան ափերի վերայ գտնուելով՝ չեն

արգելում կանոնաւոր խոնաւ քամիների տարածուելուն և նաւագնաց գետեր կազմուելուն։ Ահա այս է պատճառը, որ Ափրիկէն աղքատ է թէ կենդանիների և թէ բոյսերի կողմից. իսկ Ամերիկան ընդհակառակը հարուստ և առատ է։ Հարաւային Ամերիկան շատ հանքեր ունի. աշխարհիս մէջ ամենահարուստ արծաթի, ոսկու, ալմասի և ուրիշ թանկագին քարերի հանքերը այս տեղ են գտնուում։

Բազմազան բնակիչներ ունի, գլխաւորապէս Եւրոպացիները են, որոնք կամ դեռ ևս բնիկ բնակիչների—Հնդիկների հետ չեն խառնուած, կամ թէ դոցա խառնորդներից են ծագած։ Եւրոպացիները կռւում են միշտ միմեանց և Հնդիկների հետ. իսկ Հնդիկները ևս զանազան ցեղերի բաժնուած՝ նոյնպէս կռւում են միմեանց հետ *)։

Տրոպիքական արեգակի տաքորող և այրող ճառագայթի տակ չէ կարողանում աշխատիլ ոչ Եւրոպացին և ոչ Հնդիկը.

(*) Ա՛յդ վայրենիների կեանքը սերտ կապուած է Մա-բիլեան արմաւենի անուանեալ ծառի հետ. այս ծառը այնպէս նշանակութիւն ունի այս վայրենիների համար, ինչ նշանակութիւն որ ունի Փիւնիկեան արմաւենին Սահարայի Ովազիսների բնակիչների համար։ Իսկ Կոկոսեան արմաւենին կամ հացի ծառը Պոլինեզի կղզու բնակիչներին համար։ Այս ծառի պըտուղները հասած խնծորի չափ ունի և վայրենիներին համար հացի տեղ են բռնում. այս ծառի միջուկից ալիւր են պատրաստում, որից զանազան խմորեղէններ են շինում. ծաղիկների կոթերից գինի, տերևների թելերից պարաններ, խոիրներ են պատրաստում, որոնց կախելով ծառերի ճիւղերից՝ լաւ եղանակներում օթևանում են նոցա տակ։ Ծառի բուներից վզանների սիւներ են շինում. այդ վզանները ծածկուած են արմաւենու տերևներով և անձրևների ժամանակ այդ վայրենիներին ապաստանարան են դառնում։ Մաբրիկեան արմաւենին յաջողութեամբ բուսնում է խոնաւ տեղերում, ուստի Օրինոկայի ափերին ահագին անտառներ է կազմում։ Բունը բարակ է 15 սաժէն երկայնութեամբ. ծայրին գտնուում են (երկայն գրկաչափ) վայլուն և հովահարաձև տերևների խուրձ. տերևների մէջ գտնուում է պտուղների փունջը, իւրաքանչիւր փունջը 1000 պտուղ ունի. պտուղները պատած են թեփով։

ուստի Հարաւային Ամերիկայի ժողովրդական ձարտարութիւնը շատ ողորմելի դրութեան մէջ է։ Սորա պատճառը մի և նոյն ժամանակ այն է, որ Ամերիկայի գտնուած օրից ժողովուրդի պարապմունքը շատ ծուռ ուղղութիւն է ստացել։ Խոպանացիները, որոնց պատկանում էր երկար ժամանակ Հարաւային Ամերիկայի մեծ մասը, աշխատում էին թանկագին մետաղներ հանելու երկրի երակներից, ոչ ինչ ուշադրութիւն չդարձնելով նորա երեսի վերայ եղած հարստութեան վերայ։ Միայն պանամեան պարանոցի երկաթուղու շինուելով՝ ժողովուրդի պարապմունքը փոքր ի շատէ կանոնաւոր ուղղութիւն ստացաւ։ Այդ երկաթուղին կեանք տուեց վաճառականութեան. վաճառականութիւնը ստիպեց երկրագործութեան և կենդանաբուծութեան բերքերը մշակելու. ծաղկեցաւ և հանքային արուեստը. սկսեցին երկաթուղիներ շինել։

Հարաւային Ամերիկան քաղաքական կողմից 22 մասը է բաժանուում, որոնցից 1ն միապետութիւն է, 16ն հասարակապետական կառավարութիւններ, 2ն՝ որոնց կառավարութեան ձևը անորոշ է, և 3ն Եւրոպական գաղթականութիւններ։

Բրազիլ Պայեբո-Ինֆնը իւր անունը ստացել է braça Պորտուգալական բառից, որ նշանակում է բոցակէզ ածուխ։ Այսպէս կոչուելուն պատճառը այն է, որ Պորտուգալացիները այս տեղում շատ կարմիր ծառեր տեսան։ Բրազիլի կայսերութիւնը տարածուում է գրեթէ Ամազոնի բոլոր աւազանում (Սելվաս), Լա-Պլատա գետի հիւսիսային մասում, Բրազիլեայի լեռնոտ մասում և Գվիանայի լեռնոտ հարաւային մասում. ուրեմն Բրազիլի մասը են կազմում զանազան ծառերով հարուստ Սելվասները, այն անհուն խոտաւէտ տարածութեան մի մասը, որ կոչվում է Պամպաս, ուր թափառում են վայրենի եղջերաւոր կենդանիների և ձիերի բազմաթիւ երամակները։ Բրազիլի կայսերութիւնը տարածութեան կողմից աշխարհիս երեսին առաջնակարգ տէրութիւններից մին է. նա շատ քիչ փոքր է Միացեալ Նահանգներից։ Բնակիչները բաղկացած են ազատ-

ներից (Եւրոպացիներ և Հնդիկներ) թուով 5 միլիոն, և սորուկներից՝ թ. 2 միլիոն *): Այս երկրում ճարտարութիւնը աւելի ծաղկած է քան թէ հարաւային Ամերիկայի միւս պետութիւններում. ահա այս է պատճառը, որ Բրազիլիան հարաւային Ամերիկայի միւս պետութիւններից աւելի լուսաւորեալ է: Բնակիչները մեծ մասամբ ծովափնեայ երկիրներում անկարկուտեամբ են պարապում: Ղոքա ցանում են բամբակ, շաքարեայ եղէգը, սուրճի ծառ, ծխախոտ և այլն: Բայց Բրազիլի սուրճը լաւ չէ: Պարապում են նոյնպէս անասնապահութեամբ, անտառապահութեամբ և հանքագործութեամբ **):

Հանքերից առաւօտեամբ ստանում են ոսկի, մանաւանդ ալմաս և ուրիշ թանկագին քարեր, որոնք գտնում են Բրազիլի լեռնոտ կողմի հարաւային մասում. հարուստ ոսկու հանքերը գտնում են Ռիոյ-Ժրանէիսկոյ գետի վերին մասերում և Վ. Իլլա-Ռիկա գիւղի մօտ: Փոքր ինչ դէպի հիւսիս գտնում է ալմասի հանքերը Ռիոյ-Ժրանէիսկոյ գետի վերին կողմի և Ծարանեան Ովկիանոսի մէջ ալմասի վիճակ անուանեալ երկրում Թէժուկոյի կամ Տիամանթին գիւղի մօտ: Թէժուկոյի ալմասի հանքերը իւրեանց հարստութեամբ աշխարհիս մէջ առաջին տեղը են բռնում: Մինչև 1818 թուականը 3 միլիոն կարատ կամ $32\frac{1}{2}$ փութ ալմաս է տարած այս տեղից

(*) Այժմեան ժամանակ Բրազիլիայի կառավարութիւնը փորը առ փոքրը սկսում է վերջացնել: Նա յայտնեց, որ 1867 թուին սորուկների ծնած երեխաները ազատ են:

(**) Բրազիլիան կամ Ֆերնամուկեան ծառը վաճառականութեան մէջ եղած ներկ տուող ծառերից ամենաթանկագինը է: Այդ ծառը յաջող բուսնելու համար հարկաւոր է չոր և ապառաժուտ երկիր. բունը հաստ, ծուռ և ծածկուած է ուռուցիներով. երբեմն 8 սաժէն բարձրութեան է հասնում: Տերևները փոքր են, ծաղիկները կարմիր և անուշահոտ են: Ներկող հիւթը գտնում է միջուկի մէջ: Այդ հիւթից պատրաստում են կարմիր թանաք, գանազան ներկերի հետ խառնելով գործին և նարնջագոյն ներկեր:

Եւրոպա, որ արժէ 35 միլիոն ռուբլի: Գործարանների մէջ երեւելիները են հաստ քթանի, շաքարի և ալմաստներ թրաշելու գործատուները: Բրազիլի վաճառականութիւնը շատ ընդարձակ է: Նորա հետ վաճառականութիւն անող երկիրներից ամենից շատ ապրանք՝ սուրճ դուրս են տանում Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, իսկ ներս են բերում Անգղիացիները բամբակեղէնները: Վաճառականական քաղաքներից ամենանշանաւոր մայրաքաղաքը է Ռիոյ-ժը-Ժանէյրօ, ուստի այս քաղաքը աշխարհիս ամենաբեւեռի քաղաքներից մին է. իսկ Ամերիկայի մէջ բնակիչների բազմութեան կողմից (300000 բ) երկրորդ քաղաքը է: Դուրս է ուղարկում սուրճ, կաշի, հղջերներ, շաքար, ոսկի և թանկագին քարեր: Ներսի դորանից՝ նաւահանգիստ քաղաքներից նշանաւորներն են, Բահիա (120,000), որ տեղից դուրս են տանում ոսկի, շաքար, գլանակ, կակաո: Պերնամ-Բուկկոյ (75000), որ տեղից դուրս են տանում Պերնամ-բուկկոյի և Բրազիլի փայտ: Վերջին երկու քաղաքները հաղորդակցութիւն ունին միմեանց հետ երկաթուղու միջոցով *):

(*) Սելվաններ: Եւրոպայի մէջ չկայն այնպիսի անտառներ՝ որոնց միջով նոցա մի ծայրից միւս ծայրը չկարողանար գնալ մարդ. Ամերիկայի Սելվաններէն մէջ այնպիսի խիտ անտառներ կան, որոնց միջով վայրենի գազան անգամ կարող չէ անցնել: Մեր անտառների մէջ չկայ այնպիսի մի ծառ, որ կարելի չլինի գետել տակից մինչև ծայրը՝ և որը կարելի չլինի կարել: Սելվաններէն մէջ ծառները այնպէս խիտ առ խիտ են բուսնում, որ կարելի չէ որոշել թէ այս ինչ ճիւղ ո՞ր ծառին է պատկանում. բուսնները այնպէս հաստ են (7 սաժէն շրջապատով)՝ որ անկարելի է կտրել, և եթէ մի որ և իցէ հնարով կարելի լինի կտրել, այն ժամանակ պինտ պատառուկ բոյսերը՝ որոնք կապում են ծառները միմեանց հետ, արդելք են գառնում նորա վայր ընկնելուն: Առհասարակ մեր անտառները մի տեսակ ծառից են բաղկանում կամ եղևնուց, կամ նոճուց, կամ մայր ծառից և այլն. իսկ Սելվասները ընդհակառակը զանազան ծառերից են բաղկացած: Եթէ հետևից նայուի Սելվանների վերայ, կարելի է տեսնել այն անկանոն գծագրութիւնը, որ նորա ունին իւրեանց կատարներում. տեղ տեղ մարդ

Գրանադայի Հասարակապետութիւնը։ Գրանադայի դաշնակից Հասարակապետութիւնները գտնուում են ոչ միայն Պանամեան պարանոցում, այլև Հարաւային Ամերիկայի արևմտա-Հարաւային անկիւնում, Հարաւային Ամերիկայի Կորդիլերների հիւսիսային մասում։

Մագդալինա գետի աւազանում այս դաշնակցութեան սահմանում գտնուում է սուրբ Մարթայի գօտին և Լիանոսների մի մասը։ Ըոլանտեան և Մեծ Ովկիանոսների ափերի մօտ զբա-

---

տեանում է ծառերի կատարները գմբէթի նման լայնացած, միւս տեղում ընդհակառակը յուրաքանչիւրի նման նեղ և սուր։ Սէլվաններին մերձենալով կտեսնես զանազան գոյներ։ Մեր անտառները փոքր ի շատէ ընդհանուր կանանչ գոյն ունին. իսկ Սէլվաների մէջ այդ կանանչ գոյնը ուրիշ գոյների (սպիտակ, կարմիր, դեղին և այլն.) հետ խառնուելով խայտաճամուկ կերպարանք է ստանում, որովհետև մի քանի ծառեր շատ ծաղիկների փունջներ ունին։ Այստեղ ի՜նչ զարմանալի զանազան տերևներ կան. մի տեղ տերևները գրչի ձև ունի տաստակի. մի տեղ նա լայն, միւս տեղ նեղ, մի տեղ սուրի նման սրածայր է, միւս տեղ բոլորակաձև։ Եւ որովհետև Սէլվաների մէջ ծառները շատ խիտ են բուսնում, ուստի ճիւղերով ընդարձակուել և բազմանալ չկարողանալով բարձրանում են միայն հասակով. ահա այս է պատճառը, որ թէ բարակ և թէ հաստ ծառերը միատեսակ բարձրութիւն ունին։ Բոլոր այս պլուզանութիւններից նոքա այնպէս պլակերպւում են, որ բոլորովին չեն նման մինչև անգամ մեր ծառերից ամենամեծին՝ կաղնուն։ Մեր ծառերի բարձրութիւնը և հաստութիւնը փոքր ի շատէ համաչափ են միմեանց. այնտեղ ընդհակառակը ոչինչ համեմատութիւն չկայ. այնտեղ բունը երկու անգամ հաստ, երեք անգամ բարձր է մեր ծառերի բուներից, իսկ պսակը ընդհակառակը շատ փոքր է։ Ոչ ինչ կարող չէ հաւասարուել այն ծառը տպաւորութեան, որ Սէլվանները ազդում են փոքրոյ անյիշելի ժամանակում։ Մտախոհը ամեն կողմից շրջապատում է ճանապարհորդին, իսկ թաւ անտառների մէջ մթնոլորնները. ծառերը անգամ ծածկվում են մտախոհով. կենդանիները շտապում են ապաստանարան գտնել մի տեղ։ Այնուհետև անհետանում են թռչունները և թիթեռները և խորին լռութեան մէջ լսում է միայն գորտերի միակերպ կռկռոցը։ Աւելի տխուր և սարսափելի է՝ երբ գիշերային խաւարը պատում է անտառը. անտեսանելի են աստղերը, լուսինը

նուելով, այս երկիրը Հարաւային Ամերիկայի մէջ ամենալաւ դրութիւն ունի։ Երկու ովկիանոսների ափերը ևս շատ նաւահանգիստներ ունին։ Պանամեան պարանոցը այդ երկու ովկիանոսներին շատ մօտեցնում է միմեանց հետ, ուստի 1865 թուից սկսած դոցա ափերի վերայ գտնուող երկու հակատիկ նաւահանգիստներ՝ Աոպինվալ և Պանամա միացրած են երկաթուղով։ Որովհետև այս երկաթուղին շատ կարճացնում է երկու Ովկիանոսների մէջ եղած վաճառականական ճանապարհը,

---

կորչում է մութ ամպերի մէջ և անտառների խորքից լսում է վայրենի գաղանների ոռնոցը։ Սարսափելի է երբ փչում է մրրիկը։ Երբ մրրիկը հեռուից մօտենում է, անտառի ստորին մասը դեռ ևս հանդարտ, վերին մասում սկսում է շփոթը։ Քամու աղաղակը փոքր առ փոքր հասնում է և անտառի ստորին մասերին. արդէն լսում են վերին տերևների միմեանց զարկը, կայծակը ընդմիջում է երբեմն մառախլապատ խաւարը, ամպի գոռոցի արձագանքը տարածւում է անտառի խորքում։ Քամու զօրութիւնից հարիւրամեայ ծառերը արմատախիլ լինելով երկիր են տապալւում, տապալելով իրանց հետ և ուրիշ շատ ծառեր։ Տպրոտոյ անյիշելի ժամանակներից այդ նախնական անտառները ամենափառաւոր կերպարանք են ստանում։ Անձրևներից առաջ շարունակ երաշտը չորացնում և ոչնչացնում է բոլոր տերևները. քամիները և սաստիկ մրրիկները ոչնչացնում են անտառի բոլոր գեղեցկութիւնը։ Բայց երբ անհետանում է մտախոհը, այն ժամանակ անտառի համար նոր ուրախական կեանք է սկսւում։ Այն տեղ, ուր առաջ միայն կանանչ գոյն էր թագաւորում, հետոյ ի տես են գալի գոյնզգոյն ծաղիկներ և մշնոլորտի մէջ տարածւում է անուշահոտ բուրմունք։ Կենդանիները դուրս են գալի իրանց որջերից արեգակի ջերմաթեր ճառագայթների տակ տաքանալու։ Օդը լցւում է հզւ հզւ թըռչունների դայլայլիկներով։ Բայց այդ դիւթիչ պատկերը երբէք այնչունպէս շքեղ և զուարթ չէ լինում՝ ինչպէս առաւօտը։ Կենդանիների երգերը սկսւում են ծառների կատարներից և փոքր առ փոքր տարածւում են դէպի ցածր։ Ճաշուայ ժամանակ երաժիշտներ սկսում են փոքր առ փոքր լռել և ծածկւում են ծառերի ստուերների տակ. բարձրաձայն երգեցողութիւնից յետոյ խորին լռութիւն է տիրապետում, որ երբեմնապէս ընդհատւում է որ և իցէ գազանի ոռնոցով։ Այդ կենդանիներից շատերը մանաւանդ թռչունները խոր քնի մէջ են ընկղմում. այդ ժամանակ միայն այն

ուստի շատ կենդանացած է. նա աւելի կենդանութիւն ստացաւ այն օրից՝ երբ Կալիֆօրնիայի նշանակութիւնը մեծացաւ և երբ հատաշխարհական վաճառականութեան համար մտաչելի եղան Ընտատանի և Ա՛ապոնիայի նաւահանգիստները: Ընդհամ կամենում են երկու Ովկիանոսները ջրանցքով միացնել, որ պէտք է շինուի Պատիան և Ս. Միքայէլի ծոցերի մէջ: Ա՛արտարութիւնը շատ փոքր է զարգացած՝ վաճառականութիւնը անգամ, չնայելով երկրի յարմար դրութեանը, շատ անշան է. բացի Պանամայից (40000) և Ասպինվալից՝ նշանաւոր քաղաքները են, Պըլնագինա (30000), որ Արայիբեան ծովի ափին նաւահանգիստ ունի, և այս տեղից էլինում հաղորդակցու-

---

մասում է լինում շարժողութիւն՝ ուր արեգակի ճառագայթները մինչ երկիրը են հասնում. այդ տեղերում ոստոստում են թիթեռները, զոնղզոն բզէզները փորում են գետինը և բազմազոյն օձերը սողում են երկրի վերայ: Եբէյեան ժամանակը ամեն ինչ կրկին զարթնում է: Թութթակները ազաղակներող յետ են դառնում դէպի այն ծառը՝ որի վերայ նոքա սովորել են անցուդարձել գիշերը, և կապիկները իրանց ոռնալով կարծես հրաժարական են տալիս արեգակին: Խաւարի տարածուելով ասպարէզ է բաց լինում բոլորովին ջոկ կենդանիների համար, որոնք ցերեկով խոր քնի մէջ էին ընկած: Մեծամեծ մռնչամեները թռչելով խիտ անտառի միջով աշխատում են գիշերուայ թիթեռները որսալ. մեծամեծ արիւնարբու գազանները դուրս գալով իրեանց օրջերից՝ դարան գործած սպասում են իրեանց որսին: Այդ նախնական անտառների մէջ ամենահաղթ ժամանակը գիշերուայ 12 ժամից մինչև երեք ժամը է: Բայց այս անտառների մէջ բոլորովին հանգիստ ասած բան չկայ. որ և իցէ գիշերուայ կենդանի անպատճառ պէտք է ընդմիջէ լռութիւնը և խաղաղութիւնը: Երբեմն բոլոր անտառի մէջ տարածուում է յանկարծ գազանների աղաղակները. այս պատահում է միայն այն ժամանակ՝ երբ կենդանիները սկսում են կռուել միմեանց հետ. Օրինակ, երբ վագրն սկսում է հալածել ջրային խոզերի երամակներին, որոնք աշխատում են ազատուել փախչելով, այս աղաղակների հետ միանում է տերևների կոտրտելու ձայները. այս աղաղակներից վախենալով կապիկները՝ սկսում են ոռնալ, սոցա ձայնից զարթնում են յուռթակները: Այս կերպով աղաղակը սկսուելով տարածուում է ամեն կողմ և երկար ժամանակ չէ դադարում:

թիւնը Ընտիլեան կղզիների և Եւրոպայի հետ: Սանտա-Ֆէ-դը-Բոկոտոյ (50000) մի բարձրաւանդակութեան վերայ, Վինեցուելա՝ այս ինքն փոքր Վենետիկ կոչուում է մի փոքրիկ գաղթականութեան անունով: Վինեցուելան գտնուում է Գրանադի դաշնակցութիւնից դէպ արևելք Կարայիբեան ծովի ափերին, սուրբ Մարթայի գօտուց մինչև Օրինոկոյ գետի բերանը Վինեցուելայի լեռների վերայ Գվիանի-այի լեռների հիւսիսային և արևմտեան մասերի վերայ. այսպէս ուրեմն իւր մէջ պարունակում է Օրինոկոյ գետի գրեթէ ամբողջ աւազանը և Լիանոսների բաւականին մեծ մասը: Բնակիչների գլխաւոր պարապմունքն վաճառականութիւնն է: Վաճառականութեան կենդրոնը Կարակաս քաղաքը (50000) և նորա Գուայրան նաւահանգիստն է, որ ջրանցքով միանում է Կարակասի հետ *):

(*) Լիանոսները. երբ արեգակի ուղղահայեաց ճառագայթները օրէցօր տաքնում են Լիանոսների ընդարձակ դաշտերը, այն ժամանակ նոքա ծածկւում են միատեսակ դեղին գորգով և ճանապարհորդի աչքին երևում են ինչպէս անպտուղ և անահման անապատներ: Այդ ծով է. բայց այդ ծովը զուրկ է ալիքներից, հովից, մեռած է և անշարժ. հնոցի նման նորանից անտանելի տաքութիւն է փչում: Հիւսիսի ձիւնապատ անապատներում մարդիք սարսափելի ցրտից ազատուում են եղջերուի կաշուց իրեանց համար զգեստներ պատրաստելով. իսկ Լիանոսների մէջ արեգակի կիզող ճառագայթներից և երկրի բոցակեզ տաքութիւնից ազատուելու ոչինչ հնար չկայ. Բաղդաւոր է նա ով շուտով պաշտպանւում է մի փոքրիկ ստուերի տակ: Աւազանների ջուրը գոլորշիանում է, թռչունները թռչում և անհետանում են ուրիշ երկիրներում. երկակենցաղները - կոկորդիլոսները և օձերը մնում են երկրիս ծոցի մէջ. վայրենի ձիերը և եղնները տաքութիւնից և ծարաւից նեղացած վազում են այս կողմը և այն կողմը, չգիտեն թէ ի՞նչպէս ազատուին այդ անտանելի դրութիւնից. ինչպէս որ հիւսիսում ձմեռը դանդաղացնում և մինչև անգամ փոքր ժամանակ դադարեցնում է կեանքը, նոյնը լինում է Լիանոսների մէջ, միայն ոչ ցրտից՝ այլ երկար երաշտից. Վերջապէս երաշտը խիստ սաստկանում է և այնուհետև զանազան նշաններ յայտնում են տարւոյ անձրևային ժամանակի մերձենալը.

— Վիտոյ Ձասարական: Այս վերջին անունը ստացել է իւր ուժգին դրութիւնից, որովհետև Ձասարականի տակ է գտնւում: Նա պարունակում է իւր մէջ Վիտոյի բարձրաւանդակութիւնը, որ $2^1/_2$ վերստ բարձրութիւն ունի և Վիտոյեան Կորտիլերների երկու կողմը — արևմտեան կողմից մինչև Ծովը և արևելեան կողմից, մինչև Ամազոն գետի Սելվանները: Վիտոյեան Կորտիլերները շատ հրաբուղխներ ունին, որոնցից մի քանիսը շիջած են, իսկ միւսները ներգործում են: Ռուսական թա-

---

Երկնքի գոյնը՝ որ մինչ ցարդ թուխ և կապոյտ էր, փոքր առ փոքր փոխւում է և սպիտականում: Հորիզոնից երևան են գալիս ամպեր, որոնք փոքր առ փոքր շատանալով բարձրանում են ի վեր: Այդ ամպերից հեղեղի նման սկսում անձրևը, և ճաշու ժամանակ փչում է սարսափելի մրրիկը, որ կրկնւում է կէս գիշերից մինչև առաւօտեան արշալոյսը բացուելը: Մի և նոյն տեսարանը կրկնւում է գրեթէ ամեն օր և այդ մրրկացող ժամանակ շատ հազիւ են երևում արեգակը, և լուսինը, և եթէ երևան՝ այն ևս մառախլապատ գոլորշիների միջից: Երէկիս մակերևոյթը հաղիւ թէ ակառամ ևս բոլորովին հորիզոնականութեամբ և ճոխութեամբ ակառամ են բուսանել: Անապատը ծածկում են զանազան խոտեղէններ. տաքութիւնից և երաշտից չորացած և գեղնացած խոտի փոխարէն անապատը ծածկւում է բարձրահասակ՝ կանանչ խոտերով, որոնց մէջ գտնւում են հազարաւոր զանազան ծաղիկներ: Զարթնում են իւրեանց խոր քնից կենդանիները: Ձիերը և եղները ուտում են դալարի խոտը, որի մէջ երբեմն ծածկուած է լինում կատաղի վագրը, որ իւր սարսափելի յարձակմունքով գիշատում է խեղճ կենդանիներին. ճահճների եղերքին խռնուած սիկը փոքր ու փոքր բարձրանում է. ուռած գետինը ճեղքւում է և խորոչից դուրս է գալիս կամ վիթխարի Բօա, կամ զզուելի կայմանը: Նոր կազմուած լճերի և լճակների մէջ լցւում են ջրային կենդանիներ, ջրային թռչունները գալիս են այս լճերի և լճակների մէջ առատ որսով կշտանալու: Զանազան տեսակ միջատներ և երկկենցաղներ երևան են գալիս մարդուս վշտացնելու համար: Ստորադաշտը լիանոները չափազանց անձրևներից անանցանելի ճահիճ են դառնում: Գետերի ջրերը շատանալով դուրս են գալիս իւրեանց գաշտից և ծածկում են շրջակայ հովիտները. այն տեղ՝ ուր փոքր առաջ ձին ցած գցած գլուխը փոքրիկ խոնաւութիւն էր ստանում իւր ծարաւը մարելու համար, այժմ ստիպուած է երկկենցաղ կեանք

գաւորութիւնից ամենից նշանաւորը են Կակայօ և Վիննա, հանքային թագաւորութիւնից ամենից նշանաւորը են — զմրուխտ և ծծումբ. վենայի Նանկափեն ծաղերը, որոնք ջերմից ազատող քինայի կեղևը են տալիս, բուսանում են անտառների մէջ առ առ: Վիննայ հաւաքողները ուշադրութիւն չգարձնելով կեանքի վտանգին՝ բարձրանում են անտառի բարձրահասակ կատարին, որ կարողանան նկատել թէ ո՛ր տեղ կան Վիննայի ծառեր, որոնց տերևները կարմրագոյն են: Ռնակիչները

վարել: Մատակ ձիերը իւրեանց մորուկների հետ ազատւում են բարձրաւանդակութիւնների վերայ, որոնց գագաթները ջրից դուրս են լինում: Եթէ ցամաքի վերայ վագրը հալածում է ձիաններին, ջրի մէջ մատակ ձիաններին և մորուկներին իւր պոչով սպանում է կոկորդիլոսը և ուտում է նոցա: Երբ անձրևները գադարում են, սկսւում է այնուհետև Լիանոների ամենագեղեցիկ ժամանակը՝ մինչև որ արեգակի կիզող ճառագայթները կը-չորացնեն բուսականութիւնը: Խարակ և անորժելի քամին փչում և տաքանում է անասհման խոտի տարածութիւնը, իսկ գիշերուայ ժամանակ երկինքը ծածկւում է գեղեցկափայլ աստեղներով, որոնց միջից բարձրացնում է գիշերուայ թագուհին իւր գլուխը: Մարդկային հնարագիտութեամբ և արհեստով պատրաստած ոչ մի բան այդի կարող չէ համեմատուիլ այս գեղեցիկ բնական պզտոյ հետ:

Լիանոների հրաշեկ գեղեցիկ տեսարան է: «Հազիւ թէ մենք իջել ենք դաշտավայրի վերայ, ասում է մի ճանապարհորդ, երբ հիւսիսից տեսանք Թանձր ծուխի սիւներ, որոնք արևելահարաւային կողմից բարձրանում էին. այդ սիւները Լիանոների մէջ հրդեհներ նախագուշակող նշաններ են, բնիկ բնակիչները վախեցած համոզում էին մեզ՝ ինչքան կարելի է շուտ՝ հեռանալ, որովհետև այդ հրեղէն սիւները շուտով կհասնէին մեզ: Առաջ մենք ծիծաղում էինք նոցա այս տեսակ նախազգուշացման վերայ, բայց մի քառորդ ժամից յետոյ մեր անհոգութիւնից փոքր ինչ մեզ մենք վտանգի մէջ ընկնէինք: Ուր դարձնում էինք մեր հայեացքը՝ ոչ մի տեղ չէինք տեսնում կանանչ խոտ և կամ ճահճոտ տեղ: Մենք արդէն տեսնում էինք բոցը և լսում էինք կիզուղ խոտի շառաչիւնը. այդ ժամանակ տեսանք մի փոքրիկ բարձրաւանդակութիւն, որ ծածկուած է կարճահասակ կանաչով: Շտապեցինք բարձրանալու նորա վերայ հրդեհի կրակից ազատուելու համար: Եթէ մի րոպէ դանդաղէի՝ այն ժամանակ ես չէի արժանանայ այս հրդ-

(1 միլիոն) այդ բերքերը մշակելով՝ սահմանից դուրս ուղարկում են Եւրոպա մի քանի նաւահանգիստների ձեռքով, որոնցից ամենեւևելեն է Գոա-այա-էլ, Հասարակածի բոլոր վաճառականութեան կենդրոնը և հասարակապետութեան գլխաւոր քաղաքի — Ռիոյի (75,000 բնակիչ) ապրանքների համբարանոցը է։ Ռիոյ քաղաքը գտնւում է Վ. Լենիայ հրաբղխի ստորոտում։

Պերու։ Պերուի հասարակապետութիւնը գտնւում է Հասարակածի հարաւային կողմում Կորտիլերների երկու կողմում՝ մեծ Ովկիանոսի ափերից սկսած մինչև սելվաները, ուրնից արևմտեան յամաքի մէջ՝ իր բարձրութեամբ ամենաբարձրաւանդակ երկիրը է։ Բնակիչները երեք միլիոն են, որոնք իւրեանց երկրի արգասիքները հաւաքելով և արտասահման վաճառելով են պարապում։ Այս երկրին պատկանեալ բոյսերի մէջ նշանաւորն է Կոկա. կենդանիներից նշանաւոր են՝ Լաֆա,

---

դեհը նկարագրել։ Սաստիկ երկիւղով նայում էինք այն հրեղէն ծովի վերայ, որ գրեթէ ամեն կողմից շրջապատել էր մեզ և որի կոհակները երբեմն հասնում էին մեզ։ Այրուող անապատի տաքութիւնից տիպուած գարձրեցինք մեր թիկունքը դէպի բոցը և երկիւղով սպասում էինք մեր մահուանը։ Ցանկարծ կրակի բոցը ըմբռնեց այն ըլուրի ստորոտի վերայ, ուր մենք կանգնած էինք։ Ես սարսափելով նայում էի նորա վերայ. բայց նա բաղդի բերմամբ փոքր առ փոքր հեռացաւ մեզանից։ Մենք ազատուեցանք։ Կրակը թէպէտ այրեց բլրի կարճահասակ խոտը, բայց այնքան նիւթ չկար՝ որ մեզ վտանգաւոր լինէր։ Փիշատիչ թռչունները խումբ խումբ շրջապատում էին հրեղէն սիւները և որսում կիսախանձ օձերին և մողէաներին. այդ թռչունները կայծակի արագութեամբ յարձակուելով իւրեանց որսերի վերայ՝ անհետանում էին թանձր ծխի մէջ, կարծես թէ կամաւոր մահի էին ցանկանում։ Շուտով լուեց խլացուցիչ աղաղակը և միայն մութ ամպեր էին երևում, որոնցից կարելի էր եզրակացնել, որ բոցը գնաց դէպ յառաջ, որին հետևեցինք և մենք, հրդեհից ծածկած ճանապարհը կոխելով։

Ելպակայ, Գոանակայ և Վիկունիա *)։ Պերուի մեսաղներից նշանաւորները են ոսկի, արծաթ և մնդիկ։

Այդ երկիրը մի առանձին բերք ունի, որ Գուանոյ է կոչւում։ Այդ ծովային թռչունների մի տեսակի քակորը է. նա շատ օգտակար է դաշտերը պարարտացնելու համար։ Գուանոն Պերուի բոլոր հանքերից թանկագինը է։ Այժմեան ժամանակ Պերուին պատկանեալ Լամենիա կղզիներից իւրաքանչիւր տարի 500 ծովից (չափի անուն է) աւելի են դուրս տանում։ Գուանոյի խաւը այնպէս մեծ է, որ փորած տեղերը փոքրիկ

(*) Թէպէտ Կոկա բոյսը թէյի, սուրճի, կակաոյի նման տարածուած չէ, այնու ամենայնիւ Այրնեալ աշխարհի գլխաւոր արգասիքներից մին է։ Կոկան բուսնում է Պերուի և Բոլիվիայի Կորդիլերների արևելեան կողմի հովիտներում։ Այս բոյսը սուրճենու նման փայլուն կանանչ տերևներ ունի, սպիտակ ծաղիկներ, և բաց կարմիր պտուղներ է տալիս։ Բոյսի ամենակարևոր մասը տերևները են։ Բոլորովին հասած տերևները (այսինքն երբ նորա պտղերն դիւրաբեկ են դառնում, որ ծալելու ժամանակ կոտրւում են) քաղում են և չորացնում արեգակի տակ։ Բոլորովին տերևազուրկ թուփի վերայ շուտով կրկին անգամ բուսնում են տերևները. մի քանի տերեր ամսից յետոյ է այդ լինում։ Ամեն 8 տարի պէտք է նոր թուփեր անկել, որովհետև ծերացած թփի տերևների հիւթը պակասում է ու արժողութիւնը փոքրանում։ Կոկայի թուփը սուրճենու նման պէտք է պաշտպանել արեգակից և շատ խոնաւութիւնից։ Ահա այդ պատճառով թփի անկելու առաջին կամ երկրորդ տարուց սկսած թուփերի մէջ եղիպտացորեն են ցանում, որ շատ շուտ է զարդանում և աճում։ Հնդիկի հասմոր ինչ նշանակութիւն որ ունի արեկեան արմաւենու պտուղը և բեռելը, մի և նոյն նշանակութիւն ունի և այս բոյսը Պերուացու համար։ Առանց մեղանչելու կարելի է ասել, որ այս բոյսը Պերուացու համար բռնում է թէյի, սուրճի, կակաոյի, ծխախոտի և այլնի տեղ։ Կոկան չեն խմում, այլ ծամում են։ Ամեն Հնդիկ ծխախոտի քսակի փոխարէն իւր հետ ունի մի մանկեայ փոքրիկ պարկ այդ տերևներով լիքը, և մի կողով լիքը թոզ շինած չայրած կրով։ Այդ տերևները ծամելու ժամանակ կիրը գործ են ածում կծուութիւնը տալու համար։ Ծամելու ժամանակ թուքը խառնւում է բոյսի կանանչ հիւթի հետ, և մի մասը թքում են, իսկ մնացած բոլորը կուլ են տալիս։ Կոկա գործ ածելով Հնդիկը շատ փոքր է ուտում կերակուր.

քարահատների են նմանում։ Գուանոյի կազմելուն շատ օգնում է Պերուի ափերի անձրևի սակաւութիւնը։

Ռնակիչները (3 միլիոն) երկրի բնակչերը արտասահման են ուղարկում մեծ մասամբ Կալհայօ նաւահանգստից (38000), որ երկաթուղով աէրուեթեան մայրաքաղաք Լիմայի հետ (75000), իսկ շոգենաւերով հաղորդակցութիւն ունի Ամերիկայի արևմտեան ափի բոլոր գլխաւոր նաւահանգիստների հետ։

Ռօլիվիա, այսպէս է կոչւում իւր հիմնադիր Ռոլիվարի անունից. գտնւում է Պերուից արևելահարաւ. Պերուի կորտիլերների արևելա-հարաւային կողմում և միայն մի փոքր

իսկ եթէ կոկայի օրական չափը կրկնապատկէ, այն ժամանակ Հնդկի համար ուրիշ կերակուր Հարկաւոր չէ, և նա կարող է ամենադժուար աշխատութիւններ կրել։ Ահա այս է պատճառը, որ Հանքերի մէջ և անկարկուտեամբ պարապողները շատ են գործ ածում Կոկա։ Կոկայի չափաւոր և օգտակար գործածութիւնը ոչ միայն վնասակար չէ, այլ և օգտակար. նա բժշկում է խցողութիւնները, որ Հնդիկների մէջ շատ տարածուած է և որի պատճառը ալիւրեղէն կերակուրների չափից դուրս գործածելը է։ Բայց կոկայի չափազանց գործածութիւնը այն հետևանքները ունի՝ ինչ որ ունի օպիումը արևելեան ազգերի և կամ օղին ...ուսերի մէջ։ Լաման Հնդիկների համար պատա է, և բարձր լեռների վերայ նա այն նշանակութիւնը ունի, ինչ որ ուղտը անապատի մէջ։ Լաման լեռնային ուղտ է։ Լամայի բրդից կոպիտ գործածներ են պատրաստում։ կաշուց պատրաստում են մահճակներ և վերարկուներ, և վերջապէս Հնդիկը միայն լամայով կարող է տանել ապրանքները և պաշարները դանազան կողմեր Անդերի բարձրաւանդակութիւնների վերայով։ Ինկերը առանց լամայի կարող չէին ոչ հիմնել և ոչ պահպանել իւրեանց ահագին տէրութիւնը։ Սկզբում Ամերիկայի մէջ լաման տեղական ընտանի կենդանի էր։ Այս կենդանին յիշեցնում է մեզ պամպադրին (մի ողնայի ուղտ), ոչ միայն իւր գործածութեամբ, այլ և անասատի նաւի հետ այն նմանութիւնը ունի, որ բնակիչները նորան ուղտ ոչխար են կոչում։ Լամայն թէպէտ ուղտի նման ոտն չունի, սակայն այս վերջինի նման կոշտեր (мозаль) ունի կուրծքի և ծունկերի վերայ։ Նորա նման երկձղականի է. միանման ստամոքս ունի. ևլն։ Լաման գրեթէ եղջերուի բարձրութիւն ունի. գոյնը մեծ մասամբ թուխ կարմիր է։ 2 1/2 փթից աւելի շատ հազիւ են բաւնում լամայի վերայ. եթէ բեռը շատ

մասը յարևմտեան ծովի ափին է կազմում, այնպէս որ Ռօլիվիան հարաւային Ամերիկայի մէջ կատարեալ ցամաքային տէրութիւն է։ Ռնակիչները (2 1/2 միլիոն) գրեթէ պարապում են միայն երկրի (անպատրաստ) բնքքերը հաւաքելով. բնքքերից

ծանր է, այն ժամանակ նա պառկում է գետնի վերայ՝ և չէ վեր կենում մինչև չթեթևցնեն բեռը։ Ընդունելով որ լաման սակաւ ազօր է, սակայն արծաթի հանքերի մէջ նա շատ թանկ արժէ, որովհետև շատ անգամ մետաղը այնպիսի զառ ի վայր տեղերով պէտք է տանել, որ կարող չեն գնալ ոչ ձին և ոչ էշը։ Հնդիկներ լամաների երամակները առաջները առած գընում են ծովի ափը աղի։ Նոցա իջևանները շատ մօտ են միմեանցից։ Բնօր իջեցնելու և բառնալու ժամանակ բոլոր լամանները մի կարգով կանգնում և բոլորի վզից կապում են մի ընդհանուր շուան, որի ծայրը ոչ մի տեղ չեն ամրացնում, որովհետև լամանները չեն համաձայնում փախչել։ Հնդիկները շատ սիրում են լաման, նոցա ականջները զարդարում են զանազան ժապաւէններով և վզերից զանգեր են կախում։ բայց չնայելով այս բոլոր պահպանողութեանը և զգուշութեանը, այնու ամենայնիւ նորա մեծ բազմութեամբ են կոտորւում, մանաւանդ ծովեզերքը գնալու ժամանակ, որովհետև չեն կարողանում տանել անտանելի տաք կլիման։ Գուանակոյ կենդանին արտաքին տեսքով շատ նման է լամային, բայց սորանից մեծ է լինում. բուրթը կարճ է և կոպիտ. շատ երկչոտ է. կարելի է նորան ընտելացնել, բայց բեռ կրելու շատ դժուարութեամբ է ընտելանում։

Ալպակա կենդանին հասակով լամայից փոքր և արտաքին տեսքով ոչխարի նման է։ Բուրթը փափուկ, բարակ և փայլուն է։ Գոյնը՝ մեծ մասամբ՝ կամ բոլորովին սպիտակ կամ բոլորովին սև է լինում։ բուրթը շատ թանկագին է, որովհետև նորա հասարակ բուրթը մետաքսի, բամբակի հետ խառնելով զանազան տեսակ ամուր գործածներ են պատրաստում։ Անգղիացիները շատ գործ ածում են այդ բուրթը։ Ալպականներին պահում են ամբողջ երամակներով, որոնք ամբողջ երամակներով, բոլոր տարին արածում են լերանց գաշտավայրերի մարգագետինների վերայ։ Միայն բուրթը խուզելու ժամանակ ալպականներին քշում են խրճիթների մէջ։ Նորա շատ վայրենի և կամակոր են։ վիկունիա կենդանին շատ երկչոտ է, գտնւում է Անդերի ամենահեռաւոր Հովիտներում։ ալպակայից գեղեցիկ է. բուրթը այնպէս բարակ և ազնիւ է, որ մի փունդը տասն ռուբլուց աւելի արժէ։ Այդ երկիրների բնակիչները նոցա օրսում են բրթի և մսի համար։

նշանաւորներն են Վ-ինա, որ Ամերիկայի մէջ ամենալաւը է, Գուանոյ և Թանկադին մետաղներ, մանաւանդ արծաթ. այս կողմից աշխարհիս մէջ ոչ մի երկիր այնպէս հարուստ չէ՝ ինչպէս Բոլիվիան, մանաւանդ Բոտոսի քաղաքի շրջակայքը. այս քաղաքը աշխարհիս քաղաքներից ամենաբարձր դրութիւն ունեցողն է: Տէրութեան գլխաւոր քաղաքը Ջո-կ-ղակա է կոչւում (19,000): Բոլիվիայի ծովային վաճառականութիւնը մեծ մասամբ Պերուի նաւահանգիստներով է լինում, որովհետև Բոլիվիայի ծովեզերեայ մասը նաւահանգիստներ չունի, այլ միայն անապատ է: Այդ անապատը Ատակաման երկրորդ Սահարա է, միայն փոքր ձևով, նոյնպէս ծածկուած է աւազով և շատ սակաւաթիւ ովազիսաներ ունի. անապատի նաւը այս տեղ ջորին է: Այս անապատի միջով ճանապարհորդութիւնը շատ վտանգաւոր է այն պատճառով, որ սաստիկ քամիները բարձրացնում են աւազը և նորանով լցնում են մէնոլորտը, յետոյ երկիր թափուելու ժամանակ աւազը՝ նորանոր բլուրներ է կազմում: Այդ աւազեայ բլուրները Մէդանոսներ են կոչւում: Միջոնոսները մոլորեցնում են մինչև անգամ ամենահարուստ ճանապարհորդներին: Ատամկի ծագման պատճառը Պերուի բարձրաբերձ Անդերը են, որոնք դէպ արևելք տարածուելով Ամերիկայի այս մասը պահում են խոնաւ՝ կանոնաւոր քամիների ներդործութիւնից:

Չիլի կամ Ձիլէ: Չիլէի հասարակապետութիւնը գտնւում է Կորտիլերների արևմտեան կողմում և տարածւում է մինչև Ովկիանոսը Այրեցեալ գօտու և 40^0 հարաւ. լայնութեան մէջ: Այս հասարակապետութեան պատկանում է և Ձելչէ Երշիպելագոսը, որ գտնւում է Պատագոնիայի ափերին. Չիլէն իւր դրութեամբ նման է Փիւնիկէին: Բայց Չիլէն Փիւնիկէի նման աղքատ չէ բնական բերքերով. ընդհակառակը երկրագործութեան համար (մանաւանդ հացի բոյսերի համար)՝ նորա հարաւային մասը Նոր-աշխարհի այգի է կոչւում. անհամապատասխանութեան շատ յաջող երկիր է (առատ պտուղներ և ոչխարներ). լեռները հարուստ են ոսկու, արծաթի և պղնձի հանքերով. իսկ Չիլոյէն հարուստ է Գուանոյով: Բնակիչները $1\frac{1}{2}$ միլիոն են. ծովի ափերին լաւ նաւահանգիստներ ունենալով իւրեանց գլխաւոր ուշադրութիւնը դարձրել են փիւնիկեցիների նման վաճառականութեան: Չիլէի բնակիչների առ և արի մէջ դործ դրած դումարի չափը այնպէս մեծ է, որ այդ դումարից իւրաքանչիւր անհատին աւելի մեծ դումար կհասնի՝ քան թէ մի քանի Եւրոպական տէրութիւնների մէջ մինչև անգամ և Ֆրանսիայում: Չիլէից դուրս են տանում հաց, մետաղներ, ոչխար, բուրդ և գուանոյ: Չիլէի գլխաւոր նահանգն է Վ-ալպարայզոյ (63,000), և մեծ Ովկիանոսի ափերի վերայ ամենից վաճառաշահ կետը է: Շոգենաւերով նա հաղորդակցութիւն ունի Ամերիկայի ամենագլխաւոր քաղաքների հետ, իսկ պանամի երկաթուղով՝ արևելեան ափերի և Եւրոպայի հետ: Տէրութեան գլխաւոր քաղաքը Սանդ-Յագոյ է (80,000 բ.). Ռէյ-դը-լա-Պլատայի միացեալ նահանգները կամ Արգենտեան հասարակապետութիւն դտնւում է Չիլէի կորտիլերների արևելեան կողմում պամպասների ցած դաշտավայրերում մինչև Պարակվայ և Ուրակվայ գետերը. դէպ արևելք տարածւում է մինչև Ատլանտեան Ովկիանոսի ափերը, դէպի հիւսիս մինչև Այրեցեալ գօտին, դէպի հարաւ մինչև 40^0 լայնութիւնը. բնակիչները թուով 3 միլիոն են, որոնց մեծ մասը Գաուչոներն (Իսպանացիների և բնիկ ժողովուրդի խառնորդը) են: Գլխաւոր պարապմունքը անասնապահութիւնը (արջառներ և ձիեր), և դորան անմիջական նիւթերը ժողովելը է, ինչպէս՝ կաշի (Ռուհենոս-այրեսի կաշիներն), եղջիւրներ, ճարպ, ապուպա և ազաճ միս, ոչխարի և այծի մորթի: Արգենտեան հասարակապետութիւնը թէպէտ ծովի ափին է դտնւում, սակայն չունի ոչ մի կանոնաւոր նաւահանգիստ, որ տեղից կարելի լինէր իւր ապրանքները օտար երկիր ուղարկել կամ օտարինը ընդունել: Հասարակապետութեան գլխաւոր նաւահանգիստ

Ռո-էնոս-այըեսը է (այս ինքն Լաւօդ), թէպէտ Ամերիկայի մեծամեծ գետերից մինի՝ Լա-Պլատայի բերանի մօտ է գտնւում, բայց այնպէս անյարմարութիւններ ունի, որ մինչև անգամ ամենափոքր նաւերը չեն կարողանում մօտենալ քաղաքին, իսկ մեծ նաւերը ստիպուած են ծով բացօդեայ վայրերում նաւակայարանում: Ուսոի ապրանքի մեծ մասը ցամաքով տանում են Ռուէնոս-Այրեսի բնակիչները (22,000) իւրեանց բազմաղանութեամբ յիշեցնում են կանաոնը:

Պարակուա: Հարաւային Ամերիկայի երկիրներից միայն այս երկիրը է՝ որ իւր սահմաններում ծով չունի: Հարաւից և արևելքից Պարակուան սահմանափակւում է Պարանա գետով, արևմուտքում Պարակվա գետը է մինչև Պարանայի հետ միանալը, հիւսիսում սահմանները անորոշ են: Պարակուան իւր տարածութեամբ Մեծն Բրիտանիայի չափ է:

Երկրի բերքերից ամենանշանաւորը Պարակուայի թէյը է (արմաւենու) տեսակ ծառի չորացրած տերևները են. այդ թէյը՝ մեծ մասամբ՝ գործ է ածւում բնիկ երկրի մէջ, որովհետև ծովով տանելու ժամանակ կորցնում է հոտը և համը: Հասարակապետութեան մայրաքաղաքը Ասոնսիոն է (25,000 բ.)՝ Պարանի արևմտեան ափում:

Ո-րուկուա՝ արևմտեան կողմից սահմանափակւում է Ուրակուայ գետով, հարաւից Լա-Պլատա գետով, արևելքից Ատլանտեան Ովկիանոսով, Բրազիլի կողմից սահմանները դեռ ևս որոշած չեն:

Բնակիչները մեծ մասով գաուչոներ են: Նոցա պարապմունքը անասնապահութիւն և սորանից ստացած արդիւնքները են, ուսոի վաճառականութեան գլխաւոր նիւթը այդ արդիւնքները են: Հասարակապետութեան գլխաւոր քաղաքը Մոնտեվիդեոյ (25000 բ.) է Պարանայի արևմտեան ափի վրայ:

Պատագոնիա: Ամերիկայի այն մասը, որ հար. լայն. 40° հարաւ է գնում՝ կոչւում է Պատագոնիա: Պատագո-

նիան կարելի է արևելեան և արևմտեան մասեր բաժանել, որոնք թէ տարածութեամբ և թէ զանազան յատկութեամբ միմեանց նման չեն: Արևելեան Պատագոնիան մի ընդարձակ դաշտավայր է, որ Ատլանտեան ովկիանոսին մօտենալով ցածանում է. այդ դաշտավայրը գրե թէ բոլորովին ծածկուած է աւազով: Արևմտեան Պատագոնիան մի շղթայ ունի, որի բարձրութիւնը հասնում է միջինչնաւոր ձիւնի սահմանին և մինչև անգամ նորա գագաթներից մի քանիսը անցնում են այդ սահմանից: Այդ շղթայի ձեղքուածները, որոնք մինչև ծովը են հասնում, լցուած են միշտ սառուցներով: Ովկիանոսի ալիքները իւրեանց ծփմունքով այնքան փորել են այդ երկրի ծովափնեայ մասը, որ բազմաթիւ ապառաժուտ կղզիներ են կազմուել: Ուսոի այդ երկրի բնակիչները, որոնք միայն վրանաբնակներ են, շատ սակաւաթիւ են, և ճարտարութեան մէջ Պատագոնիան միայն այն նշանակութիւնը ունի՝ որ կետեր՝ փոկեր և պենկուիններ որսալու կայարան է համարւում:

Պապագոնիայի պատկանում է Ֆրոյ Էվիլէ կոչուած արշիպելագոսը, որ Պատագոնիայից հարաւ է գնում, բնակիչներն Պեշերէգները են: Նորան Պատագոնիայից բաժանողը նեղ և ապառաժուտ Մագելանի նեղուցը է: Այդ Արշիպելագոսի բնութիւնը մի և նոյն յատկութիւնները ունի՝ ինչ որ Պատագոնիան ունի. նա ևս կետեր՝ փոկեր և պենկուիններ որսալու կայարան է: Մի կողմից այս երկրի շատ հարաւային լինելը և ապառաժոտութիւնը, միւս կողմից այս տեղի մրրիկները և մառախուղները շատ խանգարում են Մեծ և Ատլանտեան Ովկիանոսների մէջ եղած հաղորդակցութիւնը, որովհետև նաւապետները ալեկոծութիւնից վախենալով ստիպուած են աւելի հարաւով շրջել:

Գուանոյի գաղթական երկիրները: Գուանոյ գտնւում է հարաւային Ամերիկայի արևելա-հիւսիսային մասում, Օրինոկոյ և Ամազոն գետերի մէջ տեղ: Մեծ մասամբ գտնւում է Գուայանայի լեռնոտ կողմում մինչև Ատլանտեան

Ովկիանոսի ափերը։ Իւր գրացի Վ֊ինկուհելա և Բրազիլ երկիրներին նման Հարուստ բուսականութիւն ունի, բայց որովհետև մի և նոյն ժամանակ առատ ջրաբաշ կլիմա չունի, ուստի նորա բնակիչների թիւը $^1/_4$ միլիոն է, թէպէտ երկիրը Մեծն Բրիտանիայ կղզուն հաւասար է. բնակիչները մեծ մասամբ անկարգութեամբ են պարապում և սահացած արդիւնքները զնոսան նաւահանգիստներով ուղարկում են Եւրոպայ իւրեանց մայր երկիրները։ Այս երկիրը Եւրոպացի երեք ազգերի մէջ բաժնուած է, Ֆրանսիացիների, Հոլլանդացիների և Անգղիացիներին։ Ֆրանսիացիներին պատկանում է արևելեան մասը, որ Գայէննա է կոչւում, համանուն նաւահանգիստով. Հոլլանդացիներին՝ միջին մասը, որ Սուրին է կոչւում, որի նաւահանգիստը Պարամարիբօ է կոչւում. Անգղիացիներին՝ արևմտեան կամ Դեմերարի կոչուած մասը Ջորճտաուն նաւահանգիստով։

Հարաւային Ամերիկայում Անգղիացիներին պատկանում են նոյնպէս Ֆալկլանդեան կղզիները, որոնք Պատագոնիայից արևելա֊հարաւ են գտնւում. նաւաստիացների և կիտորսորդների համար իջևաններ են համարւում։

ՈՎԿԻԱՆԻՍ ԿԱՄ ԱՎՍՏՐԱԼԻՍ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ։

Կազմուածքը, դիրքը և սահմանը։ Հոլլանդիայի իւր անունը ստացել է իւրեան դրութիւնից, որ գտնւում է հարաւային կիսագնդում (australis, հարաւային)։ Հոլլանդիան բաղկացած է Նոր Հոլլանդիայի ցամաքից և բազմաթիւ կղզիներից, որոնք ցամաքի արևելեան կողմումը են գտնւում։ Բացի ցամաքին ամենամօտիկ կղզիներից՝ հարաւում Վ֊անդիմենի երկրից, հիւսիսում Նոր Գվինէից, արևելքում կրկնակի կղզի Նոր Զելանդիայից և այս վերջի երկուսի մէջ տեղը եղածներից Հոլլանդիային պատկանում միւս բոլոր կղզիները կոչում են Պոլինեզիա, այս ինքն բազմակղզի (յունական պոլի = բազում և նէզի = կղզիներ)։ Պոլինեզիայի կղզիներից երևելիները են՝ Մարկիզեան կամ Ենաղոհոյ կղզիները, Կարոլինեան կղզիները և Սանդուիչ կամ Հաւայի կղզիները. նոքա բոլորը Հասարակածից դէպի հիւսիս են. դէպի հարաւ գտնւում են ընկերութեան կղզիները կամ Տաիթիէ Մարիեան և Վ֊փանգուվր֊ի կոչուած կղզիները։ Հոլլանդիան գտնւում է 50° հարաւ. լայն. և 30° հիւս. լայն. 130° և 250° արևել. երկայն. միջ Գիերրոյ կղզուց։ Ռուն ցամաքի ամենահեռաւոր կէտերը են հիւսիսում Եօրք գլուխը 130° հար. լայն. տակ, հարաւում Ո֊ելսոն գլուխը 39° տակ, արևմտքում Կէ֊ֆ գլուխը 130° տակ, արևելքում Բայրօնէ գլուխը 170° տակ՝ արևելեան երկայնութեան։ Ուրիշ Հոլլանդիան ինչպէս աշխարհիս մասերից մին գտնւում է երեք գօտու տակ, իսկ Հոլլանդիա ցամաքը գտնւում է միայն երկու գօտու տակ։ Հոլլանդիայի առհասարակը են Մեծ և Հնդկաց ովկիանոսները՝ որոնք հարաւում միմեանց հետ միանում են Կէ֊ֆ֊ոյ գլխի միջօրէականի տակ, իսկ հիւսիսում շատ նեղուցներով են միանում միմեանց հետ. այդ նեղուցներուց գլխաւորը է Տորէս։ Ափրիկէի նման Հոլլանդիայի ցամաքը ևս շատ քիչ ծոցեր և նեղուցներ ունի. այս պատճառով Հոլլանդիայի ցամաքի միջին երկիրները դժուարամերձենալի են՝ ինչպէս Ափրիկէում։ Ցամաքի ափերը մեծ մասամբ հարթ, աւազոտ և ձահճոտ են, իսկ տեղ տեղ կորաձևեր կան (կորագեան երկիրները)։ Կղզիների ափերը, մանաւանդ Պոլինէզի կղզիների ափերը շատ կորաձևեր ունին. կղզիներից մի քանիսը միայն կորաձևներից են կազմուած և Ատոլլ են կոչւում։ Ցամաքի և կղզիներից մի քանիսի հետ հաղորդակցութիւնը դժուարացնում են կորագեան խոչթերը, որոնք միշտ գտնւում են ափերի մօտ և բաւականին մեծ մինչև անգամ հարիւրաւոր վերստ տարածութիւն են ունենում. օրինակ, Հոլլանդիայի արևելա֊հարաւային կողմում գտնւում են կորագեան խոչթեր՝ որոնք 200 վերստ տարածութիւն ունին սկսած Օ֊անդ

դլխից մինչև կվինէա կղզին։ Այդ խոյթերը աւելի շատ են խանգարում հաղորդակցութիւնը, որովհետև նոցա բարձրութիւնը ամեն տարի փոփոխւում է, վասն զի կորալեան պոդիպաները անդադար շարունակում են իւրեանց շինուելիքը, ուստի նաւագնացները ստիպուած են իւրաքանչիւր տարի նոր ճանապարհ որոնել նաւագնացութեան համար։ Այնու ամենայնիւ թէ ցամաքը (մանաւանդ արևելեա-հարաւային մասը) և թէ կղզիներից շատերը շատ լաւ և յարմարաւէտ հանգիստներ ունին։ Այս կողմից շատ հարուստ է Վանդէմէն երկրի արևելեան և հարաւային մասը։ Ուրիմն Ավստրալիան իւր տիերի յատկութեան կողմից՝ Եվրոպէի նման միւս ցամաքներից յետադաս է*)։

(*) Կորալեան ծանծաղուտները, աղուցները և կորալեան խոչտերը կազմող ծովային մանր կենդանիները կոչւում են կորալեան պոլիպոդներ կամ քուռաբեր։ Կորալեան պոլիպոտները կազմւած է լրջիւնոտ թաւիանցիկ նիւթից և փոքրիկ փամփուշտի ձև և այնպիսի յատկութիւն ունի, որ կարող է կծկուել և փուռել։ Պոլիպոտի ստամոքսի հիւթը այնպիսի յատկութիւն ունի, որ հալում է մինչև անգամ և կարծր բաները, որոնք ուտում է պոլիպոտը։ Պոլիպոտի կերակուրից և ծովային ջրից, որով լիքը է կենդանու ստամոքսը՝ գոյանում է կիր, այդ կիրը կենդանու մարմնի ծակոտիքներից դուրս գալով պնդանում է և մի փոքրիկ բան է կազմում, որի մէջ ապրում է պոլիպոտը. ջրի տակը ապրիլ սկսելիս պոլիպոտը կիչում է մի որ և իցէ առարկայի։ Ահա այս է պատճառը որ կորալեան պոլիպոտների շինուելիքները հիմնուած են միշտ ծովի յատակում գտնուող զանազան տեսակ առարկաների՝ քարերի, նաւերի բեկորների վերայ և յաճախ ծովի յատակի վերայ, եթէ նորա որ և իցէ մի կարծր մասը մի նշանակեալ բարձրութիւն ունենայ։ Նոր պոլիպոտները ծնուելով իւրեանց բները հին պոլիպոտների վերայ են հիմնում, բայց միշտ այնպէս են շինում, որ ընդհանուր շինուելեան լայնութիւնը բարձրութիւնից միշտ փոքր է լինում։ Այսպէս փոքր առ փոքր ջրի տակը ծառի նման մի բան է կազմւում։ Բայց այդ ծառը անշունչ շինուելիք չէ։ Այլ նա ուտում է մեծանում է և զգում է։ Այդ ծառի մէջ նեղ խողովակներ կան՝ որոնց միջով անցանում են այդ ծառը կազմող պոլիպոտների համար անզադար հիւթերը։ Բայց քանի բարձրա-

Ա՛ակերևոյթի կազմութիւնը։ Ավստրալիայի հանքային կպմութիւնը մասամբ նման է հարաւային Ամերիկային և

նում է ծառը՝ այնքան դժուարանում է ստորին և վերին խողովակների մէջ եղած հաղորդակցութիւնը. այս պատճառով ներքին խողովակներ փոքրը առ փոքր նեղանում՝ և վերջապէս ծածկւում են. այնուհետև կորալեան ծառի ստորին մասում վերջանում է և կեանքը, այն ինչ վերին մասում շարունակւում է կեանքը մինչև շինուելեան ծովին մակերևոյթին հասնիլը։ Այնուհետև պոլիպոտները սկսում են շինուելիքները աւելի լայնացնել։ Այս կերպով տարածւում են ծառի ճիւղերը. մի քանի այս տեսակ ծառեր միմեանց հետ միանալով կազմում են կորալեան ծանծաղուտներ, կորալեան խոչթեր և ատոլլներ։ Որովհետև կորալեան պոլիպոտները շատ արագ են աճում, ուստի այն ծովերում՝ ուր գտնւում են նոցա շինուելիքները՝ շատ վտանգների է ենթարկւում նաւագնացութիւնը։ Այդ ծովերում նաւագնացները յաճախ պետք է չափեն ծովի խորութիւնը։ Ապա թէ ոչ շատ հեշտ կարող է նաւը խորտակուել այն տեղում՝ որտեղից մի տարի առաջ մի և նոյն նաւը անցել էր առանց վտանգի։

Կորալեան շինուելիքներ ունեցող ծովերը միայն մի քանի հատ են, որովհետև կորալեան պոլիպոտը ամեն ծովի մէջ ապրիլ կարող չէ, այլ միայն նոցա մէջ, ուր միայն ջուրը մի նշանակեալ ջերմութիւն ունի։ Նորա առհասարակ Ա՛յրիցեալ գօտու ծովերի մէջ են գտնւում. բացի Ա՛յրիցեալ գօտու ծովերից կան և այն ծովերի մէջ, ուր ծովային հոսում կայ. բայց տրոպիկական այն ծովերը, որոնք ցուրտ ջրի հոսանքն ունին, կորալեան պոլիպոտներ չունին։ Կորալեան շինուելիքները ամենից շատ մեծ Ովկիանոսի մէջ են գտնւում։ Ովկիանիայի կղզիների մեծ մասը կորալեան շինուելիքներից է։ Եւ եթէ նոցա շինուելիքները այս կերպով շարունակուելու լինին, այն ժամանակ շատ հաւանական է, որ ժամանակով կորալեան մի նոր ցամաք յառաջ գայ։ Կորալեան շինուելիքները միայն մի նշանակեալ խորութեան վերայ կարող են լինել։ Եթէ կորալեան շինուելիքները երբեմն այնպիսի խորութեանում են պատահում՝ ուր կորալեան պոլիպոտը կարող չէ ապրիլ, պատճառը այն է՝ որ ծովի յատակը, ինչպէս յայտնի է, երկրիս մէջ գտնուած զանազան զօրութիւններից երբեմն բարձրանում և երբեմն ցածանում է։ Կորալեան շինուելիքներից, երբեմն կորալեան ծանծաղուտներ, երբեմն խոչթեր և երբեմն ատոլլներ կազմուիլը կարելի է բացատրել այսպէս. ծանծաղուտ կազմւում է միայն այն ժամանակ, երբ այն կղզին, որի մօտ պոլիպները շինում են իւրեանց շինուելիքը, աւազոտ կամ փափուկ

մասամբ Հարաւային Ամերիկային և Հրոյիշեաններից առաջինին նման է, որովհետև աւելի շատ տորավայրեր է պարունակում

մասերից բաղկացած չէ, այլ կարծր մասերից, և եթէ վերջինս փոքր առ փոքր ցածանում է։ Եթէ այդ տեսակ կղզուց կամ ցամաքի ափից բաւականին հեռու են գտնւում Կորալեան շինուածները, այն ժամանակ Կորալեան խոյտ է կազմւում։ Կորալեան խոյտի և ցամաքի կամ կղզու միջ տեղը գտնւում է միշտ ջրանցք կամ նեղուց, և ինչքան Կորալեան շինուածը հին լինի, այնքան այդ ջրանցքը կամ նեղուցը նեղ կլինի, երբեմն մի մղոնից աւելի լայնութիւն չէ ունենում և երբեմն մի քանի մղոն լայնութիւն է ունենում։ Կան այնպիսի կղզիներ, որոնց Կորալեան խոյտերը օղի նման շրջապատել են։ Ժամանակով այդ տեսակ խոյտից ամբարտակ է կազմւում, իսկ խոյտի և կղզու միջ գտնուած տարածութիւնը լցւում է Կորալեան շինուածքով, այն ժամանակ կղզին Կորալեան ափեր կունենայ։ Եթէ պողիպոտները իւրեանց շինութիւնները սկսում են ջրի տակ գտնուած մի բարձրաւանդակութեան մօտ, այն ժամանակ ատոլլ է կազմւում. այս պատճառով ատոլլը միշտ բոլորակաձև է լինում. այդ Կորալեան օղ է. այս պատճառով ատոլլները երբեմն (Ringinfoln) օղակղզի են կոչւում։ Ատոլլները ջրի երեսից մի կամ երկու գրկաչափից աւելի բարձրութիւն չեն ունենում։ Ատոլլի միջ պարունակուած ծովի մասը լագուն է կոչւում։ Ուրեմն ատոլլը երկու մասից է բաղկացած, կարծր հողից՝ ամբարտակից և լճից, այս ինքն լագունից, որ շրջապատած է ամբարտակից, ուստի կոչւում է Լականա-կղզի կամ Լէճ-կղզի։ Լագունան 2–40 վերստ երկայնութիւն ունի. մի ջրանցքով միանում է ծովի հետ. իսկ եթէ ատոլլը մեծ է՝ այն ժամանակ մի քանի ջրանցքներով է միանում։ Լագունի ամենախոր մասը կենդրոնը է, ուր 50 գրկաչափից աւելի շատ հաղիւ է լինում, այն ինչ ծովի խորութիւնը ամբարտակի մօտից շատ շուտ մեծանում է, այնպէս որ ամբարտակից 100 սաժէն հեռու ծովի յատակը գտնել կարելի չէ։ Լագունի մուտքը շատ անգամ բաւականին խոր է լինում, այնպէս որ մեծ նաւերը կարող են ազատ մուտ գործել նորա մէջ, և նոցա համար այդ Լագունան շատ յարմար նաւահանգիստ է։ Բայց երբեմն մուտքը այնպէս սակաւաջուր է լինում, որ կարելի է մի ափից միւս ափը ոտով անցնել։ Կորալեան պողիպոտները իւրեանց շինութիւնները շարունակում են և Լագունի մէջ, այնպէս որ երբեմն յատակը բարձրացնելով հասցնում են ջրի երեսին և այսպէս ծածկում են բոլոր ջրանցքները։ (Բնութիւն և մարդիկ) գրքից։

իւր մէջ, քան թէ բարձրաւանդակութիւններ, մինչև անգամ համեմատաբար Ամերիկայից աւելի Հարաւային Ափրիկէին նման է, որովհետև նորա նման ստորավայր գօտի ունի ափերին, իսկ այդ գօտուց յետոյ դէպի ներս օդաձև բարձրութիւն ունի, որ և շրջապատում է ինչպէս և Ափրիկէի մէջ կաթսայաձև խոր ընկած տարածութիւնը։ Ափրիկէի գլխաւոր զանազանութիւնը Ավստրալիայից այն է, 1, որ այս վերջինիս օդաձև բարձրաւանդակութիւնները չունին այնպիսի բարձր լեռների շղթաներ՝ ինչպէս Ափրիկէինը, և 2, Ափրիկէի բոլորակաձև խոր տարածութիւնները ծովի մակերևոյթից բաւականին բարձր են, այն ինչ Ավստրալիայի համանուն տարածութիւնները ընդհակառակը ցած են. որովհետև Ավստրալիայի բարձրաւանդակութիւնները մեծ մասամբ ցամաքի ափերին են գտնւում և ոչ մէջ տեղերը, ուստի ջրերի կանոնաւոր ցրուելուն ցամաքի ամեն կողմը խոչընդոտ են գտնում, այս պատճառով ևս մեծ մասամբ ջրերը ցամաքի մէջ հաւաքուելով լճեր կամ ճահիճներ են կազմում։ Բայց Ավստրալիայի լեռները հանքային թագաւորութեան կողմից այնպէս հարուստ են՝ որոնց նմանը չկայ աշխարհիս երեսին։

Ավստրալիայի բարձրաւանդակութիւններից երևելիները արևելա-հարաւային ափում են գտնւում. այս տեղ ծովի զբօսանքին դրէթ թէ զուգահեռական տարածութեամբ են Կապոյտ լեռները, որոնց միջին բարձրութիւնը $1\frac{1}{2}$ վերստ է. այս լեռները բազմաթիւ հովիտներ ունին։ Այդ լեռներից բարձր են ցամաքի արևելա-հարաւային ծայրին գտնուած Սպիտակ կամ Ավստրալեան Ալպեր կոչուած լեռները, որոնց բարձրութիւնը երկու վերստից աւելի է։ Մինչև ցայժմ յայտնի գագաթներից ամենաբարձրը Կոսցիուսկօ է կոչւում, որ 8000 ոտնաչափ բարձրութիւն ունի։ Ավստրալեան Ալպերը այս ցամաքի լեռներից եզակիանը են, որոնց գագաթների վերայ ձիւն կայ, որի պատճառով Սպիտակ կամ Ավստրալեան Ալպերի անունն են տուել։ Ավստրալեան պատկանեալ կղզիները մեծ մասամբ ցած դրութիւն ունին,

միայն մեծ կղզիներից մի քանիսը բարձրաւանդակութիւններ ունին։ Նոր-Գվինէա, Նոր-Օլանդիա, Հավայ (Անդվիլեան կղզիներից մին) և Տայիթի (ընկերութեան կղզիներից մին) կղզիների լեռները այնպիսի գագաթներ ունին, որոնք ցամաքի վերայ եղած ներից բարձր են. նոցա մէջ կան այնպիսի գագաթներ, որոնք Մոնբլանից փոքր ինչ միայն ցած են։ Հավայի կղզու վերայ եղած Մաունա Կէա լեռը այս ցամաքի լեռներից իւր բարձրութեամբ առաջինն է, միայն փոքր ինչ ցած է Մոնբլանից։ Հարաւային Օլանդիա կղզու վերայ գտնուող Կուկովա լեռը 3 վերստ բարձրութիւն ունի։

Ավստրալիան իւր մի քանի կղզիներով գտնուում է հրաբուղխական այն օղի մէջ, որ շրջապատում է Մեծ Ովկիանոսը։ Գվինէա կղզու հիւսիսային մասը, դէպի Նոր Օլանդիա տարածուղ կղզիները, նոյնպէս և հիւսիսային Օլանդիա կղզին շատ հրաբուղխներ ունին, որոնցից մի քանիսը արդէն շիջած են, իսկ միւսները այժմ գեռ ևս ներգործում են. այդ հրաբուղխներից նշանաւորը է Էգմոնդ հիւսիսային Օլանդիայի վերայ, որ Մոնբլանի բարձրութիւնը ունի։ Հրաբուղխներ կան նոյնպէս Մաուկէաա կղզու և Անդվիլեան կղզիներից մինի վերայ (Հաւայի). այս վերջին Մաունա-լոա հրաբուղխը աշխարհիս մէջ երևելիներից մին է, թէ իւր բարձրութեամբ (3 1/4 վերստ) և թէ բաժակի լայնութեամբ (10 վերստ շրջապատով)։ Հաստ ժամանակ չէ որ սարսափելի հրաբղխային վիժուածն եղաւ պատճառ խառնարանից։

Առուգումն։ Ավստրալիայի ոռոգման և նորա ներքին ջրերի հաղորդակցութեան ճանապարհների ընդհանուր նկարագրութիւնը։ Ավստրալիայի զանազան մասերը զանազան կերպով են ոռոգվում. ցամաքի հիւսիսային մասը և Պոլինեզի բոլոր կղզիները պարբերական անձրևների գօտու տակ են գտնուում. ցամաքի հարաւային մասը և Նոր Օլանդիայի հիւսիսային կղզին այն գօտու տակ է գտնուում, ուր Դեկտեմբեր՝ Յունվար և Փետրվար ամիսները բոլորովին անձրևներ չէ լինում։ Նոր Օլանդիայի հարաւային կղզին և Վանդիմենի երկիրը այնպիսի գօտու տակ են գտնուում, ուր տարուայ ամեն եղանակում անձրև է գալիս։ Ավստրալիայի արտաքին ծովափնեայ օղաձև բարձրաւանդակութիւնը անձրևի ջրերի մեծ մասին արգելք է լինում կանոնաւոր կերպով տարածուելուն, ուստի այդ ջրերը ցամաքի ներսը հոսելով ամբողջ լճեր կամ ժամանակաւոր ճահիճներ են կազմում (ուր ջրի հոսումը լեռների ներթափուածք է քամիների ազդեցութեանը), կամ երբեմն ժամանակաւոր գետեր և կամ սակաւաջուր և դանդաղաքայլ գետակներ կազմում։ Այս ներքին ջրերի կողմից Ավստրալիան միւս բոլոր ցամաքների կարգում վերջին տեղ է բռնում։ Նորա ամենալաւ լճերը և գետերը, իբրև վաճառականութեան ճանապարհներ, բոլորովին չունին այն յատկութիւնները, որոնք ունին միւս ցամաքների լճերը և գետերը։ Օղաձև բարձրաւանդակութիւնից դէպ ի ծովը հոսող գետերը միայն նաւարկացութեան համար յարմար են, այն ևս միայն բերանների մօտ։ Նոցա մակընթացութեան ժամանակ Ավստրալիայի գետերը առհասարակ մեծ ձորերի նման են, որոնց մէջ միայն տեղ տեղ են ջրերը ամփոփուած՝ այն ևս սաստիկ անձրևներից յետոյ։ Պատահում է շատ անգամ, որ ճանապարհորդը գետի դաշտից անցնելով չէ նկատում նորան. բայց երբ սարերի վերայ անձրև է գալիս, խոկոյն գետը երևան է գալիս, որ մի քանի ժամից յետոյ կրկին անհետանում է։ Պատահում է և այնպէս, որ ճանապարհորդը ցամաքով գնալիս յանկարծ այնպիսի գետ է տեսնում, որի ջուրը աղի է. նորա ընթացքով բարձր կամ ցած գնալով տեսնում է, որ ջրի համը փոխվում է և կարելի է լինում խմել։ Գետերից նշանաւորը Մուրէյ գետն է։ Նա սկսւում է Ավստրալիան Ալպերից շատ վտակներ ընդունելով, որոնք միայն անձրևային եղանակներում են լինում, Ադելաիդեան լճի օգնութեամբ, Ենկունդեի (Վիկտորիա) ծովը է թափւում։ Նա նշանաւոր է իւր երկայնութեամբ (Դունայի չափ Ավստրալիայի մէջ ամենամեծը է), սակայն նորա առաջքներից միայն

մինը է հասնում մինչև ծովը, բայց սա էլ միշտ լցուած է լինում ապաղով. միւս առաջքները ճահիճներ են կազմում: Մուրբէի վտակներից նշանաւոր Դաբլինգը է: Լճերից նշանաւորներն են Տորբէնօ և Հարդինէր: Ավստրալիայի կղզիների գետերը թէպէտ նշանաւոր երկայնութիւն չունին, բայց մի քանիսի ջրերը մակընթացութիւնից շատանալով մինչև անգամ մեծամեծ նաւերի համար կայարան են դառնում:

Կլիմա, բոյսեր և կենդանիներ: Թէպէտ Ավստրալիան շատ սակաւաթիւ ծոցեր և ծովեր ունի, սակայն նորա կլիման աւելի նման է Ամերիկայի Ծովային կլիմային՝ քան թէ Ասիրիկեի ցամաքային կլիմային: Սորա պատճառը այն է, որ Ավստրալիայի ցամաքը աւելի շատ է ենթարկուած խոնաւ քամիների ազդեցութեանը: Ընդհակառակը Ավստրալիայի կլիման յայտնի է իւր միակերպութեամբ: Մանաւանդ Պոլինէզի կղզիների վերայ կլիման այնպէս միակերպ է, որ ամենատաք և ամենացուրտ ամիսների մէջ եղած տարբերութիւնը Ռէոմ. 3°ից աւելի չէ:

Ահա այս պատճառով Ովկիանիան իւր կլիմայի կողմից ամենատաղջարար երկիրներից մին է: Ավստրալիայի Այրեցեալ մասը միայն տարուայ երկու եղանակ ունի — անձրևային և ջրատաղջները շարունակւում է Հոկտեմբերից մինչև Մարտը, իսկ երկրորդը — միացած բոլոր ժամանակները. Այրեցեալից դուրս գտնուած երկիրները ջրա եղանակ ունին, որոնցից ամառը շարունակւում է Դեկտեմբերից մինչև Մարտ ամիսը. ամառը չափազանց տաք և անտաղջարար է լինում, իսկ ձմեռը՝ որ Յուլիսից մինչև Սեպտեմբեր է շարունակւում, ընդհակառակը ամենախորժելի առողջարար ժամանակն է՝ իւր զովութեան պատճառով: Ավստրալիայի կլիմայի միակերպութեան պատճառով՝ նորա կենդանիները և բոյսերը էլ միաձև են: Նորա ցամաքի ահագին տարածութեան վերայ ամեն տեղ մի և նոյն կենդանիներ և բոյսեր են: Ավստրալիայի կենդանիները և բոյսերը շատ առանձին յատկութիւններ ունին: Ռուսական-Ընկեր

յապոնիա-Ընկերը յիսուսականները են. անտառները մերերի նման խիտ չեն, ծառերի տերևները ուղղահայեաց դրութիւն ունին, կոշտ կաշու նման են և երբէք չեն թափվում. իսկ դորա փոխարէն տարուայ մէջ մի քանի անգամ ծառերի կեղևը նորոգւում է. ծաղիկները թէպէտ առհասարակ գեղեցիկ են, սակայն գլխէ երբէք հոտ չունին. պտուղները շատ օտարոտի են, կայ այնպիսի պտուղ, որ մեր բալուն նման է, բայց նորա կորիզը ոչ թէ պտուղի մէջը է, այլ դրսևը. կայ պտուղ, որ նման է մեր տանձին, շատ գեղեցիկ է, բայց փայտի նման կարծր և ճիւղքի վերայ կպած է ոչ սուր ծայրով, այլ բութ ծայրով կայլն: Ավստրալիայի կենդանիները յիսուսայ յատկութիւնները ունին. ջրքոտանիները երանց փորի վերայ կամ պարկեր ունին, ուր պահում են իւրեանց ձագերին, և կամ բադի քիթ ունին. մեղրաճանճերը խայթ չունին, կարապները սև, արծիւները սպիտակ, բուերը ցերեկով ճչում են, կկուները կակռում դիշերով, այն էլ այնպէս չեն կրկռում ինչպէս մերերը: Մի քանի թըռչուններ բմբուլի փոխարէն բուրթ ունին, իսկ միւսների լեզուն խոշտանգի նման է: Թռչուններից մի քանիսը միայն երգում է, իսկ միւացածները չափազանց օտարոտի ձայներ են արձակում, կամ բարձր ձայնով և պարզ կերպով գոռում են հա — հա — հա — հա, կարծես թէ ծիծաղում են, կամ կատուի նման կլաւում են, կամ երեխաների նման բղաւում և կամ արծաթէ զանգակների նման ձայներ են հանում:

Բայց գաղթականութեան շատանալով փոխվում է և Ավստրալիայի բնութիւնը, և գաղթական բոյսեր և կենդանիներ են տարածւում *):

(*) Ցամաքի վերայ եղած բոյսերից նշանաւորը քաղէպաղ խէժի բոյսը է. իսկ կղզիների վերայ — արուտ կամ տարօ, հացի ծառը և հասակաւոր արմաւենին: Խէժի բոյսը յայտնի է իւր լաւ և մաքուր խէժով: Տարօ. այս բոյսը իւր արմատի փոխանակ շատ հաստ ելևներ ունի, որ տարօ է կոչւում. բրնձի նման է սիկի մէջ կամ այնպիսի տեղերում է բուսնում, որ կարե-

Ավստրալիայի բնակիչները թէ իւրեանց բազմութեամբ (2 միլիոնի չափ) և թէ բնակիչների խտութեամբ (12 մարդ իւրաքանչիւր քառ. մղոն. վերայ) աշխարհիս հինգ ցամաքներից վերջին տեղը են բռնում: Ավստրալիայի ամենաթուլամարդ երկիրը արևելա-հարաւային ափը է. իսկ կղզիներից ամենաթուլամարդը Վանդվիչեան կղզիները են: Ավստրալիայի բնակիչները բազկացած են բնիկներից և գաղթականներից. առաջիններս երկրորդներից շատ են:

Ռնիկ բնակիչները մասամբ Մալայեան ցեղին են պատկանում և մասամբ Մալայեան և Նեգրոսեան ցեղերի մէջ տեղը են բռնում:

լի է ջրով անպակաս: Այս բոյսի տերևները շատ համեղ են, բայց շատ սակաւ են գործ ածւում կերակրի համար, որովհետև տերևներով միայն կարելի է բազմացնել բոյսը: Հարկաւոր է միայն նոցա կտրել արմատից և տնկել, այնուհետև 6 ամսից յետոյ կարելի է պտուղը քաղել: Մի և նոյն հողից տարին երկու անգամ կարելի է պտուղ հանել, այնպէս առատ է լինում այս բոյսը, որ մի քառակուսի վերստ տարածութեան վերայ բուսած տարօ բոյսը հազար մարդու համար մի տարի բաւական է: Պատմում են, որ մի մարդու համար բաւական է 40 քառակ. ֆունտ տարածութեան վերայ եղածը, որ նա կարողանայ ապրել մի տարի:

Հայի ծառը գրեթէ Մեծ և Աղանտեան Ովկիանոսների ափերի վերայ և նոցա կղզիների մէջ ամեն տեղ կայ: Տերևները լայն և գեղեցիկ են. ծառի բարձրութիւնը մինչև 8 կ կաչափի է հասնում. հացի ծառի պտուղները այն ժամանակն են սկսում հանել, երբ արեգակը հասնում է արդէն Այծեղջեր արևադարձին: Հոկտեմբերին արդէն նոքա լաւ հասած են լինում, և այդ ժամանակից սկսած 8 ամսում շարունակ սկսում են քաղել: Հացի ծառի պտուղը նոր ծնուած երեխայի գլխի չափ է լինում. հասած կաշին ծածկուած է բազմաթիւ փոքրիկ կոծիծներով: Պտուղները քաղում են չհասած, այնպէս որ վրայի կեղևը կանաչ է լինում. իսկ ժամանակ միջի միսը սպիտակ՝ փափուկ և ալիւրի նման է լինում: Հում պտուղը կարելի է ուտել. կճպում են պտուղը և փաթաթում տերևի մէջ և յետոյ խորովում, կամ թէ սաստիկ տաքացած քարերի վերայ եփում են: Այս տեսակ պատրաստած պտուղը նման է ցորենի հացի միջուկին, խառնած է լինում խաշած կարտօֆիլի հետ: Հացի ծառի պտուղներից կղզիաբնակները յետագայ կերպով են իւրեանց համար պաշար պատրաստում. մի քարի մէջ փորած խոր փոսի մէջ լքցնում են այդ պտղի մնուը և յետոյ փոսի բերանը ծածկում են տերևներով և քարերով, և այդ պաշարը երկար ժամանակ այդպէս մնալով թթւում է: Այս կերպով կազմւում է թթու խմոր: Փոսի մէջ եղած այդ պաշարից առնում են այնքան՝ ինչքան կամենում են եփել: Այդ խմորից գնտեր են պատրաստում և փաթաթում տերևների մէջ, և սաստիկ տաքացած քարերի վերայ թխում: Այդ

տեսակ պատրաստած հացերը մի քանի շաբաթ կարելի է պահել և կղզիաբնակները իւրեանց ծովային ճանապարհորդութեան մէջ այդ հացը են գործ ածում: Երբ որ նոր պտուղներ չկան, այդ հացը գործ են ածում միշտ:

Այդպիսի մի անհատնելի պաշար պատրաստելու համար երկար աշխատանք հարկաւոր չէ: Կուկը պատմում է, որ եթէ մի անձն իւր կեանքում 10 հացի ծառ տնկէ, նա իւր ընտանիքին ապահովացնելու համար այնքան գործ է կատարում, որքան որ մեր մէջ մի որ և իցէ անձը աշխատի իւր բոլոր կեանքում իւր ընտանիքը ապահովացնելու համար: Ովկիանիայի բնակիչները այդ ծառի բունը զանազան կարասիների համար են գործ դնում. տերևները գործ են ածում սիռացի, անձեռնոցիկի և ափսէի փոխարէն. չորացած տերևները գործ են ածում լուցկու և պատրուգի փոխարէն. կեղևից զանազան դեղեր են պատրաստում. մի խօսքով ամբողջ ծառը գործ է ածւում զանազան կարիքների համար: Հացի ծառը հեշտ կերպով կարելի է բազմացնել. հարկաւոր է որ և իցէ ճիւղ կտրել և տնկել հողի մէջ. այդ ճիւղը շուտով արմատներ կարձակէ և մի քանի տարուց յետոյ պտուղ կտայ: Խաղաղ Ովկիանոսի կղզիներին պատկանում է նոյնպէս Կոկոսեան ընկոյզը, կոկոսեան անասուններից այս տեղում գտնում են միայն ստուերին կարգինները՝ մանաւանդ բազմաթիւ կենկուրուները, նոր Հոլլանդիայի վարնի շներ, մրջնակերներ (մրջնի արջ), գանկուռաներ, և այլն: Կենդանիների կողմից Պոլինէզի կղզիները շատ աղքատ են: Եւրոպացիների առաջին գաղթականները այս տեղ գտան միայն շուն, խոզ, մուկը և մաշկաթևների մի քանի տեսակները: Գաղթականների իւրեանց հետները բերած կենդանիները բնակիչների համար այնպէս օտարոտի էին թւում, որ երկար ժամանակ ձիուն այնպիսի խոզի փոխարէն էին ընդունում, որ հեծնելու համար է ստեղծուած: Թռչունների տեսակները փոքր ինչ շատ է. շատ գեղեցիկ թրթռուններ կան: Բայց այս աղքատութեան փոխարէն ծովերը մի քանի կղզիներու մօտ շատ հարուստ են զանազան տեսակ կենդանիներով. կեռները այնքան բազմաթիւ են, որ նոցա որսուը Եւրոպացիների գլխաւոր պարապմունքներից մին է եղած:

Ա-ալջն խո-ջը՝ որոնց Անգլիացիները Պոլինեզիայի կամ Ովկիանիայի բնակիչները *) են կոչում, տարածուած է Ովկիանիայի կղզիներից շատերի վրայ և ընդունակ է լուսաւորութեան։ Օրինակ, Սանդվիչեան և Նոր Զելանդիա կղզիների բնակիչները կարճ ժամանակում ընդունեցին քրիստոնէութիւնը և այժմ արդէն քահանաները իւրեանց միջից են ընտրում։ Սանդվիչեան կղզիները վաղուց արդէն կանոնաւոր տէրութիւն ունին։ Բայց պէտք է յիշել նոյնպէս, որ Ովկիանիայի բնակիչների մէջ կան և մարդակերներ։ Ովկիանիայի բնակիչները կամ իւրեանց համար անկախ և կանոնաւոր տէրութիւն ունին, կամ թէ դաղթականների ձեռի տակ են գանւում։

(*) Պոլինէզիայի բնակիչների կարգադրութիւններից ամենանշանաւորը է Տաբու։ Տաբու բառը նշանակում է սուրբ և գործ է ածւում որ և իցէ առարկայի անմատչելի լինելը ցոյց տալու համար։ Պոլինէզիացի բնակիչների հասկացողութեամբ տաբուն բոլոր շնչաւոր և անշունչ առարկաները յաստուածների հովանաւորութեանն է յանձնում, ապա ուրեմն հասարակ մահկանացուների համար այդ առարկաները անմատչելի են դառնում։ Սրբազան անձը (քուրմը, կամ թագաւորը) միայն կարող է փոխել կամ սահմանել տաբու։ Այս կերպով տաբուն երբեմն պահպանում է դաշտերը աւերիչից։ Եթէ մի որ և իցէ ցեղի զլուխը կամ առաջնորդը կասկածում է հացի, ծառի պտղի, խոզի, ձկի և այլն սակաւ լինելու մասին, այն ժամանակ նա այդ առարկաներին վերայ տաբու է դնում և այնուհետև ոչ ոք չի համարձակիլ ձեռն տալ նոցա։ Ամէն համարձակուի չկատարել այդ կանոնադրութիւնը, նա մահի բաժին կդառնայ։ Մի քանի բաներ ինքն ըստ ինքեան տաբու են, այս ինքն սուրբ, նուիրական։ Օրինակ. մի որ և իցէ երեխայի ծննդեան օրին եթէ հացի ծառ տնկուլ լինին, այնուհետև այդ ծառը տաբու է ամենի համար, բացի երեխայից. խոզի միսը տաբու է կիներին համար. մեռելը նոյնպէս տաբու է. մի խօսքով ինչ բանի որ թագաւորը ձեռ տայ կամ կպչի՝ նա տաբու է։ Թագաւորները կարող են նուիրական առնել ամենայն առարկայ՝ ինչ որ կամենան։ Եթէ թագաւորը մի որ և իցէ տուն մտնի, այդ տունը այնուհետև տաբու կլինի և այնուհետև նա թագաւորին կպատկանի։ Թագաւորը կարող է ամէն բան տաբու առնել. իշխանները նոյնպէս մի և նոյն իրաւունքը ունին, միայն այն զանազանութեամբ, որ այս վերջինների դրած տաբուն թագաւորը կարող է ոչնչացնել, իսկ իշ-

Երկրորդ խո-ջը կոչւում է Նեգրիտոսներ (այս ինքն Նեգրոսների նման, Ավստրալեան Նեգրոսներ)։ այսպէս կոչւում են այն պատճառով, որ նոքա Նեգրոսների և Մալայեան ցեղերի մէջ տեղը են բռնում, կամ Պապուա բնիկ բնակիչների բառն է և նշանակում է կինամոնագոյն կամ Մելանեզիներ (այս ինքն սև կղզեաբնակներ)։ Պապուասները բնակում են ցամաքի վերայ և Ավստրալեան կղզիների ներքին շղթաների վերայ՝ նոր Գվինէից սկսեալ մինչև Երևադարձը։ Այս ցեղը արևմտեան կիսագնդի բնակիչներից ամենավայրենին է և ամենից փոքր ցանկութիւն է արտայայտում Քրիստոնէութիւնը և Եւրոպական լուսաւորութիւնը ընդունելու համար։ Տաք երկիրներում նոքա միշտ մերկ են մեն գալիս. ցամաքի հարաւային մասում, ուր ցուրտ է, նոքա մինչև ծնկերը ծածկւում են կենկուրու մորթով. թափառական կեանք վարելու պատճառով ծառերի ճիւղերից ժամանակաւոր խրճիթներ են շինում, կամ թէ վատ եղանակներին քարանձաւներին մէջ են բնակւում։ Շատերը մարդակերներ են։ Զանազան ցեղերի են բաժանւում. կառավարութիւն չունին։ Մի քանի ցեղերը դաղթականութիւնների իշխանութեան տակ են գտնւում։

Դաղթականները մեծ մասամբ Կովկասեան ցեղին են պատկանում և են Անգլիացիները, Ֆրանսիացիները, Իսպանացիները, Հոլլանդացիները, Հիւսիսային Ամերիկացիները և մասամբ Զինաստանցիները։

խանները չեն կարող ոչնչացնել թագաւորի դրածը, Բայց որովհետև թագաւորները անցնելով մի լաւ հողից կամ երկրից կարող էին իւրեանց սեփականել, ուստի այդ բանի առաջը առնելու համար աղնուականները թագաւորին մեն են ածում ուսերի վերայ դրած, մի և նոյն կերպով արգիլելու համար, որ թագաւորները չմտնեն տների մէջ և իւրեանց չսեփականեն, նոցա համար շարժական տներ են շինած, այնպէս որ մի տեղից միւս տեղ գնալու ժամանակ՝ տանում են իւրեանց հետ և տները, և այդպէսով միշտ իւրեանց տանը են մնում։

Անգղիացիների գաղթականութիւնները ըստ մեծի մասին գտնւում են Նոր Զելանդիայի և մի քանի փոքրիկ կղզիների վրայ, որոնցից երեւելիները են Նոր Ֆոլկ, Լորդի, Օկլանդի խմբերը, Մակվերեան արշիպելագոսը։ Հիւսիսային Ամերիկացիները մեծ մասով տարածուած են Ովկիանիայի մի քանի կղզիների վրայ, արեւելեան Ովկիանոսի մէջ 188°—228° արեւել. երկայն. Ֆէրրոյից, Հասարակածի երկու կողմում 10° հիւս. լայն. մինչեւ 10° հար. լայն.։ Ֆրանսիացիները բնակւում են մասամբ Ամերիկական Պոլինեզիայից արեւմտա-հարաւ գտնուած կղզիների վրայ՝ Կալեդոնիայում և ուրիշ մերձակայ կղզիների վրայ և մասամբ արեւելա-հարաւ գտնուած կղզիների վրայ։ Մարկեզաս և Տահիթի՝ որ ընկերութեան կղզիներից ամենագլխաւորը է։ Հոլանդացիները բնակւում են Նոր Գվինէ կղզու արեւմտեան մասում, Իսպանացիները Մարիանեան և Կարոլինեան կղզիների վրայ։ Ձինաստանցիները ինչպէս ազատ մշակները բնակւում են ցամաքի արեւելա-հարաւային մասում ոսկու հանքերի մօտ։ Ավստրալիայի գաղթական երկիրներից ամենալաւերը պատկանում են Անգղիացիներին, Հիւսիսային — Ամերիկացիներին և Ֆրանսիացիներին։

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ։

1. ԳԱՂԹԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ։

Անգլիացիների գաղնիական-իւ-ները թէ իւրեանց ընդարձակութեամբ և թէ վաճառականութեամբ առաջին տեղն են բռնում։ Նոցա նշանակութիւնը 1851 թուից սկսած աւելի մեծացաւ՝ երբ առաջին անգամ կապոյտ լեռների մէջ և յետոյ Ավստրալական Ալպերի զանազան տեղերում ոսկու հանքեր գտան։ Բացի ոսկուց՝ Անգլիացիների գաղթականութիւնները մեծ օգուտ են ստանում ձկնորսութիւնից (կետեր, փոկեր են որսում), որոնցից պատրաստում են կետի իւղ, ձկան սոսինձ,

կետի ոսկր, նմանապէս ծովից հանում են կորալներ, մարգարիտներ, կրիաներ, արէփանդներ. տաւարարածութիւնից պահում են արջառներ, մանաւանդ ոչխարներ, և իւրաքանչիւր տարի 50 միլիոն Ֆունտ Ստէրլինգի բուրդ են ստանում, բազմաթիւ կաշի եւն։ Երկրի հարստանալով բազմանում է և բնակիչների թիւը։ Վերջին տասը տարում բնակիչների թիւը կրկնապատկուեցաւ, իսկ այժմեան ժամանակ ցամաքի բնակիչների կիսին է հաւասար (1000000)։ Անգլիացիներին պատկանած երկիրները գտնւում են ցամաքի և մի քանի կղզիների վրայ։

ա. Ցամաքի վերայ գտնուած երկիրները չորս նահանգներ են կազմում, ինչպէս են հարաւային Նոր Ո-էլզ, որ գտնւում է արեւելահարաւային ափի վերայ, Վիկտորիա և հարաւային Ավստրալիա, որ գտնւում է հարաւային ափի վերայ, և արեւմտեան Ավստրալիա՝ արեւմտահարաւային ափերին վերայ։ Իւրաքանչիւր նահանգը իւր Խորհրդարանը ունի երկու պալատների հետ միասին, Օրէնսդրական խորհուրդ և Օրէնսդրական ժողով։ Երիտասարդի գահը veto (վէտօ՝ անհամաձայն, ոչ) արտասանելու իշխանութիւն ունի։ Նահանգները իւրեանք նշանակում են հարկ և ապրանքներից առնելու մաքսերը։

Նոր հարաւային Ո-էլզը գաղթականութիւններից ամենահինը է։ Սկզբում յանցաւորների աքսորանքի տեղն էր, յետոյ փոքր առ փոքր այս տեղ եկան և ազատ գաղթականներ։ Կապոյտ լեռների երկու կողմումը է գտնւում։

Գլխաւոր քաղաքը է Սիդնէյ, որ Լոտարդի Լէյլից փոքր ինչ հիւսիս է գտնւում, Պորտ—Ջաքսոն ծոցի մօտ է գտնւում։ Շրջակայքում քարեայ ածուխի հանքեր կան. Պորտ—Ջաքսոնի շրջակայքը շատ մշակուած են. հացը միշտ հարկաւոր եղածից աւելի է ստացւում։ Շատ գեղեցիկ և հարուստ այգիներ կան. դեղձի ծառերը ամբողջ անտառներ են կազմում. այնքան շատ է լինում դեղձը՝ որ պտղաւէտ տարիները խոզերին նորանով են կերակրում։ Ավստրալական-Անգլիական վա-

ձառականութեան շոգենաւագնացութեան և կաւերի որսորդութեան ընկերութիւնների կենդրոնը Սիդնէյը է։ Բոլոր գաղթականների ապրանքները առաջ բերում են այս տեղ և յետոյ այս տեղից ուղարկում են Եւրոպա։ Այդ քաղաքը վաճառականութեամբ հաղորդակցութիւն ունի Ընդղիացի Ավստրալական միւս գաղթականութիւնների, Հնդստանի կապ աշխարհի Ամերիկայի հետ։ Բոլորովին Եւրոպական քաղաք է։ Գլխաւոր փողոցները ուղիղ, երկար, լայն, գեղեցիկ մայթած և լուսաւորուած են կազով. շատ քարեայ տներ կան, որոնց լուսամուտները հայելուց են, համբարանոցներ, օպէրաներ, կօնցէրտներ և այլն զուարճութիւններ, կառքեր, գործատուններ, մի խօսքով՝ ամեն բան՝ ինչ որ գտնուում է Եւրոպական աթոռանիստ քաղաքների մէջ, կայ և այս տեղ։ Կառավարչի աթոռանիստ քաղաքը է։ Կապոյտ լեռների մի արգաւանդ տեղում գտնուում է Բաթուրստ քաղաքը։

Այս նահանգին պատկանում է Նոր-Ֆոլկ և մի քանի փոքր կղզիներ։ 1858 ից սկսած յանցաւորների աքսորանոց տեղը Նոր-Ֆոլկին է։

Վ՚ինկտորիա կամ Եդջանիկ Ավստրալիա գտնվում է Ավստրալիան Ալպերի երկու կողմում ծովի և Մուրրէյ գետի մէջը. Ավստրալիայի մէջ Ընդղիացիների ունեցած գաղթականութիւններից ամենանորը և ամենաբազմամարդը է։ Ընդղիացիների Ավստրալական գաղթականութիւններից ոչ մին այնպես յաջողակ կերպով չէ պարապում երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մանաւանդ հանքահանութեամբ, ինչպես այս գաղթականութիւնը։ 1854 թուից սկսած երբ այս տեղ ոսկու հանքեր գտան, նա օր աւուր սկսեց ծաղկել։ Այդ հանքերը գտած օրից մինչև 1859 թուականը նորա Մելպուն (Պորտ — Փիլիպպոս ծոցի մօտ) գլխաւոր նաւահանգստից 73,500,000 ֆունտ Ստէրլինգի ոսկի է դուրս տարած։ Նոյնպէս բաւականին մեծ է այս տեղից դուրս տարած բրդի քանակութիւնը։ Մելպուռնի մէջ համալսարան կայ։ Մի և նոյն ծոցի մէջ գտնուում է Վ՚իկտորիայի միւս գլխաւոր նաւահանգիստը՝ Գէլոնգ, որ Մելպուռնի հետ միանում է երկաթուղով և շոգենաւերով։

Հարաւային Ավստրալիան վերոյիշեալ նահանգներից արեւմուտք է գտնուում ծովի ափերի վերայ. գլխաւոր քաղաքը է Պորտ Ադելայիդէ։ Շատ ժամանակ չէ որ Ադելայիդէի շրջակայքում պղնձի հանք գտան, որ աշխարհիս մէջ ամենահարուստը է. 1852 թուին $2\frac{1}{2}$ միլիոն ռուբլու պղինձ հանեցին։

Ընտրեան Ավստրալիան կամ Լէքհաէյ գետի գաղղիական-ը. նը։ Գլխաւոր քաղաքը է Պերթ։ Այժմեան ժամանակ ցամաքի վերայ միայնակ տեղը է, ուր ուղարկում են յանցաւորներին։ Ընդղիացիները թէպէտ շատ աշխատեցան ցամաքի հիւսիսային ափի վերայ նոյնպէս գաղթականութիւն հաստատելու, սակայն վատ կլիմայի պատճառով չյաջողվեցաւ, թէպէտ Լ՚ուինդհամ նաւահանգիստը Ավստրալիայի նաւահանգիստների ամենալաւերից է։

Ք. Կղզիներէ վերայ եղած գաղղիական-ը. ներից ամենանշաւորները են Վ՚անդէմէնի երկիր կամ Տասմանիա։ Երկու անունն էլ Հոլանդացիները են դրել. առաջինը ի պատիւ Բատավիա նահանգապետին, որի կառավարութեան ժամանակ գըտան կղզին, երկրորդը այն նաւաստնացի անունը է՝ որ գտաւ այդ կղզին։ Տասմանիան շատ պտղաւոր և արգաւանդ երկիր է. գեղեցիկ նաւահանգիստներ ունի։ Այս կղզին մի ժամանակ յանցաւորների աքսորանքի տեղը էր, իսկ այժմ ծաղկեալ գաղթականութիւն է։ Հոբարտ — Տաուն աշխարհիս մէջ առաջին նաւահանգիստներից մին է. Սիդնէյի հետ շոգենաւով կանոնաւոր հաղորդակցութիւն ունի։

Նոր — Զէլանդիան բաղկացած է երկու մեծ կղզիներից, որոնք նեղուցով բաժանուում են միմեանցից և մի փոքրիկ Ստրէյտ կղզուց։ Հիւսիսային կղզին լայն ծոցեր և յաջող

նաւահանգիստներ ունի, իսկ հարաւային կղզու ափերը անմատչելի են։ Նոր Զելանդիան Տասմանիայի նման արգաւանդ և բուսականութեամբ առատ է, մանաւանդ անտառներով։ Այդ կղզու աշխարհագրական դրութիւնը աւելի մեծացնում է նորա արժանաւորութիւնը. նա գտնւում է Ափրիկէի Հնդկաստանի և Ամերիկայի մէջ տեղը։ Բայց Անգղիացիներին կարելի չէ այս երկրի միայնակ տէրը համարել, որովհետև թէպէտ բնիկ բնակիչները արդէն ընկած են Եւրոպական քաղաքականութեան ազդեցութեան տակ և կարճ ժամանակ ընդունեցին Քրիստոնէութիւնը, սակայն շատ յամառ կերպով աշխատում են պահպանել իւրեանց անկախութիւնը։ Գաղթականութեան գլխաւոր քաղաքը է Օկլենդ, որ հիւսիսային կղզու հիւսիսային ափի վերայ է գտնւում։

Հնաբնակները Անգլիացիներին պատկանեալ երկիրները նշանաւոր են իւրեանց Գուանոյով և աշխարհագրական դրութեամբ, որովհետև Ասիա և Նոր Հոլանդիա ճանապարհորդելու համար յարմար կայարաններ են։

Ֆրանսիացիները պատկանեալ երկիրները Ափստրալիայի մէջ գլխաւորապէս երկու տեղում են՝ արևելքում և արևմտքում. արևմտքում 1864 թուից սկսեալ նոցա պատկանում է Նոր Կալեդոնիա կղզին, արևելքում Ֆրանսիացիներին պատկանում են Մարկիզեան և Տահիտի կղզիները։ Նոր Կալեդոնիան Ֆրանսիացիների աքսորանքի տեղը է։ Ֆրանսիացիների Ը-ոփ-բոլական արևելեան երկիրները իւրեանց արգաւանդութեամբ, մանաւանդ աշխարհագրական դրութեամբ (Ամերիկայի և Նոր Հոլանդիայի մէջ տեղը) Ֆրանսիացիների համար մեծ նշանակութիւն ունին։ Նոցա նշանակութիւնը աւելի մեծացաւ Պանամի երկաթուղին բացուած օրից։ Մարկիզեան կղզիները նոյնպէս աքսորանքի տեղեր են։ Տահիտի կղզին Ովկիանոսի հարաւային մասում ամենագլխաւոր կայարանը է կազմում։

ԱՆԿԱԽ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Սանդվիչեան կղզիների միապետութիւն կամ Հաւայի։

Այս կղզիները՝ որովհետև բարձր լեռներ ունին և Այրեցեալ գօտու տակ են գտնւում, ուսումն նոցա բուսականութիւնը շատ բազմատեսակ է։ Այս կղզիների բերքերից երեւելիները են շաքարեայ եղէգը, տարոյ (որ կղզեաբնակների գլխաւոր կերակուրն է), բամբակ, ծխախոտ, առաուռուտ (առաուռուտը գետնախնձորի նման մի բոյս է։ Հնօլուլու քաղաքը իւրաքանչիւր տարի 500 փութի չափ բերում են առաուռուտ, որ իւր տեղում մի ֆունտը $2\frac{1}{2}$ կոպէկ արժէ։ Վաճառականները օտար նաւաղնացներին ծախելով՝ գտնում 100ին 100 շահ են ստանում), սանդալ, բամբուկ, թթենի և այլն։

Հնակիչների թիւը մինչև 120000 է հասնում. նոքա առհասարակ կարող են օրինակ լինել մեզ այն բարեհոգութեան, ջանասիրութեան, հասկացողութեան և դէպի Եւրոպական լուսաւորութիւնը և քրիստոնէութիւնը ունեցած յօժարութեանը՝ որոնք Պոլինէզիայի մեծ մասի յատկանիշները են կազմում։ Վաղուց արդէն նոքա ընդունել էին Քողոքականութիւնը։ Նոքա մեծ յաջողութեամբ պարապում են շինական պարապմունքներով, որսորդութիւնով. յայտնի են՝ ինչպէս ամենալաւ նաւավարներ և իւրեանց սեպհական նաւերով հերձում են Խաղաղ Ովկիանոսի ալիքները զանազան ուղղութեամբ. բաւականին ծաղկած վաճառականութիւն ունին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների և Եւրոպական ազգերից մի քանիսի հետ։ Իւրաքանչիւր տարի Եւրոպացիների և Ամերիկացիների հարիւրաւոր նաւերը գալիս են Սանդվիչեան կղզիները։ Սանդվիչեան կղզիների դրութիւ բոլոր բնակիչները կարդալ և գրել գիտեն. մի խօսքով նոցա մէջ կարելի է գտնել ամեն բան՝ ինչ որ կայ Եւրոպական քաղաքների մէջ, քաքարավաճառանոցներ, տպարաններ, օրագիրներ, ուսումնարաններ և այլն. խօսում են Ֆրանսերէն։ Որովհետև

Սանդվիչեան կղզիների աշխարհագրական դրութիւնը այնպէս է, որ Մեծ Ովկիանոսի հիւսիսային մասի մէջը են գտնուում՝ Ամերիկայի և Ասիայի ճանապարհի վերայ, ուստի նոցա գլխաւոր նաւահանգիստ Հոնոլուլու (Հավայի կղզու վերայ) կետաորսորդների, վաճառական նաւերի, Ամերիկայի և Չինաստանի մէջ եղած շոգենաւագնացութեան գլխաւոր կենդրոնը և կայարանը է դարձել: Հավայեան խմբից դէպ արևմտա—հիւսիս գտնուում են մի քանի առանձնացած կղզիներ, որոնք հարուստ են Գուանոյով:

Ընկերութեան կղզիների կամ Տահիտի միապետութիւնը: Ընկերութեան կղզիները Սանդվիչեաններից նման լեռնոտ են, ուստի նոյնպէս բազմատեսակ բուսականութիւն ունի: Տահիտին իւր շռայլ և ճոխ բնութեան պատճառով Խաղաղ Ովկիանոսի Թագուհի է կոչւում: Այս տեղ մի և նոյն բոյսերը և կենդանիները են՝ որոնք գտնուում էին Սանդվիչեան կղզիների վերայ: Այս տեղի շաքարեայ եղեգը ամենալաւը է աշխարհիս մէջ: Բնակիչները մի և նոյն յատկութիւնը ունին՝ ինչ որ Սանդվիչեաններինը, մի և նոյն դաւանութիւնը և մի և նոյն լուսաւորութիւնը ունին: Աշխարհագրական դրութեան կողմից Մեծ Ովկիանոսի հարաւային մասում մի և նոյն նշանակութիւնը ունին՝ ինչ որ Սանդվիչեան կղզիները հիւսիսում ունին:


Ա.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Armenian Library
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Ի ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ, ՄԻԿ ՄԱՆԻԹ։

Հայաստանի Ազգային գրադարան
NL0429648

20575